ԱԶԴԱԿ

ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ

ՀՅԴ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՌՈՍՏՈՄԻ (ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ) ՄԱՀՈՒԱՆ 100-ԱՄԵԱԿ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ՅՈՒՆԻՍ 2019

ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՐՁԸ

«Ազդակ»-ի խմբագրութիւնը կը կատարէ իր երկրորդ յաւակնոտ քայլը՝ գաղափարական յաւելուածի երկրորդ համարը հրատարակելով: Առաջինին եւ երկրորդին միջեւ ժամանակի հեռաւորութիւնը կը յուշէ, որ նման նիւթերու հաւաքն ու խմբագրական աշխատանքը կը հանդիպի որոշ դժուարութիւններու, յատկապէս՝ գաղափարաբանական առանցքներու շուրջ միտքեր բանաձեւելու, մտածումներ զարգացնելու եւ այդ բոլորը խմբագրական տեսքի բերելու ուղղութեամբ:

Ընթերցողը արդէն նկատած է, որ գաղափարական դէմքի մը յոբելեանը կարեւոր առիթ նկատելով՝ խմբագրութիւնը կը փորձէ գաղափարաբանական հայեացքներով եւ վերլուծումներով ընթերցող հանրութեան ներկայացած յօդուածագիրներու դիմել եւ զանոնք հրաւիրել աշխատակցելու:

Իւրաքանչիւր յաւելուածի հրատարակումէն ետք քանի մը առիթով քննարկումներ, ո՛չ միայն կատարուածին մասին գնահատական տալու, այլ նաեւ նորին բովանդակութիւնը նախագծելու՝ այս ոլորտին մէջ խմբագրական աշխատակարգի կը վերածուին:

Նպատակը, անշուշտ, գաղափարական ամայացման միտումներուն դէմ որոշ քայլեր առնելն է եւ հոսանքն ի վեր թիավարելու ճիգերը շարունակելը:

Մեծն Ռոստոմի մահուան 100-ամեակը առիթ էր, որ գաղափարական եւ գաղափարաբանական մտածողութեան զարգացման խմբագրական ելակէտ մը ապահովուէր՝ արխիւային նիւթերու, յեղափոխական գործի ազնուագոյն դէմքին մտածումները, կենդանի օրինակը, խմբագրականներն ու նամակները լոյսին բերուէին եւ բոլորիս թելադրէին գաղափարաբանական այժմէական հարցերու արծարծման եւ խորացման փորձեր կատարել՝ անպայման մտաբերելով Ռոստոմի եւ իր սերնդակիցներուն դաւանած բարոյա-գաղափարական արժէքները եւ զանոնք ԳՈՐԾ-ին մեկնակէտն ու յենասիւները նկատելու անշրջելի սկզբունքները:

«Ա.»



ՂԵԿԱՎԱՐԻ ՌՈՍՏՈՄԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Երբ իր մահուան 100-րդ տարելիցին տակաւին կը գրենք Ռոստոմի անձին ընդմէջէն «ղեկավար»-ի ըմբռնողութեան մասին, երբեք պէտք չէ մտածել, թէ այդ՝ յաւուր պատշաճի խօսք է կամ յարգանքի տուրք:

Գիտակցական եւ միաժամանակ երազական ու ձգտումնային մօտեցում է պարզապէս, ի տես ղեկավարման ձեւերու եւ «արուեստ»-ի այսօրուան ըմբռնումներուն, արդիականութեան տուրք տուող ցուցադրամոլականութեան, թեթեւ հարցերով հրապարակ գալու նկարածանուցողականութեան ու անհատակեդրոն՝ անձնական եւ հրահրուած հաւաքական **օրքեսթրային** տրամաբանութեան:

Ղեկավարի ռոստոմեան փորձի վերարտադրութիւնը այսօր կրնայ ժամանակավրէպ, անգործնական, անտրամաբանական ու նոյնիսկ անկարելի նկատուիլ, սակայն չի դադրիր երբեք ներկայանալէ իբրեւ յաջող կենսափորձ, օրինակելի տիպար ու դաստիարակիչ ելակէտ, միաժամանակ՝ զգօնութեան, լրջութեան ու լրջախոհութեան, ծանրութեան եւ առանց ամբոխային տրամաբանութեան տուրք տալու Գործը ղեկավարելու հրաւէր:

Ռոստոմ գործեց գետնի վրայ եւ ոչ գրասենեակներու մէջ ու գրասեղանի ետին: Ան միշտ գործի վրայ էր, անկախ գործի տեսակէն:

Արագ ակնարկ մը իր կարճ, բայց արդիւնաւէտ ու դրոշմ ձգող կեանքին, կու տայ փաստը, եւ ի՜նչ փաստ, թէ ինչպէ՜ս Ռոստոմ աշխատեցաւ ու հասաւ «ղեկավար»-ի պատուանդանին, մի՛շտ մնալով դաշնակցական Ռոստոմ:

Ռոստոմ ամէն տեղ էր ու ամէն գործի մէջ: Եւ ահա՛ օրինակներ՝ իր կենսագրութեան տարբեր էջերէն:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Շար.ը՝ էջ 16

«ՊՐՈԼԵՏԱՐԻԱՅԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ «ԲՈՎԱՆԴԱԿ ԱԶԳԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՄԲ՝ ՌՈՍՏՈՄԻ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԴՄԷՋԷՆ

Երբ այս յաւելուածի պատրաստութեան նախաձեռնեցինք, պատկերացում իսկ չունէինք, թէ ինչպիսի՛ ծաւալ պիտի ստանայ անիկա: Շուտով, սակայն, ընդառաջումներուն լայն տարողութիւնը, նաեւ մեր կատարած կողմնակի ընթերցումները՝ Մեծն Ռոստոմի ձգած գաղափարաբանական ժառանգութեան շուրջ, մեզ դրին եզակի երեւոյթի մը առջեւ, այն իմաստով, որ Ռոստոմ ՀՅ Դաշնակցութեան հիմնադրութենէն մինչեւ 1919 երկարող ամբողջ ժամանակաշրջանին ընթացքին ծաւալած իր յեղափոխական գործունէութեամբ եւ միտքի արտադրութեամբ ուրուագծած է դաշնակցական գաղափարախօսական միտքի հիմնական մտածումները եւ անոնց եղափոխական զարգացումը, որուն արտայայտութիւնը հասած է մինչեւ մեր օրերը՝ շատ չնչին փոփոխութիւններով, ՀՅԴ Ծրագիրին մէջ:

Ինչպէս պիտի նկատէք յաւելուածը թերթատելու ընթացքին, զանազան յօդուածագիրներ իրենց գրութիւններուն ընդմէջէն անդրադարձած են Ռոստոմի մտածողութեան, անոր՝ ամէնէն շատը մարքսեան մտածողութենէն ազդուած ըլլալու երեւոյթին, այս մասին արտայայտուած են տարբեր կարծիքներ, որովհետեւ մեծութեան մը առջեւ, ինչպիսին է Ռոստոմը, տեսակէտները եւ մօտեցումները միանշանակ չեն կրնար ըլլալ: Եւ Ռոստոմի մարքսական ըլլալուն կամ չըլլալուն վերաբերեալ կարծիքներու կամ տեսակէտներու այս տարբերութիւնը լաւ երեւոյթ է, ցոյց կու տայ, որ դաշնակցական միտքը տակաւին կենսունակ է եւ հարուստ:

Դաշնակցական տեսաբան Երուանդ Ֆրանգեանին նուիրուած «Ազդակ-գաղափարաբանական» յաւելուածի մեր գրութեան մէջ մենք արդէն կարճ ակնարկութիւն մը կատարած էինք այն հարցին, թէ ինչպէ՛ս ՀՅԴ անդրանիկ ծրագիրին տեսական բաժինին մէջ արտայայտուած ռոստոմեան մարքսեան **տեթերմինիզմէն** ետք Երուանդ Ֆրանգեան եկաւ եւ իր փիլիսոփայական մտածողութեամբ ՀՅԴ տեսական ժառանգութեան հաղորդեց ամբողջութեամբ տարբեր, նոր յատկանիշ, դիմագիծ, որ հակոտնեայ էր 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբին ձախակողմեան ընկերվարական մտածողութեան մէջ տիրական մարքսեան պատմական նիւթապաշտութեան տեսութեան եզրայանգումներուն: Եւ Երուանդ Ֆրանգեանին «Իրապաշտ փիլիսոփայութիւն»-ը մինչեւ հիմա կը կազմէ Դաշնակցութեան գաղափարախօսութեան հիմքերէն մէկը, որովհետեւ ան, ընկերվարական կուսակցութիւն ըլլալով հանդերձ, դասակարգային կուսակցութիւն չէ, այլ կը միտի բովանդակ ազգի անկաշկանդ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացման, եւ ոչ թէ դասակարգի մը՝ ուրիշ դասակարգերու վրայ տիրապետման:

Հիմա վերադառնանք Ռոստոմին եւ հակիրճ տեսնենք, թէ գաղափարներու եղափոխութիւնը ինչպիսի՛ ընթացք ստացած է անոր մօտ: Եւ ի՞նչ մնացած է հիմա՝ իբրեւ ժառանգութիւն: ՀՅԴ անդրանիկ ծրագիրի տեսական բաժինը, որ կը պատկանի Ռոստոմի գրիչին, ներծծուած է դասակարգային պայքարի հասկացողութեամբ:

ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Շար.ը՝ էջ 2

ՌՈՍՏՈՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ՝ ԲՆԱԳԻՐՆԵՐՈՒ ԸՆԴՄԷՋԷՆ

ՀՅ Դաշնակցութեան հիմնադիրներէն Ստեփան Զօրեան-Ռոստոմ՝ առաւելաբար կենդանի գործի հետամուտ մարդկային տիպար, ե՛ւ խառնուածքի, ե՛ւ կեանքի ու գործի պայմաններու բերումով թողած է համեմատաբար փոքր ծաւալով նիւթեր՝ ուղղակի գաղափարաբանական բովանդակութեամբ:

Ասոնց մէջ առաջնահերթաբար տեղ կը գրաւեն «Դրօշակ»-ի խմբագրութեան իր զոյգ շրջաններուն (1893-95 եւ 1896-98) պատկանող քանի մը խմբագրական անստորագիր նիւթեր՝ ծրագրային-ռազմավարական բնոյթի (ուրեմն՝ կենսական կարեւորութեամբ), ապա՝ պահպանուած ու մեզի հասած ժողովական նիստերու արձանագրութիւններ, յատկապէս՝ Դ. Ընդհ. ժողովէն (1907):

Վերջապէս, Ռոստոմի գրած կազմակերպական թէ անձնական բնոյթի հարիւրաւոր նամակներէն ոմանք եւս, թէեւ՝ հազուադէպօրէն, անուղղակի կը յղուին գաղափարաբանական ոլորտի, կը վկայեն իր գաղափարական աշխարհէն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

Շար.ը՝ էջ 13

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԴԱՐԲԻՆԸ՝ ՌՈՍՏՈՄ (ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ)

Ռոստոմը (Ստեփան Զօրեան) Հայ յեղափոխական դաշնակցութեան երեք հիմնադիրներուն մէջ ամէնէն երկարակեցն է: Գետնի վրայ ան ունեցած է աւելի լայն գործունէութիւն: Ծնած է 1867 թուականին, Նախիջեւանի Գողթան գաւառի Ցղնա գիւղը: Ուսանած է Թիֆլիս, Պաքու եւ Մոսկուայի Պետրովսկի գիւղատնտեսական ակադեմիային մէջ: Ուսանողական շրջանին երկու անգամ աքսորուած է յեղափոխական շարժումներու մասնակցած ըլլալուն պատճառով:

ՀՅ Դաշնակցութեան հիմնադրութեան տարին կը մեկնի Կարին՝ ուսուցչական պաշտօնով, բայց շուտով օսմանեան իշխանութեանց կողմէ կը հեռացուի քաղաքէն: Թիֆլիս գալով՝ գործօն դեր կը ստանձնէ Դաշնակցութեան Ա. Ընդհանուր ժողովի (1892) պատրաստութեան մէջ: Անդրանիկ ծրագիրի տեսական բաժինը Ռոստոմ ինք գրած է: ՀՅԴ-ի պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի հրատարակութեան սկզբնական ժամանակաշրջանին գլխաւոր դեր կատարած է՝ իբրեւ խմբագիր եւ գրաշար:

Ռոստոմ մինչեւ 1895 կը վարէ «Դրօշակ»-ի խմբագրութիւնը, սակայն այդ աշխատանքը չէր գոհացներ զինք, ուստի թերթը յանձնելով Յովնան Դաւթեանին՝ կը մեկնի Թիֆլիս, ապա իբրեւ «վաճառական»՝ Տրապիզոն եւ Կարին: Այդ թուականներուն սուլթան Համիտ հայկական նահանգներուն մէջ ջարդեր կազմակերպելու կը ղրկէր Շաքիր փաշան: Ռոստոմ այդ տարին ուսուցիչ էր Կարինի մէջ, ուրկէ շուտով կը հեռացուի:

Անկէ ետք Ռոստոմ գլխաւորաբար կը գործէ Պարսկաստանի եւ Կովկասի մէջ: 1899-ին Թիֆլիսի մէջ գումարուած ՀՅԴ Բ. Ընդհանուր ժողովին կը պաշտպանէ Օսմանեան կայսրութեան մէջ գործող այլ յեղափոխական կուսակցութիւններու հետ համագործակցութեան անհրաժեշտութեան գաղափարը: Կ'ամուսնանայ Լիզա Մելիք Շահնազարեանին հետ, որ 1900-ին Պուլկարիա անցնելով՝ դպրոց մը կը հիմնէ: Շուտով Ռոստոմ իր կնոջ կը միանայ եւ կը սկսի դասաւանդել նորաբաց վարժարանին մէջ, միեւնոյն ժամանակ կ'իրականացնէ հայ-մակեդոնական գործակցութիւնը՝ Համիտի կառավարութեան դէմ: 1902-ին ընտանեօք Կովկաս կը վերադառնայ, յաջորդ տարին կ'աքսորուի Օտեսա, ուրկէ փախուստ կու տայ արտասահման:

1904-ին Սոֆիայի մէջ կը գումարուէր ՀՅԴ Գ. Ընդհանուր ժողովը, որուն ընթացքին որոշուեցաւ սուլթան Համիտի մահափորձը, զոր պիտի կազմակերպէր եւ գործադրէր Քրիստափոր Միքայէլեան: Սոֆիայի մէջ կատարուած ռումբերու փորձերուն ժամանակ զոհուեցաւ Քրիստափոր՝ խոր վիշտ պատճառելով իր ընկերներուն:

Ռոստոմ Ժընեւէն կը փութայ Սոֆիա՝ ներկայ գտնուելու համար Քրիստափորի յուղարկաւորութեան եւ ատեն մը Պուլկարիա մնալով՝ այդտեղ կը հիմնէ Դաշնակցութեան զինուորական վարժարանը:

1903-ին Նիքոլայ ցարը հրովարտակով մը հրահանգեց բռնագրաւել հայ եկեղեցական կալուածները, այս հրովարտակին պատճառով Էջմիածինը շուարումի մատնուեցաւ:

Շար.ը՝ էջ 2

ՌՈՍՏՈՄ-Ի ՄԱՀՈՒԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՅԱՒԵԼՈՒԱԾԸ ԿԸ ՀՈՎԱՆԱՒՈՐԵՆ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐՊԻՍ ԵՒ ՄԱՐԱԼ ՄԽՃԵԱՆՆԵՐ

№ 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1894

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Տնտեսական անհաւասարութիւնը մեր երկրում, ինչպէս եւ ամէնուրեք, ծագեց այն ժամանակից, երբ աշխատանքի միջոցների կատարելագործման հետ միասին կարելի եղաւ արդիւնաբերել աւելի, քան հարկաւոր էր անհատի գոյութիւնը պահպանելու համար: Եւ որովհետեւ այդ միջոցների կատարելագործման հետ միաժամանակ առաջ եկաւ եւ աշխատանքի բաժանումը-որսորդների կողքին երեւացին անասնապահները, երկրագործները, արհեստաւորները, ուստի այդ տարբեր պարապմունքների տէր դասերի եւ անհատների մէջ անխուսափելի կերպով պէտք էր հաստատուէր արդիւնքների փոխանակութիւն, ուրիշ խօսքով՝ առեւտուր: Հէնց այս ժամանակ կարելի եղաւ ձեռքից ձեռք անցկացնել, մի տեղից միւս տեղ տեղափոխել արդիւնաբերութեան աւելորդը, կարելի եղաւ անհատներին կամ համայնքին դիզել իրենց մօտ հարստութիւն, հէնց այս ժամանակ հասարակութեան մէջ ասպարէզ եկաւ տնտեսական անհաւասարութեան յարատեւ ուժը: Փողը, որ մտցրած էր փոխանակութիւնը դիւրացնելու համար, սկսեց աւելի եւ աւելի մեծ դեր խաղալ հասարակական յարաբերութիւնների մէջ: Փողատէրը նոյնպէս, ինչպէս եւ բռնի ֆիզիքական ուժի տէրը, կարող էր ինքը չաշխատել, չարդիւնագործել, քրտինք չթափել, այլ ապրել փառաւոր կերպով հարիւրաւոր, հազարաւոր աշխատողների հաշուով:

Փողատէրը կամաց կամաց սկսեց հաստատ դիրք բռնել եւ իր ձեռքն առաւ երկրի մի քանի տնտեսական **ֆունկցիաները**: Բայց նա դեռ չի կարողացել իր ձեռքը գցել երկրի տնտեսական կեանքը. նա դեռ անմիջական մասնակցութիւն չունի արդիւնագործութեան մէջ, ինչպէս այդ տեղի ունի տնտեսապէս աւելի զարգացած երկրներում, ուր դրամատէրերն իրենք վարձկան բանուորների ձեռքով հերկում են իրենց հողերը, բանեցնում են գործարանները եւ այլն: Մեզանում՝ փողատէրը կա՛մ կատարում է միջնորդի դեր արդիւնաբերողների եւ սպառողների մէջ եւ օգտուելով, ի հարկէ, երկու կողմիցն էլ), կա՛մ թէ չէ ահագին տոկոսով փող է փոխ տալիս սրան, նրան, գլխաւորապէս արդիւնագործողին. այսինքն նա կա՛մ վաճառական է, կա՛մ վաշխառու: Իսկ բուն արդիւնագործող դրամատիրութիւնը մեզանում դեռ այնքան չնչին եւ այնքան սաղմային դրութեան մէջ է, որ նրա մասին խօսելն անգամ՝ աւելորդ է:

Փողատէր-վաշխառուական դասն իր ցանցերով պատել է ամբողջ երկիրը եւ յաճախ ձեռք ձեռքի տուած կառավարութեան պաշտօնեաների, ազնուականութեան եւ հոգեւորականութեան հետ, երկաթէ ճանկերով քամում է աշխատաւոր ժողովրդի արիւնը: Շնորհիւ իր ունեցած ուժի, նա կարողացել է իր համար փափուկ դիրք ստեղծել, կարողացել է ձեռք ձգել զանազան առանձնաշնորհումներ եւ հարկերի ամբողջ ծանրութիւնը թափել խեղճ աշխատաւոր ժողովրդի մէջքին:

Փողատէր-վաշխառուն դառել է մի տարր, որի հետ անխուսափելի կերպով ընդհարւում են ազգաբնակութեան բոլոր խաւերը: Նրան է դիմում թէ՛ արդիւնաբերողը եւ թէ՛ սպառողը, թէ՛ աշխատանքի միջոցների կարօտ աշխատաւորը եւ թէ՛ զուարճութիւնների յետեւից ընկած ազնուականը: Նրան է դիմում եւ կառավարութիւնն իր ընթացիկ ծախսերը ծածկելու ու իր պարտքերը վճարելու համար: Բացի այդ, անշնորհք տաճիկ կառավարութիւնը իր ապուշ պաշտօնեաներով անընդունակ գտնուելով մինչեւ անգամ իր հարկերն ինքը հաւաքելու, ստիպուած դիմում է փողատէր-վաշխառուների միջնորդութեան: Այսպիսով դրամը դառնում է այն ուժը, որի առաջ գլուխ են խոնարհեցնում թէ՛ ճնշուած աշխատաւորը եւ թէ՛ գոռոզ իշխանաւորը:

Դրամը **կոսմոպոլիտ** է. նա չի ճանաչում ո՛չ ազգ, ո՛չ կրօն, նա նայում է բոլորի վրայ հաւասար աչքով, նա անխտիր կերպով կեղեքում է թէ՛ հային, թէ՛ տաճկին, թէ՛ քիւրտին, թէ՛ եզիտին... նա չի ճանաչում ո՛չ մի սրբութիւն. ո՛չ մի աւանդապահութիւն. նա հիմնայատակ է անում վաղեմի տոհմային կազմակերպութիւնը, խռովութիւններ է ձգում նահապետական ընտանիքի մէջ, քայքայում համայնական կեանքը:

Եւ որքան աւելի է նա զարգանում, այնքան աւելի զօրեղ է դառնում նրա յեղաշրջիչ ուժը, այնքան աւելի է աչքի ընկնում՝ տնտեսական անհաւասարութիւնը, այնքան աւելի խոր անդունդ է բացւում հարուստների եւ աղքատների մէջ, ինչպէս մենք այդ տեսնում ենք տնտեսապէս աւելի զարգացած երկրներում: Այնտեղ այդ անհաւասարութիւնը հասնում է իր գագաթնակէտին. ազգաբնակութիւնը որոշ կերպով բաժանուած է երկու դասակարգի՝ փոքրաթիւ, բայց երկրի հարստութեան տէր **պուրժուազիայի** եւ բազմաթիւ, օրուայ հացի կարօտ **պրոլետարիայի** (բանուոր դասակարգի):

Տնտեսական այդ չարիքի, տնտեսապէս կեղեքող դասի դէմ էլ մենք կը կռուենք այժմ: Մենք գործ կը դնենք ամէն միջոց պահպանելու գոյութիւն ունեցող համայնական սկզբունքները, մենք կ՚աշխատենք տարածել համայնական սեփականատիրութիւնը, համայնական աշխատանքը, որպէսզի աւելի պատրաստ գտնուինք անցնելու այն հասարակական կազմակերպութեանը, որն այսօր-էգուց կը հաստատուի տնտեսապէս աւելի զարգացած երկրներում **պրոլետարիայի** յեղափոխութեամբ:

ՌՈՍՏՈՄ

No 11, սեպտեմբեր 1894
«Դրօշակ»

(Հատուած)

ՌՈՍՏՈՄԻ ՃԱՌԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ 6 ԱՊՐԻԼ 1917-ԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ՀՅԴ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԻՍՏԻՆ

Ընկերնե՛ր, բաց եմ անում Դաշնակցութեան առաջին ազատ Ռայոնական ժողովը՝ ազատ Ռուսաստանում: Մենք ունեցել ենք շատ ազատ միջավայրեր, ուր գործել է մեր կուսակցութիւն - Ամերիկա, Եգիպտոս, Պալքաններ, Պարսկաստան եւ Տաճկաստան: Եւ եթէ մենք այսօր աւելի զուսպ ենք ու չենք խանդավառւում ուրիշների պէս, պատճառն այն է, որ մենք տեսել ենք Տաճկաստանի «ազատութիւնը», որ այնքան աղէտաւոր եղաւ մեզ համար:

Տաճկաստանի եւ Պարսկաստանի ազատութիւններն անկայուն եղան, որովհետեւ նրանց կողքին ապրում էր բռնապետական Ռուսաստանը, որ խանգարում էր նրանց: Հիմա այդ բռնապետութիւնն այլեւս չկայ, եւ ռուսական ազատութիւնը ազատութիւն է բերում ո՛չ միայն Ռուսաստանի ներքին ժողովուրդներին, այլեւ բոլոր տեղերի համար: Ռուսական յեղափոխութիւնը սկիզբն է **սոցիալիստական** յեղափոխութեան, որ մօտալուտ է եւ որ ծայր տուեց համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրում:

Պատերազմի սկիզբին, ամէն տեղ, **սոցիալիստական** կուսակցութիւնները զէնքեր առած դիմեցին հայրենիքի պաշտպանութեան: Հայրենիքը վտանգուած էր, պէտք էր նրան պաշտպանել, եւ մի պահ վերացան բոլոր դասակարգային շերտաւորումները, եւ բոլոր դասերն անխտիր նետուեցին պատերազմի գիրկը: Թւում էր, թէ **սոցիալիստական** շարժումը քայքայւում է, թւում էր, թէ աշխատաւորութեան ուժի վերջն է հասել, եւ **ինտերնասիոնալը** այլեւս կորցրել է իր հմայքը: Իրականութեան մէջ, սակայն, այդպէս չեղաւ. պատերազմի ընթացքին **սոցիալիստների** ազդեցութիւնն աւելի մեծացաւ. նրանք մտան կառավարութեան մէջ եւ ազդեցիկ գործօն դարձան, այնքան ազդեցիկ, որ այլեւս վճռական դեր են խաղում քաղաքական դէպքերի վրայ:

Նոյնը պատահեց եւ Ռուսաստանում: Պատերազմի սկզբին ամէն բան իրար խառնուեց. **սոցիալիստն** ու **պուրժուան** միացան միեւնոյն բանակի մէջ՝ դիմադրելու համար գերմանական գրոհին: Բայց շուտով **դեմոկրատիայի** նշանակութիւնն այնչափ աճեց, որ այլեւս պատերազմի յաջողութիւնն ամբողջապէս նրանից կախուեց: Ցարական կառավարութիւնը, որ առաջ էր բերել պատերազմը, յանկարծակիի եկաւ եւ ստիպուած էր ընտրութիւն անել երկու կարելիութիւնների մէջ. կա՛մ ետ քաշուել եւ անպատիւ հաշտութիւն կնքել թշնամու հետ եւ կամ ընդունել աշխատաւորութեան ազդեցութիւնը: Նա ընդունեց առաջինը եւ փորձեց վերջացնել պատերազմը, բայց այլեւս ուշ էր: Ժողովրդի ցասումը հասել էր իր գագաթնակէտին, եւ յեղափոխութեան փոթորիկը սրբեց տարաւ բռնապետութեան ամենավերջին հետքերը: Ռուս միապետութիւնը ինքն իրեն տապալեց:

Ինչ եղաւ հայ ժողովրդի դերը այս իրադարձութիւնների մէջ: Նա առանց տատանումի իր համակրանքն ու յոյսերն կապեց **դեմոկրատական** սկզբունքների պաշտպան Դաշնակիցների հետ: Հայ յեղափոխական տարրերը զգում էին այն աննորմալ դրութիւնը, որ իրենք ստիպուած են ռուս բռնապետութեան հետ միասին գործել յանուն **դեմոկրատիայի** ոտնակոխ եղած իրաւունքների: Բռնապետութիւնը տապալուեց, եւ հայ ժողովուրդը նորից գտաւ իր դէմքը:

«Այս պատերազմի ընթացքին առանձնապէս ծանր եղաւ տաճկահայերի վիճակը, բայց նա էլ ամենապատուաւոր կերպով բռնեց դժուար քննութիւնը: Նա հրապարակ դուրս եկաւ որպէս **դեմոկրատիկ** գաղափարներով տոգորուած եւ ազատատենչ մի տարր, որ զոհաբերուեց քաղաքակրթութեան սեղանի վրայ: Աշխարհաւեր պատերազմը սարսափելի եղաւ մեր ժողովրդի համար, բայց եւ այնպէս, այսօր էլ, ինչպէս երէկ, մեր առաջին գործը պէտք է լինի նպաստել պատերազմի յաջողութեան, որովհետեւ դրա մէջ է ազատութեան ապահովութեան գրաւականը: «Պատերազմի ընթացքին հայ ժողովուրդը ցոյց տուեց մարտական բարձր ընդունակութիւններ, եւ նրա ներկայացուցիչները մեր մէջ են - Արամը, Ռուբէնը, Վահանը. ողջո՛յն նրանց (դահիճը թնդում է ծափերից): Ողջոյն նաեւ մեր հերոս կամաւորներին եւ նրանց խմբապետներին, որոնցից մի քանիսը նոյնպէս հիմա մեր մէջ են (բուռն ծափեր):

Չմոռանանք եւ այն ծանր կորուստը, որ մենք ունեցանք այս երկու ու կէս տարուայ ընթացքին - Քեռին, Խէչոն, Աւոն, Կորիւնը, Մճոն, Արտաշէսը, Իշխանը եւ ուրիշ շատ շատերը, որոնք ընկան կռուի դաշտում (ժողովը յոտնկայս յարգանք է մատուցանում):

«Ես յիշում եմ այս հիացկոտ խօսքերը, որ մեզ էր ուղղում 1903-ին յայտնի **սոցիալիստ**-յեղափոխական Մինորը, ի տես այն անանման անձնազոհութեան, որ ցոյց էր տալիս հայ երիտասարդութիւնը, որը անվանելի մի զօրութեամբ դէպի երկիր էր վազում՝ մեռնելու համար ազատութեան ճանապարհին. Մինորը բացագանչում էր.- «Ի՞նչ է սրա պատճառը, ո՞րն է այն ուժը, որը այսքան հերոսներ է ստեղծում ձեր մէջ: Մենք այնքան ուժ ու եռանդ ենք վատնում եւ հազիւ մի քանի հերոսներ պատրաստում. ինչպէ՞ս է որ ձեր կէս-գրագէտ, հասարակ երիտասարդները այդպիսի անձնազոհութիւն են ցոյց տալիս»:

Այն ժամանակ որոշ բացատրութիւն էինք տալիս Մինորին, բայց այժմ ինձ համար էլի անհասկնալի է. որտեղի՞ց են այս հերոսները, ո՞րն է այն զօրութիւնը, որ առաջ է բերում Քեռիի եւ Խէչոյի պէս բարոյական տիտաններ:

Շար.ը՝ էջ 3

«ՊՐՈԼԵՏԱՐԻԱՅԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ» . . .

Շարունակուած Ա. էջէն

Մեր այս յաւելուածին առանձին մէկ բաժինով արդէն տուած ենք այդ ծրագիրէն հատուած մը: Բայց, դասակարգային հիմքէ մեկնելով հանդերձ, կայ այդտեղ որոշակի նրբութիւն: Կայ խոր ուսումնասիրութիւն՝ «տաճկահայութեան» ներկայացուցած ազգային իւրայատուկ պայմաններուն, կայ նաեւ խոր գիտակցութիւն, որ ճնշողի եւ ճնշուողի հասկացողութիւնը միայն չ՚արտայայտուիր ազգին մէջ գոյութիւն ունեցող դասակարգերուն փոխյարաբերութեամբ, այլ նաեւ օսմանեան կամ քրտական իշխող տարրերուն՝ հայութեան նկատմամբ արտայայտուող ճնշումներով եւ հալածանքներով:

Ռոստոմը, մեկնելով իր նախադաշնակցական ժամանակաշրջանի գաղափարական կազմաւորումէն, «Տեսութեան» վերջաւորութեան ինքնաբերաբար պիտի արտայայտէր իր գաղափարաբանական կապը մարքսեան մտածողութեան հետ՝ խօսելով «պրոլետարիայի յեղափոխութեան» մասին: Բայց եթէ ընդհանրութեան մէջ առնենք «պրոլետարիայի յեղափոխութեան» վերաբերող եզրը՝ առանց նկատի առնելու նոյն շարադրանքին մէջ գոյութիւն ունեցող ազգային իւրայատուկ պայմանները, մենք վստահաբար թիւրիմացութեան մէջ ինկած կ՚ըլլանք, որովհետեւ շարադրանքին մէջ գլխաւոր մեխը «Տաճկահայաստան»-ի ազգային հարցն է, եւ ոչ թէ՝ դասակարգային հարցը:

Այս շարադրանքէն աւելի քան 25 տարի ետք, գաղափարաբանական առումով, մենք մեր առջեւ կը տեսնենք տարբեր Ռոստոմ մը՝ աւելի հասունցած, իր մտածումները աւելի չափաւորած դասակարգային հարցին մէջ, իր մտածողութենէն մաքրած մարքսեան այն հետքը, որ դրոշմուած կը մնայ անդրանիկ ծրագիրին մէջ, աւելի եւս շեշտաւորած՝ ազգային մտածողութիւնը: Որովհետեւ նաեւ այդ ամբողջ ժամանակաշրջանին հայոց պատմութեան մէջ տեղի ունեցան ճակատագրորոշ իրադարձութիւններ, որոնց ընթացքին Ռոստոմը ստանձնած էր ղեկավար դերակատարութիւն: Նաեւ այդ ժամանակաշրջանին եւ մինչեւ հիմա Դաշնակցութիւնը ինքզինք գտաւ ու կը գտնէ հայութեան ազգային-հոգեւոր արժէքները պահելու եւ պաշտպանելու անհրաժեշտութեան դիմաց:

Եւ այսպէս, 1917-ին ՀՅԴ Ռայոնական ժողովի բացման ճառին մէջ Ռոստոմ կ՚ըսէ. «Մեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները: Մենք ունենք ազգովին վտանգելու հոգսը, եւ մենք չենք կարող անտես առնել այս հանգամանքը: Ամէն անգամ, երբ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալու ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա պուրժուական է, կղերական...Ես կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք եղած ժամանակ պաշտպանէր ազգի շահը»:

Յեղափոխական փոթորկալի կեանքէ մը անցած Ռոստոմը այս հատուածին ընդմէջէն, ուրեմն, մեզի կը ներկայանայ աւելի բիւրեղացած գաղափարաբանական դիմագիծով: Այս նոյն ճառին մէջ ինք կ՚անդրադառնայ նաեւ Սիմոն Զաւարեանին, եւ փաստօրէն հիմնադիր երկու հսկաներուն մտածողութիւնը կը նոյնանայ «բովանդակ ազգի շահերը պաշտպանելու» հարցին շուրջ, որ մինչեւ հիմա ալ Դաշնակցութեան գաղափարախօսութեան հիմնաքարերէն մէկն է: Այս հարցին շուրջ ՀՅԴ Ծրագիրը ռոստոմեան տրամաբանութեամբ կ՚ընդգծէ. «ՀՅ Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր գաղափարաբանութեան, իր բոլոր ուժերով կը նուիրուի բովանդակ հայ ազգի քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային շահերու պաշտպանութեան՝ ի խնդիր Ազատ Հայու, Ազատ Քաղաքացիի եւ Ազատ Հայրենիքի կերտումին»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ...

Շարունակուած Ա. էջէն

Ռոստոմ այցելեց Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսին, կազմուած ինքնապաշտպանութեան մարմինին անունով կտրուկ յայտարարութիւններ կատարեց տեղի չտալու իմաստով եւ խոստացաւ ամէն աջակցութիւն: Կովկասի հայահոծ բոլոր շրջաններուն մէջ դիմադրութիւն եւ ցոյցեր կազմակերպուեցան: Ի վերջոյ ցարական իշխանութիւնը յետս կոչեց հայկական եկեղեցական կալուածները բռնագրաւելու իր որոշումը: Դիմադրական շարժումներուն վարիչ ուժը Ռոստոմն էր:

Հայ-թաթարական կռիւներուն ընթացքին (1906) Արմէն Գարոն ստանձնած էր Թիֆլիսի, Նիկոլ Դումանը՝ Երեւանի, Վարդանը՝ Ղարաբաղի պաշտպանութիւնը, իսկ Ռոստոմ ամէն տեղ էր ինքնապաշտպանական կռիւները կազմակերպելու եւ ղեկավարելու իմաստով:

1907-ին Վիեննայի մէջ ՀՅԴ Դ. Ընդհանուր ժողովին պառակտումի վախեր կային, տարակարծութիւններ յառաջ եկած էին Կովկասեան նախագիծին շուրջ: Ռոստոմ վճռական դեր կ՚ունենայ այդ տարակարծութիւնները հարթելու աշխատանքին մէջ:

1908-ին Ռոստոմ կը մասնակցի պարսկական յեղափոխական շարժումին: 1909-ին ներկայ կ՚ըլլայ Վառնայի մէջ գումարուած ՀՅԴ Ե. Ընդհանուր ժողովին: 1910-ին կը հրաւիրուի Կարին՝ իբրեւ ազգային վարժարաններու տնօրէն: Բարձր Հայքի մէջ ոգեւորութիւն կը ստեղծէ, մեծապէս զարկ կու տայ կրթական գործին, կը կազմակերպէ մշակութային միութիւններ, ժողովրդական դասախօսութիւններ, եւ երբ պահպանողական տարրեր Կարինը կը զրկեն Սանասարեան վարժարանէն, Ռոստոմ բացառիկ ճիգ ի գործ կը դնէ ապահովելու համար Սանասարեանի բացումը ժողովրդական միջոցներով:

1914-ի ամառը Կարնոյ մէջ կը գումարուի ՀՅԴ Ը. Ընդհանուր ժողովը: Համաշխարհային Ա. պատերազմի ընդհանուր մթնոլորտին մէջ, օսմանեան իշխանութիւնները բաղձալի չգտնելով ծանօթ կուսակցականներու ներկայութիւնը Կարնոյ մէջ, կը սկսին հետապնդումներու: Ռոստոմ նոյն տարուան սեպտեմբերին կը ստիպուի Տրապիզոնի վրայով անցնիլ Եւրոպա, իսկ 1915-ին Սկանտինաւեան թերակղզիին ճամբով՝ Կովկաս:

Ռոստոմ համաձայն չէր կամաւորական շարժման, որ սկսած էր ժողովրդական մեծ խանդավառութեամբ, սակայն պէտք էր սկսած գործը վարել, եւ Ռոստոմ նուիրուեցաւ այդ աշխատանքին: Ամբողջ պատերազմին ընթացքին Ռոստոմ ՀՅ Դաշնակցութեան կեդրոնական դէմքն էր, եւ անոր վրայ ծանրացած էր քաղաքական խիստ պատասխանատու աշխատանք: Ան գիտցաւ Փեթերսպուրկի, Մոսկուայի, Թիֆլիսի եւ Պաքուի հայ քաղաքական գործիչներուն հետ ներդաշնակօրէն գործել, եւ հայութիւնը միշտ մէկ ճակատով ներկայացաւ տագնապալի պահերուն: Ռոստոմ հայ կամաւորական խումբերու կազմակերպութեան ընդհանուր ղեկավարն էր, եւ իր հեղինակութեամբ կը կարգադրուէին բոլոր հարցերն ու վէճերը:

Վանի հերոսամարտէն ետք, ռուսական զօրքերուն կողմէ քաղաքին ազատագրումին ժամանակ Ռոստոմ փութաց Վասպուրական եւ հերոսամարտի ղեկավար Արամ Մանուկեանի հետ մշակեց գործունէութեան նոր ծրագիր: Արամ Ռոստոմին մէջ կը տեսնէր Դաշնակցութեան ղեկավար միտքը, իսկ Ռոստոմ Արամը կը նկատէր Դաշնակցութեան զօրաւոր բազուկը:

Ռուսական Փետրուարեան յեղափոխութեան օրերուն արտակարգ աշխատանքի լծուեցաւ Ռոստոմ: Կատարուեցան Ռուսիոյ Սահմանադիր ժողովի ընտրութիւնները, որոնց ընթացքին հայութեան կողմէ ընտրուած 9 պատգամաւորները բոլորն ալ դաշնակցականներ էին: Ռոստոմ անոնցմէ մէկն էր: Ռուսական ժամանակաւոր կառավարութիւնը տրամադիր ըլլալով պատերազմը դադրեցնել՝ այդ նպատակով ուժ տուաւ յուլիս 1917-ին Սթոքհոլմի մէջ գումարուած միջազգային ընկերվարական համագումարին, որուն աշխատանքները արդիւնքի չհասան դաշնակից պետութիւններու բացասական վերաբերմունքին պատճառով: Ռոստոմ մասնակցեցաւ այդ համագումարին եւ ՀՅ Դաշնակցութեան կողմէ տուաւ յուշագիր մը՝ պահանջելով Թրքահայաստանի եւ Կիլիկիոյ ազատագրումը օսմանեան լուծէն եւ Հայաստանի չէզոքութեան երաշխաւորումը միջազգայնօրէն:

Ռուսական բանակի նահանջին պատճառով, երբ վտանգուած էր Պաքուն, այդտեղ կը տեսնենք Ռոստոմը: Զայնի հրաւունքով ան մասնակցեցաւ Ազգային խորհուրդի նիստերուն: Քարիւղի արտադրութեամբ յատկանշուող այս մեծ քաղաքին արագ գրաւումին կը ձգտէին ե՛ւ գերմանացիները, ե՛ւ թուրքերը: Ռոստոմի ներկայութիւնը ոգեւորիչ էր, ան համադրեց քաղաքական եւ զինուորական բոլոր պիտանի ուժերը: Իր հրաւէրով Հիւսիսային Կովկասէն Պաքու եկան Մուրատ, Սեպուհ եւ ուրիշ հայդուկներ: Ռոստոմ սերտօրէն գործակցեցաւ Պաքուի պոլշեւիկներուն եւ անոնց ղեկավարին՝ Ստեփան Շահումեանի հետ, Պաքուի պաշտպանութեան օրերուն: Քաղաքը դիմադրեց թրքական բանակի եւ տեղական թաթար խուժանի մեծ յարձակումներուն՝ մինչեւ 15 սեպտեմբեր, երբ օգնութեան եկող անգլիական փոքրաթիւ ուժեր հեռացան Պաքուէն, մինչ երեք օր ետք Պալքաններուն մէջ կը յաղթէին դաշնակիցները, եւ կը մօտենար ընդհանուր զինադադարը: Պաքուի հայութիւնը 20 հազարէ աւելի զոհեր տուաւ, բայց քաղաքին պաշտպանութիւնը զբաղեցուց թրքական բանակը: Վերջինս ժամանակ չունեցաւ գործադրելու սպասուած նոր յարձակում մը՝ նորանկախ Հայաստանի Հանրապետութեան դէմ: Ռոստոմ՝ Պաքուի դիմադրութեան ոգին, քաղաքէն վերջին մեկնողն էր՝ յուսաբէկ եւ ընկճուած, դէպի Պարսկաստան:

Զինադադարէն ետք Ռոստոմ կը վերադառնայ Թիֆլիս: Հայ-վրացական պատերազմէն ետք կ՚այցելէ իր հին բարեկամ, Վրաստանի վարչապետ Նոյ Ժորտանիային, որ կը բնակէր նախկին ռուս փոխարքային պալատը: Ժորտանիա կը հարցնէ Ռոստոմին. «Կ՚երեւակայէի՞նք, որ օր մը պիտի գտնուինք պետական այս դիրքին մէջ»: «Անշո՛ւշտ: Բայց ինչ որ աներեւակայելի էր՝ երկու բախտակից ժողովուրդներու զինաբախումն էր», կը պատասխանէ Ռոստոմ:

Ռոստոմ Թիֆլիս երթալու ժամանակ ճամբորդած էր բաց վակոնով եւ իր վերարկուով ծածկած էր թաթար հիւանդ տղեկ մը: Բծաւոր տիֆով վարակուած՝ ան անկողին կ՚իյնայ: Ան կը մահանայ 18 յունուար 1919-ին՝ առանց տեսնելու նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը:

Ռոստոմ իր շուրջ 29 տարուան ալեկոծ պայքարով եղաւ Հայկական Յեղափոխութեան անզուգական դարբինը:

ՎՆԱՍԱԿԱՐ ՏԱՐԲԵՐ

Ամէն անգամ, երբ յեղափոխական փոքրամասնութեան անձնազոհ, տոկուն եւ անվհատ գործունէութեան շնորհիւ յեղափոխական կազմակերպութիւնը ձեռք է բերում ուժ եւ ազդեցութիւն, կեանքի մէջ ստեղծւում է հաւատ դէպի գործի յաջողութիւնը եւ հարթւում է որոշ աստիճանով յեղափոխական ուղին, ամէն անգամ էլ հասարակութեան տարբեր խաւերի մէջ իրարանցում է ընկնում: Բայց ընդհանրութեան յեղափոխական ոգու բարձրանալու հետ միատեղ, ամէն մի տեղից վերկացող բախտախնդիր, ամէն մի վաշխառու, կեղեքիչ, մինչեւ իսկ մանիչներ, դաւաճաններ, մի խօսքով ամէն տեսակ սողուններ, որոնք գիտեն հիանալի կերպով յարմարուել հանգամանքներին եւ ամէն տեսակ ջրերում ձուկ որսալ, ասպարէզ են դուրս գալիս, իբրեւ «յեղափոխականներ» կամ յեղափոխութեան համակրող բարեկամներ: Վնասակար են այդ սողունները այդպիսի րոպէներում, երբ փքուն խօսքեր փչելով ու փարիսեցիական ձեւեր բանեցնելով, շահագործում են ամբոխի դիւրահաւատութիւնը ու տգիտութիւնը: Իսկ անտանելի են, ցաւ ու պատուհաս են դրանք յեղափոխական շարժման համար այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը կրում է ժամանակաւոր անյաջողութիւն եւ սկսում են տիրել աւելի վատթար պայմաններ յեղափոխական գործիչների համար: Այդ ժամանակ այդ զազրելի արարածները սուս ու փուս քաշւում են իրենց բները, եւ արդէն «խոհեմութիւն», «հեռատեսութիւն», «ժողովրդասիրութիւն», «միութիւն» եւ այլ դիմակների տակ դարձեալ շարունակում են խաղալ ժողովրդի հետ, աշխատելով մի կերպ քողարկել իրենց իսկական գոյնը: Շարունակելով կրել «յեղափոխական», «ազգասէր» տիտղոսները, դրանք դառնում են իսկական յեղափոխական գործի ամենավնասակար խոչընդոտներ:

Այդ արարածները աղբեր են, որոնք մեծ ու փոքր կոյտերով, տեսակ տեսակ բուրմունքներով եւ գոյներով թափուած յեղափոխական ճանապարհի վրայ, ապականում են յեղափոխական միջավայրը:

Ամէն մի յեղափոխական գործիչ ստիպուած է ժամանակ առ ժամանակ թողնել իր բուն գործը եւ զբաղուել այդ աղբերով, որոնք ընկնում են ոտքերի տակ եւ խանգարում իր կանոնաւոր ընթացքը: Ժամանակ առ ժամանակ, կամայ ակամայ նա իւր վրայ պէտք է առնի այդ զզուելի աշխատանքը, իմանալով հանդերձ, որ իւր ցախաւելի հէնց առաջին հարուածից այդ կոյտերը միանգամից կը բացւեն եւ կը լցնեն օդը իրենց գարշահոտութիւններով: Արձակուած բամբասանքների, զրպարտութիւնների, **ինտրիգաների** մթնոլորտի միջով պէտք է դիմի յեղափոխական իսկական գործիչը դէպի իւր բուն նպատակը:

Կեանքի մէջ տեսնում էինք կուսակցութիւնների միութիւն քարոզող **ուտոպիստներ**, այդ միութեան անունով նոր, իրենց անձնական կուսակցութիւններ կազմողներ եւ այս ձեւով բուն գործից խոյս տուող սնափառներ, անվերջ պատրաստութիւնների ձգտող եւ ոչ մի պատրաստութիւն չտեսնող խոհեմ յեղափոխականներ, զանազան տեսակ խաբեբաներ, **շարլատաններ**. այժմ էլ քիչ չէ բարեսրտութեան դիմակի տակ մտած բախտախնդիրների թիւը, որոնք իրենց ետեւից տանում են միամիտների մի բանակ: Դրանք սկսել են նոր ձեւի տակ մի նոր արշաւանք Դաշնակցութեան դէմ, որի առթիւ աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել.

«Ժամանակ չէ այլեւս յեղափոխութեամբ պարապուել, այժմ հաց պէտք է տալ ժողովրդին եւ ոչ թէ զէնք», լսում ենք ամէն կողմից ժողովրդի դրութեան վրայ կոկորդիլոսեան աղի արցունք թափող փարիսեցիներից:

Իսկապէս, ապա ամենայարմար րոպէն երեւան գալու իբր վերին աստիճանի բարի, զգայուն, փափուկ սրտի տէր մարդ, իբր խոհեմ, ժամանակի պահանջներին յարմարուող, ժողովրդի ցաւերը ճանաչող գործիչ: Բացի այդ, բարեգործութեան դիմակի տակ կարելի է եւ վտանգի չենթարկել իւր անձը, որն այնքան թանկ է հայրենիքի համար. իբր արթուն հովիւ պէտք է հսկել իւր սիրեցեալ ժողովրդի վրայ, չլինի թէ նա մոլորուի եւ տարուի «ծայրայեղ» յեղափոխականների դէպի կորստեան անդունդը տանող գործունէութեամբ: Ահա ամենայարմար րոպէն ամենաարժան գնով ու ամենաանվտանգ ճանապարհով իսկական ազգասէրի մեծ հռչակ ձեռք բերելու:

«Ժողովրդին հաց պէտք է տալ», ասում են մեր ժողովրդի «իսկական բարեկամները»: Ո՞վ է հակառակը պնդում. ո՞վ է ասում, թէ հարկաւոր չէ հաց տալ: Բայց դուք ինքներդ ինչո՞ւ գոնէ այդ չէք անում, ինչո՞ւ այդ պարտքն էլ ծանրաբեռնում էք յեղափոխական կազմակերպութիւնների վրայ: Ո՞ւր էիք դուք, երբ Սասունի կոտորածից յետոյ Դաշնակցութիւնը ստիպուած եղաւ մասամբ շեղուել իւր բուն գործունէութիւնից եւ բարեգործութեամբ զբաղուել, իւր սեփական միջոցներից դրամական նպաստներ բաժանելով բոլորովին անօգնական մնացած երկրին: Ո՞ւր էիք դուք վերջին կոտորածներից յետոյ, երբ դարձեալ Դաշնակցութիւնն առաջինն եղաւ թշուառ, թալանուած, արիւնաքամ ժողովրդին անմիջական դրամական օգնութիւն հասցնողը:

Այժմ էլ, երբ դուք զբաղուած էք միայն հայրենասիրական քարոզներ արտասանելով եւ չնչին կոպէկներ էք միայն հանում ձեր հաստափոր բարեկամների գրպաններից, դարձեալ ամերիկացի, անգլիացի, մինչեւ իսկ գերմանացի եւ շվեյցարացի պաստորներն են մեր ժողովուրդին օգնութիւն հասցնողը:

Ամօ՛թ ձեզ…

«Ժողովուրդին այլեւս զէնք պէտք չէ տալ»: Այս խօսքերն արտասանւում են այն ժամանակ, երբ փաստերը պարզ ցոյց են տուել, որ կոտորուել, թալանուել, աւերուել են այն գիւղերը, ուր ինքնապաշտպանութեան համար զէնքի հարկաւոր քանակութիւնը չկար, երբ արդէն ձեռքի տակ ունինք փայլուն ապացոյցներ, որ այն տեղերը, որտեղ մենք ունեցել ենք զէնք կամ զինուած հայդուկներ, կռուել, պաշտպանել են իրենց կայքը, գոյքը կամ թէ բոլորովին ազատ են մնացել յարձակումներից: Այս խօսքերն արտասանւում են այն ժամանակ, երբ Տաճկահայաստանի ամէն կողմերում, մանաւանդ ազատ մնացած վայրերում, օրէ օր սպասւում են նորանոր ընդհարումներ, երբ կառավարութիւնը պատրաստ իւր տրամադրութեան տակ է պահում իրեն ծառայութիւններ մատուցած համիտիական գնդերին եւ միւս կիսավայրենի լեռնականներին. երբ միւս կողմից զէնքի նշանակութիւնը հասկացած հայ ժողովուրդը յուսահատական աղաղակներ է հանում եւ ձեռքերը պարզած զէնք է հայցում. երբ թալանուած գիւղերն իրենք իրենց մէջ հանգանակութիւն են բաց անում, իրենց վերջին կոպէկները դուրս են հանում զէնք ձեռք բերելու համար:

Ժողովուրդը զէնք է պահանջում, իսկ մեր խոհեմ գործիչներն աշխատում են հաւատացնել ժողովրդին, որ նա սխալւում է. նրան ոչ թէ զէնք է հարկաւոր, այլ հաց…: Հաւատա՞նք այդ խոհեմների անկեղծութեան:

«Հարկաւոր է դադարեցնել յեղափոխական շարժումը», պահանջում են նրանք: Այս կէտում դրանց հետ միանում են եւ նրանք, որոնք վերջին կոտորածների տպաւորութիւնից դեռ չեն ազատուել եւ խօսում են աւելի զգացմունքով, քան թէ խելքով:

Մենք արդէն քանիցս անգամ առիթ ենք ունեցել ցոյց տալ, որ յեղափոխական շարժումն անհնարին է կանգնեցնել, քանի որ հետեւանք է Տաճկահայաստանում տիրող անտանելի պայմանների, եւ քանի վատթարանան այդ պայմանները, այնքան աւելի սաստիկ պէտք կը զգացուի ուժեղ յեղափոխական շարժման: Միմիայն իրերի անկարգ դրութեան բարեփոխումը կարող է վերջ տալ յեղափոխական շարժման:

Պահանջելով դադարեցնել յեղափոխական շարժումը, դրանք կողմնակի կերպով մեղադրում են յեղափոխականներին, համարելով նրանց այդ բոլոր աղէտների պատճառը: Կոտորածների պատասխանատուութիւնը յեղափոխականների վրայ բարդելով եւ յուսահատութեան մէջ ընկնելով, այդ կարճամիտները մոռանում են մարդկային պատմութիւնը. մոռանում են, որ ուրիշ ազգեր աւելի սոսկալի արհաւիրքների միջից են անցել եւ իրենց ազատութեանը հասել. մոռանում են ե՛ւ հայոց պատմութիւնը, դարերի ընթացքում հայերի կրած դժոխային տանջանքները:

Դառնալով վերջին կոտորածներին, հարցնում ենք. չե՞նք չափազանցում արդեօք դրանց բացասական նշանակութիւնը:

Վերջին դէպքերը մեծ հարուած էին հայ ժողովուրդի համար, այդ անհերքելի է. ամէնքն այդ զգացին եւ սոսկացին՝ թէ՛ մենք եւ թէ՛ ուրիշները. զգացինք, որովհետեւ մեր թշնամիները գործում էին սրերով, հրացաններով, որովհետեւ ամէնքի աչքի առաջ արիւն էր հոսում եւ այդ բոլորը կատարւում էր ազատ համարձակ:

Սակայն մենք մինչեւ այժմ էլ նոյնպէս զոհեր էինք տալիս, հայ ժողովուրդն արիւնաքամ էր լինում, հայաբնակ գաւառներն ամայանում էին կամ բռնւում քիւրտերով, չերքեզներով եւ այլ լեռնականներով, բայց ոչ ոքի վրայ այս հանգամանքը հարկաւոր ազդեցութիւնը չէր թողնում, ոչ ոք չէր սոսկում, չէր կատաղում, ոչ ոք չէր մտածում հարկաւոր չափով ժողովուրդի այս անտանելի պայմանների մասին: Այստեղ սուրը հազի՛ւ էր խաղում, արիւնը հազիւ էր հոսում, բայց եւ այնպէս ժողովուրդը ուժասպառ էր լինում եւ լուռ ու մունջ կոտորւում երկրի ընդհանուր պայմանների ճնշման տակ: Ո՞ւր են մեր բազմամարդ հայաբնակ գաւառները, ո՞ւր են նրանց չարքաշ բնակիչները: Թողնենք հեռու անցեալը: Մեր աչքի առաջ դատարկւում են զգալի կերպով Մշոյ դաշտը, Վասպուրականը, Կարնոյ եւ Բաբերդի շրջակայքը, Խնուսը, Բասենը… Մեր աչքի առաջ Ալաշկերտը Բայազէդի հետ միասին կորցրին իրենց բնակիչների 9/10 մասը. զուտ հայաբնակ Խիզանում մնացել է հազի՛ւ մի երկու գիւղ: Մինչդեռ ոչ ոք չի լսել, որ այդ կէտերում կոտորած եղած լինի:

Չէ՛, հայ ժողովուրդը անկարող է ապրել Տաճկահայաստանում տիրող կարգերում. նա ուժասպառ է լինում, նա մեռնում է. նա չէ կարող չբողոքել, ոտի չկանգնել եւ չդիմել յեղափոխութեան, իբրեւ իւր միակ փրկարարին:

Մեր «խոհեմ ազգասէրների» բոլոր քարոզները շատ-շատ կ՚ունենան բացասական նշանակութիւն, կը դանդաղեցնեն յեղափոխական ընթացքը: Կարո՞ղ էք արմատախիլ անել հայ ժողովուրդի արեան մէջ մտած կեանքի նորանոր պահանջները, կարո՞ղ էք փոխել նրա ուղեղը եւ նեարդները, յոյս ունէ՞ք նրան դնել ստրկական, անասնական դրութեան մէջ, - եթէ այո՛, փորձեցէ՛ք, եւ այն ժամանակ միայն դուք կարող էք յոյս ունենալ յեղափոխութեանը վերջ տալու:

Ժողովուրդը սկսել է յեղափոխութիւնը եւ նա կը տանի մինչեւ վերջը, իսկ առայժմ նրան մնում է լաւ ճանաչել յեղափոխական ճանապարհի վրայ ընկած զանազան տեսակ աղբերի իսկական նշանակութիւնը եւ մի կողմը շպրտելով դրանց, անարգել կերպով շարունակել իւր փրկարար կռիւը:

ՌՈՍՏՈՄ

«ԴՐՕՇԱԿ», NO 12, 1 մայիս 1896

ՌՈՍՏՈՄԻ ՃԱՌԸ . . .

Շարունակուած 2-րդ էջէն

Ընկերնե՛ր, մեր նահատակներին յիշելիս՝ ես ուզում եմ մի հին նահատակի յիշատակն էլ յարգել - Քրիստափորի, որը առաջին անգամ՝ 1884-ին թռուցիկ հրատարակեց ռուս կառավարութեան դէմ (ժողովը լուռ ոտքի է կանգնում): Ես յիշում եմ նաեւ առաջին բանուոր յեղափոխականին - ընկեր Միքայէլ Խոջոյեանին՝ մեր բանուոր Մեխակին-, որը ցրեց Քրիստափորի տպած թռուցիկները (Որոտընդոստ ծափեր):

Ընկերնե՛ր, ութսունական թուականներից հայ **ինտելիգենցիայի** տրամադրութիւնն այս էր, թէ ոչինչ պէտք չէ խօսել ու գրել ռուս կառավարութեան դէմ:

Եւ 1892-ին Սիմոն Զաւարեանը եղաւ, որ կարողացաւ յաջողացնել «Դրօշակ»-ի մէջ յօդուած տպելու ռուս կառավարութեան դէմ: Յարգանք նրա յիշատակին (Բոլորը ոտքի են կանգնում):

Այնքան շատ են մեր հերոսներն ու նահատակները, որ հնար չկայ բոլորին թուելու: Ես կ՚ուզենայի, որ նրանց ոգին մեր մէջ լինէր. այս օրերին մենք չկորցնենք մեզ: Ես կ՚ուզենայի, որ Դաշնակցութիւնը, ինչպէս Սիմոն Զաւարեան էր սիրում ասել, «Հայ ժողովրդի բովանդակ շահերի պաշտպանը լինէր»:

Մեր կուսակցութիւնն իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները: Մենք ունենք ազգովին վտանգուելու հոգսը, եւ մենք չենք կարող անտես առնել այդ հանգամանքը: Ամէն անգամ, երբ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալու ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա **պուրժուական** է, կղերական: Իսկ այսօր, երբ ընդհանուր հայրենիքի վտանգուելու վախը կայ, մեզ մեղադրողները իրենք են դուրս եկել ազգովին գործելու: Ես կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք եղած ժամանակ պաշտպանէր ազգի շահը, ինչպէս այդ անում են այսօր անգլիացի եւ ֆրանսացի **սոցիալիստները:**

Ձեռք տանք միւս յեղափոխական եւ **սոցիալիստական** կուսակցութիւններին եւ առաջ գնանք: Եւ յոտնկայս յարգենք յիշատակը այն մարտիկների, որոնք ընկան Ռուսաստանի ընդհանուր ազատութեան համար»:

ՌՈՍՏՈՄ ԵՒ ԱՐԱՄ

Տարբեր սերունդի եւ տարբեր տարիքի մարդիկ, բայց մեր այս երկու թանկագին ընկերները ո՞րքան կը նմանէին իրարու շատ մը տեսակէտներով:

Ամէնէն առաջ՝ իբրեւ սերմնացան: Ուսուցիչ՝ երկուքն ալ, իրենց տքնութիւնը խոր հետքեր կը ձգէր նոյնիսկ այս տարրական եւ խաղաղ ասպարէզին մէջ: Կը յիշենք Ռոստոմը, երբ թուաբանութեան դաս կու տար 8-10 տարեկան մանուկներու՝ ի հարկին ամբողջ դասաժամը յատկացնելով միայն մէկ դանդաղամիտ աշակերտի դասը սորվեցնելու: Եւ այս տաղտկալի ճիգը՝ ամէնէն հասուն տարիքին մէջ. թէեւ ծանրաբեռնուած՝ իր բուն պաշտօնին մտահոգութիւններով, բայց՝ առանց տրտնջալու, միշտ բարի ժպիտ մը դէմքին: Տեսնելու էր, դարձեալ, թէ ի՛նչ ոգեւորութեամբ հարիւրաւոր աշակերտներ կ՚առաջնորդէր դէպի դաշտերն ու սարերը՝ իրագիտական դասեր տալով ճամբան հանդիպած քարի կտորի մը, բոյսի մը, ծաղիկի մը, ծառի մը կամ ճճիի մը մասին: Եւ այս՝ ոչ միայն քաղաքին մէջ, այլ՝ ամէնուր, որ կ՚երթար, Կարինէն մինչեւ Մուշ եւ Սասուն, իրեն հետ առած՝ 10-15 դպրոցականներ, խումբ մը շրջիկներ ալ ետեւէն:

Ուսուցիչ էր նաեւ Արամը: Օսմանեան սահմանադրութեան արշալոյսին, հազիւ ազատած Վանի քստմնելի նկուղներէն, կը հանգստանար Ժընեւ, յետոյ կ՚անցնէր Օրտու, Սեւ ծովու ափը, իբրեւ դպրոցի տեսուչ, յետոյ նորէն Վասպուրական՝ իբրեւ գործիչ եւ ուսուցիչ: Դժուա՛ր է ըսել, ուսուցի՞չն էր, որ կը լրացնէր յեղափոխականը, թէ՞ յեղափոխականն էր, որ սովորական դաստիարակ-վարժապետի միօրինակութենէն կը բարձրացնէր գինքը կախարդական ուժ մը: Աշակերտը, ինչպէս ամբոխը, ոչ թէ դաս կ՚առնէր, այլ կը խմորուէ՛ր իր նայուածքին տակ, կը թրծուէր ինքնաբերաբար, հասարակ ընթերցարանը կը դառնար կենդանի աշխարհ մը, ուր պճլտուն աչքեր հաճութեամբ կը գտնէին՝ ինչ որ կ՚ուզէր սորվեցնել ուսուցիչը:

* * *

Այն նոյն թաթաւուն անզգալի, այլ տիրական եւ յարատեւ գիծը՝ նաեւ կուսակցական կեանքի մէջ, քաղաքական-յեղափոխական գործունէութեան ընթացքին:

Ճիշդ է, որ խառնուածքի տարբերութիւնը կը շեշտուէր այստեղ: Ռոստոմը՝ միշտ լռակեաց եւ ստուերի մէջ, կը խուսափէր աղմուկէն եւ ամբոխէն, բայց կ՚երեւար ամէն տեղ: Աւելի շատ՝ պարզ խմբական ժողովներու, քան՝ միթինկներու: Եթէ ստիպուէր բեմ ելլել, համեստօրէն կը նստէր աթոռին վրայ՝ «զրոյց անելու», ոչ թէ ճառ խօսելու համար: Իսկ իր զրոյցները… Ափսո՛ս, որ ոչ իսկ պատճէն մը կայ թուղթի վրայ: Ինքն իսկ արգիլած է գրի առնել:

Արամը, աւելի տաքարիւն, նոյնքան սիրելով հանդերձ մրջիւնի աշխատանքը, վախ չունէր ամբոխէն, եւ ռմբաձիգ բառեր կը հոսէին իր բերնէն, բեմի վրայ: Հռետոր չէր, բայց պողպատի ձայն կու գար իր խօսքերէն: Կը պոռթկար անճիգ եւ անարուեստ, բայց կը զգայիր, որ միտքն ու կամքը զուգընթաց կ՚երթան:

Ինչպէս տարբերութիւնը, միացման գիծն ալ այստեղ կը շեշտուէր: Բեմէն, հրապարակէն, աղմուկէն յետոյ երկուքն ալ՝ Ռոստոմը եւ Արամը, կարծես միեւնոյն մարմնին երկու թեւերն էին, որ առանց նեղութիւն պատճառելու՝ կը գրաւէին, գործի կը պահէին բոլոր պիտանի տարրերը: Կը թուի, թէ (արդեօք իրենց գիտութեա՞ն բերումով) երկուքին համար ալ գաղտնիք չունէր մարդիկը տարրալուծելու յատկութիւնը: Մէկ տղայ, մէկ աղջիկ, գիւղացի, մտաւորական, խումբ մը երիտասարդներ, - փոյթ չէ, կը բաւէ, որ հանդիպեցան մէկուն կամ միւսին սուր հայեացքին, իրենց այս կամ այն գիծով, այլեւս ազատում չկար: Միայն մէկ լաւ յատկանիշ բաւական էր, որ երկուքն ալ մոռնային թեկնածուին գէշ կողմերն ու ճգնէին գործի մղել զայն՝ այդ մէկ բարեմասնութեամբ սրբագրելու համար թերիները:

Այսպէ՛ս է, որ ե՛ւ Ռոստոմին ե՛ւ Արամին հետ կապուած անուններ, ամէնէն համեստէն մինչեւ ամէնէն փայլունը, դարձած են հաւատարիմ եւ գործօն զինուորագրեալները ՀՅ Դաշնակցութեան: Սովորական չեն եղած անունք, այլ մասնիկները կամ ժառանգորդները՝ վարպետներուն զանազան յատկութեանց:

* * *

Ամեհի լերան մը կողքին թառած կաղնի մըն էր Ռոստոմը: Աւելի ճիշդ՝ ժայռի ստորոտէն բխած վճիտ առու մը, որ կը հոսի ու կը ժպտի, որ հետքեր կը ձգէ ու կը խուսափի, մերթ ծածկուած՝ թուփերու տակ, մերթ խառնուած՝ մեր ջուրերուն: Ե՛ւ ներկայ, ե՛ւ բացակայ, ե՛ւ այստեղ, ե՛ւ այնտեղ: Իրեն համար չկար գործին մեծն ու պզտիկը, խոնարհն ու շքեղը: Եւ իրեն համար չէին մեծ ոստաններն ու քաղաքները: Տարին մէկ անգամ Պոլիս կու գար Կարինէն՝ օրերը համրելով: երեք օր կամ մէկ շաբաթ՝ կուսակցական գործերու համար:

Յետոյ երեք օր ալ Ժընեւ՝ կինը տեսնելու: Եւ գօտեպինդ վերադարձ՝ դէպի Կարին: Այն աստիճան արագ, որ կը մերժէր ճամբորդի կառք առնել Տրապիզոնէն ու կը նստէր թղթատարական սայլը, որպէսզի, փոխանակ վեցի, երեք օրէն հասնի Կարին, անշուշտ, գիշեր ցերեկ քշելով սայլը, սուրհանդակին հետ քով քովի: Յաճախ կը պատահէր, որ ընկերները թելադրէին Պոլիս մնալ՝ իբրեւ Բիւրոյի անդամ, քանի որ այնտեղ էր կուսակցութեան վարիչ կեդրոնը: Շատ կարճ էր Ռոստոմի պատասխանը.

- Եթէ դժգոհ էք Երզրում կենալէս, պատրաստ եմ Խարբերդ անցնելու:

Եւ մինչեւ Մեծ Պատերազմը մնաց Կարին՝ թէ՛ իբրեւ Բիւրոյի անդամ եւ թէ՛ իբրեւ ազգային դպրոցներու տեսուչ, - յիշելով միայն իր գլխաւոր պաշտօնները:

Չափազանց բարեհամբոյր՝ ընկերական կեանքի մէջ, փիլիսոփայի պէս ներողամիտ՝ ոչ դաշնակցականներու հանդէպ, առիւծի պէս կը մռնչէր Ռոստոմը՝ ապացուցուած յանցանքի մը ատեն: Միս-միսակը, մէկ նայուածքով եւ երկու բառով զինաթափ կ՚ընէր ամէնէն անոպայ զեղծարարը, կը խոստովանեցնէր ամէնէն քարացած խաբեբան: Իր կեցուածքն իսկ ահ ու դողի կը մատնէր յանցաւորը, կամ՝ խումբ մը յանցաւորներ միասին, դէմ դիմաց: Թերեւս մեր անդրանիկ ընկերներէն ոչ մէկուն առջեւ այնքան սարսուռ զգացած են մեր շատ մը ընկերները, որքան՝ Ռոստոմի բարոյական սաստին տակ: Լեռ ըլլար, կը փլէր անոր երեւութապէս խաղաղ, ժպտուն, այլ հատու ակնարկէն:

Այլապէս եզակի տիպար մըն էր Արամը: Վարժ՝ բուռն ձեւերու, յաճախ ձեռքը՝ մաուզէրին, ան կրանիտ կը դառնար վտանգի պահուն, որ վճիռներ կ՚արձակէր կատարեալ ինքնավստահութեամբ: Գրեթէ անսխալ էր որպէի պահանջը ըմբռնելու տեսակէտէն: Ամբոխը շատոնց մոռցած էր նախասահմանադրական շրջանի դաւադիր Արամը, եւ իր առջեւ կը տեսնէր հանրային գործիչը, մշակութային աշխատանքի նուիրուած ուսուցիչը:

Եկա՛ւ 1915 ապրիլը՝ հայաջինջ սարսափներու բոլոր նախանշաններով: Իշխանը սպաննուած՝ դաւադրաբար, Վռամեանը ձերբակալուած՝ նոյն խարդախութեամբ:

Եւ Արամը կու տայ Վանի ապստամբութեան մարտակոչը՝ առանց մէկ վայրկեան տատանելու: Ուսուցիչը կ՚անհետանայ յանդուգն յեղափոխականին առջեւ:

Նոյն վճռական թափը՝ 1918 մայիսին: Վասպուրականը՝ նահանջի հարկադրուած, այնքան գերմարդկային ճիգերով շահուած նուաճումները՝ վտանգի տակ, Երեւանը՝ շղթայակապ եւ հեղձամահ. հարիւր հազարաւոր փախստականներ գալարուն՝ կեանքի եւ մահուան ալիքներուն մէջ. ո՛չ բարեկամ ուժ, ո՛չ ապաւէն: Թշնամին սրընթաց կը քրքջայ՝ դանակը շողացնելով…

- Կռի՛ւ, - կը գոռայ Արամը: Ու իր մոգական խօսքին տակ, ամբողջ ժողովուրդ մը մէկ մարդու պէս ոտքի կանգնած՝ կը խոյանայ դէպի Սարդարապատ եւ Ղարաքիլիսէ՝ զարնելու եւ զարնուելու համար: Թերեւս ինքն ալ կը կասկածէր յաղթական ելքէն, բայց պատրանք չէր այլեւս. Խալիլ փաշաները խաղաղութեան դափնիներով կը դիմաւորեն արժանաւոր հակառակորդը:

Դաշնակցութիւնը չի սիրեր աստուածացնել անհատները, ինչքան ալ բարձր արժանիք ունենան: Դաշնակցութեան համար անհատը խտացումն է հաւաքական առաքինութեանց: Կենդանի, տեսանելի եւ շօշափելի արտայայտիչը՝ հաւաքական կամքին: Բայց ժողովուրդը, որ ունի իր առանձին աշխարհահայեացքը, այնքան տարերային ու հարազատ, 1918 մայիս 28-էն յետոյ Արամը հռչակեց իբրեւ հիմնադիրը հայկական անկախութեան: Եւ, անշուշտ, սխալ չէր այս եզրակացութիւնը, մեր ժամանակակից պատմութեան ամէնէն ճակատագրական օրերուն համար:

«ԴՐՕՇԱԿ»

Շար.ը՝ էջ 9

ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿ-ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՍԵՒԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մահուան 100-ամեակին առթիւ(*)

Փոխան յառաջաբանի

ՀՅ Դաշնակցութեան Պոսթընի կեդրոնական արխիւին մէջ կը պահուին շարք մը ծաւալուն տետրակներ կամ տոմարներ, որոնք ուշադրութենէ դուրս մնացած են, հետեւաբար նաեւ չեն ուսումնասիրուած: Մինչդեռ մեր ազատագրական պայքարի պատմութեան բազմաթիւ դրուագներու յաւելեալ պարզաբանման տեսակէտէն անոնք յատուկ նշանակութիւն ունեցող փաստաթուղթեր են:

Այս վերջիններէն կարելի է թուել սեւագրութիւն կոչուած տետրերը, որոնք կը բովանդակեն գաղտնի թանաքով արտագրուելիք այն նամակները, որոնք սահմանուած էին ուղղուելու օսմանեան Թուրքիոյ եւ ցարական Ռուսիոյ մէջ գործող կուսակցական մարմիններու կամ ղեկավար ընկերներու: Գաղտնապահութեան նկատումներով անհրաժեշտ էր ձեռք առնել ծածկագրութեան այլազան միջոցներ՝ շրջանցելու համար այդ պետութիւններէն ներս գործող խստագոյն գրաքննութիւնը: Այդ միջոցներէն մէկը անգոյն մելանի գործածութիւնն էր, եւ, Բիւրոներու ցուցմունքը այդ ուղղութեամբ շատ յստակ էր,- «կարդալէ ետք փճացնել»: Հարկ է ըսել, որ հրահանգը գործադրուած է տառացիօրէն, որովհետեւ տարիներու ընթացքին մեր կատարած պրպտումները ցոյց կու տան՝ իրենց վերջնական տեսքով այդ նամակներէն հետք չէ մնացած մեր արխիւներուն մէջ: Բացառութիւն կարելի է նկատել անոնցմէ մէկը միայն՝ Արեւմտեան բիւրոյի կողմէ Ժընեւէն գաղտնի թանաքով Վան ուղարկուած գրութիւն մը, որ բաւական յաջողութեամբ «բացուած» ու արտագրուած է Արամ Մանուկեանի կողմէ: Այսպէս, նման բնոյթի բազմահարիւր գրութիւնները վերջնականօրէն կորսուած պիտի համարուէին, եթէ Ժընեւի պահոցներուն մէջ (այժմ Պոսթըն) բծախնդրօրէն պահպանուած չըլլային անոնց բնագիրները բովանդակող սեւագրութեան վերոյիշեալ տոմարները:

Գոյութիւն ունին մէկէ աւելի սեւագրութեան նման տետրեր:

ՀՅ Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմի (Ստեփան Զօրեան) մահուան 100-ամեակի նշումին առիթով, անոնցմէ առանձնացուցած ենք No 89ա-1 համարը կրող վաւերագրերու 172 էջնոց տոմարը, որ կը կրէ հետեւեալ պիտակը - «Արեւմտեան բիւրօ - գաղտնի թանաքով գրուած նամակների սեւագրութիւններ, մայիս 1904 թ.»: Այդ թուականի մայիս ամիսը կը վերաբերի Քրիստափոր Միքայէլեանի երկու նամակներուն, ուղղուած Մուշ՝ Ասքանազեան կոմիտէին եւ Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին: Տետրին մէջ թէեւ այլ գրիչներու պատկանող մէկ քանի ուրիշ նամակներ ալ կան, սակայն ամբողջութիւնը կարծէք վերապահուած եղած է Ռոստոմին, որուն ձեռքով գրուած են մնացեալ 67 նամակները, որոնցմէ վերջինը յունուար 5, 1905 թուականը կը կրէ:

Ռոստոմի նամակներուն մէկ կարեւոր մասը ուղղուած է Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին եւ կը շօշափէր գլխաւորաբար 1904 թ. Սասնոյ ապստամբութեան առնչուող հարցեր: Քիչ չեն նաեւ կուսակցական այլազան մարմիններուն սահմանուած գրութիւնները, ինչպէս Վան, Կարս, Պաքու, Պաթում, Պոլիս, Կիլիկիա եւ այլն, որոնք կ՚արծարծեն, բացի կազմակերպականէն, քաղաքական խնդիրներ, Սուլթան Համիտի մահափորձէն սկսեալ մինչեւ զինական եւ դրամական առաքումները: Անոնց ընթերցումը անգամ մը եւս կը բացայայտէ Ռոստոմի կազմակերպչական արտասովոր տաղանդը եւ, ինչպէս ըսուեցաւ արդէն, կը լուսաբանէ պատմական շատ մը հարցերու անյայտ մնացած իրողութիւնները, պարզաբանելով միաժամանակ անոնց մշուշով պատած էջերը:

ԵՐՈՒԱՆԴ
Գ. ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

(Պէյրութ)

ՀՅԴ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ ՓԱՍՏ. 89Ա-1

1.

էջ 10-11
Մայիս 15 [1904]
ՄՈՒԾ(1)

Շրջաբերականը անընդհատ ստացուում է. դա նշանակում է, որ ուղարկւածները հիմա չեն բռնւում:

Հաշւեպահութեան մասին

Աւետիքը(2) ե՞րբ է գալու: Շատ ցանկալի է իրենից ունենալ տեղեկութիւն, թող շտապի գրել:

Մեզ հասնում են այլեւայլ լուրեր զէնքերի, փամփուշտների կորուստների մասին: Գրեցէք, թէ որքան է եղել գնւած, որքանը բռնւած: Ասում են նոյնպէս, որ մեծ մասը անպէտք է դուրս եկել ճի՞շտ է արդեօք: Էդ էլ ձեզ անկախ, յատուկ մարմին զէնքեր գնելու համար(3):

Էրզրումից հեռագիր կայ, որ սահմանը անցկացած մի խումբ, 42 հոգի, ընդհարում է ունեցել. 25-ը կամ 30-ը սպանւել են, 5 գերի բռնւել. միւսները ազատւել են: Մի ուրիշ խմբի ընդհարման ժամանակ Սասունի մօտակայքում գերի է բռնւած ռուսաց զօրքի մի սպայ: Թումոն(4) չլինի՞:

Ինչ լուր ունիք Պարսկաստանից:

Երբ խումբը անցնում է, ժամանակին տեղեկացրէք մեզ, որպէսզի թերթերում երեւցած հեռագիրները հանելուկ չմնան:

1.- Ռոստոմի ձեռագիր: Գրութեան հասցէն չէ ճշդուած: Բովանդակութենէն դատելով պէտք է ուղղուած ըլլայ Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին:
2.- Արդեօ՞ք Սահակեանը (Հայր Աբրահամ):
3.- Ակնարկութիւնը կ՚երթայ Շիֆոնին (զինուորական ֆոնդ), - Անդրկովկասի մէջ ստեղծուած յատուկ մարմին՝ զէնք-զինամթերքի մատակարարման համար:
4.- Արդարեւ Թումեանց Թումանն էր, այլապէս ծանօթ Թորգոմ ծածկանունով, որ Որ սկան խումբի գլուխը անցած ճամբայ ելած էր Սասնոյ ապստամբներուն օգնութեան հասնելու համար: Օլթիի շրջանէն հագիւ թրքական սահմանը անցած, 1904 թ. յունիս 30-ին խումբը ռուս եւ թուրք սահմանապահ զօրքերու միացեալ յարձակման ենթարկուեցաւ. Թուման Թումեանց եւ իր ընկերները նահատակուեցան՝ զոհ դառնալով ռուս սահմանապահներու դաւադրութեան:

2.

էջ 11
ԲԱԳՈՒ

1) Արտաբիլի, Ռեշտի վրայով, Աստարա ուղարկւած են եւ ուղարկւելու են ահագին քանակութեամբ թերթեր, գրքոյկներ, կլիշէներ, հայերէն եւ ռուսերէն: Անհրաժեշտ է, որ շաբաթը մի մարդ գնայ բերի: Պէտք է լաւ կազմակերպել, որ չամբարւեն:

2) 4-5-6 համարում մանրամասնութիւններ գործի մասին(1): Ընդհանրապէս լաւ է:

Յետ եկած վիճակախաղի տոմսակների համարները ուղարկւած են .....(2):

Ձեր ուղարկած թղթակցութիւնները Պետրովսկից եւ ուրիշ տեղերից տպւած են Daily News-ի մէջ: Պրեսանսէի հեռագիրը ստացւած է: Չափազանցութիւններից խոյս տուէք:

Ամէն անգամ մենք կը յայտնենք, թէ որքան եւ ուր ենք ուղարկում. դուք էլ յայտնեցէք ստացածների թիւը:

Շուտ շուտ տեղեկութիւններ:

Օդեսա նամակ գրէք զգոյշ կերպով, վաճառականի նամակի ձեւով:

Գրւած 30 յունիս (3)

1.- Կը վերաբերի «Դրօշակ»-ի յիշուած համարներուն մէջ տրուած լուրերուն:
2.- Բնագրին մէջ տրուած է հասցէն՝ ռուսատառ:
3.- Ռոստոմի ձեռագրով եւ սեւ հաստ մատիտով աւելցուած:

3.

էջ 12
ՋՐԱԲԵՐԴ(1)
Տեղեկութիւններ դրութեան մասին(2)

Ստացուե՞լ են առաքումները - «Դրօշակի» հաւաքածու, - զանազան բրոշիւրներ եւայլն, որ ուղարկել էինք Վրէժստանով(3) սրանից մօտ 3 ամիս առաջ(4):

1.- Ջրաբերդ ծածկանունն է Կարսի, որուն ուղղուած պիտի ըլլար գրութիւնը:
2.- Այս տողը կը նշանակէ, որ գաղտնի թանաքով արտագրութեան ատեն հարկ է տեղեկութիւններ հաղորդել դրութեան մասին:
3.- Վրէժստանը կամ Վրէժը Ատրպատականն է:
4.- Վերջին պարբերութիւնը (շեղագիր) Միք. Վարանդեանի ձեռագրով է:

4.

էջ 12
Գրւած 2-ին յուլ.
ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏ(1)

Յուլիս 6-ին (ըստ եւր[ոպականին])(2) ուղարկւելու են թերթեր եւ գրքոյկներ: Նշանախօսը՝ Elba No 05: Խնդրւում է ժամանակին գալ եւ զգուշութեամբ դուրս տանել:

«Դրօշակ»-ը ինչպէ՞ս է բաշխւում.- որքա՞ն է մնում ձեր շրջանում, որքա՞ն էք ղրկում Մ[եծ] Ք[աղաք](3) եւ ուրիշ տեղեր: Ծրարները եւ մեր նամակը ստանալուց՝ խնդրում ենք միշտ տեղեկացնել մեզ, որպէսզի ըստ այնմ կարգադրենք առաքումները մեր միւս գծով (Վրէժ):

1.- Պաթում (Նաւահանգիստ) ուղարկւած այս նամակին առաջին պարբերութիւնը կը պատկանի Ռոստոմի գրչին, շարունակութիւնը՝ Միք. Վարանդեանի:
2.- Այսինքն՝ նոր տոմարով:
3.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է:

5.

էջ 13
Գրւած յուլ. 3, 1904
Արեւել. բիւրօ(1)

Զանազան խմբեր հայ գաղութներից դիմումներ են անում: Լաւ է բոլոր վայրերին մասնակից անել՝ առաջարկելով ամէն տեղից 2-3 հոգի ընկերներ պատրաստել եւ ուղարկել: Նոր հասցէներ ուղարկէք թէ այդտեղից եւ թէ ուրիշ տեղերից: Հեռագիրներ չուղարկել Թաւրիզից: Տեղեկութիւնները կը գրենք միայն Արեւել. բիւրոյին, որը թող շրջաբերականներով հաղորդի կոմիտէներին:

* * *

Ասխաբադի կոմիտէին գրել, թէ Բագւից իրենց ստանալիք 10 օրինակ «Կովկասեան վէրքերը»(2) ղրկեն քահանայ Բէգ Գիւլեանին, Սամարղանդ:

Գրել եւ մի քանի տեղեկութիւններ դրութեան մասին:

* * *

Խնդրւում է ձեր տպագրւելիք թռուցիկները եւ այլ հրատարակութիւնները, նամանաւանդ զինւորական խմբերի, ներքին կազմակերպութեան (Տարօնի եւ այլ շրջանների), կանոնագրութիւնները (տպագրւած թէ ձեռագիր) ուղարկէք մի քանի օրինակներով Ալեքսանդրիա (Եգիպտոս) Dr. Gar. Pachayan-ին(3), Կիլիկիայի շրջանի համար:

1.- Այս նամակը գրւած է երեք տարբեր ձեռագրերով: Առաջին պարբերութիւնը Ռոստոմին է. երկրորդը՝ Վարանդեանին, իսկ երրորդը՝ Սիմոն Զաւարեանի:
2.- «Դրօշակ»-ի մատենաշարով հրատարակւած Է. Ակնունիի գիրք:
3.- Բժ. Կարապետ Փաշայեան (1864-1915), Դաշնակցութեան ներկայացուցիչ Եգիպտոսի մէջ:

6.

էջ 19-21
Գրւած յուլ. 11ին
ՄՈՒԾ

Ստացանք ձեր յունիս 8-ի (թէ 3-ի) նամակը:

Նախ եւ առաջ խնդրում ենք ամէն անգամ տեղեկութիւն տալ այդ վայրերում գտնուող բոլոր ընկերների մասին: Անդրանիկի ողջ եւ առողջ լինելու լուրը մեզ շատ ուրախացրեց, սակայն դժբախտաբար Վահանի(1) եւ միւսների մասին ոչինչ չէիք հաղորդել: Ցանկալի են յատուկ տեղեկութիւններ՝

1) Հիւպատոսների ընթացքի մասին, մասնաւորապէս ռուսականի.

2) Ժողովրդի զանազան խաւերի տրամադրութեան մասին.

3) Զոհերի եւ աւերումների մասին: Այստեղ ձեր ուշադրութեանն ենք յանձնում հետեւեալ հանգամանքի վրայ: Ցայտնի է, որ դէպքերի անմիջական ազդեցութեան տակ, ականատեսներն ընդհանրապէս չափազանցնում են եղելութիւնը: Ձեր նամակներից երեւում է, որ դուք էլ աւելի մռայլ էք ներկայացնում աղէտները: Դրանից խոյս տալու համար աւելի լաւ է փորձել դիմել վիճակագրական ձեւին, այնպէս, ինչպէս իր ժամանակին արին Սասունի վերաբերմամբ մեր հանգուցեալ ընկերներ՝ Թաթուլը ու Ապրոն(2):

Ի՞նչ գաղտնիքներ կարող էին իմանալ բռնւած թղթերից. մեր մելանի գաղտնիքը յայտնւա՞ծ է, թէ ոչ:

Ի՞նչ չափով գործադրւեցան Սուլթանի խոստումները՝ 1) ընդհանուր ներում շնորհել 2) սասունցիներին իրենց տեղը դարձնել 3) աւերուած տները վերաշինել 4) նպաստ բաժանել:

Ինչպէ՞ս են վարւում այն հայերի հետ, որոնց զէնքը ձեռքին են բռնում: Որքա՞ն խիստ է զինւորական դատարանը: Ի՞նչ օգնութիւն է լինում. ո՞ր տեղերից. ի՞նչ եղան մեր փոխադրած գումարները. դեռ ձեր ձեռքը չհասա՞ն:

Դրամական նպաստի համար կ՚աշխատինք աղբիւրներ գտնել. արդէն 5.000 fr[anc] յանձնւած է Պրեսանսէի(3) միջոցով արտաքին գործոց նախարարին, որ նա ուղարկի ֆր[անսական] հիւպատոսին կարօտեալներին բաժանելու համար (գաղտնի պահէք): Ինչպէս լսում ենք, Անգլիայում ժողովարարութիւն(4) է կատարւելու սասունցոց եւ մշեցոց օգտին:

Լոնդոնում կայացած համաժողովը թէեւ հրապարակօրէն մի առանձին արդիւնք ցոյց չտւեց, բայց առիթ եղաւ զանազան երկիրների ներկայացուցիչների միջեւ մի ընդհանուր համաձայնութիւն մշակելու խնդիրը առաջ տանելու համար: Թւում է, որ այս անգամ Անգլիան լուրջ քայլեր է մտադիր անելու: Նախընթաց դառը դասերն են, որ արգելում են մեզ աւելի լաւատես լինել ապագայի վերաբերմամբ: Մտադրութիւն կայ հիւպատոսների թիւը աւելացնել: Խօսք կայ նոյնպէս Հայաստանում մտցնել եւրոպական սպաների ձեռքով տեղական ժանդարմերիա, այնպէս, ինչպէս անում են Մակեդոնիայում: Իտալիայում տեղի ունեցան աղմկալից ժողովներ յօգուտ մեր դատին: Եթէ Ռուսաստանը շարունակի պարտութիւններ կրել, գուցէ մեր հարցը աւելի համարձակօրէն դրուի:

Ձեր տուած տեղեկութիւնները կը հաղորդենք եւրոպական կարեւոր թերթերին, որոնք պատրաստ են մեր դատին աջակցելու:

Մասնաւորապէս խնդրում ենք հասցնել տեղի ունեցած բոլոր կռիւների, ընդհարումների, անհատական թէ խմբական ընդդիմադրութիւնների, անձնազոհութիւնների մանրամասը նկարագրութիւնները: Հիւպատոսներին դադար մի տուէք, շարունակ նիւթեր մատակարարէք:

Ուղարկելով ձեզ մեր ջերմ ընկերական համբոյրները, խնդրում ենք շարունակական տեղեկութիւններ հաղորդել իրերի դրութեան մասին:

1.- Անդրանիկը հայդուկապետն է: Վահանը (Մանուէլեան) Դաշնակցութեան լիազօր ներկայացուցիչը Սասնոյ 1904 թ. ապստամբութեան օրերուն:
2.- Աշոտ Թաթուլ՝ Արամեան Արամ, դաշնակցական հին մարտիկներէն, որ գործած է Կարս, Բասեն, Սասուն: Ամբողջ երեք տարիներ Կարնոյ բանտը մնալէ ետք, կեանքին հրաժեշտ տուաւ թրքական կախաղանին վրայ «Կեցցէ յեղափոխութիւնը» գոչելով: Ապրոն (Սահակեան Մկրտիչ) նոյնպէս հին ֆետայի, Թաթուլի ընկերներէն. զոհ գնաց Սասնոյ մէջ ձիւնամրրիկի:
3.- Ֆրանսիս տը Պրեսանսէ, ֆրանսական խորհրդարանի պատգամաւոր եւ Pro-Armenia-ի խմբագրութեան անդամ:
4.- Հանգանակութիւն:

7.

էջ 14-15
Յուլ. 14-ին
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Հաշւի խառնելու մասին (Արեւմտ. բիւրոյից ստացւած 10.000 ր[ուբլու] առթիւ):

Օդեսայի նւիրատւ[ութեան] մասին յայտնել: Կոնստանցայի դրամի մասին:

Ստացւեց «Թմբուկ» կոմիտէի(1) հաշիւը, ուղարկւած Բագու բոլորովին բաց: Ուշադրութիւն ! Ախալքալաք անունը պարզ գրւած:

Էլլէնի(2) գրելով՝ Բերարը եւ Լօրիսը(3) գոհ են Լոնդոնի միտինգից: Տրամադրութիւնը աւելի վճռական է եղել: Կազմւել են տեղական մասնաժողովներ գործը շարունակելու համար: Ի միջի այլոց Դելկասէն(4) յայտնել է, որ մտադիր է Մայիսեան ծրագիրը առաջ քշել:

Կտրօնները ստացւո՞ւմ են արդեօք:

Կար[եւորութ]եամբ յանձնարարէք ուղարկի նոր լոյս տեսած գրքերից: Մրգաստան յայտնէք, որ իրենց կնիքը Ոսկեհանքից(5) ուզեն:

Շուշուայ, Գանձակի, Երեւանի, Ալեքսանդրապոլի դատավարութեանց մանրամասնութիւնները եւ եթէ կարելի է,- մեղադրական գործերը:

Ստացանք յունիս 20 նամակը: Նամակագիրը մի քանի տողեր չոր գրչով է գրել(6). գրելիս թող նայի, մի բան թղթի վրայ գծւում է թէ ոչ:

Հեռագիրներ ուղարկէք անմիջապէս Պարիզ աւելի կարեւոր դէպքերում եւ ամէն անգամ մեզ հաղորդէք, թէ երբ եւ ինչ հասցէով է ուղարկւում: Կայծակի կռւի մասին(7) հեռագիրներ ուղարկեցինք մի քանի թերթերի. լոյս տեսան: Նոյն տաքտիկան այն ժամանակ յաջողութիւն կ՚ունենայ, երբ արագ եւ յանկարծակի լինի, ժամանակ չտրւի թշնամուն իր զօրութիւնը աւելացնելու: Երէկ հեռագիր կար, որ Վանայ վիլայէթում 39 հոգի հայեր Կովկասից անցած շրջապատւում են քրդերից եւ կոտորւում: Ի՞նչ կարող է դա լինել: Չգիտենք, թէ ինչ է տեղի ունեցել ձեր մէջ: Բայց երեւում է, որ Դումանը(8) շատ դժգոհ է գնացել ձեզանից: Լօրիսը ստացել է կոնդակը. օրիորդը(9) դեռ չի երեւացել: Դժոխքի(10) կենսագրութիւնը ստացանք: Խնդրում ենք ամէն տեսակ կենսագրական նիւթեր, ինչ ձեր ձեռը կ՚ընկնի, անմիջապէս ուղարկէք: Չհասկացանք, թէ ինչու Աւետիսը(11) չի ուզում գալ. այդ տեղն չկարդացւեց: Տեղի ունեցած ցոյցի մասին էլ չկարողացանք բոլոր խօսքերը կարդալ: Օրիոր-

դի մասին մանրամասը գրէք: Նամակները մի ուշացրէք:

1.- Թմբուկը կուս. ծածկանունն է Ախալքալաք քաղաքի եւ ընդհանրապէս Ջաւախքի:
2.- Էլլէնը Քրիստափոր Միքայէլեանի ծածկանուններէն մէկն է:
3.- Վիկտոր Բերար - ֆրանսացի քաղաքական գործիչ. բարեկամ եւ սերտ գործակից Դաշնակցութեան: Լորիսը՝ Յովի. Լորիս Մելիքեանն է, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ պատասխանատու եւրոպական երկիրներուն մէջ քարոզչութեան Հայ դատի աշխատանքներուն:
4.- Դելկասէ՝ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար:
5.- Մրգաստանը Երեւանն է, Ոսկեհանքը՝ Իզմիր. սակայն ըստ երեւոյթին վրիպակ է. հաւանաբար պիտի ըլլայ Ոսկանապատ, այսինքն Պաքու:
6.- «Չոր գրչով է գրել». գաղտնի թանաքով գրուածի մասին է, երբ արտագրողները անուշադրութեամբ սպիտակ մելանը կը մոռնային նորոգել:
7.- Կայծակ (Վաղարշակ Պաղտասարեան), հերոսական ուրիշ տիպար մը, որ Սասունին օգնութեան հասնելու ճամբուն վրայ Դժոխք խումբով կռուի բռնուեցաւ թրքական զօրքի հետ եւ նահատակուեցաւ (1904 թ. յունիս):
8.- Նիկոլ Դուման, որ նոյնպէս փորձած էր օգնութեան փութալ Սասունին, բայց 1904 թ. յունիսին թուրք-պարսկական սահմանին վրայ կռուի բռնուելով ետ դարձած:
9.- Օրիորդը Ռուբինան է, Արէշեան, որուն կը սպասուէր Ցուցականի գործին համար (Սուլթանի մահափորձ):
10.- Հրայր Դժոխք (Արմենակ Ղազարեան), Սասնոյ 1904 թ. ապստամբութեան ղեկավարներէն, հերոսաբար նահատակուած ապրիլի կռիւներուն:
11.- Ըստ երեւոյթին Ահարոնեանը:

8.

էջ 16
Գրուած 14-ին
ԲԱԳՈՒ

Կարմիր խաչին յայտնել փող ուղարկել Տ[իկին] Հրաչին(1) անմիջական հասցէով.- Madame Aznive Tyriakian, Poste restante russe, Samsoun (Mer Noire):

1.- Տիկին Հրաչը՝ Պանք Օթթոմանի յայտնի հերոսներէն Հայկ Թիրեաքեանի (ծածկանունը Հրաչ) կինն էր: Հրաչ երկու տարիէ ի վեր կը գտնուէր բանտ, ուրկէ դուրս պիտի գար 1908-ին, Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն ետք:

9.

էջ 16
Գրուած 14-ին (յուլիսի)
Մ[ԵԾ] Ք[ԱՂԱՔ]

Դրամի խնդիրը պէտք է թողնել դաշնակցական Խորհուրդին հայեցողութեան(1):

Արեւելեան բիւրոյի եկամուտներից յատկացուած գումարները մաս մաս ուղարկել: Բացի այդ, վերադարձնել այն 26.000 fr[anc] (մօտաւորապէս), որ նախահաշուից աւել ուղարկուած է ձեզ: Մանրամասը հաշիւը շուտով կը հաղորդենք:

Կէս տարւայ հաշիւը (յուլիսին) շտապեցրէք:

1.- Կ'ակնարկուի «Փոթորիկ»-ի միջոցաւ հաւաքուած գումարներուն, որոնց գործածութեան եւ բաշխումին տնօրինումը վերապահուած էր Դաշնակցութեան խորհուրդին: Այս վերջինը պիտի գումարուէր 1905 թ. սկիզբը: Յայտնենք, որ Դաշնակցութեան խորհուրդը կուսակցութեան վերին մարմինն էր, որ կը գումարուէր Ընդհ. ժողովներու միջեւ ինկող ժամանակաշրջանին: Ան բաղկացած կ'ըլլար ներկայացուցիչներէն՝ Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոներու, Պատասխանատու չորս Կեդր. կոմիտէներու (Կ. Պոլիս, Կիլիկիա, Տարօն-Սասուն եւ Վասպուրական), Ցուցական եւ Կովկասի ինքնապաշտպանութեան մարմիններու:

10.

էջ 16
Գրուած 14-ին
Լեւոնի նամակին պատասխանել(1)

1) Կնիք ուղարկուած է, 2) Օրիորդի համար սպասիր Էլլէնի հեռագրին Պարիզից. 3) Դրօշակը կ'աւելացնենք, գրքեր էլ կ'ուղարկենք: Տոմսերի հաշիւը ուղարկուած է: Արձանագրութիւնից կազմակերպութեան մասը կ'ուղարկենք մինչեւ մի ամիս: Նամակ ստանում ենք: Տեղեկութիւն ինչո՞ւ չէք տալիս: Սիրաքը(2) (Ռաշտից) պատրաստակամութիւն է յայտնում ամառս գործելու, ուր ուզէք գնալու:

1.- Ռոստոմի նամակ: Ուղղուած պէտք է ըլլայ կամ Արեւելեան բիւրոյին, կամ Պաքուի (Ոսկանապատ) Կեդր. կոմիտէին: Օրիորդը Ռուբինան է. Էլլէնը՝ Քրիստափորը: Լեւոնը, հաւանաբար Գիւլումեանն է՝ Ցուցական մարմնի անդամ:
2.- Սիրաքը հաւանաբար Գրիգորեան Սիրականն է (1878-1937):

11.

էջ 17
[Գրուած 14-ին]
Մ[ԵԾ] Ք[ԱՂԱՔ]

Հաստատում ենք մեր .....(1) նամակները:

Անհամբեր սպասում ենք մանրամասնութիւնների փոխնահանգապետի սպանման մասին(2):

Գրեցէք միմիայն տրուած հասցէներով առանց որեւէ խօսք մէջը աւելացնելու. աշխատեցէք գրել միշտ գաղտնի թանաքով: Տեղեկութիւններ Դումանի մասին: Ձեր կողմից ուղարկած երիտասարդին անցագիր տուինք եւ ճանապարհ ձգեցինք. միթէ՞ նրանից լուր չունէք(3): Հարցրինք նրա մասին Բոլղարիա: Վիեննայում բռնաւածների մասին ոչինչ չգիտենք: Կնիքներ ուղարկուած են Ոսկանապատ(4), մասամբ դա ձեր պահանջին գոհացում կը տայ. այդ ստանալուց յետոյ մէկ էլ գրեցէք, թէ որ տեղերի համար եւս հարկաւոր է:

1.- Թուականներու տեղը բաց ձգուած. արտագրողը պիտի ամբողջացնէր:
2.- Հարցը կը վերաբերի Գանձակի հայատեաց նահանգապետ զօրավար Անդրէեւի ահաբեկման:
3.- Բնագրին մէջ «չունենք», պարզապէս վրիպակ է:
4.- Ոսկանապատը Պաքուն է:

12.

էջ 23-24
Գրւած 19 յուլիսին
ՋՐԱԲԵՐԴ(1)

Մուշից մենք կանոնաւոր տեղեկութիւն ստանում ենք: Փողի մասին գրեցինք [Արեւելեան] բիւրոյին: Յայտնեցէք Մուշ եւ միաժամանակ մեզ, թէ ում միջոցով եւ որքան դրամ է ուղարկած: Մշոյ կոմիտէն կը պահանջի: Երկաթի խումբը(2), գրում էք, որ տեղ չհասաւ: Բայց ո՞ւր մնաց: Զիվինի կռւի մասին մեր հաղորդածները լրագիրներին: Ձեր բոլոր տեղեկութիւնները ստանում ենք. երբեմն մի քանի օրինակներ: Զուրնաչիները(3) դժւար թէ խումբ անցկացնեն, որովհետեւ սրանց կենտր. մարմինը աննպատակ է հռչակում մեր «մասնակի» շարժումները. ինքը պատրաստւում է «ընդհանուր ապստամբութեան»: (*)

Թերթ ուղարկում ենք Վրէժ(4) մեծ քանակութեամբ. պահանջեցէք, որ կանոնաւոր բաժանեն: Այս անգամ ([Դրօշակի] No 7 լոյս է տեսնելու այսօր), ուղարկելիս՝ կը յայտնենք, թէ մօտաւորապէս ուր եւ որքան պէտք է ճանապարհ ձգեն:

Մեր ստացած տեղեկութիւնները հեռագրով յայտնում ենք եւրոպական կարեւոր թերթերին, որոնք չեն մերժում:

Անտոնը(5) վաղուց է դուրս գնացել. այսօր հաւանական է, տեղ հասած լինի: Կազմակերպութեան վերաբերեալ ժողովի(6) որոշումները շարւում են. մի շաբաթից պատրաստ կը լինեն:

Վահանի(7) մահուան մասին հակասական լուրեր են գալիս: Սպասում ենք վերջնական հաստատ լուրի: Յոյս ունինք, որ նա մնացած լինի Սասունում, մի ձորում պատսպարուած:

(*) Այստեղ բնագրին մէջ խաչաձեւ գծուած է (երեւի արտագրութեան ժամանակ չգրուելու համար), հետեւեալ պարբերութիւնը.-

«Բայց այս բոլորը ոչինչ, որովհետեւ եկել են այն համոզման, որ մինչեւ Ռուսաստ. բռնակալ մնայ, Տաճկահայաստանի հարցը չի լուծուիլ, ուստի իրենց ուժերը պէտք է լարեն Ռուսաստանի դէմ: Այս բոլորը նշան է, որ մէջները նոր բաժանում պէտք է առաջ գայ՝ սոցիալ-դեմոկրատական, որ կը գործի Ռուսաստանում եւ հին հնչակեան՝ Տաճկաստանի դէմ կռւելու: Այժմեանից իրենց մտադրութիւնը՝ գործել սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան միացած՝ չեն հրապարակ հանում, որովհետեւ վախենում են, որ բոլոր տաճկահայ տարրը հեռանայ կուսակցութիւնից, ինչպէս նաեւ այն կովկասահայերը, որ կապւած են տաճկահայ դատին: Եթէ խումբը անցկացաւ, դա կը լինի բաժանման առաջին քայլը»:

1.- Ջրաբերդը Կարսն է, որուն ուղղուած է գրութիւնը:
2.- Երկաթ, Աշոտ-Երկաթ, բուն անունով Լեւոնեան Արմենակ (1871-1904), յեղափոխական հարուստ անցեալի տէր անուանի մարտիկ, որ Սասնոյ ապստամբներուն օգնութեան հասնելու ճամբուն, Արճէշի մօտ կռուի բռնուելով կը նահատակուի (1904 թ. յուլիս):
3.- Հնչակեանները: Այդ անունը կը գործածէին հաւանաբար կուսակցութեան պաշտօնաթերթ «Հնչակ»-ի հետեւողութեամբ:
4.- Վրէժ, Վրէժստան - Ատրպատականն է (Թաւրիզ):
5.- Սիմոն Զաւարեանն է, որ մեկնած էր դէպի Լեռնավայր-Կիլիկիա, Պէյրութ:
6.- ՀՅ Դաշնակցութեան Գ. Ընդհ. ժողովին, որ գումարուած էր նոյն տարուան փետրուար-մարտ ամիսներուն, Սոֆիա: Խօսքը՝ կազմակերպութեան այդ բաժնի վերաբերեալ որոշումներուն մասին է:
7.- Վահան Մանուէլեան, բուն անունով Տողրամաճեան Կարապետ (1866-1904) Դաշնակցութեան լիազօր ներկայացուցիչը Սասնոյ մէջ, որ արդէն մայիս 16-ին նահատակուած էր:

13.

էջ 21-22
Յուլ. 23-ին Մուշ գրւած

Հաստատում ենք մեր յուլ. 10-ի գրութիւնը:

Ստացանք ձեր նամակները յունիս 1, 7 եւ 16-ին գրած: Դրանից առաջ ստացել էինք յուն[իս] 3-ի (թէ 8-ի) նամակը: Բոլոր կարեւոր կէտերը հաղորդեցինք հեռագրով եւրոպական թերթերին: Կ'օգտւենք այդ նիւթերից **մեմորանդումի** համար, որ կը ներկայացնենք պետութիւններին մի յարմար ժամանակ: Շարունակեցէք նիւթեր ուղարկել: Ինչպէս առաջ էլ գրած էինք, շատ ցանկալի է իմանալ բոլոր՝ մեծ թէ փոքր ընդհարումների մանրամասը նկարագրութիւնը: Սպասում ենք Վահանի(1) վախճանի մասին վերջնական, ստոյգ տեղեկութիւններ: Շատ անհանգիստ ենք նոյնպէս Երկաթի(2) մասին: Արճէշի նրա կռուի մասին լուր առինք, այնուհետեւ տեղեկութիւն չունենք, թէ ինչ եղաւ: Մեզ վերայ լաւ չազդեց տղաների միջեւ ծագած խռովութիւնները: Ամէն կերպ յորդորեցէք եւ մեր կողմից, որ միանան, համերաշխ մնան: Նպաստի վերաբերմամբ հետեւեալն է արւած. 1) Պրեսանսէն առաջարկել է 5.000 fr. Դելկասէին(3) Մշոյ եւ Սասունի կարօտեալների համար: Դելկասէն դեռ պատասխան չի տուել: 2) Մի մասնաժողով է կազմուում Պարիզում զանազան կուսակցութիւններից նւիրատուութիւններ ընդունելու: Ժամանակը թէեւ վատ է. **վականսների** ու շոգերի պատճառաւ մարդիկ ցիրուցան են եղել, բայց էլի կ'աշխատեն մի բան անել. կաթողիկոսի կողմից մի պատգամաւորութիւն է կազմուել 6 մեծ պետութիւններին դիմելու համար: Պատգամաւորները հիմա Պարիզ են եւ քիչ յետոյ կը սկսեն իրենց այցելութիւնները: Նրանց թւումն են մեր երկու ընկերները: Գուցէ արդէն իմացած լինէք, որ ֆրանսիական կառավարութեան նախաձեռնութեամբ՝ **ռեֆորմների** մի նոր ծրագիր է առաջարկւած Սուլթանին՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ ռուսերի կողմից: Հետեւանքի մասին դեռ որոշ բան յայտնի չէ: Վաղարշակը(4) նահատակւել է 13 ընկերներով Զիվինի ամրութիւններում. թշնամուց ընկել է մօտ 400 հոգի: Խումբը ձիաւոր էր: Երկաթի խումբը Արճէշի մօտ տալիս է 7 զոհ, կոտորելով 90 հոգի: Դումանի հեծելախումբը Վանայ ճանապարհին կոտորում է 25 զինուոր եւ 2 սպայ. զոհ է տալիս 2 հայդուկ: Նոր խմբեր են պատրաստւում, չնայած ռուս կառավ[արութեան] արտակարգ խստութիւններին ու ճնշումներին:

Եթէ միջոց ունէք Պոլսից եւ Կովկասից որեւէ կերպով դրամ ստանալ, գրեցէք շուտով անմիջապէս կը հասցնենք:

1.- Վահան - Տես նախորդ նամակի (19 յուլիս) թիւ 7 ծանօթագրութիւնը:
2.- Երկաթ - Տես նախորդ նամակի (19 յուլիս) թիւ 2 ծանօթագրութիւնը:
3.- Պրեսանսէին եւ Դելկասէին ծանօթ ենք, երկուքն ալ ֆրանսացի քաղաքական դէմքեր. առաջինը՝ խորհրդարանի անդամ, երկրորդը՝ արտաքին գործոց նախարար:
4.- Կայծակ (Վաղարշակ Պաղտասարեան - 1875-1904) - յեղափոխական հարուստ անցեալ ունեցող մարտիկ, որ Սասնոյ ապստամբներուն օգնութեան հասնելու ճանապարհին կռուի կը բռնուի եւ կը նահատակուի:

14.

էջ 27-28
2 օգոստ.
ԲԷՅՐՈՒԹ, Անտոնին(1),

Յուլ. 24[ի] նամակդ ստացանք, ստացել ենք նաեւ Զմիւռնիայից գրած բացգիրը: Քանի որ Ռահվերը(2) եկել է եւ հետը տեսնուել ես, քանի որ միւսներն էլ են գալու, գործը ուրեմն քիչ քիչ կարգի կ'ընկնի: Գրում ես, որ մի մանրամասը նամակ էլ մի օր առաջ ես ուղարկել. մենք չենք ստացել այդ նամակը: Հասցէդ չենք տալ առայժմ ոչ մի տեղ. թող քիչ ուշ լինի, հիմիկուանից լու չընկնի(3): Բացի այդ, շատ էլ յարմար չէ քո տուած հասցէով երկրի ներսից նամակ գրել, կարող է իսկոյն կասկած հրաւիրել:

Քո անունով շատ նամակներ են եկել. ի՞նչ անեմ. ուղարկե՞մ, թէ ոչ, կամ ի՞նչ ձեւով: Նամակներից մի երկուսը ձեր տնից են. մոռացանք պայմանաւորւել քո նամակագրութեան մասին: Դուն ի՞նչ ձեւով ես նամակ գրելու, ուղղակի՞ միթէ:

Մի յարմար օր կը գնամ Մարսէյլ եւ պահեստի պատրաստութիւն կը տեսնեմ:

Ուզած գիրքդ կ'ուղարկենք, եթէ խօսք տաս, թէ քաղաքիցդ դուրս հետդ չես տանելու:

Գանք նորութիւնների: Ժիրայրը առաջէլ է Մարաշ եւ թերեւս Արծւաբերդ(4):

Երկաթի խմբի ընդհարման ժամանակ զոհ են գնացել 7 հոգի, մնացածները ապահով են եւ կարծենք Ախլաթ են հասել:

Ալաշկերտ անցած խմբերը: Որսկանի եւ Թորգոմի խմբերը: Թղթակից իտալացին. կաթողիկոսի պատւիրակութիւնը: Հեռագիրներ Թաւրիզից: Լուրջ միջամտութեան նշոյլ չկայ: Դումանի խումբը, Մշոյ եւ Սասունի դրութիւնը(5):

Միսակը գրում է, թէ ինքը խօսք չի տուել Ադանա անցնելու, թէ Սիմոնը(6) սխալւել է: Առ հասարակ ես քեզ խորհուրդ եմ տալիս մի առժամանակ դրանց հանգիստ թողնել, մինչեւ նրանք որոշապէս չճշդեն իրենց բռնած ընթացքը:

1.- Անտոնը Սիմոն Զաւարեանն է, Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնի անդամ:
2.- Ռահվեր - Կիլիկիոյ հին գործիչներէն Վարդանեան Միսաք (1874-1949):
3.- Լու չընկնի,- չիմացուի, լուրը չտարածուի:
4.- Ժիրայրը Կիլիկիոյ գործիչներէն է, բուն անունով Միրճեան Կարապետ, մահացած 1909-ին: Արծուաբերդը՝ Զէյթունի կուս. ծածկանունն է:
5.- Ամբողջ պարբերութիւնը ունի այն իմաստը, որ նշուած կէտերու մասին աւելի լայն տեղեկութիւններ պիտի տրուին գաղտնի թանաքով շարադրուելիք նամակին մէջ:
6.- Միսակը վերեւ յիշուած Ռահվերն է (Վարդանեան). Սիմոնը՝ Զաւարեանի մասին է:

15.

էջ 25-25, 29-31
Մ[ԵԾ] Ք[ԱՂԱՔ](1)
Գրւած օգ. 3-ին
(բանկի հասց.)
Հաստատում ենք

- Նամակների հրատարակութիւնների առթիւ: Պէտք է նրանց հիման վրայ շրջաբերականի պէս բան գրել եւ ոչ թէ նոյնութեամբ ցրուել: Ամերիկայի մէջ էլ ձեզանից օրինակ առնելով տարածում են ամէն տեսակ նորութիւններ երկրից ստացած:

- Թերթ ուղարկւեց (No 7) Արտաբիլ 500, Աստարա 200, Թաւրիզ 400. իսկ շուտով Բաթումի գծով կ'ուղարկւի 1500:

Եթէ Պարս[կաստան] գնացածներից 100 հատ վերցնեն տեղական կարիքների համար, ձեզ բաժին կը մնայ 1.000 օր[ինակ], չենք հաշւում Սալմաստի 220-ը, որ երեւի Շամ է(2) գնում:

Շիրակեան վաճառականի մօտ Մոմճեան անունով երիտասարդը խումբ է կազմել եւ 50 ռ. նպաստ ուղարկել: Կանչել տուէք եւ հետը խօսեցէք:

- Զրաբերդից(3) ուզել էին իրենց թղթերի պատճէնները. ժամանակ չկայ այդքանը արտագրելու: Արտագրել ենք միայն ամենակարեւորը, եկողի հետ կ'ուղարկենք:

- Անյարմար է յարաբերութիւնը երկու տեղից պահել: Սասնոյ նպաստի համար երկու հեռագիր կար, Բագւից եւ Մ. Ք[ից]: Մեր մի ընկերը մինչեւ հիմա համոզւած է, որ խնդիրը տարբեր գումարների վրայ է:

- Անտոնը(4) տեղ է հասել:

- Ուշադրութիւն դարձրէք հրատարակութիւնների ձեւի վրայ:

- Նամակները խէժով բացէք:

- Հաշւի մասին: Պէտք է զանազանել Բիւրոյի եկամուտը եւ հաշիւը: Եթէ մի կոմիտէից փող են փոխադրում Բիւրոյին, դա պէտք է մտցնել հաշւի մէջ եւ ոչ Բիւրոյի ցանկի, որովհետեւ արդէն տպագրւում է իբր Կոմիտէի եկամուտ: Այնպէս կարգադրէք, որ միեւնոյն գումարը երկու անգամ չհրատարակւի:

- Ոսկանապատից ուզում են իմանալ այստեղի կարծիքը գործունէութեան տեւողութեան մասին: Երկրի ներսը զինւած ստւար խմբերով ոյժ մտցնելու մասին աւելորդ է կարծիք յայտնել, քանի որ արդէն իրականութիւնը ցոյց է տալիս դրա անկարելիութիւնը ներկայ պարագաներում: Յարձակողական **տաքտիկին** համակարծիք ենք. միայն աւելի լաւ է մի ձեռնարկ, բայց յաջող, քան մի քանիսը, կէս կատար: Մեր անյաջողութիւնները սիրտ են տալիս թշնամուն, նսեմացնում են կազմակերպութեան հեղինակութիւնը. իսկ եթէ վերանայ վախը, այն ժամանակ վայ մեզ: Մինչեւ հիմա քրդերը, տաճիկ ժողովուրդը միշտ ակնածել են մեր ուժից: Վերջին դէպքերը շատ բան պէտք է փոխեն: Պէտք է մէկ զօրեղ հարւածով վերականգնել կազմ[ակերպութեան] պատիւը: Մեր ցաւը նրանումն է, որ ժողովրդի ոգեւորութիւնը, կռուի պահանջը այնքան մեծ է, որ անհնար է լինում կարգ կանոնի տակ ձգել եւ մտածւած, ծրագրւած, երկարատեւ եւ գաղտնի մի ձեռնարկ պատրաստել: Բանն այնտեղ է հասել, որ եւրոպական թերթերը մեր ուղարկած հեռագիրները խմբերի գործունէութեան մասին, տպագրում են «nouveaux massacres»(6) վերնագրի տակ: Այն էլ պէտք է ասած, որ թէեւ մեր տեղեկութիւնները տպագրում են, բայց այնքան էլ չեն հաւատում, որ թշնամուց կոտորւել է 400, 500 հոգի եւայլն: Պատճառը շատ պարզ է, որովհետեւ բացի մեր հեռագիրներից, ուրիշ ոչ ոք չի խօսում մեր յաղթութիւնների մասին: Գուցէ ամիսներ յետոյ դեղին, կապոյտ գրքերում(7) կարդանք հիւպատոսների զեկուցումները: Պէտք է ուրեմն այնպիսի հարւած տալ, որ փաստը ինքը խօսի, որ ստիպւած լինեն լեզուն բանալ (*):

(*) Ծանօթ խմբ.- Բնագրին մէջ հետեւեալ ընդարձակ հատուածին վրայ խաչաձեւ գիծեր քաշուած են. արդեօ՞ք պէտք է նշանակէ, որ նկատի չէ առնուած արտագրութեան մէջ.

Թորգոմի(8) խմբի կռւի մասին եւ ոչ մի ակնարկ! Մի հանգամանք եւս, որի մասին առաջ էլ էինք գրել: Թէեւ դուք ասում էք, որ իրողութիւնը չափազանցրած չէք նկարագրում, որ նա իսկապէս սոսկալի է, բայց մենք դարձեալ կասկածում ենք, ոչ թէ ձեզ, այլ ձեզ լուրեր հաղորդողին: Ամէնից քիչ պէտք է հաւատալ ականատեսի պատմածին. սա **պարատոկս** է. միշտ ականատեսը տրամադրւած է չափազանցօրէն դիտել երեւոյթը: Quillard-ն(9) էլ այսօրւայ նամակում խնդրում է գրել մեր ընկերներին, որ թիւերը ստուգեն եւ ապա հաղորդեն: Նա էլ շատ կասկածում է նրանց ճշտութեան եւ վախենում է, որ այլեւս հաւատ չընծայեն Pro-Armenia-ի ասածներին: Երկու ապացոյց ասածներիս: Դումանի կռւի լուրը առնելով Թաւրիզի մեր ընկերները հեռագրում են, թէ Վանայ ճանապարհին քրդերը կոտորել են 50 հայ, - կարծելով թէ **դիպլոմացիայի** վրայ դրանով ազդելու են. խայտառակութիւնը այնտեղ է, որ Լանսդաոն(10) խոստացել է քննութիւն կատարել տալ! Ահա ձեզ գիտակցական չափազանցութեան մի օրինակ: Յաղթութեան լուրը կոտորածի ձեւով են ներկայացրել, չուզենալով հաւատալ, որ ամէն մէկ այդ տեսակ լուր մի **միևուս** է մեր դատի համար: Իսկ կռւի նկարագրութիւնը, որ կարող է քիչ թէ շատ ոգեւորել, դեռ մինչեւ հիմա չի ստացւել: Երկրորդ օրինակ: Ֆարհատը Մրգաստանից(11) մի զգացւած թղթակցութիւն է ուղարկում, որ սկսում է կոտորածների յառաջաբանով, մինչեւ երկինք հասնող դիակների կոյտով, ծխացող արիւնով եւայլն... ինչ է, ինչ է... Երկաթի խումբը 7 հոգի է զոհ տւել: Այսպէս բան կը լինի՞: Նոյն բանը նկատւում է Մշոյ թղթակցութիւններում: Կռիւներ են լինում նրանց մասին ոչ մի խօսք, իսկ զոհերի մասին! «Դիակները ջրի առաջը կտրում են, թնդանօթներով են ջրի ճանապարհը բաց անում»: Մշոյ ընկերների հոգեբանութիւնը հասկանալի է, իսկ դրսեցիներին ի՞նչ ասենք:

- Կաթողիկոսի պատւիրակութիւնը լաւ ընդունելութիւն է գտել Լուբէի(12) եւ Դելկասէի մօտ: Հիմա գնացել են Լոնդոն(*):

* * *

Շար.ը՝ էջ 14

ՀՅԴ ՀԻՄՆԱԴԻՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ԸՆՏԻՐ, ԱԶՆՈՒԱԿԱՆ ՈՒ ԱՍՊԵՏԱԿԱՆ ԶԱՒԱԿՆԵՐԷՆ ՄԷԿԸ՝ ՌՈՍՏՈՄԸ

Համբիկ Պիլալեանի ստորեւ տրուած խօսքը արտասանուած է 1 մարտ 2019-ին, ՀՅԴ «Ռոստոմ» կոմիտէին կազմակերպութեամբ Ռոստոմի մահուան 100-ամեակին նուիրուած ձեռնարկին ընթացքին:

Սրբազա՛ն հայր, արժանապատի՛ւ հոգեւոր հայրեր, պատկան մարմիններու պատուարժա՛ն ներկայացուցիչներ, յարգելի՛ հիւրեր, բարեկամներ, ընկեր-ընկերուհիներ եւ սիրելի՛ ներկաներ,

Նախ եւ առաջ՝ շնորհակալութիւն ընծայուած այս առիթին համար: Առիթ մը, որ պարտաւորեցնող է եւ իր մէջ կը խտացնէ այնքան պատասխանատուութիւն, որ տեսակ մը, փորձութիւն մըն է: Այո՛, դաշնակցականի վերապահուած փորձութիւն, որուն մէջէն ճակատաբաց անցնելու համար քեզի օգնութեան կը հասնի նոյնինքն յոբելեարը, այս պարագային, մեր անսման ընկերը՝ Ռոստոմը:

Երկրորդ, պէտք է խոստովանիլ, որ այդքան ալ դիւրին չէ խօսիլ կերպարի մը մասին, այդ ալ՝ սահմանուած վայրկեաններու մէջ, որուն անունը, կենսագրութիւնը, աւելի՛ն՝ անկրկնելի վաստակը՝ գերազանցապէս շաղախուած, միաձուլուած եւ մէկ մասնիկ դարձած են նախ իր սեփական ժողովուրդին, ապա՝ իր կուսակցութեան պատկառելի պատմութեան հետ:

Փաստօրէն, ի զուր չէ, որ Հայաստանի Հանրապետութեան երբեմնի վարչապետ Սիմոն Վրացեան, այնքան պարզ, բայց էապէս բովանդակալից վկայութեամբ մը ըսած է. «Մեր կուսակցութեան մէջ չի եղել ու չկայ մէկ ուրիշը, որ իր մէջ այնքան հարազատօրէն մարմնացած լինէր Դաշնակցութիւնը, որքան Ռոստոմը: Ռոստոմը նոյն ինքը Դաշնակցութիւնն էր: Մեծ ու բազմակողմանի, ինչպէս՝ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը»:

Ահաւասիկ, արեւու ճառագայթին չափ հզօր ու պայծառ վկայութիւն մը, որ մենք՝ իբրեւ յետնորդ սերունդներ ժառանգած ու երկիւղածութեամբ պահպանած ենք, եւ տարբեր առիթներու փոխանցած ենք նորահաս սերունդներու՝ իբրեւ նշխար եւ հիւլէ մը՝ ռոստոմեան կերպարին:

Երկրորդ վկայութիւն մը եւս, որով աւելի կը բիւրեղանայ, կը յստականայ վերեւ յիշուած ճշմարտութիւնը, որ այնքան սրբութեամբ փայփայած ենք մեր կեանքին մէջ:

Ատենին, Ռոստոմի մտերիմ վաստակաւոր ընկերոջմէ մը կը խնդրուի յուշագրութեամբ մը անդրադառնալ անոր: Ան իրաւամբ կը պատասխանէ, թէ՝ «ինչքան փորձում եմ գրել Ռոստոմի մասին, դուրս է գալիս Ռոստոմի առթիւ»:

Այլ խօսքով՝ կարելի է լայնօրէն անդրադառնալ Ռոստոմի մարդկային, հասարակական, ազգային ու յեղափոխական ժառանգին, բայց երբե՛ք կարելի չէ գրիչի ծայրով, բանախօսութեամբ մը ուրւագծել անոր ունեցած տիրակա՛ն դերն ու անպարագծելի աշխատանքները կուսակցական-կազմակերպական, քաղաքական, յեղափոխական եւ ընդհանրապէս ազգային-հայրենասիրական բնագաւառներու մէջ, որովհետեւ անոր լայնատարած ու բազմաճակատ գործունէութիւնը դուրս կու գայ անհատական պարունակէն եւ կը տարածուի ամբողջ կուսակցութեան առաջին երեսուն տարիներու պատմութեան իւրաքանչիւր էջի գագաթին:

Այսուհանդերձ, գոյութիւն ունի նրբութիւն մը, որ կարմիր գիծի նման մեզ պէտք է ուղեկցի ամէն պատեհ առիթի, այդ ալ հետեւեալն է. երբ կը խօսինք կամ կը գրենք ՀՅ Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան իւրաքանչիւր անդամին մասին, չենք կրնար մտահան ընել իրողութիւն մը, որ անոնք երեքով մէկ՝ Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան եւ Ստեփան Զօրեան, այս կուսակցութեան հիմնաքար եռոտանիին երեք սիւներն են անբաժանելի, իրարմով իմաստաւորուող ու շնչաւորուող հիւլէներ: Սակայն, անոնցմէ իւրաքանչիւրը ունեցած է իր հրաշալի աւանդը, տիպականութիւնը եւ դրոշմը:

Եթէ երբեք Քրիստափոր Միքայէլեան դասուած է ՀՅ Դաշնակցութեան միտքն ու կամքը, Սիմոն Զաւարեան՝ խիղճն ու բարոյական ուժը, Ռոստոմը եղած է այս բոլորի բացարձակ մարմնացումը, թափանցիկ ու հարազատ կրողը:

Սիրելի՛ ներկաներ,

Հարց կրնայ տրուիլ, արդարօրէն, թէ չէ՞ որ ՀՅ Դաշնակցութիւնը իր բովանդակ ու ամբողջ պատմութեան մէջ չէ աստուածացուցած ոեւէ անհատ, ինչ հանգամանքի ու վաստակի տէր ալ եղած ըլլայ ան, ուրեմն, ինչո՞ւ այս մօտեցումը Ռոստոմի կամ այլ մեծութեան մասին: Որովհետեւ Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան կաղնին՝ Ստեփան Զօրեանը, Ռոստոմը, ստեղծեց Դաշնակցութեան տաճարը, գործի ու կամքի եկեղեցին, որ չունի պատեր, զարդարանք, գմբէթ ու զանգակատուն, այլ՝ անիկա հոգեկան ամրոց մըն է, գաղափարական աշխարհի խորան մը, որ ամրակուռ պարիսպով պատուած է, ուր կրնան մտնել բոլորը, սակայն միայն նուիրեալներն են, ազգին բարօրութեան հաւատացողները, հայրենիքի ազատութեան ու անկախութեան համար իրենց սուրբ արիւնը թափած տղաներն են, որոնք կրնան հոն աղօթել ու մոմ վարել՝ իբրեւ վարձատրութիւն եւ գոհունակութիւն:

Իսկ ամէնէն կարեւորը այն է, որ Ռոստոմ կառուցեց դաշնակցականի տաճարը եւ ինք դարձաւ անոր խոնարհ ծառան, անմնացորդ նուիրեալը, գերազանց մարդկայինը, ուժեղ կամքի տէր յեղափոխականը, աւելի՛ն՝ անհատականութիւններու կերտիչը եւ գալիք սերունդներու բիւրեղ հայելին, ղօղանջող զանգակատունը:

Սիրելինե՛ր,

Թոյլ տուէք, թէեւ համառօտ, գծել ու ներկայացնել մեր ընկերոջ կենդանի տիպարն ու կենսագրութիւնը, որպէսզի նուազագոյն չափով մօտենանք անոր, զգանք անոր ներկայութիւնը եւ ապրինք անով:

Պատմագիր Սիմոն Վրացեան իր վճիտ գրիչով եւ ազնիւ հոգիով սպիտակ թուղթին յանձնած է հետեւեալ մտածումները, որոնք կը վերաբերին Ռոստոմին: Ձեւով մը, ան պատասխանած է այն հարցումին, թէ ո՞վ է Ստեփան Զօրեան, Ռոստոմ:

Ըստ Ս. Վրացեանի, «Ռոստոմ միջահասակ, ամուր կազմուածքով, առողջ եւ ուժեղ անհատ էր: Լայն ուսերուն վրայ կը հանգչէր անոր սոկրատեան գլուխը: Ունէր իմացական լայն ճակատ, սեւ մօրուք, գլխուն գանգուր մազեր՝ ցրիւ եւ խառնափնթոր, թուխ յօնքերուն տակ՝ խոհուն ու խօսուն աչքեր, յաճախ զուարթ ու հեգնական, ժպիտը՝ անմոռանալի, անմոռանալի՝ նաեւ ցասումը:

«Խօսքը՝ անպաճոյճ ու պարզ: Ճառախօս չէր, աւելի անոր ձեռքերը կը խօսէին, քան՝ լեզուն: Որեւէ տեղ երբեք առաջին շարքերուն կարելի չէր տեսնել զայն. ուրիշները առաջ կը քշէր, ինք կը մնար ստուերի մէջ, շատերու հետ: Անձնական հետաքրքրութիւն չունէր, ինչպէս նաեւ չունեցաւ անձնական կեանք: Միշտ գործի վրայ էր, եւ Ռոստոմի համար կարեւոր ու անկարեւոր գործեր չկային: Ռոստոմը ամէն տեղ էր. Ռուսիա, Վրաստան, Պաքու, Թուրքիա, Պարսկաստան, Եւրոպայի զանազան երկիրներ, Հայաստան աշխարհի տարբեր քաղաքներ ու գիւղեր», այլ խօսքով՝ «Ռոստոմը ամէն տեղ էր, ուր կուսակցութիւնը անհրաժեշտ կը գտնէր անոր ներկայութիւնը: Միշտ կեանքով լի, լաւատես ու գործունեայ: Շատ կարդացող չէր, բայց ինչ որ կը կարդար՝ կ'իւրացնէր հիմնովին»:

Ըստ յուշագիրներու, Ռոստոմ ունէր հիմնական սկզբունք մը, որուն ան կառչած ու հաւատարիմ մնաց մինչեւ մահ: Ըստ մեր հիմնադիրին, «յեղափոխութիւնը նախ գործ է, յետոյ՝ գաղափար: Աւելի ճիշդ, յեղափոխութիւնը գործ է գաղափարի համար»: Արդ, Ռոստոմ իբրեւ յեղափոխական ղեկավար միայն գործեց, տքնեցաւ, ու իր ազգին ու կազմակերպութեան ծանր լուծը շալակին՝ անսակարկ նուիրաբերեց ամէն ինչ՝ սիրտ, հոգի, միտք ու բարոյական արժէքներու շտեմարան մը, որպէսզի հաւաքական գաղափարներն ու երազները ամրագրուին, հաստատուին եւ առաւել ուժեղանան:

Ստեփան Զօրեանի կենսագիրներէն կ'իմանանք, թէ ան հարազատ զաւակը եղած է Նախիջեւանի: Ծնած է Ցղնա գիւղը 1867-ին, եղած է նահապետական ուսեւոր ընտանիքի զաւակ, մանկութիւնը անցուցած է գիւղին մէջ: Ան գիւղի հայաշունչ մթնոլորտին մէջ հասակ առնելով՝ սիրած է հայերէնն ու հայոց պատմութիւնը:

Կը պատմուի, որ մտերմիկ մթնոլորտի մէջ ան կը սիրէր գրաբար կտորներ արտասանել եւ շարական երգել: Պատանի տարիքին կը յաճախէ Թիֆլիսի Ռէալական դպրոցը եւ իբրեւ ընդունակ աշակերտ՝ աչքի կը զարնէ բնագիտութեան եւ ուսողութեան նիւթերուն մէջ: Նոյնիսկ դպրոցական տարիներուն, իր աշակերտ ընկերները կը վկայեն, թէ ան չէր սիրեր մաս կազմել խաղերուն, շատ կը կարդար ու կը մտածէր:

Շրջան մը մուտք կը գործէ Նովօ-Ալեքսանդրեան գիւղատնտեսական ճեմարանը, Վարշաւայի մօտ, ուր երկար չի մնար, որովհետեւ կը մասնակցի տեղական ուսանողական ցոյցերու, կը ձերբակալուի եւ կ'աքսորուի իր ծննդավայրը: Ապա այդ տարիներուն կը ծանօթանայ իր ընկերներուն՝ Քրիստափորին ու Սիմոնին եւ շատ-շատերու:

1889-ին կը յաճախէ Մոսկուայի Պետրովսկայա գիւղատնտեսական ճեմարանը: Հոս եւս մեծ եռանդով կը մասնակցի ուսանողական շարժումներու: Դարձեալ կը ձերբակալուի եւ կ'աքսորուի ծննդավայր:

Երիտասարդ, ազգային շունչով ու ոգիով կազմաւորուած Ռոստոմ կը հասնի Թիֆլիս 1890-ականներուն, ՀՅ Դաշնակցութիւնը ծնունդ առած էր արդէն: Ան իր ընկերներուն հետ միասին կը մեկնի Թաւրիզ՝ ուսուցչութիւն եւ յեղափոխական քարոզչութիւն կատարելու:

1892-ին կը մասնակցի ՀՅ Դաշնակցութեան Ա. Ընդհանուր ժողովին, եւ Քրիստափորի եւ Զաւարեանի հետ միասին կը դառնայ ժողովին մղիչ ուժն ու ոգին: Կը հաստատուի Դաշնակցութեան Ծրագիրը, եւ Ռոստոմ մեծ դեր կ'ունենայ անոր մշակման եւ պատրաստութեան մէջ:

1893-ին ՀՅԴ Բիւրոյի որոշումով կը մեկնի Ռումանիա՝ կազմակերպելու համար «Դրօշակ»-ի հրատարակութիւնը: Քաղաքական աննպաստ պայմաններու բերումով՝ կը փոխադրուի ու կը հաստատուի Ժընեւ: Կը ստանձնէ «Դրօշակ»-ի խմբագրութիւնը: Ժընեւի մէջ ան ե՛ւ խմբագիր է, ե՛ւ գրաշար եւ ամէն ինչ, եւ միաժամանակ կը վարէ կուսակցական գործ ու թղթակցութիւն: Ժընեւ գտնուելու միջոցին կը ծանօթանայ իր ապագայ կեանքի ընկերոջ՝ Լիզա Մելիք-Շահնազարեանին:

Ժընեւը, սակայն, բաւարարութիւն չէր տար Ռոստոմի եռանդոտ եւ աշխատանք սիրողի բնաւորութեան: Եւ ահա կը սկսէր ռոստոմեան կեանքի ու աշխատանքի նորովի ճանապարհը, որ ծաւալուն քարտէս մըն է ինքնին:

1895 թուական, Ռոստոմը «սամովարի» վաճառական է, կը գտնուի Տրապիզոն: Մասնակից է զէնքեր բերելու աշխատանքին: Կարինի մէջ, ազգային վարժարանի ուսուցիչ է, գործիչ: Իր ջանքերով կը կազմուին ինքնապաշտպանական խումբեր, կեանքը եռուն է շնորհիւ Ռոստոմի ջամբած ազգային դաստիարակութեան:

1898-ին ան կը մասնակցի ՀՅԴ Բ. Ընդհանուր ժողովին: Կը լծուի Ժողովի որոշումներու իրականացման. գործակցիլ եւ յարաբերութիւն մշակել մակեդոնացի, յոյն եւ այլ ժողովուրդներու հետ՝ մէկ ճակատ կազմելու համար թրքական բռնակալութեան դէմ: Պուլկարիա է՝ իր ազնիւ կնոջ հետ, կը հաստատէ վարժարան, կ'ըլլայ ուսուցիչ եւ իր շուրջ կը համախմբէ գաղութի լաւագոյն ուժերը: Դպրոցը կը դառնայ հնոց՝ ազգային ու դաշնակցական գաղափարներու տարածման:

1903-ին, Ռոստոմ Կովկաս է: Ցարական կառավարութիւնը ձեռք կ'ուզէ դնել հայ ազգային-եկեղեցական կալուածներուն վրայ: ՀՅ Դաշնակցութիւնը ոտքի կը հանէ ամբողջ հայութիւնը: Ռոստոմ շարժումին ոգին է: Իր ընկերներուն կողքին, ան թիկունք է Ամենայն Հայոց Խրիմեան Հայրիկին՝ մերժելու ցարական կառավարութեան վատոգի հրահանգը: Ռոստոմ կը շրջի գաւառէ գաւառ, տեղական ուժերու հետ կը կազմակերպէ ժողովուրդը եւ կը ղեկավարէ շարժումը ընդդէմ ռուս բռնապետական ոտնձգութիւններուն: Փաստօրէն, Դաշնակցութեան կազմակերպած դիմադրութեան շնորհիւ, ցարական կառավարութիւնը կը դիմէ նահանջի՝ յետս կոչելով հակահայ հրահանգը:

Յիշենք, Ռոստոմ ամէն տեղ էր եւ ամէն գործի մէջ՝ իբրեւ ղեկավար, ներշնչող ուժ եւ կազմակերպական ոգի:

1904, ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողով, Սոֆիա, հիմնական օրակարգ՝ Կովկասի ինքնապաշտպանութիւն եւ Սուլթանի մահափորձ: 1905-ին հայ-թաթարական կռիւներ, կովկասահայութիւնը դէմ յանդիման կը գտնուի ոչնչացման վտանգին: Ռոստոմ կրկին հոն է, ուր կարիք կայ ինքնապաշտպանական աշխատանքի: Ան Վարդանի, Նիկոլ Դումանի, Արմէն Գարոյի, Աբրահամ Գիւլխանդանեանի ու ուրիշներու հետ կը լծուի հայկական թաղամասերու եւ գիւղերու պաշտպանութեան գործին:

Ռոստոմ պայքարի ոգին էր, սակայն ըստ սովորութեան՝ միշտ ստուերի մէջ:

Պէտք է առանց երկմտանքի յիշել, որ Ռոստոմի շունչին ու կամքին, ուժին ու բարձր գիտակցութեան շնորհիւ ՀՅ Դաշնակցութեան Դ. Ընդհանուր ժողովը, որ տեղի կ'ունենայ 1907-ին, Վիեննա, կ'ունենայ պատուաբեր աւարտ: Ինչպէս միշտ, Ընդհանուր ժողովը ունէր յագեցած օրակարգ, կովկասեան ինքնապաշտպանութեան պատճառով առաջ եկած «երիտասարդ դաշնակցականներու» հարց, «միհրանական» շարժում, թրքահայ-ռուսահայ դատեր, ընկերվարական ու հակաընկերվարական հարցեր եւ այլն, որոնք պահ մը խանգարեցին ՀՅ Դաշնակցութեան ներքին անդորրը՝ սպառնալով անոր միասնականութեան:

Դարձեալ ըստ Սիմոն Վրացեանի. «ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովը կոչուած էր հաշուեյարդարի ենթարկելու այդ խնդիրները: Եւ Ռոստոմը, իր բարոյական անսահման հեղինակութեամբ ու խոհականութեամբ, նախախնամական դեր կատարեց այդ հարցերուն լուծման մէջ: Առաւելապէս Ռոստոմին պարտական ենք, որ ՀՅ Դաշնակցութիւնը այդ ժողովէն դուրս եկաւ միակամ, համերաշխ եւ աւելի ուժեղ»:

Ահա առասպելատիպ ղեկավարի կերպարը:

Քիչ ետք, Ռոստոմ կ'անցնի Պուլկարիա, ՀՅ Դաշնակցութեան Զինուորական վարժարանի գործով: Ապա, ան ներկայ կ'ըլլայ Ընկերվար միջազգայնականի համագումարին, որ տեղի կ'ունենար Շտուտկարթի մէջ, եւ ՀՅ Դաշնակցութիւնը կ'ընդունուէր իբրեւ Միջազգայնականի անդամ: Հոնկէ Ռոստոմ կ'անցնի Թաւրիզ՝ իբրեւ ղեկավար Պարսկաստանի յեղափոխական կռիւներու՝ Նիկոլ Դումանի եւ Քեռիի հետ:

1910-ին, դարձեալ Կարին է, հոն կը գործէ իբրեւ ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի անդամ եւ ազգային վարժարաններու ընդհանուր տեսուչ: Կը մնայ մինչեւ 1914-ի ամառը, եւ յաջորդաբար կը մասնակցի ՀՅԴ-ի 6-րդ, 7-րդ, 8-րդ Ընդհանուր ժողովներուն:

ՀՅ Դաշնակցութեան 8-րդ Ընդհանուր ժողովը կ'որոշէ Ռոստոմին մէկ տարուան հանգիստ տալ Ժընեւի մէջ՝ պարտք դնելով անոր վրայ, որ գրէ նաեւ Դաշնակցութեան պատմութիւնը:

Եւ ճակատագրի ի՜նչ հեգնանք, ինչպիսի՛ հանգիստի մասին է խօսքը, երբ արդէն կը պայթէր Համաշխարհային Ա. պատերազմը եւ տեղի կ'ունենար Հայոց եղեռնը: Ռոստոմ ճնշուած սրտով կը նետուի դէպքերուն մէջ: Իբրեւ ղեկավար դէմք Դաշնակցութեան մէջ, ան անմասն չէր կրնար մնալ սեփական ժողովուրդի անասելի ցաւէն, տառապանքէն ու արհաւիրքէն:

Ռոստոմ Կովկաս է: Անոր ներկայութիւնը նոր թափ ու ոգեւորութիւն կու տայ տեղական ուժերուն: Ան կրկին ամէն տեղ է. Ազգային բիւրօ, կամաւորական գունդեր, քաղաքական ձեռնարկներ, յարաբերական աշխատանք, գաղթականներու օգնութիւն, կուսակցական ասպարէզ, 1917-ի ռուսական յեղափոխութիւն, **միթինկներ**, նոյնիսկ՝ ռազմաճակատներ այցելութիւն եւ այլն, եւ այլն:

Ատենի միջազգային խառնափնթոր իրավիճակին զուգահեռ, Ռոստոմը կը տեսնենք Սթոքհոլմ, Ընկերվար միջազգայնականի համագումարին՝ Հայկական հարցը կրկին ներկայացնելու եւ արծարծելու համար: Ռուսիա վերադարձին, պոլշեւիկները երկրին ղեկը իրենց ձեռքը առած էին, քաղաքացիական պատերազմը հրդեհած էր երկիրը: Ռոստոմ Մոսկուայի հայ գործիչներու հետ կ'ուզէ կապեր հաստատել խորհրդային իշխանութեան հետ եւ Թրքահայաստանի ազատութեան պահանջը մտցնել խաղաղութեան ռուսական պայմաններուն մէջ:

Դէպքերու գահավէժ ընթացքը երբեք արգելք չէր անոր աշխատանքի թափին ու կորովին: Ուր որ հայութեան սպառնալիք կար, ան ներկայ էր իր իմացական լայն հորիզոնով եւ գործնական աշխատանքով:

Նոյնիսկ 1918-ի Պաքուի կռիւներուն, երբ թուրք- թաթարներ կը յարձակէին հայոց թաղամասերուն վրայ, ան մնաց այդտեղ մինչեւ վերջ՝ իբրեւ Պաքուի հերոսամարտի ղեկավար ոգին: Քաղաքի անկումէն ետք, Ռոստոմ իր ժողովուրդին հետ անցաւ Պարսկաստան եւ հոն ունեցաւ հասարակական ու քաղաքական լայն աշխատանք:

1918-ի Ընդհանուր պատերազմի դադարէն ետք, երբ արդէն Հայաստան անկախացած էր, ինք կը գտնուէր Կովկաս: Կը պայթէր հայ-վրացական պատերազմը: Շնորհիւ վրացիներուն հետ իր բարեկամութեան, Ռոստոմ ճիգ չի խնայեր կասեցնելու այդ արիւնահեղութիւնը:

Գիշեր ու ցերեկ Ռոստոմ հանգիստ չունէր: Անվերջ ոտքի վրայ էր, ժողովներու եւ խորհրդակցութիւններու մէջ, ձմեռուան ցուրտին, թեթեւ վերարկուով մը, անփոյթ դէպի իր առողջութիւնը, անտեսելով ընկերներու թախանձանքը՝ խնայելու իր անձը:

Ու գիշեր մը, ժողովէն ուշ տուն վերադարձին, կ'իյնայ անկողին եւ այլեւս ոտքի չելլէր: Կը պարզուի, որ վարակուած էր բծաւոր տիֆով: Բժշկական օգնութիւնը անզօր էր օգնելու մեր ընկերոջ: 19 յունուարի գիշերը, 1919-ին, Ռոստոմ յաւիտենապէս կը փակէ իր աչքերը, 52 տարեկանին: Յոգնիլ չգիտցող մեծ սիրտը կը դադրի տրոփելէ: Ռոստոմ կը մեռնի անկախ Հայաստանը չտեսած:

Սիրելի՛ ներկաներ,

Թող ներուի մեզի, եթէ երբեք աւելի խորացանք դաշնակցական հսկային կեանքը բնութագրող ամբողջ կենսագրութեան մէջ: Յիշեցինք, որպէսզի մենք բոլորս, մանաւանդ ներկայ երիտասարդութիւնը, գոնէ այս առիթով իմանայ նուազագոյնը այն վիթխարի աշխատանքին մասին, զոր Ռոստոմ կատարած էր լուռ ու մունջ, հեռու՝ ճառախօսային եւ ցուցամոլական երեւոյթներէ:

Իրաւամբ ըսուած է եւ տեղին, թէ Ռոստոմ իր հոգին կը դնէր գործին մէջ, ո՛չ անունը: Այո՛, որքան իմաստուն կը հնչէ այս խօսքը այս օրերուն մանաւանդ, երբ ազգային-գաղափարական մեր աշխատանքին մէջ ականատես կ'ըլլանք ըսուածին հակառակ երեւոյթներու եւ ապրելակերպի: Այս առումով՝ որքա՜ն սորվելիք ունինք մեր ղեկավարէն, որքա՜ն հեռու ենք անոր ուսմունքէն, աւանդէն:

Ռոստոմէն մեզի ժառանգուած մտքի արտադրութիւնը եղած է շատ չնչին՝ բաղդատած այլ ընկերներու: Այդուամենայնիւ, անոր մտածումները եղած են կուռ, եզակի, բովանդակալից ու խորաթափանց: Փաստօրէն, Ռոստոմի գրութիւններուն կը ծանօթանանք, մասնաւորաբար ՀՅԴ Ծրագիրի մշակման մէջ իր ունեցած ներդրումին, նամակներու, թղթակցութիւններու եւ յօդուածներու ընդմէջէն: Անոր համար գրելը տառապանք ու հոգեկան ծանր պարտականութիւն եղած է, որովհետեւ Ռոստոմի սիրտն ու միտքը միշտ ալ կը բաբախէին միասնաբար իբրեւ կենդանի տարրեր, ապրող էակներ, եւ ոչ թէ՝ իբրեւ յուզական-զգացական վիճակներ:

Կարդանք Ռոստոմի հետեւեալ պարբերութիւնը, հասկնանք անոր մտքին ուժն ու ապագայատեսի կարողականութիւնը՝ իբրեւ դաշնակցական ղեկավար:

Ըստ Ռոստոմի՝ «Մեր կուսակցութիւնը իր վրայ ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից ազատ են ուրիշ կուսակցութիւնները: Մենք ունինք ազգովին վտանգուելու հոգսը, եւ մենք չենք կարող անտես առնել այդ հանգամանքը: Ամէն անգամ, երբ Դաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալու ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա պուրժուական է, կղերական: Իսկ այսօր, երբ ընդհանուր հայրենիքի վտանգուելու վախը կայ, մեզ մեղադրողները իրենք են դուրս եկել ազգովին գործելու: Ես կը կամենայի, որ Դաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինէր եւ պէտք եղած ժամանակ պաշպանէր ազգի շահը»:

Այո՛, սիրելի՛ ընկեր, քու այս մարգարէական խօսքիդ թէ դաշնակցականի անշահախնդիր կեցուածքիդ դիմաց իրերայաջորդ սերունդներ երդուեցին, գործեցին ու տէր կանգնեցան հայութեան երազներուն, իբրեւ անփոխարինելի արժեհամակարգ եւ դաշնակցականի տեսակ:

Շար.ը՝ էջ 7

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԸ ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԻՑ

1883 թուականին էր:

Ինձ մեր գիւղից Թիֆլիս էին բերել Ներսիսեան դպրոցը տալու: Պէտք է ապրէի մօրս կողմից իմ ազգական Բաղդասար քեռու, կամ ինչպէս մենք էինք ասում, Բաղդի քեռու տանը:

Էդ տունը Բաղդի քեռու քենակալ Նաւասարդ Զօրեանի տունն էր, Հալլաբար, Զորաբաշի եկեղեցուց ոչ հեռու:

Առաջին իրիկունն էր: Զրոյց էին անում հերս, Բաղդի քեռին ու տանը:

Իմ մասին խօսելիս հերս խնդրեց, որ ինձ չթողնեն դէս դէն ընկնեմ, փողոցի տղերանց հետ ընկերանամ:

Տանը՝ հօրս հանգստացրին, թէ ինչո՞ւ պէտք է դէս դէն ընկնի, ընկերը մեր տանն է էլի: Մեր Ստեփանիցն էլ լաւ ընկե՞ր:

Բաղդի քեռին էլ իր կողմից շատ գովեց Ստեփանին, ու ես անհամբեր սպասում էի, թէ ե՞րբ պէտք է լուսանայ, որ տեսնեմ իմ նոր ընկերին:

Զօրեանների սենեակները երկու մասի էին բաժանուած, մի մասում Բաղդի քեռին էր ապրում, միւսում իրենք:

Առաւօտը ինձ կանչեցին պատշգամբ, կողքի սենեակից էլ դուրս եկաւ Ստեփանը, 15-16 տարեկան մի կոշտ ու պինդ պատանի, հագին մի բլուզ, շփերթ, առանց գօտկի, բաց չընտերը ծլրփլրփացընելով:

Մօտեցանք, մտերմացանք ու էն օրուանից միշտ միասին էինք:

Եւ ի՜նչ լաւ էր...

Կարծես թէ էս ժամանակն էլ էր լաւը, էն տունն էլ էր լաւը, տանը՝ էլ էին լաւը, բոլորը լաւն էին...

Բաղդի քեռին մի նշանաւոր ֆանտազէօր էր. սիրում էր հրաշքներով լիքը պատմութիւններ անել եւ միշտ խօսում էր հին փիլիսոփաներից ու իմաստուններից:

Նաւասարդը, ընդհակառակը, մի գործնական մարդ էր, որ միայն իր գործն էր ճանաչում:

Բայց շատ իրար նման էին նրանց կանայքը, երկու քոյրերը, Նատալիան ու Եփեմիան, երկու զարմանալի հանգիստ ու բարի արարածներ:

Ես ու Ստեփանն էլ, թէեւ էնքան կապուած, բայց տարբեր աշխարհքների ծնունդներ էինք ու տարբեր խառնուածքի տէր: Կարծես թէ ես Բաղդի քեռու ներկայացուցիչը լինէի, նա՝ հօրեղբայր Նաւասարդի:

Նա ռէալական դպրոցումն էր սովորում, ես Ներսիսեան: Նա իրանց դպրոցն էր գովում, ես մերը, եւ յաճախ իրար դէմ էինք բերում - ես հայկականը, նա օտարը, գլխաւորապէս ռուսականը: Էլ գրականութիւն, էլ պատմութիւն, էլ հերոսներ, էլ ժողովուրդ. թէեւ, ի հարկէ, դրանցից շատ քիչ տեղեկութիւն ունէինք:

Ես Վարդան Մամիկոնեանին էի մէջ բերում, նա Վարդանի դիմացը հանում էր Աքիլլէսին: Նա Իլիա Մուրոմեցին էր առաջ քաշում, ես դուրս էի բերում Հայկին: (Էն ժամանակ Սասունցի Դաւիթը դեռ յայտնի չէր մեզանում): Յիշում եմ, թէ Տիգրան Մեծի եւ Պոմպէոսի պատուիրակները ի՞նչ յամառ պատերազմ առաջ բերին մեր մէջ: Ոչ մէկս տեղի չէինք տալիս, դպրոցից գալիս էինք թէ չէ՝ կպչում էինք ու իրար ուտում մի քանի օր շարունակ. մինչեւ որ յուսահատուած տանը՝ միջամտեցին եւ ստիպեցին վերջ դնել մեր անվերջ աղմուկին, որ հարեւաններին էլ էր անհանգիստ անում:

Իմ դրութիւնը դժուարանում էր մանաւանդ էն ժամանակ, երբ վէճը գալիս էր գրականութեանը: Ես գրեթէ ոչինչ չգիտէի գրականութիւնից, իսկ Ստեփանը շատ էր կարդում եւ շատ էր սիրում ռուսաց լաւագոյն բանաստեղծներին ու վիպասաններին:

Նոր եկած օրերս էր, Ստեփանը մի օր այլայլուած տուն ընկաւ ու յայտնեց, թէ Տուրգենեւը մեռել է: Մեր ամբողջ շրջանում ոչ ոք հասկացողութիւն չունէր, թէ ո՛վ է Տուրգենեւը, բայց, Ստեփանի սարսափը տեսնելով, բոլորս էլ սարսափեցինք: Զգացինք, որ մի մեծ դժբախտութիւն է պատահել, որ Ստեփանի վրայ էտքան ազդել է, որովհետեւ քիչ կը պատահէր նա իրեն էդպէս կորցնէր: Եւ մենք երկու օր Հալլաբար դէս դէն ու սրա նրա մօտ էինք վազում միասին: Լաւ չեմ յիշում, թէ ինչո՞ւ, բայց վազվզում էինք Տուրգենեւի մահուան պատճառով:

Առանձնապէս սիրում էր Գոգոլին: Անգիր գիտէր Տարաս Բուլբան: Շարունակ կարդում էր, եւ գիշերները ուղղակի լուսացնում էր ընթերցանութեան վրայ: Շատ է պատահել, որ մեր բարի Եփեմիա ձալոն, նրա հօրեղբօր կինը, առաւօտները կանչել է մեզ, որ գնանք տեսնենք, թէ ինչպէ՞ս է Ստեփանը սեղանի առջեւ նստած քնել՝ գլուխը դրած Գոգոլի բաց գրքի վրայ:

Նա սովորաբար գիշերներն էր կարդում ու դասերը սովորում. իսկ ցերեկները կանոնաւոր կերպով մարմնամարզութեամբ էր զբաղւում, կոխ էր կպնում ինձ հետ կամ որսի էր գնում:

Մեր տան ուղիղ առջեւից մի նեղ կածան էր իջնում դէպի ժայռի տակը, Քռի ափը: Էնտեղ, ժայռի լանջերին մեծ քանակութեամբ աղաւնիներ էին լինում: Եւ յաճախ, ճաշերից յետոյ, հրացան էր որոտում:

Էդ Ստեփանի հրացանի ձէնն էր. աղաւնի էր որսում:

Մի ժամանակ էլ որսի ասպարէզը մեծացրեց, սկսեց գնալ Նաթլուղից դէնը հեռու հանդերը՝ նապաստակի որսի: Եւ միշտ աղաւնի ու նապաստակ էր բերում:

Տանը՝ ցանկանում էին, ստիպում էին, որ ձեռք վերցնի որսորդութիւնից: Աղաւնիների սպանութիւնը մեղք էին համարում, իսկ նապաստակի միսը հարամ եւ զզւում էին, չէին ուտում: Բայց նա, առանց նոյն իսկ պատասխան տալու, լուռ շարունակեց իր որսորդութիւնը եւ վերջում շատերիս նապաստակի միս ուտացրեց:

Իսկ նրա կոխ պրծնելու մոլորութիւնը կատարեալ պատիժ էր դարձել ինձ համար: Ճիշդ է, ես էլ էի առողջ ու ջլուտ, բայց նա աւելի ուժեղ էր: Ժամերով քաշքշում էինք իրար եւ տունը տակն ու վրայ անում: Հագներիս շոր չէր մնում: Եւ ահա մեր ձալոները մտածեցին սրան մի ճար անել: Տների ծայրի դահլիճը յատկացրին մեր ըմբշամարտութեան համար եւ կարգադրեցին, որ կոխ կպնելիս բլուզներս հանենք:

Տան երեխաները փոքր էին: Մեր ըմբշամարտութեան սովորական թամաշաւորը Ստեփանի փոքր եղբայրն էր, Արիստակէս անունով: Արիստակէսն էլ ամէն բանի մէջ գնաց իր եղբօր ետեւից, հետագայում էլ Դաշնակցութեան մէջ մտաւ ու սպաննուեց Խանասորի կռուում:

Մեր չորս կողքը եւ մեր բակում շատ աղջիկներ կային, ես ամէն մի յարմար դէպքի փախչում էի նրանց նայելու, իսկ Ստեփանը, ընդհակառակը, թէեւ ինձանից էլ մի երկու տարով մեծ էր, բառի բովանդակ նշանակութեամբ երբեք ուշք չէր դարձնում նրանց վրայ: Երբ ես խօսք էի գցում աղջիկներից՝ նա ոչ մի բառ չէր արտասանում, լուռ, յանդիմանաբար նայում էր ինձ ու պնչերը ուռցընում:

Սակայն շատ էր սիրում լսել քաջերի կեանքից, եւ երբեմն գիշերները պատմում էի նրան Լոռու **իգիթներից** ու ղաչաղներից, իսկ ինքը ոգեւորուած պատմում էր իր հօրեղբայր Դաւթից:

Հետագայում էլ մի քանի պատմութիւններ արաւ ու առաջարկեց, որ բանաստեղծութեան նիւթ առնեմ: Ես նրա պատմուածքներից միայն մէկից, որ պատմեց 1890 թուականին, մի տէրտէրի ու իր աղջկայ պատմութիւնից օգտուեցի ու նիւթ առայ մի պոեմի: Պոեմը թէեւ գրելուց բոլորովին փոխուեց եւ ուրիշ բան դուրս եկաւ, բայց ես նուիրեցի Ստեփանին: Բաւական տարիներ առաջ ռուս ժանտարմները խուզարկեցին, տարան կորցրին էտ պոեմը եւ միայն մի երկու կտոր գտայ պատահմունքով, որ տպուեցին «Տանը», «Երերում» եւ «Հայոց լեռներում» վերնագիրներով:

Ինչպէս ասի՝ մենք շատ էինք վիճում եւ իրար դէմ հանում - ես հայկականը, նա օտարը: Բայց հէնց էտ տարիներումն էլ, տակաւին ռէալական դպրոցում, նա սկսեց կարդալ հայոց գրականութիւնից, տարուեց Րաֆֆու եւ ուրիշների գրուածքներով, դարձաւ «Մշակ»-ի ընթերցող եւ Արծրունու ջերմ յարգող, սկսեց ժողովներ յաճախել եւ շատ արագ ու թունդ հայասէր դառնալ: Եւ մի քանի տարուց յետոյ մեր վէճերը շատ էին փոխուել: Քանի ես հակւում էի դէպի օտար գրականութիւններն ու ցրւում դէպի հեռուները՝ նա ուժեղ թափով կենտրոնանում էր հայութեան վրայ:

Ռուսաց գրականութեան ազդեցութեան տակ նա պատրաստի ժողովրդասէր էր, ինքն էլ ի ծնէ դեմոկրատ, հայ ժողովրդի ու նրա վիճակի վրայ էլ որ աչքը բացուեց՝ արդէն գրեթէ կազմակերպուած էր ապագայ Ռոստոմը:

Էսպէս էր, երբ ռէալական դպրոցն աւարտեց ու գնաց Մոսկուա ուսանելու:

Մոսկուայից արդէն յեղափոխականի նամակներ էր գրում:

Չմոռանամ ասել, որ 1884 թուականին մի օր եկաւ տուն ու յայտնեց, թէ էսօր քո հայրենակից մի լաւ տղի հետ ծանօթացայ:

Անուն ազգանունը հարցրի:

Ասաւ՝ Սիմոն Զաւարեան:

Ո՞վ կարող էր էն ժամանակ երեւակայել, թէ երկուսն էլ, տակաւին աշակերտներ, տարուելու էին միեւնոյն գաղափարով ու նոյն ցաւով, միեւնոյն չարքաշութեամբ անցնելու էին միեւնոյն ճանապարհը ու թաղուելու էին նոյն գերեզմանատանը կողք կողքի, երկուսն էլ միշտ կարօտ **կուլտուրական** խաղաղ կեանքի ու աշխատանքի՝ իրենց հետ տանելով միշտ իրենց փայփայած գեղեցիկ ծրագիրները:

Իմ նպատակից դուրս է Ստեփանի պատանեկութեան էս շրջանից դէսն անցնելը, սակայն մի բան կարող եմ ասել, որ նա իր բնաւորութեամբ, իր բարոյական առողջ ամբողջականութեամբ մնաց նոյնը, ինչ որ էր պատանի ժամանակ: Միշտ պարզ, հասարակ, քչով բաւականացող, իրեն զրկող, հաշտարար եւ բոլորանուէր նուիրուող ամէն մի գործի, որ կ'առնէր իր վրայ:

Ինչպէս ծնուել էր՝ էնպէս էլ մնաց, էնպէս էլ գնաց:

Գնա՛, Ստեփան ջան, դու էլ գնա՛ էն խորհրդաւոր աշխարհքը, ուր էնքան շատ լաւ ընկերներ, հարազատներ ու սիրելիներ են գնացել ու էն աշխարհքը դարձրել էնքան հարազատ եւ էնքան հրապուրիչ:



«Յառաջ»

ՀՅԴ Վրաստանի Կենտրոնական Կոմիտէի Օրկան

Կիրակի, 26 Յունուարի 1919

Առաջին տարի, թիւ 11

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամբէն խաւար, մեր ճամբէն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլոյս մըթնում
Երկա՜ր դարերով գընում ենք դէպ վեր
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:
Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձրը լեռներում:
Բայց քանի անգամ շէկ անապատի
Օրդուները ս–
Իրարու ետեւ
Եկա՜ն, զարկեցին մեր քարվանն ազնիւ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:
Ու մեր քարվանը շընփոթ, սոսկահար,
Թալանուած, ջարդուած
Ու հատուած-հատուած
Տանում է իրեն վէրքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:
Ու մեր աչքերը նայում են կարօտ
Հեռու աստղերին,
Երկընքի ծերին,
Թէ երբ կը բացուի պայծառ առաւօտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ
1902

ՀՅԴ ՀԻՄՆԱԴԻՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ԸՆՏԻՐ . . .

Շարունակուած 6-րդ էջէն

Ու դե՛ռ կը զարմանանք՝ տեսնելով Ռոստոմի ցուցաբերած համամարդկային ըմբռնումներն ու անանձնական մօտեցումները, երբ կ'ընթերցենք անոր մասին բազում վկայութիւններ: Ահա անոնցմէ փունջ մը:

Ռոստոմի մայրն է պատմողը:

Զատկուան օր մը, 4-5 տարեկան Ստեփանը, նոր հագուստով ու կօշիկներով դուրս կու գայ փողոց՝ խաղալու ընկերներուն հետ: Քիչ ետք տուն կը վերադառնայ ոտաբոպիկ: Մայրը զարմացած կը հարցնէ, թէ ո՞ւր են նոր շորերը, Ռոստոմ կը պատասխանէ, թէ տուած է իր աղքատ ընկերոջ: Մօր այն խօսքին, թէ՝ հայրիկդ կը ծեծէ, ան կ'ըսէ, ո՛չ, չի ծեծեր: Մայրը կը պնդէ, որ կը ծեծէ, փոքրիկ Ռոստոմի պատասխանը կ'ըլլայ, կը ծեծէ, թող ծեծէ, հօ, նոր կօշիկներ կ'առնէ ինծի:

Ուրիշ մը: Ուսանողական տարիքին, Մոսկուա, ցոյցերու մասնակցութեան ատեն կը ձերբակալուի եւ կ'աքսորուի ծննդավայր: Ճամբու ընթացքին Ռոստոմ կը մտերմանայ ոստիկան-սայլապանին հետ, որ զինք պիտի հասցնէր իր գիւղը եւ տեղւոյն ոստիկանատունէն վկայագիր առած հեռանար: Ռոստոմ կը համոզէ ծեր սայլապանը, որ կէս ճամբան զինք թողու, աւելի չյոգնի ու վերադառնայ, եւ ինք կը խոստանայ, որ սայլապանին կ'ուղարկէ վկայագիրը: Ծերունին կ'ապշի եւ կը կարծէ, թէ ան կ'ուզէ փախչիլ: Ռոստոմ կ'ըսէ՝ չեմ փախչիր, քեռի՛, ազնիւ խօսք կու տամ, որ փախուստ չեմ տար: «Հապա՞ եթէ խոստանաս եւ խոստումդ չյարգես», - վրայ կու տայ սայլապանը, - «գիս պաշտօնէս կը զրկեն ու կը պատժեն, ընտանիքս ալ կը քանդուի»: Ու կը պահանջէ, որ Ռոստոմ երդում կատարէ:

«Ես երդուելու սովորութիւն չունիմ», - կը պատասխանէ Ռոստոմ, «Իմ երդումս ազնիւ խօսքս է: Ես կ'երթամ եւ կը ներկայանամ գիւղի ոստիկանատուն: Ու այդպէս կը պատահի, հետագային ան սայլապանին կ'ուղարկէ վկայագիրը:

Յիշե՛նք, սիրելինե՛ր, «իմ երդումս իմ ազնիւ խօսքս է»:

Այո՛, որքա՜ն ապերախտ եւ զզուելի են այն մարդիկը, որոնք իրենց ո՛չ միայն մարդկային, այլեւ կուսակցականի երդումն անգամ կ'ուրանան, ինչ-ինչ հաշիւներով, փոքրոգի ու աժան հարցերու համար:

Այս անգամ պատմողը Ռոստոմի աշակերտած Սաթենիկ Տէր Դաւթեանն է:

1901, Պուլկարիա, հայկական դպրոցի մէջ ուսուցչութիւն: Զմեռուան սկիզբն էր, Ռոստոմ վերարկու չունէր. հագածը հինցած էր: Իր կնոջ թախանձանքով եւ շատ դժուարութեամբ Ռոստոմ կը համաձայնի նոր մը գնել: Բոլորը կ'ուրախանան, նոյնիսկ աշակերտները. անոնք կ'ուզէին, որ իրենց սիրելի ուսուցիչը լաւ հագուած երեւար: Ի միջի այլոց, ճիշդ այդ օրերուն, յեղափոխական ընկեր Պետրոս Սեմերճեան իր ընկերներուն հետ բանտարկուած էր:

Նոր վերարկուն գնելէն հազիւ երկու շաբաթ անց, կը տեսնեն, որ Ռոստոմ նորէն կը սկսի հագնիլ իր հին վերարկուն: Աշակերտները կը զարմանան: Ռոստոմի կեանքի ընկերը կը դիմէ աշակերտներուն՝ ըսելով, որ հարցնեն իրենց ուսուցիչին, թէ ինչո՞ւ նոր վերարկուն չի հագնիր: Ռոստոմ կը ժպտի եւ իր խոհուն նայուածքով կը թափանցէ աշակերտներու հոգիներուն մէջ: Տիկին Լիզա ինք կը պատասխանէ. «Նա իր նոր վերարկուն ուղարկել է բանտի իր ընկերոջ՝ Պետրոս Սեմերճեանին...»:

Դարձեալ յիշե՛նք մեր ղեկավար ընկերոջ անսահման ընկերասիրութիւնը, իրական նուիրումը եւ աստուածային սէրն ու յարգանքը հանդէպ տանջուողին, տառապողին, դաշնակցական ընկերոջ:

Ռոստոմը չունէր ընտանեկան կեանք: Ան թափառական կեանք կը վարէր եւ ամբողջովին փարած էր սրբազան գործին:

Կը պատմուի, որ օր մը, Թիֆլիս եղած ատեն, փողոցը, Ռոստոմ կը հանդիպի իր կնոջ՝ տիկին Լիզային: Կինը զարմացած կը հարցնէ Ռոստոմին՝ «ե՞րբ եկած ես»: Ան կը պատասխանէ, թէ «եօթը օրէ հոս էի, շատ զբաղած էի, չկրցայ տուն հանդիպիլ»: Հզօր կամքի ու հաւատամքի տէր կնոջ պատասխանը կ'ըլլայ հետեւեալը. «Լաւ, երբ ժամանակ ունենաս, տուն հանդիպէ»:

Ո՛չ, սիրելի ներկաներ, հեքիաթներ չեն ասոնք, ո՛չ ալ՝ զուարճալի դիպաշարեր, այլ՝ դաշնակցական հսկայի մը կեանքին ու նկարագիրին մաս կազմող ճշմարիտ վկայութիւններ, ՀՅ Դաշնակցութեան ամբողջ պատմութեան մաս կազմող անփոխարինելի արժէքներ:

Ի դէպ, պահ մը ընդունինք, որ ներկայացուածները անըմբռնելի երեւոյթներ կրնան սեպուիլ կարգ մը մարդոց կողմէ, մարդկային մտքին ու հոգիին անհասանելի պատումներ նկատուին ուրիշներու համար, իրենց կեանքը քարշ տուող անհատներու թէ խոհանոցային հայրենասիրութեամբ տարուած շատերու համար ալ՝ անեքթոտներու տեսականի:

Իսկ, իրենք զիրենք յեղափոխականներ յորջորջածներ թէ քաղաքական կեանք մուտք գործած չտեսներ, իրենց կարգին պիտի չկարենան ո՛չ ըմբռնել, ո՛չ հասկնալ եւ ո՛չ ալ տեսնել ռոստոմեան ուժին, մեծութեան ու կամքին տարողութիւնը, որովհետեւ Ռոստոմ սովորական-մահկանացու անձ մը ըլլալով հանդերձ, օժտուած էր այնպիսի տիեզերահունչ առաքինութեամբ եւ անսահման բարութեամբ, որ հազուագիւտ անհատներու ծինային կառուցուածքին մէջ կարելի է տեսնել զանոնք:

Այո՛, իրաւամբ ըսուած է, թէ ՀՅ Դաշնակցութեան հիմնադիր սերունդը ունէր տարբեր կազմաւորում եւ մարդկային որակ: Անոնք ցոյց տուին այնպիսի հաւատամք, նուիրումի բարձունք, հայրենասիրական զգացողութիւն, պայծառ աշխատանք ու ապրումներու խայտանք, որոնց դժուար թէ հանդիպինք հայոց պատմութեան վերջին դարերուն:

Ու այդ սերունդին ընտիր, ազնուական ու ասպետական զաւակներէն էր մեր ընկերը՝ Ռոստոմը, որ շնորհիւ իր դաշնակցականի հոգեկերտուածքին, մարդ արարածը սիրելու անոր գերազանց ուժին, ընկերասէրի հրաշալի ունակութեան, ազգին ծառայելու կոչումին, ծով համբերատարութեան, զուսպ կեանք ապրելու հրաշք կարողութեան, գիտական մտքին ու ապառաժեայ կամքին, կրցաւ ստեղծել հայոց նոր դարաշրջանը:

Դարաշրջան, որ յատկանշուեցաւ տառապանքով, բայց նաեւ յաղթանակի փառքով: Յաղթանակ, որ կերտուեցաւ արեամբ եւ հրաշք տղոց նուիրումով:

Աւարտին, կրկին յիշենք մեր ընկերոջ այնքան պարզ, բայց խորիմաստ սա քանի մը տողերը, որոնք արձանագրուած են եւ պահուած իբրեւ մասունք յետնորդ սերունդներու:

Օր մը, դաշնակցական ընկեր Փիլոս հարց կու տայ Ռոստոմին.

- Բացատրէ մեզի, ի՞նչ է Հայ յեղափոխական դաշնակցութիւնը: Ռոստոմ կը ժպտի, ճակատը կը տրորէ ու կը պատասխանէ.

- Աստուած սիրէք, ինծի այդպիսի դժուար հարցեր մի՛ տաք: Ես ինչպէ՞ս բացատրեմ անբացատրելի բան մը: Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել. բացատրելու ամէն փորձ կը փոքրացնէ Դաշնակցութիւնը: Դաշնակցութիւնը կարելի է եւ պէտք է զգալ միայն: Զգալ, ապրիլ եւ հաւատալ: Մարդ կը հաւատայ Աստուծոյ, բայց չի կրնար ըսել, թէ ի՞նչ է Աստուած:

Փիլոս, կը շարունակէ հարց տալ.

- Իսկ ի՞նչ է քու կարծիքդ Դաշնակցութեան մասին: Ռոստոմ կը պատասխանէ.

- Դաշնակցութիւնը, իմ կարծիքով, ամէն բանէ առաջ ապրում է եւ գործ:

- Մեծ գործ, վրայ կը բերէ Փիլոս:

- Ո՛չ, կը պատասխանէ Ռոստոմ: Մեծ ու փոքր գործեր չկան. կան միայն պատուաւոր եւ անպատիւ գործեր, ինչպէս կան պատուաւոր եւ անպատիւ մարդիկ:

Այո՛, սիրելի ընկեր, դուն եղար պատուաւոր եւ ուխտապահ զինուորագրեալ, ինչպէս ընկերներդ՝ Քրիստափոր Միքայէլեանն ու Սիմոն Զաւարեանը, ու շատ-շատեր: Դուն սիրեցիր Դաշնակցութիւնը եւ եղար անոր խոնարհ ծառան, պաշտեցիր Դաշնակցութիւնը եւ անոր դրօշին տակ նուիրաբերեցիր ամբողջ էութիւնդ՝ յանուն ազգի ու հայրենիքի ազատութեան եւ փրկութեան, եղար տիպար ղեկավար ու ներշնչեցիր հազարաւոր դաշնակցականներ, եղար անբասիր առաջնորդ ու սերունդներ դէպի անմահութիւն ճամբեցիր, դարձար սիրոյ աղբիւր՝ գալիք սերունդներուն, եղար գաղափարի մարտիկ ու անով երիտասարդ հոգիներ աշտարակեցիր, եղար առաքինի հայ ու յարգըւեցար ամբողջ ազգին կողմէ, գերադասեցիր Դաշնակցութեան ու ազգին արժանապատուութիւնը, երբ մտքով գաճաճներ ու փառասէրներ իրենց տգեղ վերաբերումով վիրաւորեցին արժանապատուութիւնդ, եղար գլխագիր ՄԱՐԴ ու կերտեցիր դաշնակցական մարդու տեսակը, եղար մեծ գաղափարախօս ու կառուցեցիր դաշնակցականի տաճարը, եղար գերազանցապէս գործի մարդ, բայց մնացիր խոնարհ եւ ստուերի մէջ հզօր ու միայնակ, ինչպէս՝ վեհափառ Արարատը:

Այո՛, սիրելի՛ ընկեր, դուն անցեալ չես, ինչպէս շատեր կը կարծեն եւ մեզի կ'ըսեն, այլ՝ ժամանակակից, դուն ներկայ ես, մեզի հետ՝ մեր տկարութեան ատեն, մեզի հետ ես՝ սրբագրելու համար մեր գործած սխալներն ու թերութիւնները, մեր կողքին ես՝ երբ կը թուլանան մեր կամքերը, դուն մեզ միացնողն ես, շաղկապողը, երբ կը սասանի մեր կազմակերպական անդորրը, դուն կը ժպտիս մեր դիմաց, երբ աշխատանքի ծանրութեան տակ կը տժգունին մեր դէմքերը:

Ու մենք այս առիթով, ողջունելով ՀՅԴ «Ռոստոմ» կոմիտէի կազմակերպած հոգեպարար այս երեկոն, մեր գլուխները կը խոնարհենք մաքրամաքուր տիպարիդ դիմաց եւ ակումբի սրտին կանգնեցուած կիսադրիդ առջեւ, ոգեղինացած ներկայութեանդ, կը վերանորոգենք մեր երդումը, դաշնակցականի խոստումը՝ անսակարկ ծառայելու ազգին ու հայրենիքին:

Փա՛ռք քեզ, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ «ԲԱՑ»-Ը

Ռոստոմի մահուան վաթսունամեակին առիթով լոյս տեսած հատորին մէջ Վահան Նաւասարդեան անոր կը վերագրէ «Եթէ Դաշնակցութիւնը այդքան խօսի,նա գործ չի կատարի» բանաձեւումը («Ռոստոմ», Պէյրութ, «Վահէ Սէթեան» տպարան, 1979, էջ 252): Նաւասարդեանի համաձայն, Ռոստոմ ի՛նք պատմած է այն միջադէպը, որ առիթ տուած է իրեն այդ խորհրդածութեան: Միջադէպը կը պատահի Ժընեւի մէջ, ռուս յեղափոխականներու հետ ամբողջ գիշեր մը տեւած բանավէճին առիթով՝ ահաբեկում կատարելու թէ չկատարելու հարցին շուրջ: Ռոստոմ լուռ կը մնայ ամբողջ բանավէճի ընթացքին: Ուշ գիշերին, երբ իրեն դէպի տուն ընկերակցողները կը պնդեն, որ իր կարծիքը տայ հարցին մասին, Ռոստոմ կը կատարէ նշեալ խորհրդածութիւնը:

Նաւասարդեանի յօդուածը, ուր այս միջադէպը յիշուած է, իբրեւ խորագիր ունի «Կենդանի գործի վարպետը», իսկ առաջին երկու տողերը արդէն կը կախարդեն յօդուածագիրի խօսքի ուժին հմայքով. «Դաշնակցութիւնը ԳՈՐԾԻՑ ծնաւ, ձեւաւորուեց ԳՈՐԾԻ մէջ եւ եղաւ ու մնաց գերազանցաբար ԳՈՐԾԻ կուսակցութիւն»: Այս բանաձեւումը, որուն լիցք կու տայ Ռոստոմի այդ եւ յօդուածին մէջ նշուած այլ միջադէպի մը նոյնանման խորհրդածութիւնը, իրերայաջորդ դաշնակցական սերունդներու համար վերածուած է եզակի **էթոսի**, գրեթէ կուսակցական ինքնութեան: Սակայն, ինչպէս ամէն մտածողութիւն, որ իր քննադատական բանականութիւնը կը կորսնցնէ, երբ կը վերածուի հրապարակային ելոյթներու յաւուր պատշաճի ամբոխահաճոյ նախադասութեան եւ շատ աւելի յուզական, քան բանական յանձնառութեան կը հրաւիրէ, Ռոստոմի այդ խօսքն ալ կրնայ խեղաթիւրուիլ կամ թիւրիմացութեան տեղի տալ: Այդ կը պատահի, երբ «Դաշնակցութիւնը կը գործէ» հասկացողութիւնը կը նսեմացնէ, կամ մինչեւ իսկ կը չեզոքացնէ խօսքին կարեւորութիւնը, այսինքն՝ մտածողութիւնը, եւ մանաւանդ՝ քննադատական մտածողութիւնը: Մինչդեռ Ռոստոմը՝ իբրեւ19-րդ դարու աւարտի եւ 20-րդ դարու սկիզբի մարքսեան կազմաւորում ստացած յեղափոխական, խորապէս համոզուած էր խօսքի եւ գործի տրամախոհութեան՝ ի հետեւումն նոյնինքն Մարքսի՝ Ֆոյերպախի մասին թեզերուն 11-րդին՝ «Փիլիսոփաները մինչեւ հիմա աշխարհը մեկնաբանած են տարբեր ձեւերով: Խնդիրը, սակայն, աշխարհը փոխելն է»: Այսինքն Ռոստոմ յեղափոխական գործը հասկցած էր իբրեւ գիտակցական արարք՝ անարդար կարգերու փոփոխութեան եւ ոչ թէ իբրեւ տարերային ըմբոստութիւն, որ առանց գիտակցութեան՝ կը մնար ինքնիրմով իմաստաւորուող, ինքնիրեն արդարացնող եւ, ի վերջոյ, ինքզինք սպառող արարք եւ ոչ թէ «գործ»:

Երբ Դաշնակցութեան գործին մասին կը խօսուի, հաւաքական հասկացողութեան, կամ աւելի ճիշդը՝ մտապատկերին մէջ այդ ազգային-ազատագրական պայքարն է, իրերայաջորդ սերունդներու երեւակայութիւնը հրահրած ֆիտայիներու հերոսութիւնը եւ պատերազմական սխրանքներու դիւցազներգութիւնը: Աւելի՛ն. դաշնակցական գործը կարծես բացառապէս ազգային յատկանիշ ունեցած է միշտ, այնքան մը, որ «գործ» ըսելով՝ կը հասկցուէր ազգային-ազատագրական պայքար, հայրենիքի պաշտպանութիւն եւ սփիւռքեան պայմաններուն մէջ ազգապահպանում: Դաշնակցական գործին շեշտուածօրէն ազգային յատկանիշը, կամ՝ անոր նման ընկալումը, կրնայ յանգեցնել այն ենթադրութեան, որ ազգային գործին համեմատ, Դաշնակցութեան ընկերվարական գործը բաց մը ձգած է: Կը թուի այնպէս, որ Դաշնակցութեան պատմագրութիւնը նուազ ուշադրութիւն դարձուցած է կուսակցութեան ընկերվարական գործին ուսումնասիրութեան, անոր ձեռքբերումներուն արձանագրումին, կամ թերեւս նոյնիսկ անտեսած է զայն: Տակաւի՛ն, Դաշնակցութեան քայլերգէն բացի՝ յեղափոխական ոչ մէկ երգ հերոսացուցած է ընկերվարական գործին ենթական՝ բանուոր, գիւղացի թէ, ընդհանրապէս, աշխատաւոր հայ մարդը:

Դաշնակցութեան ընկերվարական գործի այս «բաց»-ին երեւոյթը առաւել յատկանշական կը դառնայ, երբ անդրադառնանք, որ ընկերվարական խօսքի եւ մտածողութեան բաց չկայ կուսակցութեան գրականութեան մէջ: Ընդհակառա՛կն, Դաշնակցութեան Ծրագիրէն սկսեալ մինչեւ անոր գլխաւոր գաղափարախօսները ընկերվարութիւնը ո՛չ միայն իր տեսական թէ գործնական երեսներով վերլուծած են, ո՛չ միայն լայն քննարկումի ենթարկած են ընկերվարական պայքարի համաշխարհային փորձը, այլեւմաշտոցեան տառերով գրուած ընկերվարութեան տուած են ուրոյն դիմագիծ մը, ինչ որ չի՛ նշանակեր ընկերվարութեան նեղ իմաստով «հայացումը», որ կա՛մ ազգայնական մօտեցում մըն է, կա՛մ ալ տեսականօրէն անհեթեթութիւն մը, որովհետեւ ընկերվարական աշխարհահայեացքը համամարդկային պատմութեան զարգացման գիտական հասկացողութիւն մըն է: Ո՛չ ալ Դաշնակցութեան ընկերվարական գաղափարախօսութիւնը միակն է հայկական իրականութեան մէջ:

«Ուրոյնութիւն»՝ կը նշանակէ համամարդկային գաղափարախօսութեան մը ընկալումը որոշ հաւաքականութեան մը, հայութեան պարագային՝ ազգային, պատմական զարգացման եւ աշխարհաքաղաքական ու հասարակական պայմաններու գիտակցումով ընկալումը եւ քաղաքական մտածողութեան կազմաւորումը, որուն մէջ ռազմավարական ազդակներն ու մարտավարական նկատառումները իրենց կարեւորութիւնը կը ստանան: Ահա թէ ինչո՛ւ Դաշնակցութեան իրերայաջորդ ծրագիրներուն մէջ պատմութեան զարգացման ընկերվարական հասկացողութեան հիմնական դրոյթները չեն փոխուած, թէկուզ եւ անոնց շարադրութիւնը պատշաճեցուած է ժամանակի հրամայականներուն: Միեւնոյն ժամանակ, սակայն, Դաշնակցութեան Ծրագիրին մէջ հայ ժողովուրդի, իմա՝ հայ աշխատաւորութեան, ազատագրումը չէ բռնադիտուած բնաւ դասակարգային պայքարի միջազգայնականութեան ընդմէջէն, ինչպէս համոզուած էին հայանուն պոլշեւիկները՝ ի դէմս Կասեաններու, Նուրիջանեաններու եւ այլ մարդասպաններու: Իրենց այդ համոզումին կուրութիւնը ի վերջոյ հայութեան համար վերածուեցաւ պատուհասի:

Դաշնակցութեան ընկերվարական խօսքի եւ մտածողութեան արտադրութիւնը միշտ նոյն թափն ու ճոխութիւնը չէ ունեցած: Եղած են պատմական ժամանակաշրջաններ, երբ այդ մտածողութիւնը մինչեւ իսկ ունեցած է շատ աւելի ազգային եւ մինչեւ իսկ ազգայնական շեշտաւորում: Անցեալ դարու երեսունականներէն մինչեւ փաստօրէն 20-րդ Ընդհանուր ժողով, այսինքն՝ ստալինեան բռնատիրութեան եւ Պաղ պատերազմի առաջին եւ ամենաթէժ երկու տասնամեակներուն, շատ աւելի տիրական եղած է համայնավար գաղափարախօսութեան եւ խորհրդային կարգերու ընդդիմութիւնը, քան՝ ընկերվարական մտածողութեան զարգացումը: Այդ տասնամեակներուն էր նաեւ, որ սփիւռքի կազմակերպութիւնն ու հայապահպանումը կը դառնային առաջնահերթ: Թէ որքանո՛վ հասկնալի կամ արդարանալի է այդ տարիներուն ընկերվարական մտածողութեան տեղատուութիւնը, առանձին քննարկելի նիւթ է: Սակայն իրողութիւն է, որ 20-րդ Ընդհանուր ժողովը իր «յեղափոխական արմատներու վերադարձ»-ի կարգախօսով ո՛չ միայն վերարժեւորեց ընկերվարութիւնը, այլեւ այժմէականացուց՝ օրին համաշխարհային ոլորտին մէջ տիրական Երրորդ Աշխարհի ազատագրական շարժումներուն հետ քայլ պահելով: Այդ մասին կը վկայեն 1970-ականներուն ՀՅԴ Բիւրոյի օրկան «Ազդակ Շաբաթօրեակ / Դրօշակ»-ի թիւերը եւ գաղափարախօսական հարցերու մասին յօդուածներու ամբողջ շարքը:

Ընկերվարական մտածողութիւնը բանավէճի հարց դարձաւ նաեւ1990-ականներուն՝ յետպաղպատերազմեան պայմաններուն մէջ եւ Դաշնակցութեան հայրենիք վերադարձի հոլովոյթին առընթեր, երբ խորհրդային համայնավարութեան պատմական փորձառութեան անփառունակ վախճանը իր անխուսափելի անդրադարձը ունեցաւ ընդհանրապէս ձախակողմեան մտածողութեան վրայ: Ազատ շուկայական համակարգով խանդավառ հայրենի իրականութեան պայմաններուն մէջ ընկերվարութեան մասին խօսիլը առնուազն պարզամտութիւն կը թուէր: Քիչ չէին անոնք, որոնք մինչեւ իսկ կը թելադրէին այլեւս հրաժարիլ «ժամանակավրէպ» գաղափարախօսութենէ մը, որ կը համոզէր ոչ ոք ազատ ու անկախ Հայաստանի մէջ: Օրին, ՀՅԴ Բիւրոյի 2002 թուականի յուլիսին Երեւանի մէջ կազմակերպած «Հայաստանի մէջ Դաշնակցութեան ընկերվարական գործը» սեմինարը, առաջինը նմանատիպ այլ նախաձեռնութիւններու յաջորդ տարիներուն, եկաւ ո՛չ միայն ջրելու ամէն կասկած, որ Դաշնակցութեան համար ընկերվարութիւնը էութիւն է, այլեւ զայն հաստատեց իբրեւ գաղափարախօսական ուղենիշ՝ նպատակաուղղուած դէպի տնտեսական ու հասարակական համակարգային փոփոխութիւններ: Աւելի՛ն. Դաշնակցութեան պատմութեան մէջ թերեւս առաջին անգամ ըլլալով ընկերվարութիւնը բառացիօրէն կը բանաձեւուէր իբրեւ «գործ»եւ կը յանգէր կուսակցութեան ընտրական **փլաթֆորմի** կազմութեան…

Դաշնակցութեան ընկերվարական խօսքի ու մտածողութեան այսպէս կոչուած «մտաւորական պատմագրութիւնը» (intellectual history) առանձին ուսումնասիրութեան նիւթ է: Բայց քանի որ 21-րդ դարը եւ ազատ ու անկախ հայրենիքի պայմանները կարծես թէ ազդանշանը տուած են Դաշնակցութեան ընկերվարական գործին, անհրաժեշտ է հրապարակային քննարկումի հրաւէրի կարգով խորհրդածել ցարդ այդ գործի «բաց»-ին, կամ նման ընկալումի առկայութեան մասին:

Դաշնակցութեան ընկերվարական գործի «բաց» չկայ ազգային-ազատագրական պայքարի առաջին երեք տասնամեակներուն, ներառեալ՝ Հայաստանի Հանրապետութեան պետականաշինութեան երկամեակը: Թէկուզ եւանդրանիկ Մանիֆեստը իր ոճով ու բովանդակութեամբ գործի կոչ է, Դաշնակցութեան առաջին Ծրագիրէն սկսեալ ազգային-ազատագրական պայքարը տեղադրուած է յեղափոխական գործի հասկացողութեան մէջ, ուր նպատակ կայ հայ մարդը ազատագրել ստրկութեան դարաւոր կապանքներէն, որոնք նաեւ հոգեկան ու մտաւորական բնոյթ ունէին:

Ազգային-ազատագրական պայքարը, միշտ համաձայն՝ Դաշնակցութեան տեսականին, պիտի յանգէր ընկերվարական համակարգի կերտումին, ուր աշխատանքի շահագործումը պիտի բացառուէր եւ հասարակութեան բոլոր անդամները հաւասարապէս պիտի օգտուէին իրենց արտադրութեան բարիքներէն: Այս հետեւումով, ընկերվարական գործը չէր ընկալուեր միայն իբրեւ պետական ոլորտին մէջ առնուելիք որոշումներ՝ ի խնդիր ազատ, արդար ու հաւասար համակարգ մը կառուցելու: Նոյնքան եւ թերեւս շատ աւելի կարեւոր էր հասարակութեան մէջ տարուելիք աշխատանքը, իմա՝ աշխատաւոր դասակարգի գիտակցումը իր իրավիճակին ու իրաւունքներուն եւ անոր կազմակերպումը:

«Կովկասեան նախագիծ»-ին հետն էր, որ Դաշնակցութեան ընկերվարական գործը դադրեցաւ միայն տեսութիւն ըլլալէ: Հայ աշխատաւորական զանգուածին կազմակերպումը եւ յեղափոխական գործին աշխարհաքաղաքական ընդլայնումը Օսմանեան կայսրութենէն ցարական կայսրութիւն եկաւ փաստը տալու, որ Դաշնակցութեան գործը միայն զինեալ պայքարով չէր սահմանափակուեր:

Յատկանշական է, որ մինչեւ անկախ պետականութեան ստեղծումը, Դաշնակցութեան ընկերվարական գործը չէր մտածուած իբրեւ պետական քաղաքականութիւն: Ոչ իսկ անկախ պետականութիւնը բանաձեւուած էր իբրեւ ծրագրային նպատակ: Ընդհակառակն, ընկերվարական ամէնէն սկզբունքային համոզումներու մեկնակէտով, հասարակութիւնը կամ ժողովուրդը, եւ յատկապէս աշխատաւոր դասակարգը, կը դիտուէր իբրեւ պատմութեան յառաջդիմութեան վերջին փուլին ենթական, որ դերակատար պիտի ըլլար դրամատիրական կարգերը ընկերվարական կարգերով փոխարինելու աշխատանքին մէջ:

Ժողովուրդներու համադաշնակցութիւնը, **ֆետերալիզմը**, եւ ոչ անպայման՝ գերիշխան ազգային պետականութիւնը, կիզակէտն էր Դաշնակցութեան քաղաքական մտածողութեան: Կարեւոր է նաեւ նշել, որ ե՛ւ տեսականօրէն, ե՛ւ գործնականօրէն Դաշնակցութեան ընկերվարական գործը միշտ ալ ունեցած է ազգային եւ միջազգային զոյգ գործադաշտ: Մինչ առաջինը յստակ է, կը թուի, թէ երկրորդին պարագային «միջազգային» բառը որոշ հատուածներ կը նեղէ, խորթ կը թուի «ազգային կուսակցութեան» գործունէութեան: Նման նեղութիւն հետեւանք է «միջազգային»-ի եւ «միջազգայնական»-ի շփոթին, որ առկայ է յատկապէս պահպանողական մտածողութեան հակում ունեցողներուն մօտ: Դաշնակցութեան ընկերվարական գործը միջազգային ոլորտին մէջ համամարդկային դասակարգային պայքարին ու համաշխարհային յեղափոխութեան ծրագիրին մէջ ներգրաւումը չեղաւ բնաւ: Բայց այդ չի նշանակեր, որ Դաշնակցութիւնը զօրակից չէր որեւէ երկրի աշխատաւորական պայքարին, էր ողջուներ, օրինակի համար, Փարիզի Կոմունան, որուն մասին գրելով՝ Միքայէլ Վարանդեան գրեթէ դիւցազնացուցած է ընկերվարական կարգեր ստեղծելու աշխատաւորներու այդ առաջին փորձը: Անշուշտ որ առաջնահերթութիւնը տրուեցաւ ազգային-ազատագրական պայքարին, բայց արդեօք «**Փրօ Արմենիա**» մը կարելի պիտի ըլլա՞ր հրատարակել՝ առանց Եւրոպայի ընկերվարականներու հետ այն սերտ համագործակցութեան, որ դաշնակցական ղեկավարները հաստատած էին: 1907-ին պաշտօնապէս ընդունուելով Ընկերվարական միջազգայնականին մէջ իբրեւ լիիրաւ անդամ՝ Դաշնակցութեան ընկերվարական գաղափարախօսութիւնը ե՛ւ հաստատագրուեցաւ իբրեւ ընկերվար-ժողովրդավար գաղափարախօսութիւն, ե՛ւ յստակ դարձաւ միջազգային քաղաքական աշխատանքային դաշտը, ուր անհրաժեշտ պիտի ըլլար նաեւ դիրքորոշուիլ օրակարգի վրայ գտնուող համամարդկային հիմնախնդիրներու նկատմամբ:

Այսինքն կը սխալին «Դաշնակցութիւնը գործի կուսակցութիւն է» կարգախօսը պարզամիտ կերպով մեկնաբանելու հակամէտները, որոնք Դաշնակցութեան անդամակցութիւնը Բ. Միջազգայնականին՝ կը դիտեն իբրեւ լոկ ազգային հարցի արծարծման պատեհութիւն:

Ընկերվարական գործը համամարդկային խնդիրներու, պատմութեան յառաջդիմական ընթացքի յանձնառութեան պարտաւորութիւնը կը դնէ բոլոր ընկերվարականներուն վրայ, թէկուզ եւ իւրաքանչիւրին համար բնականաբար իր միջավայրի, հասարակական իրականութեան օրակարգային հարցերը ունենան առաջնահերթութիւն:

Դաշնակցութեան ընկերվարական գործը անկիւնադարձ ապրեցաւ անսպասելի անկախութեան եւ պետականութիւն կերտելու յանկարծակի պատասխանատուութեան դէմ յանդիման մայիս 1918-ին: Ընկերվարական գործը վերածուեցաւ ընկերային պետութեան կառուցման մարտահրաւէրին: Ամբողջական ընկերային պետութիւն՝ քաղաքական, տնտեսական եւ ընկերային իրաւունքներու ամրագրումով: Նման փորձառութիւն, պարզ է, չունէր Դաշնակցութիւնը:

Բայց ունէր մտաւորական անհրաժեշտ պատրաստութիւնն ու տեսլականը այդ պետութեան հիմերը դնելու նախաձեռնութիւնը առնելու համար: Դժբախտաբար պոլշեւիկեան սադրանքն ու Հայաստանի խորհրդայնացումը իր սաղմին մէջ խեղդեցին այդ ծրագիրը: Յաջորդ տասնամեակներուն, Խորհրդային Միութեան ամենափոքր հանրապետութեան պետականաշինութիւնը մաս կազմեց ստալինեան «մէկ երկրի մէջ **սոցիալիզմի** կառուցման» ծրագիրին՝ բռնի համայնացում, վայրագ ճարտարարուեստականացում եւ տնտեսական համակարգ մը, որ կախեալ մնայ ամբողջ Խորհրդային Միութեան համակարգէն, այսինքն անոր բացառուէր ինքնուրոյն զարգանալու եւ դէպի աշխարհ բացուելու ամէն կարելիութիւն:

Ինչպէս կարելի է տեսնել, Դաշնակցութեան ընկերվարական գործի բաց չկայ կուսակցութեան ծնունդի եւ գործունէութեան ծաւալման առաջին երեք ճակատագրական տասնամեակներուն, որոնք եւ դաշնակցական շարքային անդամներուն թէ համակիր հատուածի հաւաքական յիշողութեան մէջ ամէնէն աւելի կը կշռեն կուսակցութեան ինքնութեան եւ ինքնուրոյնութեան իմաստով:

Այլ խօսքով, հակառակ որ այդ երեք տասնամեակը յարաբերաբար նուազագոյն տոկոս մըն է կուսակցութեան պատմութեան մէջ, հակառակ որ սխրագործութիւններու շատ ուրիշ փուլեր եղած են, ինչպէս՝ Հայ դատի պայքարի քսանամեակը (1965-1985) եւ մանաւանդ արցախեան հերոսամարտը, նշելու համար միայն այս երկուքը, ամէն դաշնակցական ինքզինք կը ճանչնայ ի մասնաւորի կուսակցութեան գործունէութեան առաջին երեք տասնամեակներուն ընդմէջէն: Արդ, այս երեք տասնամեակները յատկանշուած են ազգային-ազատագրական պայքարի հերոսական սխրանքներով, որոնք դէմքերու, դէպքերու եւ մանաւանդ յեղափոխական երգերու ընդմէջէն արդարհպարտութիւն ստեղծող հաւաքական ինքնութիւն մը կը կերտեն: Բայց կը բացակայի այդ երեք տասնամեակներուն Դաշնակցութեան ընկերվարական գործի մտաւորական հաստատագրումը: Այսինքն համեմատաբար նուազ ուշադրութեան արժանացած է կուսակցութեան ղեկավար թէ շարքային անդամներու յանձնառութիւնը ընկերվարական պայքարի տարբեր ոլորտներուն եւ այն քաղաքական աշխատանքը, ընկերվարական գործը, որ տարած են: Կրկնելու գնով արձանագրենք՝ մաշտոցեան տառերով գրուած ընկերվարութեան դաշնակցական տարբերակին տեսական գրականութիւն չի պակսիր, խնդիրը ընկերվարական կենդանի գործը յարաբերաբար լուսարձակէ հեռու մնացած ըլլալու իրողութիւնն է:

Վրաստանի հետ Հայաստան եղաւ Կովկասի մէջ եւրոպական ընկերվար-ժողովրդավարութեան օրինակով պետականութեան հիմերը դնող երկիրներէն մէկը 1918-ին: Բայց մինչ վրացի ընկերվարականներու գործը արժանացած է պատմագրական յատուկ ուշադրութեան Սթեֆըն Ճոնզի կողմէ (Stephen F. Jones, Socialism in Georgian Colors: The European Road to Social Democracy, 1883-1917, Harvard University Press, 2005),հայկական իրականութեան մէջ ընկերվարական գործը ընդհանրապէս եւ Դաշնակցութեան ներդրումը նոյն ժամանակաշրջանին կը մնայ պատմագրական եւ մտաւորական պատմագրութեան կարեւոր բացթողումներէն մէկը:

Դաշնակցութեան ընկերվարական գործի բացի հիմնական բացատրութիւնը սփիւռքեան իրավիճակի պարտադրած պայմաններն են՝ համայնքային կազմակերպումէն մինչեւ հայապահպանման հրամայական: Երկու այլ ազդակներ նուազ որոշիչ չեղան սփիւռքի առնուազն առաջին յիսնամեակին Դաշնակցութեան կողմէ ընկերվարական գործի անտեսման: Առաջինը Հայաստանի խորհրդայնացումէն ետք պոլշեւիկեան հակադաշնակցական հալածանքներու իրողութիւնն է: Դաշնակցութեան ընկերվարութիւնը յստակօրէն կը

տարբերէր համայնավարութեան միջազգայնականութենէն եւ իր ընկերվար-ժողովրդավար ուղին հաստատօրէն կը հակադրուէր միակուսակցական ամբողջատիրութեան, տնտեսութեան ամբողջական համայնացումին, ստալինեան կուլակաթափութեան եւ այն վայրագ ճարտարարուեստականացման, որ յատկանշեց իր տնտեսական քաղաքականութիւնը:

Հայաստանի խորհրդայնացումը համաձայնուած էր Մոսկուայի մէջ եւ այդ համաձայնութիւնը կ'ընդգրկէր առնուազն նոր իշխանութիւններու կողմէ հալածանքներու բացառում, որ պոլշեւիկները չյարգեցին եւ սկիզբ տուին յաջորդ տասնամեակներուն արդէն համակարգուած հակադաշնակցական հալածանքին ու հակադաշնակցական քաղաքական մշակոյթի ձեւաւորման: Այդ հալածանքը շուտով տեղափոխուեցաւ կազմաւորման գործընթացի առաջին փուլին գտնուող սփիւռքեան համայնքներ, որոնք նախքան Պաղ պատերազմը արդէն խորհրդային վարչակարգի թեր եւ դէմ բաժանումի գիծի երկայնքին կը սահմանէին իրենց քաղաքական ինքնութիւնը: Զարմանալի չէ, որ այդ պայմաններուն մէջ նոյնիսկ դաշնակցական ընկերվարական խօսքը շատ աւելի ուշադիր եղած ըլլայ քաղաքական մտածողութիւնը համայնավարութենէն զերծ պահելու նախանձախնդրութեան եւ շեշտը դնելու մաշտոցեան տառերով գրուած դաշնակցական ընկերվարութիւնը միջազգայնական գաղափարախօսութենէն տարբերելու հրամայականին վրայ: Երկրորդ պատճառը Ընկերվար միջազգայնականի գործունէութեան տեղատուութիւնն է եւ Դաշնակցութեան ինքնակամ հեռացումը այդ կազմակերպութենէն, երբ իր անդամակցութեան մակարդակը նուազեցնելու որոշում կայացաւ: Զերծ մնալով այս հարցի մանրամասնութեանց մէջ մտնելէն՝ թերեւս տեղին է նկատել, որ Դաշնակցութեան ընկերվարական գործի ապագայ պատմագրութեան մէջ թերեւս առանձին հատոր մը պիտի կազմէ կուսակցութեան յարաբերութիւնը Միջազգայնականին հետ:

Ինչպէս վերը նշուեցաւ, ՀՅԴ 20-րդ Ընդհանուր ժողովը անկիւնադարձային եղաւ յեղափոխական եւ գաղափարախօսական արմատներու վերադարձի իմաստով: Գաղափարախօսական մտաւորական առատ արտադրութեան զուգահեռ, Հայ դատի պայքարի թէժացման այդ տարիներուն, կուսակցութեան քաղաքական յարաբերութիւնները բազմացան նաեւ ընկերվարական կուսակցութիւններու եւ շարժումներու հետ, տեղի ունեցաւ այժմէականացում ընկերվարական մտածողութեան եւ տեսլականի այն ժամանակուան միջազգային ոլորտի յատուկ պատմաքաղաքական պայմաններուն հետեւումով: Կարելի չէ անտեսել Դաշնակցութեան ընկերվարական գործի քաղաքական բազմակողմանի շփումներու կարեւորութիւնը այդ օրերու օրակարգի գլխաւոր խնդիր՝ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման համար: Փաստօրէն, Հայոց ցեղասպանութեան ճանաչման առաջին ազդանշանները տուին պետական թէ ոչ պետական յառաջդիմական շրջանակներ եւ ազդեցիկ դէմքեր, իսկ եւրոպական ընկերվարութեան զօրակցութիւնը կենսական եղաւ այդ օրերուն Հայ դատի քաղաքական թերեւս առաջին յաղթանակը արձանագրելու համար՝ ի դէմս Եւրոպական խորհրդարանի 1987-ի որոշումին: Միաժամանակ, ՀՅԴ Բիւրոն սկիզբ տուաւ Ընկերվար միջազգայնականի գիրկը վերադառնալու գործընթացին: Այդուհանդերձ, ինչ կը վերաբերի ընկերվարութեան ընկերային-տնտեսական ոլորտներու գործին, անիկա առկախուեցաւ ի բացակայութիւն այն գերիշխան իրաւադաշտին, ուր կարելի պիտի ըլլար իրականացնել ընկերվարական համակարգ մը:

ՀՅԴ Ծրագիրի տնտեսական պահանջներու բաժինը այս իմաստով մնաց շատ ամփոփ պարբերութիւն մը, որ յղում կը կատարէ «Ընդհանուր տեսութեան» դրոյթներուն՝ մանրամասնութիւններու բանաձեւումին գրառումը կապելով ապագայ ազատ ու անկախ Հայաստանի իւրայատուկ պայմաններուն:

ՀՅ Դաշնակցութեան վերադարձը Հայաստան արդէն ունի երեք տասնամեակներու պատմութիւն, ժամանակաշրջան մը, որ հաւասար է կուսակցութեան ազգային-ազատագրական պայքարի առաջին ժամանակահատուածին:

Այդուհանդերձ, քիչ են, եթէ երբեք առկայ այս երեք տասնամեակներու մասին վերլուծական գրառումները, թէկուզ եւ ժամանակագրութիւն մը գլխաւոր դէպքերու, որոնք յատկանշեցին կուսակցութեան գործընթացը կամ եղան անկիւնադարձային անոր քաղաքական դիրքորոշումներու ճշդումին համար: Ցստակ է սակայն, որ եթէ մէկ կողմէն, ինչպէս նշուեցաւ աւելի վերը, դժուար եղաւ հայրենի իրականութեան մէջ ընկերվարական պիտակով ներկայանալ, նոյնիսկ Դաշնակցութեան արդէն յարած հատուածին համար, միւս կողմէ, սակայն, Դաշնակցութեան համար յստակ էր, որ տնտեսական անցումը եւ տնտեսական համակարգի կառուցումը պիտի ըլլայ ո՛չ միայն հանգրուանային, այլեւ մանաւանդ պիտի ձգտի ընկերային պետութեան կառուցումին:

Դաշնակցութեան հայրենիք վերադարձի առաջին տասնամեակը Հայաստանի մէջ իր վերիվայրումներով առիթ չտուաւ ընկերվարական գործի, յստակ՝ ՀՅԴ Ծրագիրի «Տնտեսական պահանջներ»-ու բաժինի սկիզբ տալու: Մինչեւ 1994 պատերազմն էր անշուշտ ուշադրութեան կիզակէտը: Բայց նաեւ կար իշխող ուժի՝ Հայոց համազգային շարժումի եւ առաջին նախագահի բացարձակ որոշումը՝ անցումը կատարելու ամբողջ նախկին խորհրդային տարածքին տիրապետող «**շոքային**» բնորդի հետեւումով:

Այսինքն ազատականացման եւ սեփականաշնորհման ճամբով շատ արագ շուկայական տնտեսութեան անցում՝ կարելի եղածին չափ շուտ օգտուելու համար ֆինանսական հոսքերու խոստացած «բարիքներէն»: Այդ անցումի գործընթացին կշռոյթը արագացաւ հիմնականօրէն 1994-էն ետք, Հայաստանի մէջ օրին ամէնէն ազդեցիկ ընդդիմութեան՝ ՀՅ Դաշնակցութեան գործունէութեան արգիլումով: Յաջորդ չորս տարիներուն, երկրին մէջ տեղի ունեցաւ այն, ինչ որ մարքսեան տեսութեամբ կը կոչուի դրամագլուխի առաջին կուտակում իր ամէնէն նախնական ու վայրագ իմաստով: Ասոր իբրեւ հետեւանք՝ հիմը դրուեցաւ **օլիկարխային** համակարգին, որ 1998-էն ետք ամրագրուեցաւ եւ ի դէմս Հայաստանի Հանրապետական կուսակցութեան՝ յառաջացուց նաեւ քաղաքական այն ուժը, որ յանձնառու պիտի ըլլար համակարգի վերարտադրումին եւ յարատեւումին: Աւելորդ է ըսել, որ այդ համակարգը անխուսափելիօրէն յատկանշուեցաւ հարստութեան ահաւոր անհաւասար բաժանումի պատճառով ստեղծուած հասարակական բեւեռացումով:

Երբ 2002-ին ՀՅԴ օրուան Բիւրոն կազմակերպեց իր տեսակին մէջ առաջին՝ «ՀՅ Դաշնակցութեան ընկերվարական գործը Հայաստանի մէջ» սեմինարը, օլիկարխային համակարգը արդէն ամրագրուած էր: Միեւնոյն ժամանակ համաշխարհային տարողութեամբ ձախը կ'ապրէր խորհրդային պատմական փորձառութեան ձախողութեան խոր անդրադարձը, եւ աշխարհաքաղաքական երկու տարբեր տարածաշրջաններու մէջ՝ Եւրոպա եւ Լատինական Ամերիկա, ծայր առած էին երկու տարբեր, թէեւ ոչ անպայմանօրէն իրարու հակադիր գործընթացներ:

Եւրոպայի մէջ ընկերվար-ժողովրդավարութիւնը տնտեսական քաղաքականութեան ոլորտին մէջ կը զիջէր նոր-ազատականութեան յառաջընթացին եւ հետզհետէ կը հեռանար ընկերային պետութեան սկզբունքներէն, որոնց ստեղծումի ու ամրագրման դրօշակիրը եղած էր քսաներորդ դարու պատմութեան ընթացքին: Միեւնոյն ժամանակ, սակայն, ընկերվար-ժողովրդավարութիւնը իր օրակարգին վրայ կ'ամրապնդէր մարդկային ազատութեան ու հաւասարութեան նոր դաշտեր, որոնք արդէն սկսած էին կազմաւորուիլ 1970-ական թուականներուն, անոնց կարգին՝ փոքրամասնութիւններ, **կենտերական** հարցեր, բնապահպանում, կրօնական ազատութիւններու յարգանք, մարդկային իրաւանց ընդարձակում...

Լատինական Ամերիկայի պարագային, անցեալին գրեթէ բացառաբար ընկերային արդար կարգերու հաստատումը զինեալ պայքարի եւ յեղափոխութեան ընդմէջէն ընկալող ձախը 1980-ական թուականներէն սկսեալ յանձնառութիւն վերցուց ժողովրդավարութեան եւ ամբողջ երկու տասնամեակ քաղաքական դաշտին մէջ փորձառութիւն ձեռք բերելէ ետք, 21-րդ դարուն արդէն սկիզբ կու տար դէպի ձախ թեքումի գործընթացին:

Եւրոպական ընկերվարութեան բոլոր հասարակական խնդիրները ներառուած էին լատինամերիկեան ձախի օրակարգին մէջ, բայց տիրապետողը աղքատութեան յաղթահարումը եւ ամէնէն ընչազուրկ խաւերու հասարական տեղաշարժն էր դէպի աւելի բարեկեցիկ կենսամակարդակ: Լատինամերիկեան ձախի օրակարգին մէջ դրուեցան նաեւ համաշխարհային տարողութեամբ համակարգային բարեկարգումներ ֆինանսական հաստատութիւններու թէ ընդհանրապէս մարդկային իրաւանց ոլորտին մէջ ընկերային-տնտեսական իրաւունքներու ներգրաւման ոլորտներուն մէջ:

Ձախի վերաշխուժացման այս գործընթացները չհասան նախկին խորհրդային տարածաշրջան, ուր ձախը ընդհանրապէս բացակայ էր քաղաքական ոլորտներուն մէջ: Հայաստան այն բացառիկ երկիրներէն էր, թերեւս՝ միակը, ուր ի դէմս ՀՅ Դաշնակցութեան՝ իր գաղափարախօսութեամբ եւ ծրագրով ընկերվար-ժողովրդավար կուսակցութիւն մը աշխուժ էր քաղաքականութեան մէջ: Աւելի՛ն. 21-րդ դարու սկիզբին էր, որ կուսակցութիւնը տարիներու աշխատանքէ ետք վերադարձաւ Ընկերվար միջազգայնականի ոլորտ՝ իբրեւ լիիրաւ անդամ,եւ իր ներկայացուցիչները շուտով զբաղեցուցին պատասխանատու դիրքեր այդ կառոյցին մէջ: Առ այդ, Դաշնակցութեան համար ընկերվարական գործը իրապաշտօրէն պէտք է քննարկել 21-րդ դարու սկիզբէն եւ գիտակից ըլլալով ՀՅԴ 22-րդ Ընդհանուր ժողովին հաստատուած Ծրագիրի (1982) «Տնտեսական պահանջներ»-ու բաժինին, ուր այդ պահանջներուն բանաձեւումը վերջին անգամ ըլլալով կը շարադրուէր այդ ձեւով. «... տրուած ըլլալով, որ տնտեսական պահանջները մեծ մասամբ կապուած են ժամանակի շարք մը պայմաններուն, ինչպէս՝ աշխարհի քաղաքական-ընկերային-տնտեսական կացութիւնը, տուեալ երկրի իւրայատուկ վիճակը, գիտութեան եւ ճարտարարուեստի կատարած նուաճումները եւ այլն»:

Այսպէս, մէկ կողմէ անճիշդ եւ անարդար է անտեսել անցնող տարիներու Դաշնակցութեան ընկերվարական գործի արձանագրած յառաջընթացը յատկապէս միջազգային քաղաքական-յարաբերական ոլորտին մէջ, միւս կողմէ՝ նաեւ ճիշդ է, որ Դաշնակցութիւնը չյաջողեցաւ հայրենի իրականութեան մէջ ղեկավար դեր ստանձնել ձախի այլընտրանքային աշխատադաշտի մը յառաջացման մէջ: Այդ մէկը կարելի էր՝ միայն յաւելեալ ուշադրութիւն դարձնելով **օլիկարխային** համակարգի անխուսափելի ծնունդ ընկերային ցասումի կուտակումին եւ անոր քաղաքական ճիշդ ուղղորդումին դէպի համակարգային բարեկարգում: Բազմաթիւ են այս բացին պատճառները: Ոմանք իրական, ինչպէս՝արցախեան հիմնախնդիր եւ ազգային անվտանգութեան առաջնահերթային մտահոգութիւն: Ուրիշներ լիովին արդարացուած, ինչպէս՝ նախապատուութիւն համահայկական խնդիրներու, ի մասնաւորի՝ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով արդարահատոյցի շուրջ համախոհութեան ստեղծում: Բայց նաեւ՝ քաղաքական համաձայնութիւններու եւ իշխող կուսակցութեան հետ համագործակցութեան այլընտրանքը, որ առնուազն պայմանաւորեց ընկերային արդարութեան եւ տնտեսական բարեկարգումներու պահանջատիրութեան շատ աւելի գործօն ու համարձակ ներկայութիւն հայրենի իրականութեան մէջ:

Պէտք է ընդունիլ նաեւ, որ ընկերվարական պայքարի աւելի լայն, հասարակական հարցերու օրակարգը իր կարգին անհրաժեշտ ուշադրութեան չարժանացաւ՝ ի հետեւանք ազգային արժեհամակարգի աւելի պահպանողական, քան յառաջդիմական ընկալումի մը, որ տիրական էր հայրենի հասարակութեան լայն հատուածներու մէջ: Ճիշդ է, որ 2003-2008 տարիներու Հայաստանի տնտեսական աճի «պղպջակը» այն օրերուն կը դժուարացնէր ընկերային դժգոհութեան կուտակման ընկալումը, բայց այդ դժգոհութեան նախանշանները չէին պակսեր: Աւելի՛ն. ընկերային բողոքի արտայայտութիւնները բազմացան եւ նոյնիսկ արմատականացան 2008-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամէն ետք, երբ անոր անդրադարձները սկսան զգալի դառնալ Հայաստանի մէջ, եւ արտագաղթը աճեցաւ: Եւ հակառակ որ ՀՅ Դաշնակցութեան հայրենի ղեկավարութեան մօտ բիւրեղանալու սկսաւ «համակարգային արմատական բարեփոխումներ»-ու համոզումը, անոնց իրականացման ուղին դիտուեցաւ նախագահական վարչակարգէն խորհրդարանի անցնելու Դաշնակցութեան տակաւին 1991-ի առաջարկին ընդմէջէն:

Այսինքն՝ քաղաքական ուժերու միջեւհամաձայնութեամբ եւ ոչ թէ համաժողովրդային զօրաշարժի ընդմէջէն: Կարելի է հասկնալ ազգային անվտանգութեան մտահոգութեան մեկնակէտով ներազգային ամէն ցնցում բացառելու նախանձախնդրութիւնը, որ օրին ունէր կուսակցական ղեկավարութիւնը: Բայց նաեւ շուտով յստակ դարձաւ, որ իշխող քաղաքական ուժը սահմանադրութեան փոփոխութիւնը ընկալած էր իբրեւ իշխանութեան վրայ յարատեւելու միջոց՝ ի շարունակումն **օլիկարխային** համակարգի պահպանման, եւ ոչ թէ՝ փոփոխութեան, երաշխաւորի իր դերին: Ընդ որում՝ ընկերային արդարութիւնը, որ Դաշնակցութեան ընկերվարական գործին կէտնպատակն է, մնաց, լաւագոյն պարագային, բովանդազուրկ խոստում՝ աւելի խորացնելով հասարակութեան մէջ կուտակուած ցասումը: Այս պայմաններուն մէջ բեմի վրայ յայտնուեցաւ քաղաքական ուժ մը, որ կարողացաւ այդ հասարակական ցասումը վերածել ժողովրդային զանգուածային զօրաշարժի՝ թաւշեայ յեղափոխութեան, ինչպէս որակուեցաւ, եւ ո՛չ միայն իրականացնել իշխանափոխութիւն, այլեւ շուտափոյթ արտակարգ խորհրդարանական ընտրութիւններով սպասելիօրէն իր ձեռքերուն մէջ վերցնել ամբողջ իշխանութիւնը՝ Ազգային ժողովին մէջ ունենալով բացարձակ մեծամասնութիւն եւ աննշան ընդդիմութիւն մը, որ ոչ իսկ գաղափարական դիմագիծով տարբեր է իշխանութեան վրայ գտնուող ուժէն:

Թաւշեայ յեղափոխութիւնը արժանացաւ միջազգային ուշադրութեան: Խաղաղ իշխանափոխութիւնը եւ ժողովրդավարութեան վերարժեւորման խոստումը ողջունուեցան ժողովրդավարութեան, մարդկային իրաւանց եւ օրէնքի իշխանութեան յանձնառու բոլոր ուժերուն կողմէ, մանաւանդ որ անիկա կը պատահէր, երբ համաշխարհային տարողութեամբ յառաջընթաց կ'արձանագրեն ծայրայեղ աջ ուժերը: Բայց այդ մէկը պատճառ չէ, որ իշխանութեան բացարձակ կեդրոնացումը շատ շուտով փորձութեան չմատնէ նաեւ «սիրոյ ու համերաշխութեան» խոստումի դրօշակիրները: Մանաւանդ երբ միջազգային ողջունումը այս ժողովրդավար յեղափոխութեան չթարգմանուեցաւ այն առատաձեռնութեան, որ օրին ցուցաբերուեցաւ «գունաւոր» զոյգ յեղափոխութիւններուն՝ Վրաստանի եւ Ուքրանիոյ մէջ կատարուած:

Թէ իշխանափոխութենէն անդին, համակարգային փոփոխութիւններու թէ ժողովրդավարութեան վերարժեւորման իմաստով, նոր իշխանութիւնը ի՞նչ իրագործումներ պիտի ունենան, տակաւին յայտնի չէ, որքան ալ որ յեղափոխութեան ղեկավարին ժողովրդականութիւնը եւ ժողովուրդի կենսամակարդակի բարելաւման յոյսը տակաւին կը մնան բարձր: Ցստակ է սակայն, որ իշխանութիւնները ընկերայինեւ տնտեսական իմաստով նոյնքան, եթէ ոչ՝ աւելի գաղափարախօսականօրէն, յանձնառու են նոր-ազատականութեան: Կառավարութեան ծրագիրին մէջ թէ առնուած առաջին քայլերէն յստակ դարձած է, որ կը հաւատան պետութեան դերի կրճատումին, շուկայի յաւելեալ ազատականացման եւ աղքատութեան նուազեցումը զուտ տնտեսական աճով պայմանաւորելու տոկմաներուն:

Իշխանութեան բարձրագոյն մակարդակներու վրայ պաշտօն զբաղեցնողները կը հաւատան, որ փտածութեան դէմ պայքարը ինքնին ճամբայ կը հարթէ հարստութեան նուազ պոռնկագրական կուտակումին, եւ անհատ քաղաքացիներուն կոչ կ'ուղղեն՝ «հարստանալ եւ հարստացնել»: Բոլոր անոնք, որոնք քիչ թէ շատ ծանօթ են միջազգային տնտեսական քաղաքականութեան պատմական հոլովոյթին՝ 1980-ականներէն ի վեր, պիտի անդրադառնան, որ այս բոլորը Ռիկընի եւ Թաչըրի դասական՝ «պետութիւնը լուծում չէ, խնդիր է», «չկայ հասարակութիւն, կայ անհատ», «հարստանալը ամօթ չէ» եւ նմանատիպ լոզունգներու չնաշխարհիկ հայկականացումն է: Թէ՝ անոնց յոտնկայս ծափահարողներ պիտի ըլլան, ի մասնաւորի՝ «**օլիկարխ**»-է «ձեռնարկատէր»-ի անուանափոխուած հարստացածներն ու աւելի հարստանալ ուզողները, կասկածէ վեր է: Կը մնայ, որ իշխանութիւններու գաղափարախօսական ուղղուածութիւնը շատ յստակօրէն նոր-ազատական յանձնառութիւն մըն է, որուն կը հակադրուի ընկերային արդար համակարգի մը ընկերվարական տեսլականը:

Ահա թէ ինչո՛ւ թաւշեայ յեղափոխութիւնը դաշնակցական ընկերվարական գործի ծաւալման համար անկիւնադարձ մը, կամ աւելի ճիշդը՝ նոր սկիզբ մը կրնայ նշանակել: Եւ ոչ միայն Դաշնակցութեան ընկերվարական գործին, այլ՝ ընդհանրապէս ձախ այլ ընտրանքին համար. անկախութենէն ի վեր հայրենի իրականութեան մէջ երբեք ձախը այսքան քաշողականութիւն չէր ունեցած երիտասարդներուն համար, ոչ ալ եղած են բացայայտօրէն ձախակողմեան յանձնառութեամբ գործի ասպարէզ իջած քաղաքական ուժեր:

Այս չի նշանակեր, որ իշխանութիւններուն քաղաքականութիւնը անպայմանօրէն ձախողութեան դատապարտուած է: Ո՛չ ալ այս տողերը կը գրուին նման կամեցողութիւն արտայայտելու համար: Ի դէպ, եթէ թաւշեայ յեղափոխութիւնը հաւատարիմ մնար իր առաջին քաղաքական ուղղուածութեան եւ իշխանափոխութիւնը առիթ նկատէր ազգային հիմնահարցերու շուրջ քաղաքական ուժերու միջեւ ընդհանուր համախոհութեան հասնելու, կամ համաձայնութիւն յառաջանար համակարգային փոփոխութեան ընդհանուր ծրագիրի մը շուրջ, պատմութեան ընթացքը թերեւս տարբեր ըլլար, Դաշնակցութեան ընկերվարական գործին ուղին ալ՝ ուրիշ: Բայց յեղափոխութիւնը ուժային յարաբերութիւններու դասական տրամաբանութեան ոլորտին մէջ մնաց. իշխանափոխութենէն ետք՝ ամբողջական իշխանութիւն, ինչ որ եղաւ արտակարգ ընտրութիւններու ճամբով: Ազգային համախոհութեան փոխարէն՝ քաղաքացիական պայմանագիր, որ ամէն պայմանագիրի նման՝ ունի գաղափարախօսական ուղղուածութիւն եւ ծրագիր:

Երբ այնքան յստակ է իշխանութիւններու քաղաքականութեան գաղափարախօսական ուղղուածութիւնը՝ նոր-ազատականութիւն, ապա եւ անխուսափելի կը դառնայ նաեւ ձախակողմեան քաղաքականութեան եւ ընկերվարական գործի դաշտի կարողական ծննդոցը տեսնել:

Կարողական, որովհետեւ այդ դաշտը կը ստեղծուի միայն քաղաքական գործով, որ այս պարագային հարկ է մտածել եւ կազմակերպել քաղաքացիական հասարակութեան մէջ, աշխատանքի դաշտ մը, ուր Դաշնակցութիւնը յարաբերաբար նուազ ներկայ եղած էր անցնող քսանամեակին, երբ աւելի մօտ էր, կամ ուղղակի մասնակից՝ պետական քաղաքականութեան:

Դաշնակցութեան ընկերվարական գործին այս փուլին առաջին մարտահրաւէրը, հետեւաբար, քաղաքացիական հասարակութեան ոլորտին մէջ աշխատանքային դաշտի յառաջացումն է՝ միշտ ի մտի ունենալով անցնող քսան տարիներու ամէնէն կարեւոր դասը. քաղաքացիական հասարակութիւնը, ժողովուրդը այն ոլորտն է, ուր ընկերվարական կուսակցութիւն մը միշտ ներկայ պիտի ըլլայ, թէկուզեւ երբ իշխանութեան վրայ գտնուի:

Երկրորդ կարեւոր մարտահրաւէրը ձախ ուժերու համախմբումն է համաձայնուած օրակարգի մը շուրջ եւ, ինչո՞ւ չէ, ի մտի ունենալով խորհրդարանական յաջորդ ընտրութիւնները:

Բրիտանական Աշխատաւորական կուսակցութիւնը կրնայ մէկ օրինակ ըլլալ նման համախմբումի, բայց կան այլ բնորդներ ալ, ինչպէս՝ Ուրուկուէյի «Լայն Ճակատ»-ը:

Երրորդ մարտահրաւէրը օրակարգի վրայ հարցերու առաջնահերթութեան ճշդումն է: Ինչպէս ըսուեցաւ, ձախի օրակարգը՝ ի խնդիր ընկերային արդար կարգերու, շատ ընդարձակ է, ունի ե՛ւ տնտեսական, ե՛ւ ընկերային իրաւունքներու հարցեր, որոնց կարեւորութիւնը նոյն հարթակի վրայ չ'ընկալուիր ձախակողմեան բոլոր ուժերուն կողմէ: Եւ թէկուզ իբրեւ յառաջդիմական՝ այդ հարցերէն ոչ մէկը կարելի է անտեսել, մարտավարական նկատառումներով առաջնահերթութեան ճշդումը կենսական է: Այդ առաջնահերթութեան կանխանշանը նոյնինքն կառավարութիւնը տուաւ արդէն՝ հարկային համահարթեցումի իր ծրագիրով: Որեւէ ընկերվարական ուժի համար բանավէճի առարկայ չի կրնար ըլլալ յառաջատուական հարկային դրութիւնը, որ նախապայման է հարստութեան ե՛ւ աւելի արդար վերաբաշխումին, ե՛ւ ընկերային պետութեան կառուցման համար: Փաստօրէն Հայաստանի մէջ ձախակողմեան բոլոր ուժերը անոր դէմ պայքարի ելած են: Թերեւս լաւ կ'ըլլայ ուժերու համախմբումի առաջին քայլ մը տալ այդ պայքարի համակարգումի յստակ օրակարգին շուրջ:

Անկախ այս մարտահրաւէրներէն՝ յստակ է, որ իշխանութիւններու հարկային քաղաքականութեան դէմ հասարակական դիմադրութեան խարիսխ ստեղծելու հետամուտ զօրաշարժը ազդանշան է Դաշնակցութեան ընկերվարական գործի նոր սկիզբին: Սերմնացանի՛ն, որ, ինչպէս թերեւս օր մը կարելի ըլլայ երգել, տայ 21-րդ դարու ընկերվարութեան նոր բոյսեր...

Խ. ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՌՈՍՏՈՄ ԵՒ ԱՐԱՄ

Շարունակուած 3-րդ էջէն

Անխոցելի՝ բոլոր կռիւներուն եւ վտանգներուն մէջ, մեզմէ բաժնուեցան երկուքն ալ՝ ամէնէն անյուսալի պատահարներով, համաճարակ հիւանդութեամբ: Ու գացին այնպիսի ատեն մը, երբ այնքան կարօտ էինք երկուքին ալ, ինչպէս՝ նման տիպարներու: Մեր ճակատագրական դժբախտութիւններէն մէկն ալ՝ այս: Իրարու ետեւէ, խումբ-խումբ կամ հատ-հատ, հայաջինջ սարսափներու ընթացքին կամ տխմար դիպուածներու հետեւանքով կորսնցուցինք ամբողջ փաղանգ մը, որ չարաչար տքնեցաւ յաղթանակը փութացնելու համար, բայց չհասաւ յաղթանակի օրուան: Կամ տեսաւ զայն քաոսային վիճակի մէջ, տակաւին չձեւաւորուած: Ամբողջ սերունդ մը, որ կոչուած էր բախտորոշ դեր կատարելու: Մնացինք որբեւայրի ե՛ւ իբրեւ ժողովուրդ, ե՛ւ իբրեւ կուսակցութիւն:

Այդ կսկիծը շատ աւելի խոր է այսօր եւ աւելի ուժգնօրէն կը խոցոտէ մեր սիրտը օրուան այս ժամուն, երբ այնքան մռայլ է հորիզոնը, եւ այնքան միօրինակ՝ հայկական իրականութիւնը:

Բայց մենք մեծագոյն անարգանքը ըրած պիտի ըլլանք Ռոստոմներու եւ Արամներու յիշատակին, եթէ, նկուն եղերամայրերու պէս, տարուինք հառաչանքներով, «մեռանք-կորանք», փոխանակ տասն անգամ տասնով բազմապատկելու մեր կորովը:

Անփոխարինելի են Ռոստոմն ու Արամը, ինչպէս՝ այնքան ուրիշներ, որ անդարձ գացին. բայց ՀՅ Դաշնակցութիւնը միշտ ալ ընդունակ է Ռոստոմներ եւ Արամներ յարուցանելու, ո՛րեւ է ճակատագրական ժամու, կը բաւէ, որ անթարթ աչքերով եւ սրբազան հաւատքով նայի անոնց թողած յեղափոխական հանգանակին. տիրաբար, խորապէս ըմբռնէ անոնց կորովին իմաստը եւ անդաւաճան յարատեւութեամբ քալէ անոնց ճամբէն: Յեղափոխական միտքը չի հանդուրժեր քարացած կաղապարներ: Եւ Ռոստոմներն ու Արամները կը նսեմանան ա՛յն օրը, կամ ՀՅ Դաշնակցութեան դիմագիծը կ'աղճատուի ա՛յն ժամուն, երբ յաջորդ սերունդը մոռնայ ոգին՝ տառը միայն հոլովելով, կամ իրական ճիգը շփոթէ սնամէջ «**քլիշէ**»-ներու հետ:

Յունուար-փետրուար 1929
Թիւ 1-2 (284-285)

ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՌՈՍՏՈՄԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ձանալ փոխադարձ հասկացողութիւն եւ առնուազն քարոզչական գետնի վրայ իրերօգնութեան կապեր հաստատել այլ ազգային-ազատագրական եւ յեղափոխական շարժումներու հետ»:

(Հատուած՝ ՀՅԴ 22-րդ Ընդհանուր ժողովի որոշումներէն)

Ռոստոմը իր ուսանողական տարիքէն իսկ աշխուժ մասնակիցը եղած է ռուսական գիւղացիական-ընկերվարական նարոդնիկական շարժման: Ան ռուսական ցարական կայսրութեան մէջ ապրող հպատակ բոլոր ազգերու ներկայացուցիչներուն հետ, կողք-կողքի, բողոքի դրօշը պարզած էր ընդդէմ ցարական բռնատիրական, ամբողջատիրական, բացարձակ միապետական եւ աւատապետական համակարգին:

Իր ուսման տարիներէն իսկ Ռոստոմ քաջատեղեակ էր, որ ցարական իշխանութեանց հպատակութեան տակ ապրող ազգերը, Կովկասէն մինչեւ Սիպերիա, Ղազուինէն մինչեւ հիւսիսային բեւեռ, կ՚ապրէին միեւնոյն դժգոհութիւնները. անոնց առօրեայ կեանքը պսակուած էր՝ թշուառութեամբ, տանջանքով ու զրկանքով:

Ցարական բռնատիրական, ամբողջատիրական, բացարձակ միապետական եւ աւատապետական համակարգը չէր ճանչնար աշխարհագրական որեւէ սահման, անիկա իր դաժան, անքաղաքակիրթ ու յետամնաց քաղաքականութիւնները կը պարտադրէր հոն, ուր տարածուած էր իր իշխանութիւնը:

19-րդ դարու ժամանակաշրջանին Ռուսիան (ներառելով աշխարհագրական այն բոլոր տարածքները, որոնք կը գտնուէին ցարական աշխարհակալութեան լուծին տակ) տակաւինչէր դարձած զուտ ճարտարարուեստական պետութիւն:

19-րդ դարու ժամանակաշրջանին, իբրեւ գիւղացիական հասարակութիւն, ցարական Ռուսիոյ պետութիւնը, իր թագաւորական ընտանիքին գլխաւորութեամբ, կը կիրարկէր սակաւապետական քաղաքականութիւն: Գիւղացիները օրն ի բուն կը շահագործուէին հողատէրերուն կողմէ: Գիւղացիութիւնը զրկուած էր կեանքի բոլոր տարրական պայմաններէն, բարօր կեանք մը կ՚ապրէին միայն հողատէրերը՝ ի վնաս ճորտացուած ու շահագործուած գիւղացիութեան:

Գիւղացիութիւնը տիւ եւ գիշեր աշխատելով, արիւն-քրտինք թափելով՝ իր թափած քրտինքին դիմաց չէր ստանար նուազագոյն վարձատրութիւնն իսկ: Ան չունէր ձրի ուսման կամ բուժման կարելիութիւն: Ան չունէր քուէարկելու իրաւունք: Զուրկ էր մամուլին մէջ ազատօրէն արտայայտուելէ: Իսկ եթէ ընդդիմանար, յստակ էր, թէ ի՞նչ կը սպասէր իրեն.աքսոր, ցմահ բանտարկութիւն կամ գնդակահարութիւն:

Դիմադրելու համար սակաւապետութենէն ծնած ընկերային-տնտեսական անարդար կացութեան՝ Ռուսիոյ մէջ ծնունդ կ՚առնէ նարոդնիկական շարժումը: Շարժում մը, որ նպատակ ունէր փոքրամասնութեան կողմէ սեփականացուած հողերը վերածել հանրային սեփականութեան՝ յօգուտ ամբողջ գիւղացիութեան:

Տարբեր չէր կացութիւնը միւս բացարձակ միապետական վարչակարգերու տիրապետութեանց տակ գտնուող գիւղացիութեան մօտ ալ: Սակաւապետութիւնը համատարած էր միաժամանակ բոլոր բացարձակ միապետական կարգերուն մէջ: Ուր բռնակալութիւն կար, հոն կար սակաւապետութիւն: Օսմանեան կայսրութեան կամ պարսկական թագաւորութեան տիրապետութիւններուն տակ ապրող հայ գիւղացին կ՚ենթարկուէր նոյն տանջանքին ու զրկանքին, որոնց կ՚ենթարկուէր ցարական Ռուսիոյ հայ գիւղացին՝ սակաւապետութեան պատճառով:

19-րդ դարու վերջաւորութեան Ռուսիան կը սկսի կամաց-կամաց մուտք գործել ճարտարարուեստական աշխարհ: Ճարտարարուեստականութիւնը իր կարգին ուրիշ անարդարութիւն մը մէջտեղ բերաւ՝ դրամատիրութիւնը: Գիւղացիութեան հոծ բազմութիւնը գիւղերէն ուղղուեցաւ դէպի քաղաք՝ գործարաններուն մէջ բանուոր դառնալով:

Ինչպէս որ գիւղացիները հողատէրերուն կողմէ կ՚ենթարկուէին շահագործումի, բանուորներն ալ նոյն շահագործման սկսան ենթարկուիլ սեփականատէրերուն կողմէ:

Ռոստոմը, ապրելով սակաւապետութեան դաժան կեանքը, մաս կը կազմէ նարոդնիկական շարժման: Այսպիսով, ան կը զինուորագրուի եւ կը դառնայ գիւղացիութեան ու բանուորութեան քաղաքական, ընկերային եւ տնտեսական ազատագրութեան դատին զինուորը:

Դաւանելով ընկերվարութեան վեհ գաղափարախօսութիւնը՝ Ռոստոմը կը կազմէ իր գաղափարաբանական ուղեգիծը, որ կը դառնայ նաեւ Հայ յեղափոխական դաշնակցութեան քաղաքական-յեղափոխական միջազգային ուղղութիւնը՝ նպատակ ունենալով հայ ժողովուրդը դարձնել դաշնակից բոլոր իրաւազուրկ ժողովուրդներու ազատագրական պայքարներուն եւ՝ հակառակը:

Ռոստոմը մկրտուելով ընկերվարութեան մկրտարանին մէջ՝ քաջ գիտակից էր եւ կը հաւատար, որ բոլոր աշխարհակալ տիրապետութեանց տակ գտնուող ժողովուրդները կը բաժնեն նոյն մութ ճակատագիրը եւ պէտք է մղեն ազատագրական պայքար, ուր քաղաքական, ընկերային եւ տնտեսական մարզերը բոլորը մէկը միւսին լրացուցիչը կ՚ըլլան, ինչպէս նաեւ բոլոր իրաւազրկուած ժողովուրդները դաշնակից ըլլալով մէկը միւսին՝ կրնան իրենց ազատագրական պայքարները առջեւ տանիլ: Յիշեալ համոզումները Ռոստոմը տեսականէն վերածեց գործնականի՝ հետեւեալ օրինակներուն ընդմէջէն.

Ա.- **Մակեդոնական շարժում.** Ռոստոմն ու Քրիստափոր Միքայէլեանը եղան կազմակերպիչ դէմքերը, որոնք դաշինք կնքեցին Հայ յեղափոխական դաշնակցութեան եւ Ներքին մակեդոնական յեղափոխական կազմակերպութեան (Մակեդոնական ազգային-ազատագրական պայքարի գլխաւոր յեղափոխական կառոյցը) միջեւ:

Ներքին մակեդոնական յեղափոխական կազմակերպութիւնը հիմնուած էր 1893-ին, Սալոնիկի մէջ եւ կը հետապնդէր Մակեդոնիոյ ինքնավար կարգավիճակը՝ օսմանեան պետութեան մէջ: ՀՅԴ-ն եւ Ներքին մակեդոնական յեղափոխական կազմակերպութիւնը նոյն քաղաքական նպատակները հետապնդելով (վարչական ինքնավարութիւն)՝ նոյն համակարգին դէմ պայքարած են. Ռոստոմը իր Պուլկարիա գտնուելու ժամանակաշրջանի մեծ գործ կը տանի հայ-մակեդոնական համերաշխութեան ուղղութեամբ: Հայ-մակեդոնական յարաբերութիւնները սերտացան մանաւանդ 1898-էն ետք, Ֆիլիպէի մէջ, Պուլկարիա, ուր Ռոստոմ (իբրեւ տեղւոյն հայկական վարժարանի տնօրէն եւ ՀՅ Դաշնակցութեան Պալքանեան մարմիններու ընդհանուր պատասխանատու) յատուկ աշխատանք կը տանէր:

Վահան Մազմանեանի ըսածին պէս՝ **«Մակեդոնահայ եղբայրութիւնը արիւնով նուիրագործուած էր»**:

Հայ-մակեդոնական յարաբերութիւնը հիմնուած էր փոխադարձ շահերու վրայ: Մակեդոնացի յեղափոխական Պորիս Սարաֆովի աջակցութեամբ, Դաշնակցութիւնը կը յաջողէր զինուորական իր դպրոցը հիմնել թրքական սահմանին մօտ, այդ դպրոցը կ՚ունենայ միայն մէկ տարուան կեանք (1906-1907): Զինուորական դպրոցին շնորհիւ՝ Պետոյի (Պետրոս Սերեմճեան) եւ իր հայ ու մակեդոնացի յեղափոխականներու կազմակերպած միացեալ յարձակումը տեղի ունեցաւ Էտիրնէի (Ատրիանապոլիս) նահանգապետին վրայ՝ ազատել կարենալու համար Էտիրնէի բանտին մէջ գտնուող հայ եւ մակեդոնացի բանտարկեալ յեղափոխականները: Վահան Մազմանեան կը յիշէ, որ ՀՅԴ-ն միշտ վայելեց պուլկարական կառավարութեան ուղղակի կամ անուղղակի, իսկ պուլկարացի ժողովուրդի բացարձակ բարոյական օժանդակութիւնն ու համակրանքը:

Կը բաւէ յիշել, որ Ելտըզի մահափորձի փորձերը տեղի կ՚ունենային Պուլկարիոյ Վիտոշ լերան լանջին, իսկ ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովը գումարուեցաւ Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ:

«Մակեդոնիա իմ եղբայրս
Իմ խաչովս պսակուեց.
Եղբայրական սիրոյ զէնքով
Գազան սուլթան խորտակուեց»

(Բառեր՝ Պետրոս Սերեմճեանի յիշատակին նուիրուած երգէն: 1901 դեկտեմբերին Պետոն եւ մակեդոնացի յեղափոխական Մերճանոֆ մակեդոնական շարժման իրենց բերած մասնակցութեան պատճառով միասին կախաղան բարձրացան Էտիրնէի հրապարակը):

Բ.- **Պարսկական սահմանադրական շարժում.** Ինչպէս վերը նշած էինք, չկայ տարբերութիւն բացարձակ միապետական համակարգերու միջեւ, ուր որ ալ գտնուին այդ համակարգերը. անոնք կը խեղդեն ժողովուրդի խօսքի եւ հաւաքի ազատութիւնները, իսկ արդէն եթէ անոնք պսակուած են սակաւապետութեամբ, ապա ընկերային-տնտեսական կաշկանդումներ տեղի պիտի ունենան:

Պարսկաստանի մէջ բացարձակ միապետական եւ սակաւապետական համակարգը ինչպէս որ դժգոհութիւն պատճառած էր պարսիկ ժողովուրդին, նոյնպէս դժգոհութիւն պատճառած էր այդտեղ ապրող հայ բնակչութեան:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, Ռոստոմի գլխաւորութեամբ, իր ազդեցիկ մասնակցութիւնը կը բերէ պարսկական սահմանադրական շարժման եւ Պարսկաստան կ՚ուղարկէ իր յեղափոխական փայլուն դէմքերէն Քեռին, Նիկոլ Դումանը, Դաշնակցական Խեչոն եւ ուրիշներ՝ թիկունք կանգնելու Պարսկաստանի ազատութեան եւ ժողովրդավարութեան վեհ դատին:

Հայ յեղափոխական դաշնակցութեան եւ պարսիկ յեղափոխականներուն միջեւ կապը հաստատող պարագլուխը եղաւ Ռոստոմը. ան 1907-ի դեկտեմբերի վերջերուն արդէն մեկնած էր Պարսկաստան՝ կապ հաստատելու համար պարսիկ սահմանադրականներուն հետ: Հայ-պարսկական յարաբերութիւնը եւս հիմնուած էր փոխադարձ շահերու վրայ: Պարսիկ յեղափոխականները խոստացան ապահովել Պարսկաստանի մէջ ապրող հայութեան ազգային եւ մշակութային իրաւունքները, հիւրընկալել հայ փախստականները եւ անոնց մշակելու հող ապահովել ու դիւրացնել զէնքի փոխադրութիւնը արտասահմանէն Պարսկաստան, իսկ Դաշնակցութիւնը խոստացաւ պարսկական հարցը բարձրացնել միջազգային ատեաններու վրայ եւ փորձառու ֆետայիներ ուղարկել Պարսկաստան՝ օժանդակելու համար յեղափոխութեան մարտական գործունէութեան: Միքայէլ Վարանդեանի վկայութեամբ, ժողովներու ընթացքին երկուստեք կը գերիշխէր ջերմ, բարեկամական տրամադրութիւն:

Առաւել եւս, Ռոստոմը իր մեծագոյն դերակատարութիւնը ունեցած էր Թաւրիզի 1908-1909 յեղափոխական խմորումներուն մէջ: Յեղափոխութեան ամէնէն դաժան օրերուն էր, երբ հակայեղափոխական միապետականները պաշարած էին Թաւրիզ քաղաքը, եւ ժողովուրդին մէջ յուսահատութիւն կը տիրէր, սակայն Ռոստոմի կամքը յաջողեցաւ յաղթահարել յուսահատութիւնը եւ իր խոհեմ ղեկավարութեամբ առաջնորդեց շրջանի յեղափոխականները՝ վերացնելու հակայեղափոխական միապետականներու պաշարումը Թաւրիզէն:

«Դարձուց աչքերը՝ Արեւի երկիր,
Տեսաւ Պարսկաստանն անբախտ, վշտակիր,
Պարսիկ քաղաքներ մշուշով պատած,
Իրանի զաւակ թափէր արցունք, լաց»

(Պարսկական սահմանադրական շարժման գլխաւոր դէմքերէն Եփրեմ խանին նուիրուած երգի բառերէն. Եփրեմ խանը կը նահատակուի 20 մայիս 1912-ին՝ սահմանադրական յեղափոխականներու եւ միապետական հակայեղափոխականներու միջեւ կռիւի մը ընթացքին, արժանանալով սահմանադրական շարժման անվիճելի հրամանատարի եւ Իրանի ազգային հերոսի կոչումին):

Գ.- **Ռուսական աշխատաւորական շարժում.** Ինչպէս վերը տեսանք, Ռոստոմ իր երիտասարդական-ուսանողական տարիներուն աշխուժ մասնակիցը եղած էր նարոդնիկական շարժման եւ նոյն գիւղացիական-ընկերվարական նարոդնիկական գաղափարները խառնելով մարքսականութեան հետ՝ հիմը դրաւ ՀՅ Դաշնակցութեան ընկերվարութեան:

Մինչ այդ, ռուսական աշխատաւորական եւ ընկերվարական շարժման վերելքի ժամանակաշրջանին Ռոստոմը գործի վրայ էր Մակեդոնիոյ ազգային-ազատագրական շարժման եւ Պարսկաստանի սահմանադրական յեղափոխութեան մէջ, բայց անոր տեսական-գաղափարաբանական գրութիւնները մեծ դեր ունեցան ՀՅ Դաշնակցութիւնը մղելու աշխատաւոր դասակարգի կազմակերպման եւ անոր առաջնորդութեան ուղղութեամբ:

Ռոստոմի կենդանի դերակատարութիւնը ռուսական աշխատաւորական շարժման մէջ ի յայտ կու գայ 1917-ի Փետրուարեան յեղափոխութեան, երբ ան կը նետուի դարձեալ յեղափոխութեան հրապարակ՝ կազմակերպելու աշխատաւոր դասակարգը՝ Սեւծովեան ափերէն անցնելով Կովկաս, մինչեւ Ղազուինի մէջ գտնուող հայահոծ շրջանները:

Յեղափոխութիւնը նաեւ առիթ կը դառնայ ամրապնդելու կապերը ՀՅԴ-ի եւ ռուսական քաղաքական կեանքին մէջ գործող ընկերվարական կուսակցութիւններու միջեւ: Այս աշխատանքին մէջ նոյնպէս Ռոստոմը մեծ դերակատարութիւն կ՚ունենայ:

1917-ի ռուսական Սահմանադիր ժողովի ընտրութիւններուն ընթացքին Ռոստոմը նաեւ գրաւեց ՀՅԴ-ի ցուցակին առաջին թիւը:

1917-ի հոկտեմբերին դարձեալ նոր յեղափոխութիւն մը կը պայթի Ռուսիոյ մէջ, եւ Ռոստոմը դարձեալ նոր գործ մը կ՚ունենայ, յեղափոխական պայքարի նոր հրապարակ մը կը նետուի:

1917-ի յեղափոխութեան տաք օրերուն Ռոստոմը կը գտնուէր ճարտարարուեստական եւ քարիւղով հարուստ Պաքու քաղաքը, որ դարձած էր աշխատաւոր դասակարգի յեղափոխական կեդրոն: 13 ապրիլ 1918-ին Պաքուի մէջ գործող բոլոր ընկերվարական կուսակցութիւնները (ներառեալ՝ ՀՅԴ-ն) հիմը կը դնեն Պաքուի կոմունային: Այդտեղ ան կ՚ըլլայ կազմակերպիչ, դասախօս կամ աւելի ճիշդ՝ Դաշնակցութեան կենդանի գործը, որ կը միտէր յաջողցնել յեղափոխութեան ընկերային եւ տնտեսական ազատագրութեան նպատակները,հակառակ անոր որ Պաքու պաշարման մէջ էր ազգայնական Մուսաւաթ կուսակցութեան եւ օսմանական բանակին կողմէ: Երբ պոլշեւիկները, որոնք կոմունայի գլխաւոր կերտիչներն էին, ի զօրու չեն ըլլար պաշպանել զայն եւ կը սկսին իրենց ձախողութիւններուն պատճառները վերագրել ընկերվարական միւս կուսակցութիւններուն, ՀՅԴ-ն 26 յուլիս 1918-ին, համագործակցելով ընկերվար-յեղափոխականներու եւ մենշեւիկներու հետ, կը տապալէ կոմունան եւ կը հիմնէ «Կենտրոնական կասպիական դիկտատուրա»-ն, որ կը ստանձնէ Պաքուի կառավարման դերը՝ մինչեւ Պաքուի գրաւումը ազրպէյճանական բանակին կողմէ:

Որովհետեւ ՀՅ Դաշնակցութեան ընկերվարական գաղափարախօսութիւնը հիմնուած էր թէ՛ մարքսականութեան վերատեսութեան եւ թէ՛ նարոդնիկականութեան վրայ ու ան իր միջազգայնական ուղեգիծով կը հետեւէր Բ. Միջազգայնականին (ընկերվար-ժողովրդավարական կուսակցութիւններու միջազգային կազմակերպութիւն, որ Հոկտեմբերեան յեղափոխութենէն ետք դարձաւ վերատեսականները համախմբող կառոյց: Վերջիններս մերժեցին յեղափոխութեան միջոցով ընկերվարութեան կիրարկումը եւ նախընտրեցին խորհրդարանական ժողովրդավարական միջոցով իրականացնել ընկերային բարեկարգումներ՝ հասնելու համար ընկերվարութեան), ռուսական յեղափոխական դաշտին մէջ կ՚ըլլայ դաշնակիցը ընկերվար-յեղափոխականներուն եւ մենշեւիկներուն: Ուղղութիւն մը, որուն դրսեւորման մէջ մեծ դերակատարութիւն ունի Ռոստոմը:

«Ձեռք տանք միւս յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւններուն եւ առաջ գնանք: Եւ յոտնկայս յարգենք յիշատակը այն մարտիկներուն, որոնք ընկան Ռուսաստանի ընդհանուր ազատութեան համար»

(Հատուած՝ ապրիլ 1917-ին ՀՅԴ Ռայոնական ժողովին Ռոստոմի ճառէն)

ՆԱԹԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Շար.ը՝ էջ 16

ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԻ (ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ) (1884-1920)

Գաղափարաբանական հարցերու վերաբերող «Ազդակ յաւելուած»-ի առաջին թիւը նուիրուած էր Երուանդ Ֆրանգեանին, որուն մասին անդրադարձ մը կատարելով՝ կը յայտնէի հոն, որ անոր պատմափիլիսոփայական տեսութիւնները քննադատաբար կը հակադրուէին Մարքսի նիւթապաշտութեան եւ կը յանգէին համադրական **մոնիզմի՝** հիմնաւորելով այն թեզը, որ պատմութեան անիւը յառաջ կը մղուի առարկայական (տնտեսական) պայմաններու եւ ենթակայական (մարդ-գաղափար) գործօններու համարժէք փոխներգործութեամբ, եւ կ՚աւելցնէի, որ այդ թեզը կազմած է հիմքը ՀՅԴ-ի ընկերվարական ըմբռնումին:

Ի լրացում շօշափուած այդ նիւթին, մտածեցի այս երկրորդ յաւելուածին մէջ հպանցիկ անդրադառնալ Երուանդ Ֆրանգեանի ժամանակակից ու դաշնակցական եռանդուն գործիչ Վահան Խորէնիի տեսութեան, որ բուռն քննադատութեան ենթակայ դարձած է իր ատենին համայնավարական դիրքերէ՝ Ստ. Շահումեանի, տխրահռչակ Սարգիս Կասեանի, նաեւ աւելի վերջ՝ ուրիշներու կողմէ:

Կրկնելու գնով անմիջապէս յայտնեմ, որ՝

1) Նախորդ դարուն կը պատկանին գաղափարաբանական այս օրինակ վէճերը , որոնց ի պաշտպանութիւն՝ ահագին մելան, իսկ համայնավարական գաղափարաբանութիւնը տարածելու-գործնականացնելու համար գետի նման արիւն հոսած է զանազան երկիրներու, որոնց շարքին նաեւ Հայաստանի մէջ՝ պատճառ դառնալով մեր նորակերտ ազգային պետականութեան ու անկախութեան կորուստին: Մարքսի վարդապետութեան, այսինքն անդասակարգ հասարակութիւն մը յառաջացնելու նպատակին համար ամբողջ 70 տարի այդ երկիրներուն պարտադրուեցաւ մարքսեան միատեսակ դաստիարակութիւն,յաջորդական սերունդներ վախով ու սարսափով ապրեցան, ահաւոր հալածանքներու, բռնութիւններու, խոշտանգումներու ենթարկուեցան, տարիներով Սիպերիոյ ու այլ աքսորավայրերու մէջ տառապեցան եւ այլն, բայց՝ ի զո՛ւր: Առաջին տարիներուն իր գաղափարաբանութեամբ զանգուածներ հրապուրելէ եւ անոնց միջոցով իշխանութիւն դառնալէ ետք համայնավարութիւնը վերածուեցաւ ամբողջատիրական բռնակալութեան, ապա ամեհի հսկայի մը նման ինքնիր վրայ փլաւ ու չքացաւ: Հիմա, ինչպէս Չինաստանն է, երկուերեք երկիրներ մնացած են միայն, որոնք անուանապէս՝ իբր թէ «համայնավար», բայց շատ հեռու են մարքսականութենէ: Անոնցը անազատ-ամբողջատիրական վարչակարգեր են, բայց տնտեսութիւնը ազատական է, դրամագլուխի վրայ հիմնուած... Չտարածուիմ ու վերադառնամ նիւթիս...

2) Գրասեղանիս վրայ չունիմ Վահան Խորէնիի տեսութիւններուն վերաբերող որեւէ գիրք, յօդուած կամ այլ գրութիւններ: Այս ուղղութեամբ համացանցի վրայ որոնումներս ալ ապարդիւն մնացին: Հոն միայն կենսագրական շատ ժլատ տեղեկութիւններ գտայ Խորէնիի մասին: Որով այս անդրադարձիս հիմքը կը կազմեն յիշողութիւնս եւ շուրջ քառասուն տարի առաջ ընթերցումներէս հապճեպ քաղուած խառնիխուռն, գրեթէ անընթեռնելի դարձած նոթերս:

Խորէնին ծնած է Սիսեանի գիւղերէն մէկուն մէջ: Էջմիածնի Գէորգեան ճեմարանը աւարտելէ, գերմանական համալսարաններու մէջ ուսումը կատարելագործելէ եւ պատմափիլիսոփայութեան գիտական տոքթորայի տիտղոսին արժանանալէ ետք ընդգրկուած է ուսուցչական ասպարէզ՝ ի Թիֆլիս, միաժամանակ հոն խմբագրելով «Աշխատաւոր» թերթը: 1919-ին Երեւան է, ուր կը խմբագրէ «Հայաստանի Աշխատաւոր»-ը: Անկախ Հայաստանի խորհրդարանական երկրորդ գումարման կ՚ընտրուի պատգամաւոր (երեսփոխան) եւ կը գլխաւորէ խորհրդարանի դաշնակցական պատգամաւորներու խմբակցութիւնը՝ յաճախ վիճարկելով Խատիսեանի կառավարութեան գործունէութիւնը: Համայնավար հայերու հակապետական խլրտումներու օրերուն՝ 1920 օգոստոսին կը ղրկուի իր ծննդավայրը՝ Զանգեզուր, քաղաքացիական-եղբայրասպան հաւանական կռիւները կանխելու առաքելութեամբ, բայց հոն դաւադրաբար կը ձերբակալուի համայնավարներու կողմէ եւ Գորիսի բանտին մէջ դաժանօրէն կը սպաննուի 13 դաշնակցականներու հետ, 1920-ին, 36 տարեկան հասակին:

Քաղաքական ու գաղափարաբանական խնդիրներու նուիրեալ Վահան Խորէնի գործիչը, պայքարի յառաջապահ դիրքերէ, իր պատմափիլիսոփայական տեսութեամբ շատ բուռն հակադրուած է Մարքսի նիւթապաշտ վարդապետութեան եւ անիկա որակած՝ «առարկայականութեան եւ ցնդաբանութեան զուգադրութիւն»: Ըստ Խորենիի, «ցնդաբանութիւնը» կը կայանայ **«տիալեկտիք»** աշխատակարգի (մեթոտի) վրայ Մարքսի ձեւաւորած մտածելակերպին մէջ, որ սխալ ելակէտէ մը սկսելով՝ կը յանգի անիրականանալի, ցնորային եզրակացութեան մը: Մարքս կը հաւատայ, թէ հի՛ն, նախապատմական շա՛տ հին դարերուն մարդկութիւնը եղած է անդասակարգ հասարակութիւն մը, ուր սեփականութիւն չկար:

Սա Մարքսի **տիալեկտիքայի** մէջ «դրութիւն»-ն է, որուն դիմաց ստեղծուած է սեփականատէր դասակարգ՝«հակադրութիւն»-ը, եւ այս երկուքին

բախումը յառաջ բերած է տնտեսական նոր կացութիւն մը՝ «համադրութիւն»-ը, որ ժամանակի թաւալումին հետ կը դառնայ «դրութիւն», ինչ որ կ՚ունենայ իր հակադրութիւնը՝ վերածուելու համար համադրութեան: Եւ այսպէս, իրարու հակադրուող դասակարգային պայքարներով ու «համադրութիւն»-ներով յառաջ կ՚ընթանայ պատմութիւնը, մինչեւ որ յանգի սկզբնակէտին՝ անդասակարգ հասարակութեան, ուր չկան ամէն չարիքի արմատ սեփականատիրութիւն, դրամագլուխ եւ այլն: Քննադատելով **տիալեկտիքը՝** Խորէնին կ՚ըսէ, որ այդ մեթոտը ի վիճակի չէ նոյնիսկ յստակացնելո՝ւ պահը (ե՞րբ) եւ ձեւը (ինչպէ՞ս) տեղի պիտի ունենայ դասակարգային պայքարի կամ յեղափոխութեան վերջնագոյն փուլը, որ պիտի յանգի (եղեր) ցնորային անդասակարգ հասարակութեան...

Խորէնին հիմնականօրէն կը մերժէ դասակարգային պայքարի տեսութիւնը: Ըստ իրեն, մարդկային կեանքին մէջ անդասակարգ հասարակութիւն ո՛չ եղած է անցեալին, ո՛չ ալ կրնայ ըլլալ ապագային: Ան կ՚ըսէ, որ մարդ էակի ձեւաւորման առաջին օրերէն հասարակական կեանքի բոլոր ձեւերուն ու արտայայտութեանց մէջ, մարդկային բնութիւնը օժտուած եղած է երկու տեսակ յատկանիշերով՝ ազատութեան ձգտումով եւ իշխանատենչութեամբ: Իշխուողներու եւ իշխողներու, այսինքն շահագործուողներու եւ շահագործողներու պայքարներով է, որ պատմութիւնը կը թաւալի: Այս կը նշանակէ, որ Խորէնին պատմութիւնը շարժող ուժերը կը դնէ հոգեբանական հարթութեան վրայ եւ ոչ թէ՝ նիւթին կամ տնտեսութեան: Կը հաստատէ, որ ընկերվարութիւնը ծնունդ առած է դրամագլուխէն, առանց որուն՝ հնարաւոր չէ որեւէ բարգաւաճում, յառաջընթաց, զարգացում: Դրամագլուխը ոչնչացնելով, այսինքն՝ ոչինչէն, ինչպէ՞ս կարելի է ընկերվարութիւն կառուցել: «Նոր»-ը յառաջ կու գայ ոչ թէ «հին»-ին ոչնչացումով, այլ անոր ուսերուն բարձրանալով՝ զայն կը կերպարափոխէ: Կ՚ըսէ, որ չարիքին էութիւնը դրամագլուխը չէ, այլ անոր գործածութեան եղանակն է: Ընկերվարութեան յաղթանակը դրամագլուխի անեացման մէջ չէ, ինչ որ, ըստ իրեն,անհնար է արդէն: Ընկերվարութեան յաղթանակը կը կայանայ այն պարագային, երբ մարդկութեան մշակութային ու քաղաքակրթական վերելքը նուաճէ այնպիսի աստիճան, երբ դրամագլուխի բարիքները արդարօրէն պիտի բաշխուին՝ ի սպաս մարդու եւ ընկերութեան կեանքի բարելաւումին եւ այլն: Խորէնին ընկերվարական յեղափոխութիւնը կը պատկերացնէ «բովանդակութեամբ՝ հասարակական դրամատիրութիւն, ձեւով ու կազմակերպութեամբ՝ ընկերվարական»:

Խորէնիի այս մօտեցումը կը նշանակէ, որ անդուլ դաստիարակութեամբ մէկ կողմէ շահագործուողներու ազատութեան ձգտումը, անոնց արդարութեան ու իրաւունքի գիտակցութիւնը եւ պայքարելու ոգին պէտք է զօրացնել, իսկ միւս կողմէ՝ հասարակական ազնուութեան, մարդկայնութեան զգայնութիւնը պէտք է մշակել ու զարգացնել՝ միաժամանակ դրամագլուխին վրայ ի գործ դնելով օրէնսդրական սահմանափակումներ, ճնշումներ, սեղմումներ...

Ահաւասիկ դաշնակցական մտքի ու գրչի երկու մեծեր՝ Ե. Ֆրանգեան եւ Վահան Խորէնի, որոնք քննադատաբար կը հակադրուէին Մարքսի նիւթապաշտութեան եւ իրենց տեսութեամբ ընկերվարութեան յաղթանակին համար հիմնական կը սեպէին գաղափարի ուժը եւ ազգային շրջագիծը՝ նոյնիսկ այն օրերուն, երբ մտքերու վրայ կը վեհապետէր միջազգային ընկերվարութեան Մարքսի տեսլականը:

Իրենցմէ առաջ, ՀՅԴ-ի հիմնադիրներէն՝համոզումով ամէնէն Մարքսականը նկատուած Ռոստոմ առիթով մը մօտաւորապէս յայտարարած էր արդէն, որ՝ «...մենք ընկերվարական չենք եղած այս ու այն տեսութեան կամ վարդապետութեան ծառայելու համար: Մենք ընկերվարական եղած ենք՝ հաւատալով, որ անիկա լաւագոյն միջավայրը կը ստեղծէ հայութեան զարգացման, մեզի կը ներշնչէ պայքարի կամք՝ ազգի ազատագրումին եւ ազգային մեր ձգտումներուն հասնելու համար...»:

ՄԻՀՐԱՆ ՔԻՒՐՏՕՂԼԵԱՆ

Աթէնք, 16 մայիս 2019

ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆ, ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ, ՅԵՂԱՇՐՋՈՒՄ. ԻՆՉ ԸՍԱԾ Է ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՉ Կ՚ԸՍԷ ՆԵՐԿԱՆ

Բոլոր ժամանակներու մէջ քաղաքականութիւնը եղած է անհեթեթութեան գիտութիւնը:
Սթեֆըն Զվէյկ

Հայաստանի մէջ տեղի ունեցած թաւշեայ-յեղափոխութիւն-իշխանափոխութիւնը պէտք է դիտել պատմութեան ընդհանուր ընթացքին մէջ. հոլովոյթ, փորձեր, փորձառութիւն, յաջողութիւն, ձախողութիւն, բազմաթիւ եւ դարերու վրայ տարածուող յեղափոխութիւններու մութեն-լոյսեն անջատուող եւ ժամանակները դրոշմող արտակարգ մեծ մարդեր:

Միշտ պէտք է մտածել, որ պատմութիւնը մեզմով չի սկսիր եւ մեզմով պիտի չաւարտի, եւ գերեզմանատուները լիքն են անփոխարինելիներով:

Առօրեայ քաղաքականութիւնը, ան ըլլայ մեր ապրած աշխարհատարածքին մէջ թէ մոլորակի այլ անկիւնները, տեղեկութիւններու արագ շրջանառութիւնը եւ առատութիւնը արգելք կը հանդիսանան պատմութենէն թելադրուած իմաստութեամբ դիմագրաւելու մեծ կամ պզտիկ իրադարձութիւնները, մեծ եւ պզտիկ երկիրներու մէջ: Լրատուութեան մէջ արդի արհեստագիտութեան միջամտութիւնը մտածելու եւ յետադարձ հայեացք ունենալու ժամանակ չի ձգեր եւ զանգուածները կը բանտարկէ բազմապատկուող անմիջական նորի մէջ:

Պատմութիւնը ընդարձակ դաշտն է՝ ըմբոստութիւններու, յեղափոխութիւններու, հակայեղափոխութիւններու, որոնք շարունակութիւն են՝ յեղաշրջումներու, անոնց ներշնչած յոյսերուն, հակասութիւններուն, դիմաշրջումներուն, ձախողութիւններուն եւ... զոհերուն: Եթէ նոյնիսկ մակերեսային տեղեկութիւններով փորձէինք լսել եւ դիտել ժողովուրդներու եւ երկիրներու պատմութիւնը, պիտի տեսնէինք, թէ ինչպիսի՛ ողբերգութիւններ տեղի ունեցած են, եւ որո՞նց ծառայած են յեղափոխութիւնները, ըմբոստութիւնները կամ յեղաշրջումները, աւելի իմաստուն կ՚ըլլայինք, երբ մեր թղթիկը քուէատուփ կը նետենք կամ զէնք կը վերցնենք:

Յեղափոխութեան միտումը, ըստ ամենայնի, դատապարտելի չէ: Մարդկութեան յառաջընթացը երբեք հեզասահ չէ եղած, ցնցումներով եւ խզումներով ծնունդ առած է ցանկացուած նորը, որուն այլասերման պատճառով կրկին եղած են խզումներ եւ ցնցումներ: Յեղափոխութեան իրաւ յաջողութեան համար անհրաժեշտ են պատմական հայեացք եւ մարդկայնական իմաստութիւն, թերեւս այդ ձեւով խուսափելու համար աղէտէ եւ հակառակին ծնունդ տալու պատճառով՝ այլասերումէ եւ նոր աղէտներէ:

Յեղափոխութիւնը մեր օրերուն յատուկ երեւոյթ չէ, ան չէ սպասած մեր գաղափարաբանական ճառերը, վերլուծումները, իզմ-երը եւ իստ-երը: Այսօր վէպի կամ peplum ժապաւէններու նիւթ են մեծ յեղափոխութիւնները՝ փարաւոններու Եգիպտոսէն մինչեւ Չինաստան, յիշենք դէմքեր Հռոմէն՝ Սպարտակիւսը, Ֆրանսացի Ռոպեսփիերը, Լենինը, Մաոն, Զափաթան, Քասթրոն: Սրբապղծութիւն պէտք չէ նկատուի հարց տալ, թէ այդ բոլոր յեղափոխութիւնները, նոյնիսկ երբ յաջողած են, կրցա՞ծ են հաւատարիմ մնալ իրենց ծննդոցի ազնիւ գաղափարներուն: Եթէ այլասերած են, ի՞նչ է պատճառը այդ այլասերման եւ ձախողութեան:

Յեղափոխութիւնը լաւին ձգտումն է, բայց ան, հարկադրաբար, յաջողութեան պարագային ստիպուած է մտնել քաղաքական խաղին մէջ, ուր կը գործեն՝ եսեր, շահեր, փառասիրութիւններ: Իսկ քաղաքական խաղը ունի իր ուրոյն տրամաբանութիւնը, որուն մասին անցեալ դարու գրող Սթեֆըն Զվէյկ դիպուկ բնորոշում մը կու տայ, երբ կ՚ըսէ, թէ՝ «Բոլոր ժամանակներուն մէջ քաղաքականութիւնը եղած է անհեթեթութեան գիտութիւնը»: Իսկ յեղափոխութեան ալիքին վրայ կայսր դարձած Նափոլէոնն ալ, իր կարգին, անվարան ըսած էր. «Քաղաքականութեան մէջ անհեթութիւնը արգելք չէ»: Կը բաւէ դիտել ընկերային կեանքի բոլոր փուլերը, թաղամասային, քաղաքային, երկիրներու եւ կայսրութիւններու մէջ տեղի ունեցող շահակցութիւններու խաղը, մեքենայութիւնները, «**քոմպինացիա**»-ները՝ ըմբռնելու համար անհեթութիւնները, բայց կարծէք՝ դատապարտուած ենք զանոնք կրկնելու:

Եւ այսպէս, պատմութիւնը ցոյց կու տայ, թէ ինչպէ՛ս արդարութեան եւ հաւասարութեան ցանկութիւններու երազով սկսած յեղափոխութիւնները յանգած են բռնապետութիւններու, տեղ մը նափոլէոնական, այլ տեղ՝ ստալինական, զինուորական կամ գաղափարաբանական:

Ժամանակակից ընկերութիւններու մէջ շատ կը խօսուի «ընտրանի»-ներու մասին (elites): Անցեալին ան «ծնունդի իրաւունք»-ով էր, ինչ որ չէ անհետացած նաեւ մեր օրերուն, որուն կը տրուի nepotisme սահմանումը, այսինքն իշխանութիւն՝ այս կամ այն բնոյթի ծնունդի ընձեռած պարտադրող իրաւունքով. ազնուականութիւն, (իշխաններ եւ իշխանիկներ), որ կը սեփականացնէր իշխանութիւնը: Ապա հերթը հասաւ դրամատիրական ընտրանիին, քաղքենիութեան, որ ժողովրդավարութիւն հաստատելու կարգախօսով պայքարեցաւ եւ յաջողեցաւ, բայց կրկին իշխանութիւնը մնաց սակաւապետական-oligarchique փակ շրջանակի մէջ, ժողովրդավարութիւնը իշխանութիւն-ղեկավարութիւնը չվերադարձուց ժողովուրդին: Այսօր ալ դրութիւնը նոյն ձեւով կը շարունակուի:

Պատմութեան ընթացքին եւ մինչեւ այսօր տեղի ունեցած են եւ տեղի կ՚ունենան ըմբոստութիւններ եւ յեղափոխութիւններ, անոնք ունեցած են եւ ունին մնայուն բնոյթ՝ իրենց կրկնութիւններով: Մեզի մօտ ժամանակին մէջ ալ յաճախադէպ եղան, եւ են, ըմբոստութիւնները եւ յեղափոխութիւնները, զանգուածները ուզեցին եւ կ՚ուզեն իշխանութեան եւ ղեկավարութեան մասնակցելու իրաւունք ձեռք բերել, ազնուականութենէն եւ քաղքենիութենէն ետք, բայց այս անգամ ալ «նոր ընտրանի» մը իւրացուց եւ կը շարունակէ իւրացնել իշխանութիւն-ղեկավարութիւնը: Այս ընտրանին կը բաղկանայ՝ ուսումնականներէ, մասնագէտներէ, իրաւագէտներէ, տնտեսագէտներէ, փաստաբաններէ, լրագրողներէ:

Միամիտ պէտք չէ ըլլալ: Այս նոր ընտրանին կը հայթայթէ նախկին ընտրանին, որուն զաւակները ուսանելու եւ մասնագիտանալու պատեհութիւն ունեցած են եւ ունին, ինչ որ չեն ունեցած եւ չունին դաշտի աշխատաւորին եւ հանքագործին զաւակները՝ ընդհանրապէս: Բայց կը պահուին ժողովրդավարութեան ճառը եւ մշուշը՝ քուէատուփին մէջ սահեցուած թղթիկի առթած խաբկանքով: Քիչ մը իրատեսութեամբ, ոչ անպայման՝ յոռետեսութեամբ, կը հաստատենք, որ իշխանութիւններու օղակները կը դառնան ինքնուրոյն եւ փակ դասակարգ, որ ինքզինք կը նորոգէ իր շրջանակին մէջ՝ խզուելով ժողովուրդէն, ինչ որ ժողովրդավարութիւնը կը դատարկէ իր էութենէն:

Առարկայական հայեացք մը, նոյնիսկ՝ առանց խորացումի, ցոյց պիտի տայ, որ յառաջադէմ նկատուած արեւմտեան ժողովրդավարութիւնները այդպէս են: Հետեւանքը ժամանակ առ ժամանակ կրկնուող ըմբոստութիւնները եւ յեղափոխութիւններն են, որոնք կը շահագործուին նոր ընտրանիի մը ծնունդ տալու համար, որ կը յանգի պարզ իշխանափոխութեան՝ սպասելով յաջորդը: Արդարեւ, համալսարանական եւ մասնագէտներու նոր ընտրանին, հարցերուն մօտենալով տեսութիւններով, թիւերով, յառաջդիմութեան եւ յաջողութեան կարգախօսներով, կը դառնայ դաշնակիցը կամ գործիքը՝ տնտեսական ազատականութեան: Այդպէս են երէկ «ընկերվարական» կամ «բարենորոգչական» կարգախօսներով հրապարակ եկող մտաւորականները, անոնք ըլլան նախարար թէ նախագահ: Այսինքն, յայտնուելով հանդերձ ժողովրդավարութիւն հաստատելու կարգախօսով, ընտրանին կը դաւաճանէ նոյնինքն ժողովրդավարութեան՝ շահախնդրութեամբ, դիրքապաշտութեամբ կամ անփոխարինելիութեան առասպելին տուրք տալով:

Չիյնալու համար այս սադայէլի շրջանակին մէջ, ընտրանիի մը աւագ առաքինութիւնը պէտք է ըլլայ ինքն իր վրայ գործադրելու քննադատութեան զէնքը, այնպէս՝ ինչպէս ան կ՚ընէր զինք նախորդողներուն հանդէպ՝ առանց ինքնարդարացում եւ ինքնահաստատում փնտռելու գաղափարաբանական ճառին մէջ, լուսարձակի տակ առնելով իր ձախողութիւնները: Ինչո՞ւ չենք տեսներ, որ գաղափարաբանական ճառերը կը բթացնեն դատողութիւնը, եւ անկարող կ՚ըլլանք կանխելու կամ սրբագրելու ձախողութիւնները՝ պատճառ դառնալով նոր ըմբոստութիւններու եւ յեղափոխութիւններու:

Պարզ է՝ տնտեսութեան համաշխարհայնացումը, տեւաբար շահերը աճեցնելու, իւրացնելու եւ կեդրոնացնելու ընթացքը պատճառ կը հանդիսանան նոր բնոյթով դասակարգային տարբերութիւններու, իւրացնողները եւ շահերը դիզողները կը դառնան ընտրանի՝ իրենց միջոցներով, ուսումով եւ կենցաղով: Այս ընտրանիին եւ շարքային քաղաքացիներուն եւ հետզհետէ թշուառացող զանգուածին միջեւ խրամատ կը բացուի: Այս ձեւով հող կը պատրաստուի ըմբոստութիւններու եւ յեղափոխութիւններու: Պոռթկումներ կրնան տեղի ունենալ ո՛չ միայն անկայուն ժողովրդավարութեամբ կառավարուող երկիրներու մէջ, այլ նաեւ՝ հոն, ուր կայ ժողովրդավարական փորձ եւ աւանդութիւն: Տեղ մը յիշուած խրամատը բացորոշ է, արեւուն տակ, այլ տեղ՝ քաղաքավար, ընկերային բարեկարգումներով բարեխառնուած, ինչպէս՝ եւրոպական երկիրներու մէջ: Բայց երբ անտեսում եւ արհամարհանք կը զգացուին, հոն ալ անխուսափելի կը դառնան պոռթկումները:

Ամէնուրեք «**նոմենքլաթուրա**»-ի մաս կազմելու ձգտում կայ, այսինքն՝ ընտրանիի, եւ մարդիկ յաճախ միջոցներու միջեւ խտրութիւն չեն դներ, կ՚անհրաւեն նմանը: Քաղաքական եւ տնտեսական կազմակերպութիւնը շատ քիչ նկատի ունի շարքային քաղաքացիները, անոնց կարծիքը, որոշումները եւ փոփոխութիւնները ինքնասեփականաշնորհուած են ընտրանիին կողմէ, կառավարութիւններու մակարդակին, բայց նաեւ՝ տնտեսական, կրթական, առեւտուրի: Նոյնիսկ երբ կը կարծենք, որ հիմնական հարցերու շուրջ վիճարկումներ տեղի կ՚ունենան, անոնք կը սահմանափակուին ընտրանիին մէջ: Զանգուածներուն կը մնայ հանդիսատես ըլլալու հնարաւորութիւնը: Այդպէս են նախագահական ընտրութիւնները, միջկուսակցական եւ ներկուսակցական վիճարկումները. անոնք երեւութապէս կը դիմեն ժողովուրդին, բայց ընտրանիի խումբերն են խաղցողները, ինչպէս կ՚ըսուի՝ «**թիմ**»-երը: Այս կացութիւնը ոչ մէկ ձեւով կրնայ նպաստել իսկական ժողովրդավարութեան հաստատման: Հին եւ նոր «**նոմենքլաթուրա**»-ները միշտ ալ խորհած են, որ իրենք ունին շնորհը եւ մենաշնորհը՝ ճիշդը տեսնելու եւ ճիշդ գործելու, այսինքն ընտրանին միշտ ալ ունեցած է եւ ունի բացասական կարծիք՝ զանգուածի իրատեսութեան եւ ողջախոհութեան նկատմամբ. այս պատճառով ալ զանգուածին կը դիմուի, որպէսզի ան այո՛ կամ ո՛չ ըսէ իր կողմէ մրճահարուած բացատրութիւններու եւ ճշմարտութիւններու լոյսին տակ:

Այսպէս է ընտրանիի ժողովրդավարական թատրոնը, որուն պատճառով մարդիկ կը փորձեն մտնել ընտրանիի ակումբին մէջ, երբեմն կը յաջողին, երբեմն կը ձախողին, եւ երբ յաջողին, կը դառնան «դասակարգ»-ի անդամ, կ՚այլասերեն ժողովրդավարութիւնը: Անդասակարգ եւ մենաշնորհներ չունեցող ընկերութիւնը կը մնայ ցնորք:

Միշտ ալ կայ տարբերութիւնը եւ ընդդիմութիւնը՝ բանուորներուն, արհեստաւորներուն, շարքային քաղաքացիներուն եւ «մտաւորականներուն» միջեւ, ինչ որ անկարելի կը դարձնէ իսկական ժողովրդավարութիւնը, որ արտայայտութիւնը պէտք է ըլլայ մեծամասնութեան, որ վիճարկումներուն մէջ դեր չունի, իր տեղը չունի ընտրանիին մէջ, (ուսումնականներ, մասնագէտներ, ընտանեկան ժառանգութիւններ, դրամատէրեր):

Յ. ՊԱԼԵԱՆ

Շար.ը՝ էջ 16

ՔԱՂԱՔԱՑԻԻ ՏՕՆԸ ԵՒ ԳԻՏԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Այս յօդուածին գլխաւոր նպատակը շեշտելն է անհրաժեշտութիւնը մեծ թիւով գիտակից ու գործունեայ քաղաքացիներու ներկայութեան՝ մեր հայրենիքին մէջ: Քաղաքացիի օրը կը գործածուի իբրեւ առիթ՝ նիւթը արծարծելու համար:

Ա) Քաղաքացիի Օր

Ապրիլ 27-ին Հայաստանի Հանրապետութեան մարզերուն, քաղաքներուն ու Երեւանի մէջ առաջին անգամ ըլլալով տօնուեցաւ Քաղաքացիի օրը: Երեւանի քաղաքապետարանին կողմէ ծրագրուած էր գործադրել ծառատնկում՝ Սարեանի պուրակի մէջ, կազմակերպուած էին մարզական ձեռնարկներ, հանրային քննարկում՝ «Իրազեկ քաղաքացի»-ի մասին, գեղանկարիչներու ստեղծագործութիւններու ցուցադրութիւն ու վաճառք, կաւագործութեան ու գորգարուեստի վերաբերող ձեռնարկ, բնապահպանական նախաձեռնութիւն՝«**Էքո**-քաղաք» նիւթով, մանուկներու համար տիկնիկային ներկայացումներ, մանկական կաւճանկարչութիւն՝ Ազատութեան հրապարակին վրայ, ազգագրական համերգային ծրագիր, շարժապատկերի ցուցադրութիւն, տօնական օրուան եզրափակիչ ձեռնարկ՝ Ազատութեան հրապարակը:

Առաջին անգամ տօնուող Քաղաքացիի օրը նշելու վերաբերեալ եղան տարբեր ու իրար հակասող կարծիքներ: Նշեմ հակառակ եղողներուն կարգ մը քննադատութիւնները: Առաջին՝ Քաղաքացիի օրուան տօնը ստեղծուած է պարզապէս Նիկոլ Փաշինեանին ու անոր շրջապատին փառաբանանքը կատարելու համար: Երկրորդ՝ մեծ գումարներ ծախսուեցան օրը նշելու համար, երբ անդին երկրին մէջ կան անօթիներ ու ծայրայեղ աղքատներ: Երրորդ՝ օրուան բովանդակութիւնը մակերեսային էր՝ կեդրոնանալով ուտելու ու խմելու վրայ: Չորրորդ՝ վարչապետ Փաշինեան փողոցը՝ ժողովուրդին մէջ, խորոված եփեց ու կերաւ: Հինգերորդ՝ աշխարհի մէջ չկայ ուրիշ երկիր, որ այս տեսակ տօն ունի եւ այլն:

Քաղաքացիի օրը տօնելու համաձայն եղողները գլխաւորապէս կեդրոնացան գիտակից քաղաքացիին վրայ: Մէջբերեմ խօսքերը Սարհատ Պետրոսեանին, որ անցեալ տասնամեակին երկիրը բարելաւելու համար ժողովրդային մակարդակով պայքարող երիտասարդ եղած է, իսկ ներկայիս Կադաստրի կոմիտէի ղեկավարն է: Ան Դիմատետրի իր էջին վրայ Քաղաքացիի օրը ներկայացուց հետեւեալ ձեւով.

«ա) Այն հնարաւորութիւն է տալիս արժեւորել 2000-ականների սկիզբներին ձեւաւորուած քաղաքացիական շարժումներն ու դրանց արդիւնքում ձեւաւորուած համընդհանուր արժէքային համակարգն ու անհատական գիտակցութիւնը,

բ) Մէկ անգամ եւս վերագնահատել նախորդ տարուայ իրադարձութիւնների կարեւորութիւնն ու նախորդ կէտով նշուած գիտակցութեան կիրառական նշանակութիւնը,

գ) Եւ ամենակարեւորը, որ քաղաքացին ցանկացած պահի նախորդ երկու կէտերով նշուած շերտերի ձեռքբերումները կարող է եւ պէտք է կիրառի ցանկացած իշխանութեան հանդէպ, որը կը շեղուի քաղաքացիների համընդհանուր արժէքներից ու շահերից»:

Անցնող 10 տարուան ընթացքին քաղաքացիական շարժումներուն մէջ պայքարող երիտասարդներուն միայն մէկ մասը կը պատկանի Փաշինեանի Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան: Մնացեալ գործիչներէն մաս մը կը պատկանի ուրիշ կուսակցութիւններու կամ կազմակերպութիւններու, իսկ ոմանք ալ անկախ են: Փաշինեանի կուսակցութենէն դուրս գտնուող գործիչներուն մէկ կարեւոր մասը քննադատական կեցուածք ունի Փաշինեանի կառավարութեան կարգ մը որոշումներուն նկատմամբ. սակայն իմ տպաւորութիւնս այն է, որ անոնց մեծ մասը դէմ չէին Քաղաքացիի տօնը նշելուն՝ քննադատելով հանդերձ տօնակատարութեան կարգ մը երեսները:

Օրինակ, Վահրամ Սողոմոնեանը, որ Մաշտոցի պուրակի պայքարի օրերէն գործունեայ եղած է, Փաշինեանի կառավարութեան ներկայացուցած համահարթ եկամտահարկին զօրաւոր քննադատներէն է, «Կրթական քաղաքացիական նախաձեռնութիւն» կազմակերպութեան պատասխանատուն եւ «Քաղաքական դիսկուրս» համացանցային քննարկումներու հարթակի պատասխանատուներէն մէկը, Դիմատետրի իր էջին վրայ գրեց հետեւեալը. «Իրականում Քաղաքացու օրը նշելու որոշումն ամենայաջողուած որոշումներից մէկն է՝ տիրապետող **դիսկուրսը** յաղթահարելու **համատեքստում**: Ժամանակի հետ այն կը լցուի աւելի խորը բովանդակութեամբ»:

Բ) Ազատ ու Գիտակից Քաղաքացի

Ինչպէ՞ս կարելի է բնութագրել ազատ ու գիտակից քաղաքացին: Իմ կարծիքովս, ազատ ու գիտակից քաղաքացին տէրն է իր իրաւասութիւններուն եւ կը կատարէ իր պարտաւորութիւնները երկրին նկատմամբ: Աւելի խստապահանջ ըլլալով՝ կրնանք ըսել, որ ազատ քաղաքացին կ'ընտրէ կեցուածք՝ հարցերու հանդէպ եւ կ'որդեգրէ դիրքորոշում՝ յիշեցնելով Ժան Փոլ Սարթրի գոյութենապաշտութիւնը (**Էկզիստենցիալիզմը**):

Հաւանաբար գիտակից քաղաքացիին գլխաւոր յատկութիւններէն մէկը անհոգ չըլլալն է ու կարեւորութիւն տալն է իր շրջապատին, երկրին

ու անոր դիմագրաւած մեծ ու փոքր մարտահրաւէրներուն, եւ հաւատալը, որ կարելի է բարելաւել կացութիւնը:

Յստակացնելու համար թէ ո՛վ է ազատ ու գիտակից քաղաքացին, օգտակար կրնայ ըլլալ ներկայացնել տիպար քաղաքացիի գործունէութենէն օրինակներ.

- Բոլոր ընտրութիւններուն կը մասնակցի եւ կու տայ իր քուէն:
- Մօտէն կը հետեւի, նոյնիսկ կը փորձէ ներկայ գտնուիլ իր քաղաքի կամ համայնքի աւագանիի/քաղաքապետարանի գործունէութեան ու կը հսկէ, որպէսզի կառավարական մարմինները հարկատուներուն տուած հարկերը ճիշդ ձեւով ծախսեն, ու մխում տեղի չունենայ:
- Բոլոր տեսակի հարկերու վճարման իր պարտաւորութիւնը կը կատարէ:
- Ինքզինք տէրը կը զգայ իր երկրին: Ո՛չ միայն կը զգայ, որ շէնքին մէջ իր յարկաբաժինը իրեն կը պատկանի ու անոր հոգ կը տանի, այլ նաեւ՝ շէնքին աստիճանները, շէնքին մուտքը եւ այլն: Համայնքային տարածքները, ըլլան անոնք բակեր, փողոցներ, զբօսայգիներ, անտառներ եւայլն, կը փորձէ պահել մաքուր ու նախանձախնդիր կ'ըլլայ, որպէսզի որեւէ բան չկոտրի, չաւերուի կամ չաղտոտի: Օրինակ, եթէ փողոցին վրայ կայ մեծ փոս մը, լուր կու տայ քաղաքապետարան, որպէսզի այդ փոսը լեցուի:
- Երբ տեղեակ ըլլայ ոեւէ մէկուն կողմէ օրէնքի խախտումին, չարաշահումին եւայլն, կը բացայայտէ:
- Իր իրաւունքներուն մասին տեղեակ կ'ըլլայ եւ զանոնք կը պաշտպանէ անհատապէս թէ կազմակերպութիւններու միջոցով:
- Կը ծառայէ պետական հասարակական խորհուրդներու եւ յանձնաժողովներու մէջ, որոնք բազմաթիւ են, ինչպէս՝ Հայաստանի Հանրապետութեան ոստիկանութեան պետին կից հասարակական խորհուրդի անդամ:

Խորհրդային Միութեան ժամանակ պետութենէն գողնալը քաջագործութիւն էր: Ժողովուրդին մեծ մասը հաւատք չունէր, որ ինքնակազմակերպուելով՝ կարելի է երկրին կացութեան մէջ փոփոխութիւն մտցնել: Իրենց վերաբերող որոշումներու կայացման մէջ մասնակից չէին: Հաւատք չունէին, որ կրնան նուաճել իրենց սեփական իրաւունքները: Ուրիշ խօսքով, ժողովրդային մակարդակով գործունէութեան ու պայքարի չէին հաւատար: Սակայն վերջին տասը տարիներուն մէջտեղ եկաւ նոր սերունդ մը, որ հաւատաց ժողովրդային մակարդակի պայքարին ու տէր կանգնեցաւ իր երկրին ու իրաւունքներուն: Անոնք ունեցան յաջողութիւններ, որոնք աւելի խանդավառեցին ու բազմացուցին թիւը այն երիտասարդներուն, որոնք իրենք զիրենք տէրը զգացին երկրին, կարեւորութիւն տուին իրենց շրջապատին եւ հաւատացին փոփոխութեան կարելիութեան: Նշենք անոնց ունեցած յաջողութիւններէն քանի մը հատը.

- Թոյլ չտուին, որ Մաշտոցի պուրակի կանաչապատ բաժինը քանդուի եւ այդտեղ շինարարութիւն կատարուի:
- «Կինօ Մոսկուա»-ի յետնաբակին գտնուող ամառնային դահլիճի պահպանումը: Այս բացօթեայ, մօտաւորապէս 900 աթոռ ունեցող շարժապատկերի սրահը 2010-ի սկիզբները կառավարութիւնը կ'որոշէ հանել յուշարձաններու ցանկէն, որով կարելի պիտի ըլլար քանդել եւ նոր շինարարութիւն ընել: Խումբ մը երիտասարդ գիտակից քաղաքացիներ, կարեւորութիւն տալով Երեւանի դիմագիծը պահպանող այդ բացօթեայ դահլիճին ու հաւատալով, որ կարելի է կասեցնել անոր քանդումը, իրենց ժամանակը տրամադրելով՝ կազմակերպեցին ցոյցեր ու բողոքներ եւ կրցան կասեցնել ամառնային շարժապատկերի դահլիճին քանդումը:
- Լոռիի մարզին մէջ գտնուող Թռչկան ջրվէժի յաջողած պայքարը: Շինարարութեան պատճառով բնութեան այս յուշարձանի ապագան վտանգուած էր: Երիտասարդ քաղաքացիները դէմ կեցան եւ կասեցուցին աշխատանքները՝ փրկելով Թռչկանի ջրվէժը:
- **Մինիպասերուն** փոխադրութեան գինը 100 դրամէն 150 դրամի բարձրացնելու դէմ եղած յաջող պայքարը:
- Պայքար ընդդէմ որդեգրումին՝ ամբողջութեամբ ֆինանսական շուկաներուն վրայ հիմնուած կենսաթոշակային համակարգի մը: Այս պայքարը ունեցաւ մասնակի յաղթանակ՝ յետաձգելով կենսաթոշակի շուկայական համակարգի որդեգրումը: Այս պայքարը ծանօթ է իբրեւ պարտադիր կուտակայինի դէմ պայքար:
- Ելեկտրականութեան գինի բարձրացումին դէմ պայքար, ծանօթ՝«Ելեկտրիք Երեւան» անունով:

Շատ հաւանաբար ապրիլ 2018-ի խաղաղ յեղափոխութիւնը չէր յաջողեր, եթէ տեղի ունեցած չըլլային նախորդ տասնամեակի բազմաթիւ ժողովրդային պայքարները, որոնց ընթացքին երիտասարդ ու գիտակից քաղաքացիներու մեծ թիւ մը թրծուեցաւ:

Գ) Ներկան ու Ապագան

Անցնող տասնամեակին փողոցի վրայ գործնական պայքար տանելով փորձառութիւն շահած այս գիտակից քաղաքացիները այսօր գործունեայ են կուսակցութիւններու, հասարակական շարժումներու մէջ, ինչպէս՝ բնապահպանական շարժումները, իսկ ուրիշներ կը գործեն անկախ: Անոնք կը հաւատան, որ իրենց թիւը այնքան շատ է, որ կարելի չէ վերադառնալ 2018-ի նախաապրիլեան օրերուն:

Կը կարծեմ կարեւոր է տեսնել ու գիտակցիլ այս ազատ ու գիտակից քաղաքացիներուն ներկայութիւնը Հայաստանի քաղաքական դաշտին մէջ եւ անոնց ունեցած կարեւոր դերակատարութիւնը:

Իմ կարծիքովս, ներկայիս հիմնական մարտահրաւէրը աւելիով բազմացնելն է այս երիտասարդ ու գիտակից քաղաքացիներուն թիւը, որպէսզի մեր հայրենիքին մէջ օրէնքը աւելի գերակայ դառնայ, որպէսզի ժողովրդավարութիւնը աւելի հաստատուի, ու երկիրը բարգաւաճի: Ասիկա իրագործելու համար, իմ կարծիքովս, պէտք է կեդրոնանալ պատանիներուն ու երիտասարդներուն վրայ եւ փոքր տարիքէն անոնց մէջ մտցնել օրէնքի գերակայութեան ու երկրին տէրը ըլլալու զգացումները՝ բազմաթիւ ուրիշ կարեւոր զգացումներու կողքին, քանի հասուն անձերու մտածելակերպը փոխելը շատ դժուար է:

Ապագայի նկատմամբ լաւատեսութեանս աղբիւրը անցնող տասը տարիներուն երիտասարդ ու գիտակից քաղաքացիներն են, որոնք վերը նշուած բազմաթիւ քաղաքացիական պայքարները տարած են: Անոնք ո՛չ միայն ներկայիս գործունեայ են պետական մարմիններու, կուսակցութիւններու ու հասարակական շարժումներու մէջ, ո՛չ միայն տէրն են իրենց իրաւասութիւններուն ու կը կատարեն իրենց քաղաքացիական պարտականութիւնները եւ կը բարելաւեն հայրենիքը, այլ նաեւ սկսած են ամուսնանալ եւ ունենալ զաւակներ՝ գիտակից քաղաքացիի հասկացողութիւնները փոխանցելով իրենց զաւակներուն, որոնք ապագային տէր պիտի կանգնին մեր հայրենիքին ու զարգացնեն զայն: Յօդուածս կ'ուզեմ եզրափակել այս երիտասարդ գիտակից քաղաքացիներէն մէկուն՝ Սերգէյ Ղահրամանեանի՝ ապրիլ 27-ին Դիմատետրի իր էջին վրայ տեղադրած գրառումը մէջբերելով Քաղաքացիի տօնին առիթով ու իր փոքր աղջկան՝ Սոֆիային մասին : Ըսեմ, որ Ղահրամանեան ներկայի կառավարութեան շրջանակին չի պատկանիր:

«Քաղաքացուս տօնը շնորհաւոր:

Քանի որ գիտէինք, որ Մաշտոցի պողոտան փակ է լինելու մեքենաների համար, մեքենան կանգնացրեցինք հեռու մի տեղ ու ոտքով իջնում էինք Մատենադարանից սկսած:

Հասանք Մաշտոց - Իսահակեան խաչմերուկի մօտ, Սոֆիայիս աչքը ընկաւ հետիոտնի լուսացոյցի վրայ, կարմիր էր, այդ նոյն պահին մօտ 4-6 մարդ էր կանգնած մայթին ու ոտքերը դրեցին փողոցի վրայ, այսպէս ասած՝ առաջին քայլը դրեցին (այսպէս ասած՝ ահել-ջահել էին անցորդները, բայց չեմ կարող ասել՝ անցնելո՞ւ էին փողոցը, թէ՞ ոչ, ամէն դէպքում մէկ քայլ արուած էր) ու մի պահ անդորր տիրեց ու Սոֆիաս ասաց.

ԱՐԱ ԽԱՆՃԵԱՆ

Շար.ը՝ էջ 16

ՌՈՍՏՈՄԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ

- Կարնոյ Հռիփսիմեանց դպրոցի ուսուցչական կազմը՝ դպրոցի տնօրէն Ռոստոմին հետ:

- Ռոստոմը իր կնոջ՝ Եղիսաբեթ Շահնազարեանցի եւ դստեր՝ Թագուհիին հետ

- Ռոստոմի կիսանդրին՝ Գիւմրիի Յաղթանակ զբօսայգիին մէջ:

ՌՈՍՏՈՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ . . .

Շարունակուած Ա. էջէն

Յաճախ, Ռոստոմի եւ միւս հիմնադիրներուն մասին գրած ատեն, նախապատուութիւն տրուած է գործակից կամ յետնորդ դաշնակցական գործիչներէ բերուած վկայութիւններու, ի վնաս անմիջական փաստաթղթային նիւթերու:

Ճիշդ է, որ այս վերջինները կրնան լուսաւորուիլ, լուսաբանուիլ վկայութիւններով, երբեմն արժէքաւոր, բխած՝ այլ գրիչներէ, յատկապէս Ռոստոմի պարագային՝ մարդկային կերպարի, նկարագրային յատկութիւններու, չափով մըն ալ գաղափարական աշխարհի մասին (աւելի վար ասոնցմէ պիտի մէջբերեմ հպանցիկ, բայց կարեւոր վկայութիւն մը Ռուբէնէն): Սակայն ինծի կը թուի, որ որոշ վկայութիւններ, որոշ բնորոշումներ՝ Ռոստոմի գաղափարական դիմագիծին շուրջ, վիճելի են... Ամէն պարագայի, անուղղակի այդպիսի մօտեցում մը չ՚ունենար շահեկանութիւնը, որ պիտի ունենար քննարկումը Ռոստոմի անմիջական արտայայտութիւններուն, իր մտածողութենէն եւ գաղափարներու աշխարհէն իր իսկ թողած գրաւոր հետքերուն:

* * *

Այսպէս, ժամանակագրական կարգով, Ռոստոմէն մեզի հասած գաղափարաբանական բնոյթի առաջին փաստաթուղթերը 1894 թուականի են. յաջորդաբար «Այբ ու բեն» յօդուածաշարքի՝ Ռոստոմի գրիչին պատկանող երրորդ-չորրորդ մասերը1, եւ «Մեր ծրագիրը», այսինքն՝ ՀՅԴ Ծրագրի ներածական մասը(2):

Այս փաստաթուղթերէն առաջինը մեզ կ՚առաջնորդէ քանի մը հաստատումներու, որ կը բանաձեւեմ՝ կարելի չափով խուսափելով գրութիւնը ծանրացնելէ փաստարկիչ մէջբերումներով:

Նախ՝ «Այբ ու բեն» յօդուածաշարքը իր չորս մասերով կը կազմէ գաղափարական դրոյթներու ամբողջութիւն մը՝ առանց ներքին հակասութիւններու կամ անհերդաշնակութեան: Երբեմն տարբերութիւններ նշուեր են, կամ՝ ենթադրուեր, հետեւանք՝ վերջին երկու մասերու Ռոստոմին կողմէ գրուած ըլլալուն:

Ճիշդ է, որ այդ մասերու խմբագրման ոճը կը տարբերի նախորդներու ոճէն: Բայց ատիկա տարբերութիւն է գրութեան ոճի, եւ ո՛չ՝ գաղափարական դրոյթներու: Ռոստոմի անձնական ոճն է խնդրոյ առակայ՝ պարզապէս, աւելի եւս շեշտուած՝ իրեն բաժին ինկած նիւթի հարկադրաբար աւելի բանավիճային գունաւորումէն (ընդդէմ «Հնչակ»-ի), երբ Քրիստափոր-Զաւարեան ստորագրուած առաջին մասերը պէտք էր ընէին կացութիւններու առարկայական վերլուծում մը, ապա՝ զարգացնելով թեթեւօրէն բանավիճային դրոյթներ միայն (ուղղուած՝ «Արմենիա»-ի դէմ):

Գալով յօդուածաշարքի բովանդակութեան, առաջին մասերը կը տարազէին քանի մը հիմնական դրոյթներ. նախ՝ այն, որ հայ իրականութիւնը չի զերծանիր հասարակագիտական ընդհանրական օրէնքներէ, այլ կը հետեւի անոնց: Երկրորդ՝ որ ազատութեան [ազգային] պահանջը անհրաժեշտ է, բայց չի բաւեր. անոր կենսականօրէն առնչուող երկրորդ փուլն է ընկերա-տնտեսական վիճակի բարելաւումը: Ապա՝ որ այդ բարելաւումը կը նուաճուի իրական ուժի ստեղծումով եւ պայքարով, «չի շնորհուիր» վարչական բարեփոխումներով, ինչպէս կը կարծէ արմենական օրկան «Արմենիա»-ն, եւ ինչպէս կը փաստէ, նոյնիսկ՝ Արեւմուտքի «զարգացած» տնտեսութեամբ երկիրներու մէջ, թշուառ զանգուածներու առկայութիւնը: Վերջապէս՝ որ պարտաւոր ենք մեր ժողովուրդին այժմէն յայտնել ազգային պայքարի փուլի անբաւարարութեան այս իրականութիւնը, նախապատրաստել զայն հետեւելիք պայքարին, չսնուցանել պատրանքներով:

Ռոստոմի ստորագրած մասերը մէկ կողմէ, կ՚ըսէի, աւելի բանավիճային էին. միւս կողմէ՝ անոնք կը մուծէին քանի մը նոր դրոյթներ, որոնք սակայն, աւելի մասնաւոր, լրիւ կը տեղադրուէին Քրիստափորի եւ Զաւարեանի գծած սկզբնական ծիրին մէջ: Կեդրոնացած՝ ինքզինք երէկ սոցիալիստ-յեղափոխական, իսկ այսօր (հիմնադրումէն եօթը տարի ետք) սոցիալ-դեմոկրատ յորջորջած «Հնչակ»-ի գաղափարներուն վրայ, Ռոստոմ նախ կը նշէր սխալը՝ մեքենականօրէն «անխուսափելի» նկատելու դրամատէր-ընչազուրկ երկուութիւնը, անոր սրումը: Ապա կը նշէր «Հնչակ»-ի ինքնահակասումը, քանի որ ան դեռ երէկ «խուսափելի» նկատած էր այդ հոլովոյթը: Բայց մանաւանդ կ՚ընդգծէր հնչակեան տեսութեան մէջ անտեսումը գիւղական ազգաբնակչութեան, որ հայութեան եւ Հայաստանի պարագային կը կազմէր ջախջախիչ մեծամասնութիւն:

Երկու մատնանշումներու պարագային ալ բացատրութիւնը պարզ է Ռոստոմի համար. նախապէս «Հնչակ» հետեւորդ էր եղած պահու գաղափարական տիրող դաւանանքին՝ նարոդնիկական գունաւորումով, իսկ հիմա, նոյն հաւատարմութեամբ, կը հետեւէր ուղղափառ սոցիալ-դեմոկրատիային, ինչ որ զինք կը հեռացնէր հայութեան ու Հայաստանի իրականութենէն՝ միանգամայն խճճելով հակասութիւններու հանգոյցի մը մէջ:

Անցնելով 1894-ի երկրորդ նիւթին՝ «Մեր ծրագիրը» առաջնորդողին, կը յիշենք, որ անիկա գրուածհրատարակուած էր Ռոստոմի կողմէ՝ իբրեւ ներածութիւն կազմակերպութեան Ա. Ընդհ. ժողովին մէջ երկու տարի առաջ մշակուած եռաբաժին Ծրագիրին: Այս փաստաթուղթն է, որ արժած է Ռոստոմին «մարքսիստ» յորջորջումը(3):

Ըսեմ անմիջապէս, որ այս առաջնորդողը, կամ ըսենք՝ ներածութիւնը, իբրեւ ամբողջութիւն առած, աւելի «մարքսիստական» չ՚երեւիր ինծի, քան «նարոդնիկ» Քրիստափորէ կամ «անարխիստ» Զաւարեանէ ստորագրուած էջեր: Նոյնիսկ եթէ պէտք է արտաքին յղումներու ապաւինիլ անպայման, Ռոստոմի «Մեր ծրագիրը» նոյնքա՛ն նարոդնիկական է եւ նոյնքա՛ն՝ սոցիալ-յեղափոխական: Հոն, դասակարգերու պատմական հոլովոյթի եւ հակադրման մարքսեան շեշտադրումով շա՛տ ընդհանրական (ու որեւէ ընկերվարական կազմակերպութեան համար՝ ընդունելի, եթէ ոչ... պարտադիր) նախադրեալներու ներածութենէ մը ետք, «Դրօշակ»-ի երիտասարդ խմբագիրը շատ արագօրէն կ՚անցնի մեր իրականութեան ու կը խարսխուի հոն, որովհետեւ՝ «Մենք ասպարէզ չենք եկել իբրեւ այս կամ այն **ուտոպիական** վարդապետութեան պատկանողներ, մենք չենք ձգտում մտցնել մեր կեանքի մէջ այս կամ այն «դաւանութիւնը»՝ հանդերձ իր «հանգանակներով», մենք մեր ժողովրդին չենք նկարագրում այս կամ այն իտէալական կազմակերպութիւնն իր բոլոր մանրամասնութիւններով: Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը կենսական լինի. մեր ուշադրութիւնը գլխաւորապէս կեդրոնացած է մեր երկրի ներկայ դրութեան վրայ...» (ընդգծումները՝ բնագրէն):

Ուշագրաւ է կրկնակ մերժումը «ուտոպիական վարդապետութեան» եւ «դաւանութեան ու հանգանակներ»-ու: Ասոնցմէ երկրո՛րդը յատկապէս, յաճախ՝ անտեսուած, պարզապէս մարքսեան դաւանապաշտութեան դէմ է, որ կ՚ուղղուի: Եւ անմիջականօրէն հետեւող, Ռոստոմի իսկ կողմէ ընդգծուած, **կենսական** [ծրագիր] եւ **ներկայ** [դրութիւն] որակումները աւելի եւս կ՚արժեւորեն դաւանութիւններու այդ մերժումը:

Եւ հաստատուած այս սկզբունքներուն ի կիրարկում՝ գրութիւնը իր աւարտին կը տարազէ ուրիշ առաջադրանք մը՝ հիմնուած նախադրամատիրական, նահապետական որոշ կառոյցներու հանդէպ դրական վերաբերումի վրայ, նոյնքան՝ քիչ «մարքսիստական», թէեւ «Տնտեսապէս կեղեքող դասի դէմ էլ մենք կը կռուենք այժմ». բայց եւ՝ «Գործ կը դնենք ամէն միջոց՝ պահպանելու գոյութիւն ունեցող համայնական սկզբունքները. մենք կ՚աշխատենք տարածել համայնական սեփականատիրութիւնը, համայնական աշխատանքը...»:

Այս հիմնական շեշտադրումները կատարող դրոյթներ դժուար պիտի ըլլար «մարքսիստական» կոչել, եւ անոնց հեղինակը՝ «մարքսիստ»... Անոնք թերեւս կրնան յիշեցնել Մարքսի յետին անդրադարձներէն ոմանք, բայց շատ աւելի կը թելադրեն առնչութիւններ՝ ուղղափառ մարքսականութենէ արդէն շեղած մտածումի զանազան հոսանքներու հետ, Եւրոպայի տարածքին: Ամէն պարագայի, իրենց ամբողջութեան մէջ առած, անոնք հեռու են «մարքսիստական» յորջորջումի ընդհանրապէս թելադրած բովանդակութենէն, յատկապէս՝ «երիտասարդ» Մարքսի դաւանապաշտութեան յղուող: Որակումը շատ-շատ կարելի է նկատել մէկ հետքը, մնացորդը՝ ընկերներու յիշողութեան մէջ՝ երբեմնի քսանամեայ ուսանող Ռոստոմի բուռն, արկածախնդրական վարքէն, որ իրեն արժած էր վտարում համալսարանէ, եւ վարչական կարգով չէզոքացուցիչ «աքսոր»՝ իր ծննդավայրին մէջ... Բայց որ այլեւս չի յարմարիր, քանի մը տարի անց ՀՅ Դաշնակցութեան «Կենտրոն»-ի ամենագործօն օժանդակին, որ թէեւ դեռ շատ երիտասարդ շուտով, իբրեւ «Դրօշակ»-ի խմբագիր, պիտի ստորագրէր «Մեր ծրագիրը» առաջնորդողը՝ հոն մատնանշուած ոչ մարքսական բազմաթիւ դրոյթներով: Ուրեմն բերնէ բերան աւանդուած տպաւորութիւններ ու անոնցմէ բխած պիտակումներ պէտք չէ մեզ տանին ոչ քննական կրկնումներու, սխալ ընդհանրացումներու...

* * *

Հարցին առնչուող յաջորդ նիւթերը, միշտ՝ ժամանակագրական կարգով, կը պարտինք դարձեալ «Դրօշակ»-ին՝ ուղղակի կամ անուղղակի. այս անգամ Ռոստոմի խմբագրութեան երկրորդ՝ երկամեայ (1896-98) շրջանին(4):

Անոնք երկուքն են. նախ յօդուած մը՝ «Կրետէի ինքնավարութիւնը» խորագրեալ, որուն առանցքն է կառավարչական ապակեդրոնացման եւ տեղական լայն ինքնավարութիւններու հրամայականը. ապա նամակ մը՝(5) ուղղուած Արեւելեան Բիւրոյին, ուր նոյնպէս կ՚արծարծուի յիշեալ հարցը(6):

«Կրետէի ինքնավարութիւնը» առաջնորդողին վրայ չեմ ծանրանար: Կը բաւէ նշել ու շեշտել, որ հոն Ռոստոմ բազմազգ ու խառն ազգաբնակչութիւններով երկրամասերու համար ջատագովումը կ՚ընէ արտահողային ինքնավարութեան տարազին, որ դեռ նոր կը մշակուէր իբրեւ տեսութիւն՝ Եւրոպայի կարգ մը ընկերվարական հոսանքներու կողմէ, այդպիսի խճանկարային բնակչագրական կառոյցներու մէջ ատակ՝ պահպանելու, փրկելու իւրաքանչիւր տեսակի ազգային-մշակութային ինքնութիւնը, եւ որ աւելի ուշ պիտի ընդգրկուէր ՀՅԴ ծրագրային փաստաթուղթերուն մէջ: Ազգային մշակոյթի, ազգային ինքութեան յղացքներ՝ այնքան խորթ՝ ուղղափառ մարքսականութեան համար. եւ որոնց առկայութիւնը անգամ մը եւս կը փաստէ (եթէ կար ատոր կարիքը...) Ռոստոմի հեռաւորութիւնը մարքսեան ուղղափառութենէն:

Նոյն տարիներուն կը վերաբերի «երկրորդ բերանէ» վկայութիւն մը, այնքան թանկագին՝ իբրեւ աղբիւր, որքան ճշգրիտ՝ իբրեւ բնորոշում. այս մէկը՝ ազգամիջեան եղբայրութեան մասին: Արձանագրողն է Ռուբէն Տէր Մինասեան, որ Ժընեւի մէջ Յ. Դաւթեանի հետ հանդիպումի մը առիթով, 1909-ին, կ՚ոգեկոչէ Նիկոլ Դումանի հետ իր մէկ զրոյցը. «Նիկոլի ըսածին համաձայն, այս հիւանդ մարդը [Յոնանը] եւ Քոթոթը (Ռոստոմ), 1890 թուականներէն սկսած, ներշնչում կ՚ընէին եւ ոչ թէ ճառ կը խօսէին. «... բոլոր ազգերու ազատութեան, անկախութեան կողմնակից ենք: Թշնամի ենք բոլոր անոնց, որոնք կը բռնաբարեն ազգերու իրաւունքները: Ռուսիան եւ Թուրքիան մանր ազգերու սպանդանոց են կամ բանտ [...] Բոլոր ճնշուած ազգերը մեր եղբայրներն են, լինեն անոնք հայ, եզիտի, ասորի, հրեայ, քիւրտ կամ արաբ...»: Եւ եզրակացնելով՝ Ռուբէն կը նշէ այս գաղափարներու գործնականացումը՝ օտարազգի գործիչներու հայ յեղափոխական շարժման միացման փաստով: Միանգամայն փաստելով, որ 1890-ական տարիներու կէսէն ետք Ռոստոմ իսկապէ՛ս, հեռու՝ մարքսեան ուղղափառութենէ, ազգամիջեան դաշինքի զէնքը նախ եւ առաջ կ՚ուղղէր զանոնք միասնաբար հարստահարող բռնատէր վարչակարգերու դէմ, եւ ո՛չ առաջնահերթաբար... դասակարգային թշնամիին:

* * *

Տասնամեակ մը ետք, 1907-ին, Վիեննայի մէջ տեղի կ՚ունենար Դ. Ընդհ. ժողովը. բախտորոշ հանգրուան, որ կը յաջորդէր հոլովութային իմաստով այլապէ՛ս կարեւոր՝ 1905-ի կովկասեան Ռայոնականին ու «Կովկասեան նախագիծ»-ի որդեգրման:

Հոս տեղը չէ հարցերու մանրամասնումին: Յիշեցումի կարգով միայն ըսուած՝ կազմակերպութիւնը կը գտնուէր նոր բիւրեղացումի մը հարկադրանքին առջեւ, ստեղծուած երեւութական երկուութեամբ՝ ընդմէջ Արեւմտեան Հայաստանի ազատագրական պայքարին եւ անդրկովկասեան ընկերա-դասակարգային խմորումներուն: Ժամանակակիցներու միաձայն վկայութեամբ, ու մինչ տարամէտ ձգտումներու, հոսանքներու բացառիկ համադրիչ Քրիստափոր արդէն բացակայ էր (զոհուած՝ Վիտոշի լանջին), Ռոստոմն է, որ կ՚ապահովէր ներդաշնակումհամադրումը՝ երաշխաւորելով աշխարհահայեացքի առողջ աճումը, մշակելով նոյնքան «կենսական» եւ «մեր երկրի ներկայ կացութեան» ու հոլովոյթին համապատասխան երկրորդ ծրագիրը:

Երկրորդ ծրագիրը մշակումը եղաւ Ընդհ. ժողովէն բխած յատուկ յանձնախումբի մը, եւ ճիշդ չէր ըլլար զայն վերագրել Ռոստոմին, ինչպէս՝ առաջինի «Ներածական»-ը. նոյնիսկ եթէ «անժխտելի է Ռոստոմի եթէ ոչ ոճին, գէթ շունչին ներկայութիւնը»(7) անոր մէջ եւս (Ռոստոմ ի հարկէ կը մասնակցէր յանձնախումբի նիստերուն): Բայց կ՚արժէ տեսնել Ընդհ. ժողովի ատենագրութիւնները, ուր Ռոստոմի միջամտութիւնները, յատկապէս՝ ազգային հարց-ընկերա-տնտեսական հարց (կեղծ) երկընտրանքի քննարկման մէջ, մեծապէս լուսաբանիչ են իր համադրական դիրքին ու վերաբերումին տեսակէտէն:

Այսպէս, համադրելով ժողովի 62-րդ-63-րդ նիստերուն ներկայացուած դրոյթները (ձախին՝ Ա. Ջամալեան եւ Շահիսթաթունեան, հակադրուած՝ Մուրատի, Վռամեանի, չափով մը եւ՝ Թոփչեանի եւ Արամի տեսակէտներուն), Ռոստոմ կը շեշտէ կարեւորութիւնը կովկասեան գործունէութեան, նախ՝ հերքելով նոր այս դաշտին մէջ ծաւալած գործէն՝ Թուրքիոյ ազգային պայքարի ճակատին կրած ենթադրեալ վնասը կամ նուազումը: «Կովկասում սկսած կռիւները հրապարակ հանեցին յեղափոխական բազմաթիւ անհատներ, բարձրացրին ընդհանրութեան ոգին, եւ այս բոլորից տաճկահայ դատը միայն շահ ունեցաւ ...»: Պարզ է պատճառը. «Կովկասում մենք հիմնուեցինք աշխատաւորների դասակարգային ձգտումներին վրայ: Ու այս ձգտումների տեսակէտից հասկանում ենք եւ մեր ազգայնութիւնը... այս աշխատաւորական տեսակէտից մենք եղել ենք եւ պիտի մնանք ազգային...»: Ու կը հետեւի այժմէականացումը՝ «Մեր դաւանած ազգայնութիւնը տարբերում է բուրժուականից մանաւանդ այսօր, երբ մեր բանակի, աշխատաւորների եւ բուրժուազիայի միջեւ անխուսափելի բաժանումներ են առաջ գալիս...», յաւելեալ շեշտում-յիշեցումով՝ «... եւ ոչ միայն մեր կովկասեան գործունէութեան պատճառով է բուրժուազիան թշնամանում մեզ հետ. արդէն տաճկահայ յեղափոխութիւնն ինքնին՝ արհամարհանքի է հանդիպել նրա կողմից... տաճկահայ հարուստներից հէնց սկզբից ենք երես դարձրել... Մեզ՝ կովկասահայ աշխատաւորներիս մնում է միայն միանալ թրքահայ աշխատաւորների հետ, մանաւանդ որ մեր երկու հակառակորդները, երկու երկրների էլ բուրժուա դասակարգերը ձգտում են կապուել իրար հետ...»:

Այլապէս շահեկան, նաեւ վերի դրոյթներուն կարեւոր լրացուցիչ՝ նոյն ժողովի 68-րդ-69-րդ նիստերուն մէջ Ռոստոմի բերած ճշդում-ճշգրտումը՝ կազմակերպութեան գործի մարտավարութեան մասին. «Գալով այն հարցին, թէ ինչպէ՛ս է տարուել մեր կռիւը Տաճկահայաստանում, մի անգամ եւս պէտք է պնդեմ, որ նա չի տարուել «ազգովին»: Այո՛, նա եղել է ազգի համար, բայց՝ ո՛չ ազգովին: Դաշնակցութիւնը յենուել է միայն աշխատաւորական տարրի վրայ [...] Նիւթական օժանդակութեան վերաբերեալ, Կովկասում [...] ջերմ օժանդակութիւն էին ցոյց տալիս մանր բուրժուաները [միայն], բայց սահմանափակ շրջանում եւ ոգեւորութեան բացառիկ դէպքերում...»(8): Ապա Ռոստոմ բացառելով «շնորհիւ ձեռք առնուած մի քանի միջոցների» (իմա՛ «Փոթորիկ»-ի գործ) քաղքենիութեան բերած հարկադրական նպաստի պարագան՝ կ՚եզրակացնէ. «...այդ տարրը ոչ մի բնական ձգտում չունի որեւէ օգնութիւն հասցնելու յեղափոխական գործին...»:

* * *

Ռոստոմի կեանքին ու գործին յաջորդող փուլերը, կենդանի գործի, ապա եւ՝ հայ ժողովուրդի ապրած ողբերգական իրադարձութիւններու յորձանքներուն մէջ, անշուշտ նուազ առիթ կամ պատճառ պիտի տային գաղափարական այսօրինակ ելոյթներու, յստակացումներու:

Բայց ի մտի ունենալով, իր կեանքի վերջին տասնամեակին, նախ՝ Իրանի սահմանադրականներու կողքին տարած պայքարը. ապա՝ իր ճիգերը Ռուսիոյ փետրուարեան յեղափոխութեան եւ ընկերվար շարժումի զոյգ ճակատներուն վրայ՝ Փեթրոկրատէն մինչեւ Սթոքհոլմ, ու, ի վերջոյ, Պաքուի գոյամարտին իր ղեկավար մասնակցութիւնը՝ ընդդէմ փանթուրանական վոհմակներու՝ ջանալով գործակցութեան բերել պոլշեւիկ կոմիսարները, բաւարարուիմ ընդգծելով, անգամ մը եւս, որ այս բոլորը կը վկայեն գաղափարական նո՛յն ամուր, համադիր կառոյցին մասին, որ վերը փորձեցի ուրուագծել: Ուրիշ բան չեն ըսեր՝ 1907-ի Ընդհ. ժողովէն ետք՝ Ատրպատականէն ու Թեհրանէն մինչեւ Պոլիս, Պալքաններ ու Կարին, ապա՝ Կովկաս ու եւրոպական զանազան կեդրոններ Ռոստոմի հեւիհեւ վազքը «ազգի համար» (թէեւ իր շատ ճիշդ բանաձեւումով՝ «ոչ ազգովին»), հայթայթած անդադրում աշխատանքը՝ անհաւատալի իբրեւ քանակ ե՛ւ որակ, մինչեւ հիւծած, թիֆուսի հարուածներէն սպառած շիջումը 1919-ի յունուարին, Թիֆլիս. ապա եւ այդ տասներկու տարիներու ընթացքին իր գրած նամակները, որոնք արդէն նշուած «Նամականի» հատորին մէջ կը մօտենան երկու հարիւրի: Այս բոլորով դեռ հազիւ կ՚ունենանք մօտաւոր պատկեր մը՝ Ռոստոմի կերպարէն, եւ՝ այդ կերպարի **կուռ, ի սկզբանէ հաստատուն, ինքնահաստատ գաղափարական լիցքէն**(9): Հաւանօրէն այն ատեն աւելի լաւ կ՚ըմբռնենք վկայութիւնները՝ խոր համարումէն մինչեւ պաշտամունք գացող, որ իր մասին՝ իբրեւ մտածող եւ գործող ղեկավար ուժի՝ կտակած են գործակիցներ, ժամանակակից թէ հետեւող սերունդէն(10):

1- Յօդուածաշարքի առաջին մասերը, Քր. Միքայէլեանի եւ Ս. Զաւարեանի գրիչէն, կ՚ենթադրուի, որ խմբագրական փոքր վերանայումէ մը անցած են Ռոստոմի ձեռքով: Իսկ յօդուածաշարքի Գ. եւ Դ. մասերու Ռոստոմի կողմէ գրուած ըլլալը կը վկայուի անմիջական գործակիցներէ: Այդ մասերը տեսնել «Դրօշակ», 1894 մարտի եւ մայիսի թիւեր:

2- Ծանօթ է, որ ՀՅԴ անդրանիկ Ծրագիրը մշակուած էր Ա. Ընդհ. ժողովէն (1892), եռամաս կառոյցով՝ «Նպատակ», «Միջոցներ» եւ «Կազմակերպութիւն». առաւել այս վերջինին կապուած երկու յաւելեալ պարբերութիւններով՝ վերաբերող յաջորդաբար կոմիտէներու եւ բիւրոներու եւ անոնց յարաբերութիւններուն. ապա եւ՝ «Դրօշակ»-ի եւ այլ հրատարակութիւններու:

Ռոստոմ, «Դրօշակ»-ի պատասխանատու կարգուած, Ընդհ. ժողովէն ետք կը խմբագրէր «Մեր ծրագիրը» առաջնորդող յօդուածը, որ իբրեւ ներածական կը կցուէր մնացեալին, ու կը հրատարակուէր իբրեւ ամբողջութիւն (տեսնել «Դրօշակ», 1894 օգոստոսի եւ սեպտեմբերի թիւեր):

3- Ս. Վրացեանէն է մէջբերումը. «... Ռոստոմը ունէր դրական, չասելու համար նիւթապաշտ միտք: Նրան «մարքսիստ» էին կոչում կուսակցութեան մէջ եւ, անշուշտ, ոչ առանց իրաւունքի»: Յորջորջումը, ի հարկէ, չունի ժխտական գունաւորում. թերեւս կը ցոլացնէ որոշ «ներողամտութիւն»: Ու ասիկա՝ անպայման, մանաւանդ՝ հետագայ դաշնակցական գործիչներու գրիչին տակ (մտածելով, օրինակ, Վ. Նաւասարդեանի մասին...):

4- Ռոստոմ խմբագրական աշխատանքը կը նկատէր իր յարաշարժ եւ գերգործօն մարդու նկարագրին «պարտադրուած» անյարմար գործ: Ծանօթ է, որ ի վերջոյ անպայման Երկիր անցնելու, յեղափոխական դաշտի մէջ գործելու իր պահանջին գոհացում ստացած էր եւ խմբագրութիւնը թողած էր Յ. Դաւթեանին եւ անցած՝ Արեւմտեան Հայաստան: Կարին հաստատուած, հոն գործած եւ 1895-ի դէպքերուն հոն ինքնապաշտպանութիւն կազմակերպած՝ իբրեւ «պարսկահպատակ» ձերբակալուած եւ աքսորուած էր Իրան, ապա հոնկէ անցած է Կովկաս, կարճ ատեն մը գործած էր Կարս եւ Անդրկովկասեան այլ շրջաններու մէջ: Բայց դէպքերու որոշ դասաւորում մը զինք հարկադրած էր կրկին մեկնիլ Ժընեւ՝ վերստին անցնելու համար «Դրօշակ»-ի գլուխը:

Առ ի նախազգուշացում՝ կ՚արժէ նշել, որ Ռոստոմի այս երկրորդ «դրօշակեան» շրջանը չէ յիշատակուած իր մասին գրուած «դասական» զոյգ կենսագրական յօդուածներուն մէջ՝ Ս. Վրացեանէ: Մոռացումը, լրիւ պատահական (Ռոստոմ քիչերէն էր, որուն հանդէպ Վրացեան ունէր անսակարկ հիացում...), բարեբախտաբար չեն կրկնած՝ աւելի ետք՝ փաստաթղթային նիւթերու իմաստով աւելի բարենպաստ պայմաններ վայելող եւ յատկապէս այդ ժամանակամիջոցին Ժընեւէ եւ շրջակայ վայրերէ Ռոստոմին գրած բազմատասնեակ նամակները աչքի առաջ ունեցող հրատարակութիւններ:

Ռոստոմի Ժընեւեան երկրորդ այս շրջանի մանրամասնութիւններուն համար տեսնել «Ռոստոմ» եւ «Ռոստոմ - Նամականի» զոյգ հատորները, խմբագիր՝ Հ. Տասնապետեան, յաջորդաբար՝ 1979 եւ 1999, Պէյրութ: Տեսնել նաեւ «Պատմագրութիւն ՀՅ Դաշնակցութեան», Ա., Յ. Քիւրքճեան, 1990, Աթէնք:

5- Յօդուածին համար տեսնել «Դրօշակ», 1897 յունիսի թիւ: Իսկ նամակը՝ 10 հոկտ. 1897 թուակիր, յիշատակուած է Վ. Նաւասարդեանի կողմէ («Գաղափարների ոգին», Գահիրէ, 1951, էջեր 46-47): Կ՚արժէ նշել, որ այս նամակի բնօրինակը՝ մէջբերուած Վ. Նաւասարդեանէն, հանգրուանած ըլլալ կը թուի Գահիրէ՝ «Յուսաբեր»-ի մօտ եւ ապա մնացած ըլլալ հոն, կամ՝ մոլորած այլուր, անորոշ ճակատագրով: Ամէն պարագայի, անիկա չ՚երեւիր ինծի ծանօթ որեւէ այլ հրատարակութեան մէջ, եւ նոյնիսկ՝ արդէն յիշատակուած «Ռոստոմ - Նամականի» հատորի՝ ամբողջութիւն մը կազմող 478 նամակներու շարքին մէջ (այս հատորի խմբագիր Հ. Տասնապետեան արդէն ինք կը բնորոշէ շարքը՝ իբրեւ «Ռոստոմի գէթ մեր տրամադրութեան տակ գտնուող նամակներու» ամբողջութիւնը, չբացառելով արտասովոր պայմաններու հետեւանք արխիւային ցրուած նիւթերու գոյութիւնը:

6- Այս նիւթերէն առաջինի՝ «Կրետէի ինքնավարութիւնը» յօդուածին՝ Ռոստոմի գրիչին պատկանելու մասին հարցականներ դրուած են: Բայց այդ մասին հաստատական վկայութիւն կը բերեն՝ կասկածի տեղիք չթողելով, ե՛ւ գրութեան ոճը, ե՛ւ նիւթին վերաբերող իր ինքնագիր նամակին մէջ ըրած ակնարկութեան շեշտը («թիւ 9 «Կրետէի ինքնավարութիւնը» առաջնորդողում կազմակերպական հարցը դաշնակցա[յին]-ապակենտրոնացման հողի վրայ շատ որոշ դրինք...»): Ա. դէմքի այս յոգնակին կը հնչէ պարզապէս իբրեւ անանձնական գրելաձեւի արտայայտութիւն, ու պէտք չէ կասկածի առաջնորդէ հեղինակի հաշուին. 1897-ի ամրան-աշնան Ռոստոմ «Դրօշակ»-ի ե՛ւ խմբագիրն էր, ե՛ւ գլխաւորը՝ թերթին շուրջ գտնուող գրիչներէն (այս վերջիններէն Յ. Դաւթեան մեկնած էր արդէն, իսկ Գ. Խաժակ՝ առժամաբար հեռացած):

7- Տեսնել Հ. Տասնապետեան, նշուած երկը («Ռոստոմ»), էջ 6:

8- Կ՚ակնարկէ եկեղեցական կալուածներու գրաւման, ապա եւ՝ հայ-թաթարական կռիւներու ընթացքին ստեղծուած համաժողովրդական շարժումներուն, որոնց մէջ, ի դէպ, ինքը՝ Ռոստոմ ունեցաւ ղեկավար ներդրում:

9- Բացի նամակներէ՝ Ռոստոմ թողած է նաեւ այլ պատառիկներ՝ յուշագրական կամ գործնական-պարագայական բնոյթի. ու ասոնց մէկ մասը՝ նաեւ վերջին տասնամեակին: Անոնք չեն վերաբերիր գաղափարական ոլորտին, եւ բան չեն աւելցներ մեր հետազօտական փորձին:

10- Ռոստոմի մասին վկայութիւններ, յուշեր եւ արժեւորումներ բազմաթիւ են: Գլխաւոր յիշատակելիներ՝ Ս. Վրացեանէ, Ռուբէն Տէր Մինասեանէ, Գր. Ամիրեանէ, Արամ Ալչուջեանէ, Միք. Վարանդեանէ, Կ. Սասունիէ, Եր. Խաթանասեանէ...: Ապա եւ՝ գրագէտներէ, ինչպէս՝ Հրաչ Զարդարեան, Պերճուհի Բարսեղեան (այս եւ այլ վկայութիւններու համար տեսնել վերոնշեալ «Ռոստոմ» հատորի համապատասխան բաժինը):

ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿ-ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ . . .

Շարունակուած 4-րդ էջէն

- Բանակցութեան մէջ ենք մի իտալացու հետ, որ ուզում է գնալ Հայաստան իբր թղթակից. եկաւ, խօսեցինք, պայմանաւորուեցինք: Եթէ կարողացաւ մտնել խորքերը, անցնել Մուշ, Սասուն, Վան, Պարսկաստան, դա մեզ կը նստի 2.200 Fr.(13):

- Մեզ առաջարկներ եղան ֆինլանդացիների կողմից միւս տարրերի հետ միացած համերաշխ գործելու: Սկզբունքով համաձայնութիւն տւինք:

Եթէ կոնգրէս կայանայ, պէտք է որ Ինքնապ[աշտպանութեան] մարմինը մի ներկայացուցիչ ունենայ: Առ այժմ թող խօսեն ուրեմն պայմանների մասին: Կը գրենք դարձեալ, երբ կոնգրէսը հրաւիրելու մասին գործնական քայլեր առնուեն:

1.- Մեծ Քաղաքը, ինչպէս ծանօթ է, Թիֆլիսն է, այլ խօսքով ՀՅԴ Արեւելեան բիւրոն:
2.- Շամը ծածկանունն է Վան-Վասպուրականի:
3.- Զրաբերդը Կարսն է:
4.- Սիմոն Զաւարեանի համար է, որ անցած էր Պէյրութ:
5.- Ոսկանապատը Պաքուն է:
6.- Ֆրանսերէն - նոր կոտորածներ:
7.- Ֆրանսական (դեղին) եւ անգլիական (կապոյտ) - կառավարութեանց կողմէ ամէն տարի կամ պարբերաբար հրատարակուող պաշտօնական ժողովածուներ էին, ուր տեղ կը գտնէին առ հասարակ իրենց դեսպաններէն եւ հիւպատոսներէն ստացուած զեկուցագրեր:
8.- Թորգոմ՝ ծածկանունն էր Թումեանց Թումանի:
9.- Pro-Armenia-ի խմբագրապետը:
10.- Լորդ Լանսդաօ, Անգլիոյ արտաքին գործոց նախարար:
11.- Ֆարհատ - Սարգիս Օհանջանեան, Մրգաստան-Երեւանի Կեդր. կոմիտէի անդամ:
12.- Էմիլ Լուբէ, Ֆրանսայի հանրապետութեան նախագահ: Դելկասէ՝ արտաքին գործոց նախարար:
13.- «Իտալացին» Պրոֆ. Ռակկա անունով հայասէր անձնաւորութիւն էր: Հայաստան այցելութեան ծրագիրը չիրականացաւ, երեւի բազմածախս ըլլալու պատճառաւ:
(*) Ծանօթ Խմբ.- Հոս կ'աւարտի գծուած բաժինը:

16.

էջ 32-33
Օգոստ. 6-ին
ՈՍԿԱՆԱՊԱՏ

Յայտնեցէք Մ. Ք., որ Բարսեղեանի տուած հասցէով (բանկի) ուղարկել ենք մի երկար նամակ(1): Այնտեղ կան բաներ, որ ձեզ էլ են վերաբերում:

Այսօր ստացանք Պարիզից հեռագիր: Դելկասէն(2) համաձայն է ընդունել մեր դրամը հիւպատոսի ձեռքով բաժանելու համար: Հեռագրեցինք Մ. Ք. դրա մասին Ղարիբի(3) հասցէով: Միայն ինչպէ՞ս անել, որ մերոնց ձեռքը մի որոշ գումար ընկնի: Յամենայն դէպս պէտք է դրա մասին յայտնել Մշոյ կոմիտէին: Փողը այստեղ կը տանք, սպասելով ձեր փոխադրութեան:

Դումանին(4) լաւ հայհոյէք. մինչեւ հիմա ոչինչ չգրեցին դէպքի մասին, իսկ հիւսիսային գործակալութիւնը դժբախտաբար այդպիսի բաներով չի զբաղեցնում հասարակութիւնը:

Մ. Ք.ի նամակում յայտնել ենք մեր կարծիքը ապագայ գործունէութեան մասին: Մեզ ձեռնտու չեն ոչ լռութիւնը, եւ ոչ խմբերի անպատիժ, սուս ու փուս կոտորածը: Թող կազմւի մի արշաւանք, կատարւի մի գործ, որի մասին ստիպւած լինեն բերանը բանալ: Որքան էլ մենք ասենք, թէ 100, 300, 400 թշնամի ենք կոտորել, նշանակութիւն չի ունենալ, մինչեւ միւսների բերանից էլ նոյն բանը չլսուի: Իսկ մինչեւ հիմա կատարւած դէպքերի մասին համարեա ոչ մի ակնարկ չի եղել ոչ մէկի կողմից:

Չենք հասկանում, ինչ նշանակութիւն ունի ձեր կողմից Պրեսանսէի ճառի թարգմանելը, քանի որ դա լոյս է տեսնում Դրօշակում:

Ռաշտ այլեւս չի ուղարկւում: Ուղարկեցինք փորձի համար 40 օր[ինակ] Մեշէդ եւ ձեզ հեռագրեցինք:

Տուէք հեռագրի համար կարճ հասցէ:

Աստարա ուղարկւած է 240 օր[ինակ], Արդ[աբիլ] 500. ուրեմն առնւազը 600 օրինակ կարող են ձեզ հասցնել(5):

Ինչո՞ւ Անդրէեւի, Բոգոսլաւսկու մասին մի տող չէք գրում(6). ստիպւած ենք այստեղից այնտեղից քաղել: Չի լինի՞լ, որ Պրեսանսէի ճառերը մենք թարգմանենք, իսկ Անդրէեւների մասին դուք գրէք:

II կոմիտ[էին] յայտնէք, որ հաշիւը չէր տպագրւում, որովհետեւ սկիզբը չկար. առաջիկայում կը տպենք:

Հիմա իմացանք, որ Մոսուլի դէպքի մասին պաշտօնական լուր կայ Times-ում: Դրա համաձայն միայն 4 հոգի են ազատւել: Մշոյ դաշտում մի դարանակալ խումբ յարձակւում է զօրքի վրայ: Զօրքերին օգնութիւն է հասնում, ապստամբները փախչում են, աւերելով իրենց ճանապարհին 3 գիւղ:

Քանի որ Դելկասէն յանձն է առել նպաստները տեղ հասցնել, չի՞ կարելի հարուստներից առնել փողը եւ ոչ մեր գանձարանից: Նպաստները կարելի է ուղարկել Պրեսանսէի անունով:

Զրաբերդցիք(7) գանգատւում են, որ նամակ չենք գրած: Յայտնէք իրենց, որ նախ գրել ենք, յետոյ ախր դժւար բան է մի անգամից 3-4 տեղի հետ նամակագրութիւն պահպանել եւ ամէն տեղ նոյն տեղեկութիւնները կրկնել: Թող [Արեւելեան] Բիւրոն այդ պաշտօնը յանձն առնի, մեր տւած տեղեկութիւնները կոմիտէներին յայտնի:

1.- Մ. Ք. - Թիֆլիսն է. Բարսեղեանը՝ Տէր Դաւթեան Յովսէփը, անդամ Արեւելեան բիւրոյի:
2.- Դելկասէ - Ֆրանսայի արտ. գործոց նախարար: Տրամադրուած գումարը Ֆրանսայի հիւպատոսի միջոցաւ իբրեւ նպաստ պիտի բաշխուէր Տարօնի եւ Սասնոյ աղէտեալներուն:
3.- Աւետիս Ահարոնեանի:
4.- Նիկոլ Դումանին, որ իր խումբով կռուի բռնուելով սահմանագլուխին՝ չէր յաջողած օգնութիւն հասցնել Սասնոյ կռուողներուն:
5.- Խօսքը «Դրօշակ »-ի համարներու առաքումին մասին է:
6.- Անդրէեւ եւ Բոգոսլաւսկի. առաջինը Գանձակի փոխնահանգապետ, երկրորդը Սուրմալուի գաւառապետ, երկու հայատեաց պաշտօնեաներ, որոնք ինկան դաշնակցական ահաբեկիչներու գնդակներէն:
7.- Կարսեցիք:

17.

էջ 34
Օգ. 8-ին [?]
Մ. Ք.(1)

Գաղտնիքներ հրատարակւած նամակներում. օր[ինակ] Մշոյ հասցէն:

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին յղուելիք գրութեան նիւթը, մէկ նախադասութեամբ: Ռոստոմի ձեռքով, գրուած թանձր սեւ մատիտով:

18.

էջ 34
Գրւած օգ. 8-ին
ԶՐԱԲԵՐԴ(1)

Դուք գանգատւում էք, որ ձեզ նամակ չենք գրում: Ձեզ գրւած [է] յուլիսի սկիզբին եւ 19-ին յուլիսի: Աւելի պահանջկոտ մի եղէք: Մի մոռացէք, որ հարկաւոր է եւ ուրիշ տեղեր գրել:

Չմոռանանք մի նկատողութիւն անել ձեզ: Երկրից ստացած նամակները դուք նոյնութեամբ հրատարակում եւ ցրւում էք զանազան կողմեր. այդպէս չի կարելի. պէտք է որոշ կէտեր դուրս հանել. դուք տրւած հասցէն եւս, որ խիստ գաղտնի պէտք է պահւի, այն էլ չէք հանում:

Մինչեւ հիմա տեղի ունեցած դէպքերի մասին պաշտօնական ոչ մի տեղեկութիւն չէր տրւում: Բացի մեզանից համարեա ոչ մի խօսող չկար, բայց վերջերս լուր հաղորդւեց Մոսուլի դէպքի մասին: Հեռագիր կար նաեւ մի յարձակման մասին, որ արել են մերոնք Մշոյ դաշտում թուրք զօրքի վրայ: Ռուսաց ներկայացուցիչների դերը ակնյայտնի է. նրանք գնացած են եղել, ինչպէս երեւում է, լոկ ոստիկանական նպատակով: Մամուլին կը տանք մի շարք փաստեր դրանց դերի մասին:

Դժոխքի (2) պատկերը ստացանք: Նամակ խնդրւում է գրել անպատճառ գաղտնագրով, երբ որոշ գաղտնիքներ կան:

Ալաշկերտի խմբերի մասին Մրգաստանից ոչ մի լուր չունենք: Դուրանի (3) հետ մենք անմիջական կապ ունենք: Գիտե՞ն արդեօք նրանք նոր թանաքի գաղտնիքը - 6.000ի մասին կարգադրութիւն կը լինի:

Նոր մխիթարական լուրն այն է, որ Դելկասէն ընդունեց Քիյառի առաջարկը ֆրանսիական հիւպատոսի միջոցով նպաստ տեղ հասցնել արկածեալներին: 30.000 ֆր. արդէն փոխադրւած է այդ նպատակով:

Ընդհանրապէս մեր խնդրով հարկ եղածին չափ չեն զբաղւում: Դրա պատճառներն են 1) ամառւայ արձակուրդները. հիմա բոլորը ցիր ու ցան եղած զանազան տեղեր հանգիստ են վայելում. 2) Ռուսաստանի գործերը, որ կլանել են ընդհանուրի ուշադրութիւնը: Անդրէեւի, Բոգոսլաւսկու սպանութիւնները բաւական նշանակութիւն ունեցան ի շարս միւս դէպքերի: Ցաւում ենք միայն, որ մեզ մինչեւ այժմ ոչ մի տող չգրւեցաւ:

Ապագայ ձեռնարկների մասին մեր կարծիքը գրել ենք եւ Մ. Ք. եւ Ոսկ[անապատ]: Անհրաժեշտ է այնպիսի մի հարւած, որ ստիպւած լինեն խօսել:

Կաթողիկոսի պատւիրակները հիմա Լոնդոն են: Պարիզի ընդունելութիւնը լաւ է եղել:

Անտոնը (4) տեղ է հասել: Միայն դէս ու դէն չխօսէք նրա մասին, չտարածւի:

Մրգաստանից ստացանք մի թղթակց[ութիւն] Երկաթի կռւի մասին: Այդ թղթակցութիւնը թէեւ տպում ենք, բայց կասկածում ենք ճշմարտութեանը: Ուրիշ տեղեկութիւնների նայելով քարայրի մէջ պայթած ռումբերից սպանւել են ոչ թէ քրդեր, այլ մեր ընկերներից 9 հոգի: Ի՞նչ լուր ունէք նրանց մասին:

1.- Զրաբերդ-Կարսի սահմանուած գրութիւն:
2.- Հրայր Դժոխք, նահատակուած Սասնոյ ապըստամբութեան օրերուն:
3.- Տարօնի:
4.- Սիմոն Զաւարեանը:

19.

էջ 34
Գրւած օգ. 10-ին
ԲԷՅՐՈՒԹ

Նախորդ նամակը հաստատում ենք, 2 օգ.(1):

Այնթապ գտնւող Աւօն, որ մի լաւ ոյժ է, բերել տայ, կամ յարաբերութեան մտնի:

Պահեստի մասին գրւած է: Ինքս կ'երթամ:

Ուղարկւած է՝ անիշխ[անական] գրքոյկներ եւ գիւղատնտեսական գիրքը:

Հնչակեանների (հին) կողմից այստեղ են գալու երկու հոգի. մէկը Գրիգոր Վարդանեանը (Կեդր[ոնի] անդամ), միւսը Ռուբէն անունով մի գործիչ: Այդ Ռուբէնը եկած է երեւի այդտեղ եւ տեսնւել Դոկտորի հետ: Գնացել են Եգիպտոս, համաձայնութիւն գոյացնելու համար, սպասել են քո(!) գալուն (անունդ էլ գիտեն!), որպէս Պատասխանատու մարմնի անդամի եւ իմանալով, որ ուրիշ ճանապարհով տեղ ես հասել, վճռել են գալ այստեղ բանակցութեան համար: Աստուած գիտէ, թէ այդ բոլորը ինչպէս են իմացել: Ասենք, զարմանալի կը լինէր, եթէ չիմանային: Ախ, այս մեր լայնասրտութիւնը! ... Թափառիկը(2) մեզ ուղարկել է իրենց համաձայնութեան պատճէնը, որ մի տեսակ դաշնագիր է (առաջ բերել կէտերը): Մեր կարծիքը նոյնպէս կը յայտնենք: Առաջին կէտը անընդունելի է, որովհետեւ աւելորդ է: Ոչ մի անունի պէտք չկայ, եթէ համաձայնենք լուռ կերպով պատրաստւել, այնպէս որ նոյնիսկ մեր օժանդակ մարմինները չիմանան մեր համաձայնութեան մասին: Իսկ վերջում՝ գործի ժամանակ կարելի է ասպարէզ գալ երկու մարմինների միացեալ անունով: Երկրորդ կէտի պահանջը անբնական է, քանի որ ոչ մի գործիչ յայտնի չէ միւս կուսակցութեան: Դա կարող է որոշել միայն գործնական կեանքը: III-ը պարզ հետեւանք է արդէն համերաշխ գործակցութեան: IV-ը արհեստական. ով ինչ ունի, թող այն բերի: Դաշնակցութիւնը անցեալներում նոյնանման դէպքերում դրանով է ղեկավարւել: Այս կարծիքը կը լինի Փաշայ[եանի] անհատական կարծիքը:

1.- Նամակը յայտնապէս ուղղուած է Սիմոն Զաւարեանին, ինչպէս էր նախորդ՝ 2 օգոստոսի գրութիւնը, դարձեալ Պէյրութ, ուր կը գտնուէր Ս. Զաւարեան:
2.- Թափառիկ՝ ծածկանունն է Եգիպտոսի կուսակցական պատասխանատու գործիչ տոքթ. Կարապետ Փաշայեանի: Քիչ անդին յիշուած համաձայնութեան կէտերը չկան սեւագրութեան մէջ, անոնք պիտի աւելցուէին գաղտնի թանաքով արտագրութեան մէջ:

20.

էջ 38-39
Գրւած օգ. 12(1)
Մ[ԵԾ] Ք[ԱՂԱՔ]

Սալմաստի դատաւորի առաջարկը:

Ամէն տեղից գանգատւում են, որ Դրօշակ չեն ստանում: Յանցաւորը դուք էք, որ ժամանակին մարդ չէք ուղարկում ապրանքը ափից(2) վերցնելու: Վրէժից մեզ գրում են, որ կանոնաւոր կերպով իրենք ափ են հասցնում:

Մեզ համար ոչ մի դժւարութիւն չկայ թերթերի թիւը աւելացնել: Դուք մեզ գրեցէք, թէ ուր որքան պահանջ կայ:

Կանոնագիր ուղարկեցինք 14 հատ Սարուստանի(3) համար: Ամէն մէկ կոմիտէի մէկ հատ:

Առաքելը ճանապարհից ուղարկել է մեզ ձեր ապսպրանքների եւ հարցերի մի շարք: Ահա նրանց պատասխանը:

1) Կնիքներ ուղարկւած են արդէն եւ դուք ստացել էք: Գրեցէք, թէ որքան է պակաս: 2) Հիմա բրոշիւրներով զբաղւելու ժամանակ չկայ, քիչ ենք. եղածներն էլ յոգնած, հիւանդ: Ղարիբին(4) շտապեցրէք: 3) Ուրիշ կուսակցութիւնների ծրագիրներ կ'ուղարկենք: 4) Ժողովի կազմած կանոններ տպագրւած են արդէն, ուղարկւած են: Վրէժից ձեզ կ'ուղարկեն 14 հատ, ամէն մէկ մարմին մի մի հատ: 5) Սասուն դրամ կարելի է ուղարկել. Դելկասէն(5) յանձն առաւ եւ արդէն 30.000 [ֆրանք] փոխադրել ենք: 6) **Ստէորոտիպի**(6) մասին կը մտածենք: 7) Պայթուցիկ նոր նիւթ կայ, յարմար տեղափոխութեան համար եւ դիւրութեամբ պատրաստւող: Դրա մասին՝ յետոյ, երբ մեզ կը յայտնեն: 8) Թորգոմի(7) դժբախտ վախճանի մանրամասնութիւնը եւ դիակների լուսանկարը ստացանք: Կը գրենք թերթերին: 9) **Տաքտիկի** մասին արդէն գրւած է նախընթաց նամակում. ինչպէս նաեւ Ոսկանապատ: Հարկաւոր է մէկ, բայց այնպիսի հարւած, որ ստիպւած լինին խօսել: Բիկով-ը(8) անպատի՞ժ պէտք է մնայ. ի՞նչ են մտածում: Քաղաքական աշխարհում մի առանձին բան չկայ:

Այս որպէիս ստացանք համառ[օտ] տեղեկութիւն Ալաշկերտի դէպքերին Բարսեղեանի մի-երկու տողով: Գանգատւում էք, որ նամակ չենք գրում: Աւելի քան զարմանալի է: Ձեզ գրւած է՝ յունիս 30 (Լօռ. հասցէով), յուլիս 3 (տիկ. Թաւրիզեանի ձեռքով), յուլ. 14-ին (Լօռ. հասցէով), մէկ նամակ Ղարդուշի[?] ձեռքով, օգ. 3 (բանկի): Չենք հաշւում Ոսկ[անապատ] գրւածները, որ խնդրել ենք ձեզ եւս հասցնել: Դո՞ւք էք գանգատւում, որ ձեզ չհայհոյենք ձեր լռութեան մասին, կամ Բարսեղեանի գունագեղների(9):

Զրաբերդ հաղորդել. 1) որ իրենց ուղարկած լուսանկարի (դիակների) ծրարում պակաս էին երկու կազակների նամակները:

2) Մեր նամակը ճիշտ ժամանակին են ստացել: Մեր դրած թւականը (յուլ. 19) եւրոպական է(10): Դարձեալ կրկնում ենք, որ իրենց նամակները գաղտնի թանաքով գրեն:

1.- Թուականին տակ փակագծով կայ անունը Եւանգուլ[եան]ի, որ, ըստ երեւոյթին, եղած է նամակը Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին տանողը կամ ուղարկողը. եւ կամ Թիֆլիսի մէջ հասցէ մը:
2.- Ափ-ը (բնագրին մէջ ոչ գլխագիր) կուսակցական ծածկանուն-կեղծանուն է: Այդպէս կը կոչուէր Արաքսի ափէն ոչ հեռու, պարսկական սահմանէն ներս գտնուող Ս. Ստեփանոս (Նախավկայ) վանքը՝ Դարաշամբ վանքապատկան գիւղով: Ռուս-պարսկական սահմանագլուխի այս կէտը անցքերէն մէկն էր դէպի Անդրկովկաս եւ հակառակը՝ կուսակցական հրատարակութիւններ, զէնք եւայլն փոխադրելու համար: Վրէժը՝ Ատրպատականն է:
3.- Սարուստան - կուս. ծածկանուն Ռուսիոյ եւ մասնաւորաբար Կովկասի:
4.- Աւետիս Ահարոնեանին:
5.- Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը:
6.- Տպագրական միաձոյլ կաղապար, **քլիշէ** հանելու եւ բազմաթիւ օրինակներով տպելու համար:
7.- Թորգոմը ծածկանունն է Թումեանց Թումանի:
8.- Ռուսատառ: Բիկովը Օլթիի ռուս սահմանապահ զօրքի հրամանատարն էր, որուն հրահանգով կոտորուած են Թորգոմի խումբին մարտիկները:
9.- Ակնարկութիւն Բարսեղեանի (բժ. Յովսէփ Տէր Դաւթեանի) ձեռագրին անընթեռնելիութեան:
10- Այսինքն նոր տոմարով: Յայտնենք, որ նոր (եւրոպական) եւ հին (Արեւելքի մէջ գործածուող) տոմարներուն մէջ 13 օրուան տարբերութիւն կար: Նոր տոմարով օգոստոս 15-ը, օրինակ, հին տոմարով կը համապատասխանէր օգոստոս 2-ին:

21.

էջ 41
Օգ. 17 (1)
ԲԱԹՈՒՄ

Ուղարկւած թերթերի մասին (No 3 եւ 7) (1):

1.- Թիւ 3-ը եւ 7-ը կը վերաբերին հաւանաբար «Դրօշակ»-ի առաքուած համարներուն (1904):

22.

էջ 43-45
Օգոստ. 21
ՄՈՒԾ

Կասկածում էինք, թէ մեր նամակները տեղ չեն հասնում. այդ էր պատճառը, որ յուլիս 10/23 ից ի վեր նամակ չենք գրել ձեզ: Ձեր վերջին (յուլիս 13/26 նամակը) մեզ ապահովացրեց: Ձեր բոլոր նամակները ստացւում են, միամիտ եղէք. միայն մենք էլ ձեզ ենք ուզում նկատել, որ զգուշութեամբ գրէք - նախավերջին նամակը (յուլ. 7) առանց բանալու կարելի էր կարդալ(1): Լուծւածքի մէջ քիչ քանակութեամբ ալկօօլ լցրէք:

Ձեր ուղարկած զոհերի ցանկը թարգմանեցինք եւ ուզում էինք նախարարներին ուղարկել, բայց պահեցինք, որովհետեւ տեսանք, որ կարեւորութիւն չեն տալու: Ձեր տուած տեղեկութիւնների հիման վրայ Կովկասի մեր ընկերները հեռագրել են անգլօ-հայկական մասնախումբի նախագահ Ստէֆանսօնին, թէ 7.000 հոգի է կոտորւել: Ստէֆանսօնը անմիջապէս այդ լուրը հաղորդել է նախարարին, որը պատասխանել է քաղաքավարի կերպով, թէ այդ լուրի հաստատութիւնը ինքը չունի, այսինքն թէ՝ լուրը սխալ է: Մեզ եւս ձեր հաւաքած թիւերը կասկածելի են թւում: Չէ՞ որ ինքներդ էք խոստովանում, որ դեռ կան ընտանիքներ, որոնք իրենց կորուստի քանակը չգիտեն: Մեր վարկը պահելու համար անհրաժեշտ են ճիշտ թւեր: Ձեր նամակներից մի տեղեկագիր կազ[մ]եցինք եւ ուղարկեցինք կաթ[ողիկոսի] պատւիրակներին՝ որպէսզի տեսակցութիւնների ժամանակ իրենց կողմից շեշտեն մի քանի կէտերի վրայ, օրինակ Մշոյ շրջանում մշտական հիւպատոսներ պահելու անհրաժեշտութեան վրայ:

Դելկասէին յանձնել ենք Quillard-ի(2) միջոցով նորերս մի խոշոր գումար, 30.000 fr. Սասնոյ արկածեալներին բաշխել տալու համար: Դելկասէն տատանումից յետոյ յանձն է առել այդ բանը, բայց ինչպէս երեւում է, ուղարկելը դեռ ուշանալու է: Այսօր Quillard-ից ստացանք մի նամակ, որով նա յայտնում է, թէ անմիջապէս իմաց կ'անի ուղարկելու օրը: Յոյս կայ եւ ուրիշ գումարների: Միայն ինչպէ՞ս անել, որ ձեր ձեռքը մի յատուկ գումար ընկնի: Պոլիս փոխադրած մի գումար վերադարձնում են, դժւարանում են այլեւս ձեզ ուղարկել:

Կաթողիկոսի պատւիրակութեան մասին գրել էինք անցեալ անգամ: Պարիզում լաւ ընդունելութիւն է գտել. Լոնդոնում ընդունւել է Լանստանի(3) կողմից, սպասում են թագաւորի վերադարձին: Այնուհետեւ անցնելու են ուրիշ երկիրներ:

Ձեր ներկայացրած պահանջները տպագրում ենք Դրօշակում: No 8. կ'ուղարկենք եւ այլ թերթերի: Երրորդ ստորագրութիւնը փոխեցինք: Դեսպանների նոր ծրագրի մասին նոր բան չկայ, որ հաղորդենք. լռեցին, մի ինչ որ ոյժ խանգարեց: Դրութիւնը անորոշ է: Ամբողջի ուշադրութիւնը կլանւած է պատերազմով: Գուցէ կամաց կամաց պարզւի խնդիրը: Մեր վախը Ռուսաստանի կողմից է:

Գրեցէք, թէ իսկապէս որ կէտերում են զօրանոց կառուցանում: Ինչպէս երեւում է, դժւար պիտի լինի կառուցման առաջն առնել: Կառա[վարութիւնը] կարող է առարկել, թէ դա անում է ինքնապաշտպանութեան տեսակէտից: Գուցէ այնպիսի տեղեր են, որ հնարաւոր լինի ապագայում ձեռք անցընել, լաւ դիրքեր ու պաշար ձեռք բերել: Յամենայն դէպս դիմումներ անւում են:

Հարցնում էք, թէ ինչ ծրագրով պէտք է գործել հիմա:

Անծանօթ լինելով տեղական արդի պայմաններին, դժւարանում ենք որոշ կարծիք յայտնել: Յամենայն դէպս, մեր կարծիքով, խմբերի բոլոր գործերը պէտք է ունենան ոչ թէ յարձակողական գոյն, այլ պաշտպանողական: Մի հարց. չի՞ կարելի արդեօք անհատական **տեռորի** ձեռնարկել, փաշաների վրայ կամ այլ պատասխանատու անձանց: Վերջին տարին քանի՜ քանի՜ կարեւոր ուժեր զոհ գնացին, իսկ մի փաշա չսպանւեց: Երեւի ձեզ արդէն գրած կը լինեն Թորգոմի եւ Որսորդի խմբերի ցաւալի վախճանի մասին Օլթիի շրջանում, ինչպէս նաեւ Ալաշկերտ արշաւած խմբերի մասին:

Նամակը զատ պահարանի մէջ դնել. վրան գրել Մանուկին յանձնելի. դա դնել միւս պահարանի մէջ, որի վրայ միայն ֆրանսերէն գրուի. ոչ մի խօսք հայերէն:

Տեղեկութիւններ Վահանի, Հրայրի գործունէութեան, դերի մասին: Տեղեկ[ութիւններ] ընդհանրապէս նահատակ ընկերների, ժողովրդի միջից աչքի ընկնող քաջերի, հերոսական դէպքերի մասին եւայլն...

Գրւեցաւ օգ. 21

1.- Այսինքն՝ գաղտնի թանաքով գրուած նամակը առանց «լուծուածք» գործածելու՝ կը կարդացուէր:

2.- Դելկասէն Ֆրանսայի արտաքին գործոց նախարարն էր, Քիյառը՝ Pro-Armenia-ի խմբագրապետը (Փարիզ):
3.- Անգլիոյ արտաքին գործոց նախարարը:

23.

էջ 46-47
օգ. 24
ՊԷՅՐՈՒԹ(1)

Հաստատում եմ օգ. 10 եւ 12 նամակները: Անցեալ նամակներից մէկում գրել էի, որ Վարդանը(2) սպասում է քո նամակին, որպէսզի ճանապարհ ընկնի: Այսօր գնացողի հետ ապսպրեցի, թէ թող վեր կենայ գնայ. նամակը գրուած է այստեղ եւայլն: Հայկն էլ եկել է, ուրեմն գործը քիչ քիչ լաւանալու է:

Ուղարկած հաշիւներդ ստացանք: Ոչինչ չես գրել փողի խնդրի մասին. յուսով ենք լաւ կարգադրուած լինի:

Ամերիկայից հարց են տալիս. կազմակերպա՞ծ է արդեօք Լեռ[նավայրի] մարմինը, ուզում են յարաբերութեան մտնել ձեզ հետ: Մենք այդ հարցի մասին մի քանի բան գրեցինք, շեշտելով այն հանգամանքի վրայ, որ դժուար է երկրի մարմնի համար կապ պահպանել դրսի մի այնպիսի մարմնի հետ, ուր գաղտնապահութիւն ասուած բանը չկայ, ուր կուսակցական վիճաբանութիւնների շնորհիւ ամէն ինչ համարեա հրապարակի վրայ է: Խոստացանք նրանց փափաքը յայտնել ձեզ, ինչ որ կատարում ենք: Ամենամեծ գաղտնապահութիւնը պէտք է գործադրել Լեռ[նավայրի] վերաբերմամբ, որովհետեւ ոչ մի տեղ այնքան ներքին թշնամիներ չկան որքան այնտեղ: Նրանց մի նամակը, կամ յանուն ժողովրդեան շահերուն արած մի յայտարարութիւնը, բացած մի խնդիրը բաւական է տակն ու վրայ անելու ամբողջ գործը:

Մարից (3) դեռ լուր չունենք: Չգիտենք, ինչ եղաւ:

Նոր ընդհարումներ տեղի են ունեցել Մշոյ դաշտում: Կռիւների ժամանակ մերոնք ջարդել են, բայց ինչ արած, որ դրա փոխանակ թալանւում են անզէն գիւղեր: Լօրիսը (4) դեռ Լոնդոն է: Քո արած նկատողութիւնները ի զուր են. զարմանալի մարդ է եղել: Մի քանի բաներ էինք գրել, նեղացել է: Դէհ ինչ արած, նեղանայ, չնեղանայ, պէտք է գրենք, ինչ պէտք է անենք: Գլխաւոր պակասութիւնը նրանումն է, որ ուզում է մենակ գործել: Չերազի մասին գրել էինք, ասել էինք, թէ կաթողիկոսի կամքն է, որ նրան էլ առնելով յարգած կը լինենք կաթողիկոսի կամքը եւայլն... Ոչ մի ծպտուն չհանեց: Եթէ հնար լինի, եպիսկոպոսներին էլ մի կողմը կը թողնի: Հիմա պատիրակները Լոնդոն են, սպասում են թագաւորի վերադարձին, բայց յոյս չունեն ընդունուելու:

Անդրէվին, Բոգոսլովսկուն սպանողները մերոնք են. կատարուել են եւ այլ **տեռորներ** Ղարս, Նախիջեւան: Ոչ ոք չի բռնուած:

30.000 fr. յանձնուած է Դելկասէին, որը յանձն առաւ բաժանել տալ Սասունի եւ Մշոյ կարօտեալներին:

Գրուեցաւ օգ. 24-ին:

1.- Գրութեան աւարտին սեւ թանձր մատիտով եւ Ռոստոմի ձեռքով՝ «գրուեցաւ օգ. 24ին»: Նամակը ուղղուած է Ս. Զաւարեանին, որ կը գտնուէր Լեռնավայր-Կիլիկիա:
2.- Խանասորի Վարդանը (Մեհրաբեան Սարգիս), որ Զաւարեանի հետ անդամ էր Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու մարմնին (1869-1931):
3.- Մար՝ Տէր Մարտիրոսեան Միքայէլ, Կիլիկիոյ հին ու նուիրեալ գործիչներէն, որ 1899-էն ի վեր բանտարկուած կը մնար Մարաշ, ուրկէ 1904-ի հոկտեմբերին միայն պիտի ազատուէր եւ անցնէր Եգիպտոս:
4.- Յովհ. Լորիս Մելիքեան, անդամ Արեւմտեան բիւրոյի եւ պատասխանատու Եւրոպայի մէջ Հայ դատի աշխատանքներուն:

24.

էջ 48-51
Գրուեցաւ օգ. 27
Մ[ԵԾ] [ՔԱՂԱՔ](1)

Այսօր ստացանք Բարսեղեանի նամակը, որի վրայ 4-5 ժամ տանջւելուց յետոյ, հազիւ հազ կարողացանք միայն մի քանի բան հասկանալ 1) որ Բոլղարիա անցած ուսանողը պարապ է նստած եւ 2) որ Բժիշկը մեզ մօտ է գալիս: Թախանձագին խնդրում ենք նամակագրութիւնը յանձնէք մի այնպիսի մէկին, որի ձեռքը կարելի լինի դիւրութեամբ կարդալ: Բարսեղեանի հասարակ թանաքով գրածները անկարելի է կարդալ, ուր մնաց գաղտնի թանաքով գրածը: Աւելի լաւ չէր եւ Ռուբէնի(2) նամակը, Ոսկանապատից գրուած: Նամակ խօ չէր, ասես մօտ 500 տարեայ տապանագիր լինէր: Թուղթն էլ պէտք է փոխել. դա քիչ թէ [շատ] ծծող պէտք է լինի, որպէսզի քսելիս գրուածը չսրբուի, տեղը մաքուր մնայ: Ուզո՞ւմ էք, եկողի հետ թուղթ ուղարկենք:

Ռոստոմը բոլորովին մեղք չունի, որ ուսանողը պարապ է նստում: Նրան յանձնարարական էր տուած, ու նա գնացել է Վառնա, ուր այդ ժամանակ կային Մարտիրոսն(3) ու միւսները: Զարմանալի է, որ նրանք ոչինչ չեն արել: Էգուց կը կարգադրւի այդ խնդիրը:

Անցեալ նամակներից մէկում խնդրել էինք յայտնել, ստացաւ է արդեօ՞ք Կոնստանցայից եկած չէքը... Մինչեւ ստացւելու մասին լուր չտաք, ախր չենք կարող ցանկը տպագրութեան յանձնել:

Լեւոնը (Գ.)(3) առաջարկում է, որ իրեն թոյլ տրւի օսմանեան դեսպաններից մէկին գլորել: Նրա առաջարկին մենք համամիտ չենք: Եթէ նա որոշել է անհատապէս մի գործ կատարել, իրեն զոհելով, կարծում ենք, որ կարելի է աւելի նպատակայարմար ձեռնարկներ առաջարկել: Եթէ մի յարմար գործ ի նկատի ունէք, որ նա կարողանայ մենակ կատարել, կամ առառաւելն մի օգնականով, գրեցէք, որպէսզի առաջարկենք իրեն: Նա սպառնում է վիշապցիների(4) հետ չհաշտւել:

Ձեր լուրջ ուշադրութիւնն ենք դարձնում հետեւեալ հարցի վրայ: Ղարիբը(6) չի գալիս. չգիտենք, չի գալու բնաւ, թէ յետաձգում է: Յոնանին(7) միտք կար այստեղ պահել, բայց չեղաւ. Էլլէնի(8) գլխաւոր առարկութիւնը այն է, որ բիւրոյի միւս երկու անդամները, Վիշապի եւ Լեռնավայրի կազմից, պէտք է լինեն տաճկահայեր: Եւ որովհետեւ նա Վիշապ էլ չի կարող մտնել Օրտանսի(5) հետ, ինչպէս ենթադրում էին, վերջինիս հիւանդութեան պատճառով, մնացել է երկուսի արանքում: Կարելի էր նրան առաջարկել Ղարիբի փոխարէն: Բայց սրա համար պէտք է սպասել Ղարիբի վերջնական որոշման: Քանի անգամ հարցրել ենք եւ խնդրել, որ ինքը գրի, թէ ինչ դժւարութիւններ կան իր գալուն: Բացի դրանից Ռոստոմն էլ գուցէ ստիպւած լինի հեռանալ ընտանիքի պատճառով, որը ամառը վերջանալուց հաւաքուելու մի տեղ չունի: Այսպէս թէ այնպէս Ղարիբի վերջնական պատասխանը անհրաժեշտ է:

Մենք ձեզ արդէն հեռագրել էինք, թէ Դելկասէն ընդունել է առաջարկը: 30.000-ը փոխադրել ենք եւ սպասում ենք փոխարէնը ձեզանից: Հարուստներից մի բան չառա՞ք: Ի միջի այլոց ի՞նչ արդիւնք ունեցան ձեր դիմումները: Այստեղ միայն մէկն է երեւացել, որ Փ-ի(9) կողմից առաջարկում է 10.000 fr.! Ի՞նչ պէտք է լինի սրա վերջը: Ցուցական մարմնի գրելով Նաւահանգըստում դարձեալ շարունակում են հին ձեւով ժողովարարութիւն(10) եւ մեծ գումար են հաւաքել: Պահանջում են այդ գործի քննութիւնը:

Սպասում ենք Ալաշկերտի դէպքերի մանրամասնութեան, ինչպէս նաեւ Դումանի կռւի:

Օլթիի դիակների պատկերները կը ցրենք մեծ քանակութեամբ բոլոր երկիրներում ֆրանսերէն տեքստով(11):

Ստացանք այլ եւ այլ ճանապարհներով ուղարկած բոլոր թղթերը եւ հաշիւները:

Բժիշկը(12) ի՞նչ նպատակով է գալիս այս կողմերը. պատւիրակութեան համար անյարմար է: Երկու բժիշկներ, երկուսն էլ հայերէն չիմացող - չափազանց անյարմար կը լինի:

Այս անգամ Դրօշակ 500 օր[ինակ] աւելի կ'ուղարկենք: Անհրաժեշտ է կանոնաւորել Վրէժի գիծը: Այնտեղից գանգատւում են, որ Ոսկանապատից եկող տանող չի լինում(13):

1.- «Բանկ»-ը Թիֆլիսի մէկ դրամատունն է, որուն հասցէն կ'օգտագործուէր նամակագրութեան համար: Գրութեան վերեւ նշում կայ «ստացուած»:
2.- Խօսքը հաւանաբար կը վերաբերի Պաքուի (Ոսկանապատ) Կեդր. կոմիտէի անդամ Աբրահամ Գիւլխանդանեանի, որուն ծածկանուններէն մէկը Ռուբէն էր:
3.- Մարտիրոս Մարգարեան, - Ցուցական մարմնի յայտնի անդամներէն Սաֆոն է:
4.- Լեւոնները բազմաթիւ են. այս մէկը, անունին կողքին փակագծի մէջ Գ. տառէն հետեւցնելով, պէտք է ըլլայ Ցուցական մարմնի անդամակցութենէն դադրած եւ Կովկաս անցած Գիւլումեան Լեւոնը:
5.- Այսինքն Պոլսոյ մէջ (Վիշապ) գործող Ցուցական մարմնի այն անդամներուն հետ, որոնք կը ծրագրէին Սուլթան Համիտի մահափորձը:
6.- Ղարիբը Ա. Ահարոնեանն է:
7.- Յոնան Դաւթեան, Դաշնակցութեան առաջին սերունդի գաղափարական անձնաւորութիւններէն, որ եղած է Բիւրոյի անդամ եւ «Դրօշակ»-ի խմբագիր: Օրտանսը՝ Յոնանի զուիցերուհի կինն է:
8.- Քրիստափոր Միքայէլեանի: Վիշապը Պոլիսն է, Լեռնավայրը՝ Կիլիկիան:
9.- Փ-ն հաւանաբար «Փոթորիկ»ն է,- բռնի հանգանակութեան ձեռնարկ, որ միայն Ցուցական մարմնին էր արտօնուած:
10.- Ժողովարարութիւն կը նշանակէր հանգանակութիւն: Նաւահանգիստը Պաթումն է:
11.- Ծանօթ է, որ Սասնոյ օգնութեան փութացող Թուման Թումեանցի (Թորգոմ) Որսկան խումբը կոտորուած էր Օլթիի մօտ ռուս սահմանապահ զօրքին կողմէ: Այս վերջինին հրամանատարը՝ գնդապետ Բիկով՝ զոհուած ֆետայիներու դիակները հաւաքել տալով՝ նկարուած էր անոնց հետ: Ակնարկութիւնը եւրոպական մամուլին մէջ այս լուսանկարին հրատարակել տալուն կը վերաբերի:
12.- Հաւանաբար խօսքը կը վերաբերի բժ. Յակոբ Զաւրիեւի (1865-1920):
13.- Վրէժը Ատրպատականն է, իսկ Ոսկանապատը՝ Բագուն:

25.

էջ 51-53
Օգ. 28-ին
Գրուած Տէր-Թոմ. ձեռքով(1)
ԹԻՖԼԻԶ

Մ[եծ] Քաղաքի եւ Ոսկան[ապատի] նամակները լաւ չեն գրւում:

Հաշիւների կանոնաւորում: Մեր պարտքերը թող վճարեն. էգուց էլ որ պահանջներ են անելու, որտեղի՞ց գոհացում տանք: Մեր հաշւով դուք պէտք է փոխադրէք դարձեալ մօտաւորապէս 20 հազ. ռուբլի: Որովհետեւ հիմա Վասպուրականի պահանջները սաստկանալու են, փամփուշտների մեծ քանակութիւն պէտք կը լինի փոխադրել, իսկ Ընդհ. ժողովը շատ սահմանափակ գումար է յատկացրել այդ շրջանին. պէտք է մի ճար մտածել: Որքան մեզ յայտնի է, Նաւահանգիստը իր նախահաշւից շատ աւել գումար պէտք է ունենայ իր տրամադրութեան տակ. այդ աւելորդը կարելի է յատկացնել Վասպուրականի չնախատեսւած պահանջներին: Առաւելապէս պէտք է զոռ տալ փամփուշտների փոխադրութեան: Հիմա երկրի մէջ բաւականաչափ հրացաններ կան, անպէտք ընկած, փամփուշտների պակասութեան շնորհիւ:

Որքան յիմար պիտի լինէր տղաների դրութիւնը Մշոյ դաշտում, եթէ Շամից փամփուշտը չհասնէր: Ինչո՞ւ մի քանի տեղ պահեստներ չէին պատրաստւած...

Այսօր թերթերում կարդացինք հիւպատոսական տեղեկութիւններ Պոլսից, որ Մշոյ դաշտում եւ Բիթլիսում տեղի են ունեցել 2 մեծ ընդհարումներ: Տաճիկների կողմից կայ 1 սպանւած 6 վիրաւոր: Մերոնք առանց կորուստ կրելու անցրեւութացել են (եղել են 40 հոգի):

Մուշ կը փորձենք դրամ հասցնել ուղղակի մերոնց ձեռքը՝ երկու ճանապարհով, որ ցոյց է տուել Տատրակը(2):

Յայտնեցէք Զրաբերդ եւ ուրիշ տեղեր, որ արտասահման հայերի հասցէներով ուղարկւած նամակները բաց են անում, կարդում, յետոյ մեզ ուղարկում: Եթէ մի գաղտնի գրութիւն կայ, աւելի լաւ է ուղարկել օտարների հասցէներով, որոնք նոյնութեամբ մեզ են հասցնում:

Այստեղ գալու է Մաշտոց վարդ[ապետը]. դա Ամերիկայի մեր կազմակերպութեան անդամն է: Ռ[ոստոմը] խոստացել էր դրա հետ նամակ ուղարկել ձեզ, բայց հասցնել չկարողացաւ(3):

Յ[ոնան]ի պատմելով Ոսկանապ[ատ] եւ այդտեղ ընտրութիւններ են կատարւել Դ.ի համար: Դրանից առաջ ընդհ. ժողովը դրա մենաշնորհը թողել է ցուցական մարմնին: Եթէ ընտրւածներ կան,թող համաձայնեն Ցուց. մարմնի հետ եւ ըստ այնմ դերերը բաժանեն:

Հեռագիրների առթիւ:

Թերթ (No 8) ուղարկած ենք՝ այս անգամ 420 աւելի Վրէժի գծով: Նաւահանգստի գծով նոյնպէս կ'աւելացնենք: Խնդրում ենք Ոսկանա[պատի] մարմնից յատուկ հոգ տանել փոխադրութեան կանոնաւորման:

Ճերմախան[?] վաճառ[ատան] տղաներին փոստով թերթ հասնում է: Կարող էք նրանցից վերցնել:

Ֆինլանդացիների դիմումի մասին գրել էինք. համարեա բոլոր այլազան տարրերը տուել են իրենց համաձայնութիւնը համերաշխութիւն հաստատելու: Ձեզանից պատասխան չեկաւ. շուտով նրանց ներկայացուցիչը գալու է Ժընեւ. եթէ մինչեւ այդ օրն էլ չեկաւ, ձեր կողմից տալու ենք համաձայնութիւն:

Դիակների պատկերը ֆրանսերէն բացատրութիւնով կը հրատարակենք եւ կը տարածենք շուտով:

Պատւիրակները հիմա Պարիզ են վերադարձել: Անգլիական թագաւորը շուտով չի վերադառնալու Լոնդոն:

Ի՞նչ արիք Սալմաստի դատաւորի առաջարկի առթիւ: Կոզակների նամակները ստացանք:

Լեւոնի մասին կրկնել: Կոնստանցայի չէքը:

Օգոստոսի սկզբից գրուած է նամակ Մ. Ք. (օգ. 3 բանկ), Ոսկանապատ (օգ. 6), Զրաբ[երդ] (օգ. 8), Մ. Ք. (օգ. 12 Եր[եւան]), Նաւահ[անգիստ] (օգ. 17), Մ. Ք. (օգ. 27 բանկ):

Գրաշար լաւ(4):

Վարդանը(5) թող ճանապարհ ընկնի:

1.- Թիֆլիս՝ Արեւելեան բիւրոյին ուղղուած նամակ, նոյն Ռոստոմի ձեռագրով «գրուած Տէր Թոմ. ձեռքով», ինչ որ կը նշանակէ, թէ վերջինս գաղտնի թանաքով արտագրողն է:
2.- Տատրակը ծածկանունն է Մշոյ Գեղամին, Տէր Կարապետեան:
3.- Մաշտոց վարդապետ - դաշնակցական, հետագային կարգաթող - իսկական անունը Ներսէս Փափազեան (1872-1915):
4.- Երեւի լաւ գրաշար կը սպասեն կամ կը պահանջեն Թիֆլիսէն:
5.- Խանասորի Վարդանի մասին է, Մեհրաբեան Սարգիս:

26.

էջ 54
օգ. 31
ԲԷՅՐՈՒԹ(1)

Վարդանը(2) եթէ գայ, հարկաւոր կը լինի մի երրորդը եւս մարմնի կազմը լրացնելու համար: Պէտք է աշխատել, որ գոնէ դա տաճկահայ լինի: Եթէ ուզում ես, այստեղից մի վերջին դիմում անենք Ցիւրիխցիներին, իմանանք նրանց վերջին որոշումը, եւ եթէ հրաժարւելու լինեն, իմ կողմից կ'առաջարկէի Տիրանին, որ երկար տարիների ընթացքում վարժւել է կազմակերպական գործերում:

Հնչակեանները դիմեցի՞ն, ի՞նչ պատասխանեցիք: Պէտք է զգոյշ լինել. մեր աջակցութեամբ մի 14 հոգուց խումբ անցկացրին Ալաշկերտ. հիմա այնպիսի զուռնա են փչում, որ ուղղակի անտանելի են. նոր դարագլուխ բացւած են համարում...

Վաղուց է պատրաստ եմ գնալու Մարսէյլ, բայց ձեր բախտից հիմա գործադուլ է. նաւերը չեն բանում. վախենում եմ, մի գուցէ գործադուլի ժամանակ զէնքեր գնելը առանձին ուշադրութիւն դարձնի. գուցէ յամենայն դէպս էգուց գնամ:

ՌՈՍՏՈՄ

Մշոյ դաշտում զոռ կռիւներ են սկսւել հիմա. տղաները լաւ են: Հիմա միջոց կայ ուղղակի իրենց ձեռքը դրամ հասցնելու: Ափսոս, որ առաջ չգիտէինք, 30.000 fr.ը հիւպատոսի տրամադրութեան տակ դրինք:

1.- Ս. Զաւարեանին ուղղուած նամակ:
2.- Վարդանը Խանասորի արշաւանքի ծանօթ հրամանատարն էր (Մեհրաբեան Սարգիս), որ Ս. Զաւարեանի հետ անդամ էին Լեռնավայր-Կիլիկիոյ Պատասխանատու մարմնին:

27.

էջ 55
Օգ. 31
ՈՍԿԱՆԱՊԱՏ(1)

Մի ընդարձակ նամակ ենք ուղարկել եկւորի ձեռքով, գրուած օգ. 28-ին: Ստացանք Ռուբէնի նամակը, որ բոլորովին չկարողացանք կարդալ, բացի մի երկու խօսքերից: Բայց հիմա լաւ միջոց ունենք, որ ձեզ եւս յանձնարարում ենք - նամակները բացէք silicate de soude-ով: Դա թանձր հեղուկ է, որ հրաշալի է բաց անում: Սրանից յետոյ յոյս ունենք ամէն տեսակ գրուածները բանալ, եթէ միայն չոր գրչով գրուած չլինեն: Վերջին դեղով փորձեցինք այսօր եւ մի քանի բան կարողացանք ջոկել Ռուբէնի գրածից 1) Դումանը չի ուզում գրել, թէեւ հայհոյել էք, դուք էք խոստանում գրել, 2) Լօթիքը(2) ամբողջութեամբ չեն փոխադրում թերթերը (էի, թող երկու, երեք անգամից բերեն. այս անգամ 500 օրինակ աւել ենք ուղարկել), 3) որ զահրումար թանաքը ծծուում է. քիչ թող ծծուի, վնաս չունի. միայն եթէ թուղթը բարակ է, միայն մէկ երեսին գրէք: Ուրեմն խնդրենք կրկնել բոլոր կարեւոր կէտերը:

Այդտեղ է գալու Համոյին(3) ծանօթ մի ռուս տիկին, որը նորից ուզում է նրան տեսնել: Կը դիմէ Նիկոլի հասցէով:

Անունն է Աննա Նիկոլայեւնա(4):

1.- Բագու (Ոսկանապատ) ուղարկուած այս նամակի աւարտին նոյն թանձր սեւ մատիտով՝ «Չոփուռեանի հասցէով»: Չոփուռեանը ծածկանունն է Թադէոսեան Լեւոնի (Պապաշա): Ռուբէնը՝ Գիւլխանդանեան Աբրահամն է:
2.- Ակնարկութիւնը «Դրօշակ»-ի համարները տեղ հասցնող պարզ, զուարթ, կերուխում սիրող, բայց քաջասիրտ երիտասարդներուն է:
3.- Համօ Օհանջանեանին:
4.- Ռուսատառ:

28.

էջ 56-58
Գրուած 4 սեպտ.
ՄՈՒԾ

Ստացանք ձեր յուլիս 27 եւ 21 նամակները, հաստատում ենք մեր օգոստ. 8/21 նամակը:

Եւրոպական թերթերում կարդում ենք, որ տաճիկ կառավարութիւնը Վահանի եւ Հրայրի(1) բռնուած նամակներով հաստատում է, թէ հայերն են գիւղեր հրդեհողները: Որքա՞ն ճիշտ է այս լուրը: Եւ եթէ ճիշտ է, ի՞նչ էր նպատակը: Սասունցիներն էլ, ինչպէս նաեւ հայ հոգեւոր իշխանութիւնը ամբողջ պատասխանատուութիւնը իբր թէ ձգում են ապստամբների վրայ:

Հեռագիր կայ նոյնպէս, թէ IV զօրաբանակը ոտքի է հանւում: Կարեւոր է հետեւել զօրքերի շարժման երկրի մէջ եւ կանոնաւոր տեղեկութիւններ ուղարկել: Մի գուցէ կառավարութիւնը օգտւելով խառնակ դրութիւնից Ռուսաստանի հետ համաձայնած վերսկսի կոտորածները ուրիշ վայրերում եւս: Այս մասին հարկ եղած դիմումը կ'անենք մեր կողմից:

Ձեր ներկայացրած պահանջները յայտարարեցինք բոլոր կարեւոր թերթերին: Ընդհանուր տպաւորութիւնը լաւ է:

Տեղ հասա՞ւ արդեօք մեր յանձնած նպաստը: Վիշապի մասին գրել ենք եւ սպասում ենք պատասխանի. իսկ վաճառատան միջոցով փոխադրեցինք 3.000 fr. ձեր մատնացոյց արած վաճառականին յանձնելու: Ստանալուց խնդրենք անմիջապէս իմաց տաք: Pro-Armenia-ի վերջին համարում յայտարարւած են Սասունի մասնաժողովի անդամների անունները.- նրանց մէջն են Bertholet, նախկին արտաքին գործոց նախարար, Lavisse, Sully Prudhomme (արտագրել բոլորի անունները): Եթէ նւիրատւութիւնները ուշանան, այն ժամանակ մենք յատուկ դիմում կ'անենք մեր մարմինների աջակցութեան:

Թորգոմի(2) խմբին նահատակութեան լուրը ձեզ հասած կը լինի: Դիակների պատկերները, մի կարճ ֆրանսերէն բացատրութեամբ տարածել ենք ամէն կողմ: Տպաւորութիւնը մեծ է. մանաւանդ վրդովւում են ռուս տարրերը ռուս բռնակալութեան այդ արարքից:

Տղաներին մեր ջերմ համբոյրները: Թող ներկայ հանգամանքներում աշխատեն ամէն կերպ խոյս տալ ընդհարումներից, ուժերը խնայել, բայց միշտ պատրաստ կենալ: Անչափ ուրախ ենք, որ ընկերների միջեւ համերաշխութիւն է տիրում. յուսով ենք, որ այդպէս կը շարունակուի:

Թերթերում կարդացինք նոր ընդհարումների մասին. տեղեկութիւնները հիւպատոսական էին: Անհամբեր սպասում ենք մանրամասնութիւններին:

Pro-Armenia-ում տպագրւած է նոյնպէս ձեր ուղարկած կոտորածների ցանկը:

Ներկայ պարագաներում չ'արժէր թերթի համար վտանգւել. անոր ալ ժամանակը կու գայ. կարեւոր լուրերը ձեզ տալիս ենք եւ կու տանք: Ընկ. ջերմ բարեւներ(3):

4 սեպտ. 1904:

1.- Վահան - Տողրամաճեան Կարապետ՝ Դաշնակցութեան ներկայացուցիչը Սասունի մէջ եւ Հրայր Դժոխք, երկուքն ալ նահատակուած 1904 թ. Սասնոյ ապստամբութեան ընթացքին:
2.- Թումեանց Թումանի:
3.- Վերջին պարբերութիւնը «Ներկայ պարագաներում...»՝ Յարութիւն Գալֆայեանի ձեռագրով:

(*) Նկատի ունենալով յաւելուածի էջերուն սահմանափակ ծաւալը, այստեղ նկատի առած ենք «Վէմ» համահայկական հանդէսի յունուար-մարտի թիւին մէջ լոյս տեսած Ռոստոմի նամակներուն մէկ մասը միայն: Պահպանած ենք Ռոստոմի նամակներուն ուղղագրութիւնը:

ՂԵԿԱՎԱՐԻ ՌՈՍՏՈՄԵԱՆ . . .

Շարունակուած Ա. էջէն

- Կազմած է երգեցիկ խումբեր եւ ուսուցած ժողովրդային, յեղափոխական երգեր:

Դպրոցական օրերուն գործօն մասնակցութիւն բերած է ինքնազարգացման խումբերու:

- Ձերբակալուած է Վարշաւայի մէջ, երբ մասնակցած է բողոքի ուսանողական ցոյցերու: Աքսորուած է, Թիֆլիսի մէջ հաստատած տպարան:

- Մոսկուայի մէջ մասնակցած է հայեւռուս ուսանողական շարժումներու: Դարձեալ ձերբակալուած է:

- Մաս չէ կազմած ՀՅ Դաշնակցութեան առաջին Կեդրոնական վարչութեան, սակայն եղած է անոր աջ բազուկը: Կազմած է յեղափոխական խմբակներ, պատրաստած ու հրատարակած է թռուցիկներ, վարած է զինավարժութեան գործ, գործօն մասնակցութիւն բերած է ՀՅԴ Ծրագիրի պատրաստութեան՝ ՀՅԴ Ա. ընդհանուր ժողովին:

- Թաւրիզի մէջ եղած է ուսուցիչ, ապա մեկնած Ռումանիա եւ Ժընեւ, ստանձնած է «Դրօշակ»-ի հրատարակութիւնը՝ իբրեւ խմբագիր, գրաշար եւ նոյնիսկ ցրուիչ:

- Ազատուելով Ժընեւի «անշնչելի» մթնոլորտէն՝ 1895-ին կ'անցնի Կարին, Երկիր, ուր կը դառնայ ազգային վարժարանի ուսուցիչ, միաժամանակ կը կազմէ ինքնապաշտպանութեան խումբեր: Աւելի ուշ, կը վարէ կուսակցական գործեր Թիֆլիսի մէջ:

- Կ'անցնի Պուլկարիա, հիմը կը դնէ հայ-մակեդոնական յարաբերութիւններուն՝ իբրեւ գործադրութիւն Ընդհանուր Ժողովի որոշումներուն: Հոն եւս կը հաստատէ դպրոց, որ կը վերածուի ազգային-յեղափոխական մտածողութեան հնոցի:

- 1903-ին Կովկաս է Ռոստոմ, կը ղեկավարէ եկեղեցական գոյքերու եւ կալուածներու գրաւման ցարական մոլեգնութեան դէմ ժողովրդային շարժումը եւ համազգային դիմադրութիւնը:

- Քրիստափորի նահատակութենէն ետք, 1904-ին, կը դառնայ ինքնապաշտպանութեան գործի ղեկավար: Ան «պայքարի ոգին եւ մղիչ ուժն էր՝ միշտ ստուերի մէջ»:

- 1907-ի ՀՅԴ Դ. Ընդհանուր ժողովին, ան այն բացառիկ հեղինակութիւնն էր ու բարոյական ուժը, որ յաջողեցաւ քանդել արուեստական պատերը, արեւելահայ ու արեւմտահայ հատուածներու միջեւ հետզհետէ խորացող խրամատը, ընկերվարութեան եւ ազգային գաղափարախօսութեան թիւրըմբռնումներու հետեւանք շեղումներն ու Դաշնակցութիւնը վերընձիւղել իբրեւ մէկ ու միասնական յեղափոխական կուսակցութիւն:

- Աւելի ուշ, Ռոստոմ դարձեալ Պուլկարիա է: Կը հիմնէ ՀՅԴ Զինուորական դպրոց, իր ճիգերով ՀՅԴ-ն կ'ընդունուի իբրեւ Ընկերվար միջազգայնականի անդամ Շթութկարտի մէջ, ապա կը ստանձնէ Պարսկաստանի յեղափոխական կռիւներու ղեկավարութիւնը՝ Նիկոլ Դումանի եւ Քեռիի հետ:

- 1910, Կարին: Կը ստանձնէ ազգային վարժարաններու ընդհանուր տեսուչի պարտականութիւնը: Մինչեւ 1914, Կարնոյ մէջ իր ներկայութիւնը որակական հսկայական ներդրում կ'ունենայ շրջանի կազմակերպական ազգային զարթօնքին մէջ:

- Ցեղասպանութեան օրերուն կը դառնայ մղիչ ուժը ազգային բիւրոյի, կամաւորական շարժման, գաղթականներուն օգնող կազմակերպութեանց: Կը շարունակէ իր անզուգական ներդրումը կատարել քաղաքական-յեղափոխական գործին մէջ, կը դառնայ Պաքուի հերոսամարտի ղեկավար:

Իր գրիչին կը պատկանի՝ «Կայ այբուբեն նա՛եւ հասարակական խնդիրների շրջանում»:

Ու իր գրիչին հետեւողութեամբ կարելի է արձանագրել՝ կայ ղեկավարի տիպարի ռոստոմեան այբուբեն:

Համեստ, խոնարհ, անսեթեւեթ, սակաւապէտ, ընկերասէր:

Ներկա՛յ հոն, ուր իր գործին կարիքը կայ:

Մեծ ու փոքր գործերու միջեւ տարբերութիւն չդնող Ռոստոմի ղեկավարի ըմբռնողութիւնն է այդ:

Դաստիարակութիւն ստացող, ուսուցիչ, խմբավար, խմբագիր ու գրաշար, իր մտքերը արտայայտող դասախօս, մարտական գործիչ, զինուորական հարցերու պատասխանատու, ուսանողական շարժումի թէ ինքնապաշտպանութեան ղեկավար, բանտարկեալ, աքսորեալ, բայց ազատ մարդ, Բիւրոյի անդամ, անդուլ աշխատող, դիւանագէտ եւ այլ դատերու պաշտպան, միաժամանակ բոլոր գաղափարախօսութիւնները հայ ժողովուրդի դատին ու հայ ժողովուրդի բարօրութեան ի սպաս դնող համադրողական ուղեղ, գործն ու գաղափարը միացնող, ստուերը պաշտող, բայց իր ընկերներուն եւ ժողովուրդին համար ամէն ինչ զոհող ղեկավարն է Ռոստոմ:

Ռոստոմ «ղեկավար»-ի այբուբենը կրնայ դժուար ընթերցուիլ այսօր:

Բայց Ռոստոմ ողջ է՝ իր այդ այբուբենին արժէքով ու ժառանգով:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ...

Շարունակուած 10-րդ էջէն

Ռոստոմը վերեւ յիշուած երեք օրինակներէն մեկնելով՝ հիմը դրաւ ՀՅԴ-ի միջազգայնական համերաշխութեան արեւելումին, որ հիմնուած էր ՀՅ Դաշնակցութեան ժողովրդավարական եւ ընկերվարական գաղափարաբանութեան վրայ ու հիմնուած էր ազգային, ընկերային եւ տնտեսական ազատագրական պայքարներուն վրայ, որոնց մէջ մեծ փորձառութիւն ունեցաւ ՀՅԴ-ն:

Եթէ համառօտ ակնարկ մը նետենք Ռոստոմի մահէն ետք ՀՅ Դաշնակցութեան միջազգային համերաշխութեան վրայ հիմնուած գործունէութեան վրայ, պիտի տեսնենք նոյն թափով կատարուած աշխատանքներ զանազան ուղղութիւններու վրայ՝ ՀՅԴ-ի մասնակցութիւնը քրտական Արարատեան (Հոյպուն) ապստամբութեան (1927), ՀՅԴ-ի եւ Խորհրդային Միութենէն աքսորուած քաղաքական ուժերու միջեւ համագործակցութիւնը՝ յանուն վերանկախացման եւ ժողովրդավարութեան վերահաստատման, պաղեստինեան, կիպրական, ասորական դատերուն զօրակցութիւններ, առաւել եւս այլ դատերու զօրակցութիւններ՝ դաշնակցական մամուլի հրապարակումներուն միջոցով:

Ինչ կը վերաբերի ներկային եւ հաշուի առնելով հայութեան դիմագրուած հետեւեալ մարտահրաւէրները.

● Արցախեան շարժումը տակաւին անաւարտ է: Արցախեան շարժումին սկզբնաւորութենէն աւելի քան 30 տարի ետք, տակաւին միջազգային ընտանիքը չէ ճանչցած ԱրցախիՀանրապետութեան անկախութիւնը:

● Հայոց ցեղասպանութենէն անցած է աւելի քան 100 տարի, տակաւին կը շարունակուի ցեղասպանութեան եզրը գործածուիլ մեծապետական պետութիւններու կողմէ, եւ տակաւին Թուրքիա չէ ճանչցած Ցեղասպանութիւնը, իսկ Հայ դատը իր արդար լուծումին չի հասած (ճանաչում, դատապարտում եւ հատուցում):

● Հայաստանի ներկայ կառավարութեան կողմէ նորազատական քաղաքականութիւններու գործադրումը, ինչպէս՝ հարկային համահարթեցման եւ պարտադիր կուտակայինի որդեգրումը, որոնք հասարակութեան մէջ կ'ընդլայնեն ընկերային անհաւասարութիւնը: Առաւել եւս, խստամբերական քաղաքականութիւններու նմանօրինակ որդեգրում՝ «կրճատման» անուան տակ, որ կը միտի նուազեցնել պետական ծախսը, հետեւաբար՝ կրճատել պետական մարզին մէջ աշխատողներուն թիւը:

● Հայաստանի ժողովրդավարացման մարտահրաւէրները, ինչպէս՝ **օլիկարխիայի** ներկայութիւնը երկրի հասարակական կեանքին մէջ,սեռային անհաւասարութեան դրսեւորումները եւ քաղաքական բեւեռացումը՝ սեւ-ճերմակի, ազգային-ապազգայինի եւ յեղափոխական ու հակայեղափոխականի միջեւ:

● Հանքագործութեան ընկերութեանց կողմէ հայաստանեան հողի ոսկիի հանքարդիւնաբերութեան վերացում, որ աղէտալի երեւոյթ կրնայ դառնալ հայրենի բնութեան համար, մինչ իշխանութիւնները լռութիւն կը պահեն յիշեալ նիւթին գծով:

Իսկ միւս կողմէ միջազգայնօրէն հաշուի առնելով հետեւեալ կէտերը՝

● Ազգային-ազատագրական պայքարներու ճնշում՝ մեծապետական ու ծաւալապաշտական պետութիւններու կողմէ, ինչպէս որ տեղի ունեցաւ Քաթալոնիոյ անկախութեան հանրաքուէին ընթացքին, կամ ինչպէս որ այս օրերուն տեղի կ'ունենայ Սուրիոյ մէջ՝ Թուրքիոյ ռազմական յարձակումով ճնշելու համար քրտական ինքնավարութիւնը:

● Պահպանողական եւ ազատական կառավարութիւններու վարած նոր-ազատական քաղաքականութիւնները, որոնք պատճառ կը դառնան՝ ընկերային անհաւասարութեան կրկնապատկումին, աղքատութեան համեմատութեան աճին եւ անգործութեան շարունակման, իսկ միւս կողմէ ցած հարկեր կը պարտադրեն մեծահարուստներուն, շռայլ կարելիութիւններ կ'ապահովեն դրամատուներուն եւ հարկային փախուստի պատուհաններ կը բանան:

● Ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքներու դէմ աջակողմեան ամբոխավար հոսանքներու վերելք, որոնք կը սպառնան կիներու, գաղթականներու եւ կրօնական ու ցեղային փոքրամասնութիւններու իրաւունքներուն:

● Կլիմայական փոփոխութիւն, որ կ'ընդգրկէ՝ երկրագունդի երկու բեւեռներու (հիւսիսային եւ հարաւային) սառոյցներուն հալիլը, կենսոլորտի ապականումը, անապատացումը եւ ջերմացումը:

Նկատի առնելով նաեւ, որ թէ՛ մեր հայկական միջավայրին մէջ եւ թէ՛ միջազգայնօրէն առկայ հարցերը կը համընկնին, հետեւաբար անհրաժեշտութիւնը կը ծագի համագործակցելու եւ ռոստոմեան շունչով համերաշխ ըլլալու այլոց հետ՝ յանուն փոխադարձ շահի:

Համերաշխ գործակցութիւնը կրնայ ըլլալ հետեւեալ կէտերուն շուրջ.

● Խորհրդաժողովներ եւ փոխադարձ յարաբերութիւններու զօրացում՝ ՀՅԴ-ի եւ քաթալանական, սկովտիական, քրտական եւ պաղեստինեան ձախակողմեան կուսակցութիւններու միջեւ, որպէսզի ուսումնասիրուի, թէ ինչպէ՛ս 21-րդ դարուն կը մղուի ազգային-ազատագրական պայքարը եւ ինչպէ՛ս ուրիշ ձախազգային կուսակցութիւնները կը յաջողին հաշտեցնել ազգային-քաղաքական պահանջները՝ ընկերային եւ տնտեսական պահանջներուն հետ:Կազմել իրաւազրկուած ժողովուրդներու ճակատ եւ միացեալ կէտերու շուրջ զօրավիգ կանգնիլ անոնց պայքարներուն:

● «Հրայր Մարուխեան հիմնադրամ»-ը՝ իբրեւ ՀՅԴ-ի կառոյցներէն մէկը, կազմակերպէ խորհրդաժողովներ՝ ընկերվար-ժողովրդավարներու պատկանող հիմնադրամներու, առաւել եւս ընկերային արդարութիւն, յառաջատար հարկ եւ աշխատաւորներու իրաւունք հետապնդող հիմնարկներու հետ՝ ուսումնասիրելու համար գետնի վրայ որդեգրուող քաղաքականութիւնները մանաւանդ այն պետութիւններուն մէջ, որոնք յաղթահարեցին ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամերը:

● Իբրեւ Ընկերվար միջազգայնականի կիներու կազմակերպութեան անդամ՝ ՀՅԴ-ն պէտք է առիթը օգտագործէ յիշեալ միջազգային կազմակերպութեան անդամակցող ընկերվարական կնոջական հատուածներուն հետ համագործակցելու՝ ամրապնդելու եւ ընդլայնելու կիներու իրաւունքները հայկական ընկերութեան մէջ: Առաւել, մարդու իրաւունքներ պաշտպանող ոչկառավարական կազմակերպութիւններու հետ պէտք է համագործակցիլ՝ ընկերութեան մէջ ամէն տեսակի խտրութեանց դէմ կանգնելու նպատակով:

● Համագործակցիլ ոչկառավարական կազմակերպութիւններուն հետ՝ դիմագրաւելու կլիմայական փոփոխութիւն յառաջացնող ընկերութիւններուն փորձերը:

Արժեւորելու համար Ռոստոմը եւ շարունակելու իր միջազգային համերաշխութեան վեհ իտէալը, պէտք է դարձեալ վերականգնել միջազգային համերաշխութեան գաղափարը ՀՅԴաշնակցութեան մէջ (նկատի ունենալով նաեւ, որ ՀՅԴ-ն անդամակցած է Ընկերվար միջազգայնականին եւ Եւրոպայի ընկերվարականներու կուսակցութեան)՝ հետեւեալ մէջ բերումներուն հիման վրայ վերահաստատելով Դաշնակցութեան ազգային եւ ընկերվարական ուղեգիծը.

Ա.- «Ընկերվարութիւնը կը հաւաքէ իր դրօշակի տակ ամբողջ տառապող մարդկութիւնը՝ կռուելու համար միջազգայնօրէն կազմակերպուած շահագործման ու բռնակալութեան դէմ: Ան կը հարթէ ճանապարհը դէպի անհատի եւ հասարակական միութիւններու ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը. ան հրապարակ կը հանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք թաքնուած կը մնան այլ եւ այլ ձեւերով արտայայտուող ճնշումներու տակ: Ան կը խորտակէ այն բոլոր անջըրպետները, որոնք կը շերտաւորեն ժամանակակից հասարակութիւնը՝ բաժնելով զայն հպատակ ու հակամարտ, թշնամացած դասակարգերու: Ան վերջ կը դնէ շահագործման բոլոր յայտնի ձեւերուն. Կը միացնէ բոլոր ժողովուրդները հոյակապ դաշնակցութեան մը մէջ՝ խաղաղ աշխատակցութեան հողի վրայ. ան կ'առաջնորդէ դէպի իսկական թագաւորութիւն «ազատութեան, արդարութեան եւ եղբայրութեան» (ՀՅԴ-ի 1907 ծրագիրէն):

Բ.- «Կեղեքման, շահագործման եւ իրաւազրկման դէմ պայքարը կ'ենթադրէ քաղաքական ու տնտեսական ազատութեան ձգտումը: Թէ՛ ներքին-տեղական, թէ՛ արտաքին-միջազգային ճակատներու վրայ: Այս երկու ճակատներու գոյութեան գիտակցութիւնն ու համագործակցութիւնն են, որ կրնան ապահովել անհատի, ընկերութեան եւ մարդկութեան ազատագրութիւնն ու բարօրութիւնը: Այս միացեալ պայքարը կ'արտայայտուի թէ՛ ազգային-ազատագրական եւ թէ՛ ընկերվարական շարժումներու զուգահեռ զարգացումով»: (ՀՅԴ-ի1978 ծրագիրէն):

Գ.- «Սերտացնել կապերը մասնաւորաբար ընկերվարական կուսակցութեանց եւ կառավարութիւններուն հետ՝ հայ ազգի իրաւունքներուն մասին զանոնք միշտ լուսաբանելու եւ նպաստաւոր տրամադրութիւններ ստեղծելու համար անոնց մէջ՝ Հայ դատի նկատմամբ»: (ՀՅԴ 22-րդ ընդհանուր ժողովի որոշումներէն):

ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆ, ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ . . .

Շարունակուած 11-րդ էջէն

Բախտաւոր պարագային, ընտրանիի ծոցին մէջ տեղ կը գտնեն մարդիկ՝ իրենց պատրաստութեան նպաստով, արժանիքներու վրայ հիմնուած տեսակ մը ժողովրդավարութիւն, ֆրանսացին կ'ըսէ՝ meritocratie, երբ դեղագործը եւ ատամնաբուժը կ'ուզեն զանգուած ներկայացընել, հաշուապահները՝ առաջնորդել կրթութիւնը, բժիշկները՝ արդարադատութիւնը, կիսագրագէտները՝ մշակոյթը: Ի հարկէ արժանիքներու վրայ հիմնուած ժողովրդավարութիւնը աւելի լաւ է ծնունդի իրաւունքով ձեռք բերուած փառասիրութիւններէ (nepotisme):

Ժողովրդավարութեան իրագործումը ցանկութիւններու ճահիճէն դուրս չի գար, եթէ մեռեալ տառ մնայ հաւասարութիւնը: Արդարեւ, օրէնքով հաստատուած հաւասարութիւնը տեսական է, եթէ բացակային տարրական տնտեսական հաւասարութիւնը, կեանքի ապահովութիւնը: Ինչպէ՞ս կարելի է արդար ժողովրդավարութեան մասին խօսիլ, երբ քաղաքացիին քուէն կը գնուի այս կամ այն ձեւով, երբ ան պարտադրուած կ'ըլլայ իր քուէն ծախելու: Իտէալի հետապնդումը կուշտերու համար է: Առանց տնտեսական պայմաններու բարելաւման, քաղաքական-քաղաքացիական հաւասարութիւնը, օրէնքի առջեւ հաւասարութիւնը դատարկաբանութիւններ են: Հետեւաբար ազատ քաղաքացի ունենալու համար անհրաժեշտ են նախապայմաններ:

Ժողովրդավարութեան յաջող ընթացքին համար էական նշանակութիւն ունին՝ հանդուրժողութիւնը, յարգանքը միւսին եւ միւսի կարծիքին նկատմամբ: Ժողովրդավարութիւնը բարոյական եւ օրինական սահմանափակումներ պէտք է դնէ քաղաքականութիւնը ասպարէզի վերածելու միտումներուն առջեւ: Քաղաքական գործիչի, պատգամաւորի, նախագահի, նախարարի պաշտօնները ժամանակաւոր պէտք է ըլլան, օրէնքով սահմանուած, պատգամաւորը յաջորդական ընտրութիւններով ցկեանս պէտք չէ մնայ խորհրդարանին մէջ (երբեմն նոյնիսկ՝ պատգարակով տարուելով), նախագահ, նախարար՝ օրէնքով ճշդուած ժամանակաշրջանէն ետք պէտք է վերադառնան քաղաքացիական կեանքի, իրենց ամբողջ կեանքը չանցընեն պետական համակարգին մէջ՝ մէկ պաշտօնէն անցնելով ուրիշ պաշտօնի, տեւաբար պետութենէն ստանալով իրենց հասոյթը: Այս կացութիւնը պատճառ է՝ դժգոհութիւններու, խծբծանքներու, անհասկացողութիւններու, մերժումներու:

Եթէ պետական այրերը ճիգ ընէին յաճախելու Մահաթմա Կանտիի դպրոցը, ներընկերային կապերը եւ հասկացողութիւնը տարբեր որակ կ'ունենային: Կանտիի իմաստութեամբ եթէ մտածենք, աւելի լաւ կը ծառայենք եւ աւելի լաւ կ'ընդունուինք մեր ժամանակակիցներէն եւ մեր յաջորդներէն: Ան կ'ըսէ. «Օրէնք մը ամէն բանէ առաջ ճիշդ եւ արդար պէտք է ըլլայ: Արդի քաղաքականութիւնը օրէնքը պարզապէս դարձուցած է **ֆեթիշ**, քանի որ օրէնք է»:

Իսկ յեղափոխութիւնները իրապէս մարդկային մակարդակով յաջողելու համար պէտք է ընեն այնպէս, որ իրենց առաջնորդները ըլլան ոչ թէ իշխանութիւն, այլ՝ բարոյական հեղինակութիւն, միշտ յիշելով տիտղոսներ եւ պաշտօններ չունեցող արտակարգ քաղաքական իմաստուն Կանտին, կամ Հարաւային Ափրիկէի անբուժելի կեղ նկատուող խտրականութիւնը յաղթահարած եւ անկարելի հաշտեցումը իրականացուցած Նելսըն Մանտելան:

Օրինակները արժէք են:

Օրինակներով մտածել՝ իմաստութիւն է:

22 փետրուար 2019,
Երեւան

ՔԱՂԱՔԱՑԻԻ ՏՕՆԸ . . .

Շարունակուած 12-րդ էջէն

- Պապա՛, կարմիր է, պէտք է կանգնենք:

Պէտք էր պատկերացնել անցորդների վիճակը, կանգ արան ու նայեցին Սոֆիային...

Մի քանի վայրկեան յետոյ էլի ասեց.

- Պապա՛,կարմիր է, սպասում ենք:

Էլի նայեցին Սոֆիային, ու գլխով արեցին անցորդները, որ՝ սպասում ենք...

Լուսացոյցը փոխեց կանաչ ու Սոֆիան ասեց.

- Պապա,կանաչ, գնացի՞նք:

Շնորհաւորում եմ նման քաղաքացիների տօնը, երկիրը իրենցը պէտք է էլ լինի, իրենք պէտք է երկիրը ներկայացնեն ու շէնացնեն: Էդքան բան:

Եթէ քաղաքացի, ապա միայն՝ իրաւագիտակցութեան բարձր մակարդակով, կիրթ եւ օրինապահ:

Թէ չէ՝ կա՞ն չէ, հա՛ լաւ, էս անգամ էդ մասին չեմ ասում...

Իմ համար Հայաստանի Հանրապետութեան հպարտ քաղաքացին այն քաղաքացին է, որ յարգում է Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը, օրէնքները, պահպանում է համակեցութեան կանոնները, իր գոյութեամբ ո՛չ միայն չի վնասում հասարակութեանը, այլեւ մի բան էլ օգնում է, պահանջատէր է եւ միեւնոյն ժամանակ՝ պատասխանատու:

Բարդ է, գիտեմ... բայց ստիպելով էլ պէտք է հասցընենք դրան, թէ չէ՝ Գերմանիա, Շուէտ, Նորվեկիա ո՞նց են հասել դրան: Կարճ ասած, մինչեւ որակով քաղաքացի չունենանք, շատ յաջողութիւններ չենք գրանցի երկրի հաշուոյն:

Խմենք գիտակից եւ պահանջատէր քաղաքացու կենացը...

Իմ համար այդ քաղաքացին Սոֆիան է»:

Առաջին էջի «ՌՈՍՏՈՄ» պատկերի
հեղինակ՝ արուեստագէտ ԱՐԱ ԱԶԱՏ
Աքրիլիք կտաւի վրայ
50x40 սմ
Քալիֆորնիա, 2012